

Ծ Ր Ա Գ Ր Ա Յ Ի Ն Ա Ջ Դ Ա Գ Ի Ր



ԱՄԻՕ ԲԱՆԿ

Փակ Բաժնետիրական Ընկերություն

Թողարկողի ֆիռմային անվանումը և կազմակերպաիրավական տեսակը

ՀՀ, ք. Երևան 0010, Նալբանդյան 48, հեռ.՝ (+374 10) 59-20-20,

ֆաքս՝ (+374 10) 59 20 64, էլ. փոստ՝ info@amiobank.am,

կայք՝ www.amiobank.am

ԱՄԻՕ ԲԱՆԿ Փակ Բաժնետիրական Ընկերություն

Գլխավոր տեղաբաշխողի անվանումը

ՀՀ, ք. Երևան 0010, Նալբանդյան 48, հեռ.՝ (+374 10) 59-20-20,

ֆաքս՝ (+374 10) 59 20 64, էլ. փոստ՝ info@amiobank.am,

կայք՝ www.amiobank.am

ԱՄՆ դոլարով	
Արժեթղթերի տեսակը	անվանական, չփոխարկվող, արժեկտրոնային պարտատոմս
Արժեթղթերի ձևը	ոչ փաստաթղթային
Արժեթղթերի քանակը	150,000 հատ
Արժեթղթերի անվանական արժեքը	100 ԱՄՆ դոլար
Արժեթղթերի ընդհանուր անվանական արժեքը	15,000,000 ԱՄՆ դոլար
Արժեկտրոնային եկամտաբերությունը	Ենթակա են որոշման Բանկի Վարչության կողմից Յուրաքարչյուր տրանշի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ
Արժեթղթերի շրջանառության ժամկետը	
Արժեկտրոնների վճարման հաճախականությունը	եռամսյակային
Տեղաբաշխման ձևը	չերաշխավորված
ՀՀ դրամով	
Արժեթղթերի տեսակը	անվանական, չփոխարկվող, արժեկտրոնային պարտատոմս
Արժեթղթերի ձևը	ոչ փաստաթղթային
Արժեթղթերի քանակը	350,000 հատ
Արժեթղթերի անվանական արժեքը	100,000 ՀՀ դրամ
Արժեթղթերի ընդհանուր անվանական արժեքը	35,000,000,000 ՀՀ դրամ
Արժեկտրոնային եկամտաբերությունը	Ենթակա է որոշման Բանկի Վարչության կողմից տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ
Արժեթղթերի շրջանառության ժամկետը	
Արժեկտրոնների վճարման հաճախականությունը	եռամսյակային
Տեղաբաշխման ձևը	չերաշխավորված

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ԱԶԴԱԳՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ ՉԻ ՀԱՎԱՍՏՈՒՄ ՆԵՐԴՐՄԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆԸ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՃՇՏՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՄ ԻՍԿՈՒԹՅՈՒՆԸ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ






ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԻՆՔ	5
Բաժին 1. ԱՄՓՈՓԱԹԵՐԹ	7
Տեղեկատվություն Թողարկողի և Թողարկողի գործունեության վերաբերյալ	7
Թողարկողին և պարտատոմսերին առնչվող ռիսկերի համառոտ նկարագիր	15
Բանկի գործունեության զարգացման և ֆինանսական վիճակի փոփոխություններ	18
Բանկի աուդիտ իրականացնող անձի մասին համառոտ տեղեկատվություն	18
Բանկի կառավարման մարմինների անդամների վերաբերյալ համառոտ տեղեկատվություն	20
Բանկի պարտատոմսերի հիմնական տվյալները	21
Պարտատոմսերի առաջարկի և դրանց առևտրին թույլտվության համակողմանի նկարագիրը	23
Բանկի ամփոփ ֆինանսական տվյալները	24
Բաժին 2. ԹՈՂԱՐԿՎՈՂ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ	24
Ռիսկային գործոններ	26
Հիմնական տեղեկատվություն	28
Տեղեկատվություն «ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ անվանական պարտատոմսերի վերաբերյալ	28
Առաջարկի ժամկետները և պայմանները	43
Առևտրի թույլտվությունը և առևտրի կազմակերպումը	52
Լրացուցիչ տեղեկատվություն	53
Բաժին 3. ԲԱՆԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ	55
Անկախ աուդիտորները	55
Ռիսկային գործոններ	55
Տեղեկատվություն Բանկի մասին	59

Բիզնեսի նկարագիրը	63
Բանկի կառուցվածքը.....	79
Զարգացման վերջին միտումները	79
Բանկի կառավարման մարմինները և կառավարման մարմինների անդամները....	90
Հսկող անձինք.....	90
Տեղեկատվություն Բանկի ակտիվների, պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի մասին	90
Էական պայմանագրերը	91
Փորձագետի, գնահատողի, խորհրդատուի կամ հաշվապահի մասնագիտական կարծիքը և երրորդ անձանցից վերցված տեղեկատվությունը	92
Այլ տեղեկատվություն	92
ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ	93
Հավելված 1. «ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ կազմակերպական կառուցվածքը	93
Հավելված 2. Ֆինանսական գործակիցների հաշվարկման բանաձևեր.....	94
Հավելված 3. Հայտ-հանձնարարականի օրինակելի ձև /իրավաբանական անձ/.....	94
Հավելված 4. Հայտ-հանձնարարականի օրինակելի ձև /ֆիզիկական անձ կամ անհատ ձեռնարկատեր/.....	98
Հավելված 5. Թողարկման վերջնական պայմաններ.....	101
Հավելված 6. «ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ ֆինանսական հաշվետվություններ	111

ՊԱՏՄԱՆՈՒՄԱՏՈՒ ԱՆՁԻՆԵՐ

«Մենք՝ ստորագրող անձինք, հավաստիացնում ենք, որ գործադրել ենք բոլոր ողջամիտ ջանքերը, որպեսզի պարզենք ազդագրում ներառված տեղեկությունների ճշգրիտ և լիարժեք լինելը: Ըստ այդմ, մենք հավաստիացնում ենք, որ մեր լավագույն տեղեկացվության համաձայն ազդագրում ներառված տեղեկությունները ճշգրիտ և լիարժեք են, չեն պարունակում բացթողումներ, որոնք կարող են խեղաթյուրել ազդագրի բովանդակությունը»:

Ստորագրող անձինք՝

Ալֆրեդ Վ.Մոեկլի (ստեմ, ազգանուն)	Խորհրդի նախագահ (կաշտեղ)	 (ստորագրում)	29/02/2024 (ամսամի)
Տիգրան Միրզոյան (ստեմ, ազգանուն)	Խորհրդի անդամ (կաշտեղ)	 (ստորագրում)	15/03/2024 (ամսամի)
Քրիստոֆ Մաուսլե (ստեմ, ազգանուն)	Խորհրդի անդամ (կաշտեղ)	 (ստորագրում)	4/3/24 (ամսամի)
Ջերարդ Հոֆմանն (ստեմ, ազգանուն)	Խորհրդի անդամ (կաշտեղ)	 (ստորագրում)	29.02.24 (ամսամի)
Պատրիկ Ավինթ (ստեմ, ազգանուն)	Խորհրդի անդամ (կաշտեղ)	 (ստորագրում)	4March24 (ամսամի)

Գևորգ Թառումյան

(անուն, ազգանուն)

Վարչության նախագահ

(պաշտոնը)



(ստորագրություն)

20.03.2024

(ամսաթիվ)

Ազամատ Խակոյ

(անուն, ազգանուն)

Գլխավոր գործառնական տնօրեն

(պաշտոնը)



(ստորագրություն)

20.03.2024

(ամսաթիվ)

Ռուբեն Մելքոնյան

(անուն, ազգանուն)

Գլխավոր ֆինանսական տնօրեն/Գլխավոր հաշվապահ

(պաշտոնը)



(ստորագրություն)

20.03.2024


(ամսաթիվ)

Գրիգոր Պետրոսյան

(անուն, ազգանուն)

Ռիսկերի կառավարման և հսկողության գլխավոր տնօրեն

(պաշտոնը)



(ստորագրություն)

20.03.2024

(ամսաթիվ)

Ստորագրությունները վավերացնում են՝

Գևորգ Թառումյան

(անուն, ազգանուն)

Վարչության նախագահ

(պաշտոնը)



(ստորագրություն)

20.03.2024

(ամսաթիվ)

Բաժին 1. ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

Ամփոփաթերթը պետք է դիտվի որպես Ծրագրային ազդագրի ներածական համառոտ նկարագրություն, և առաջարկվող արժեթղթերում ներդրում անելու վերաբերյալ ներդրողի որոշումը պետք է հիմնված լինի ամբողջական Ծրագրային ազդագրի վրա:

Ամփոփաթերթի կազման համար պատասխանատու անձն ամփոփաթերթում պարունակվող տեղեկատվության ոչ ամբողջական կամ ապակողմնորոշիչ լինելու համար (այդ թվում՝ թարգմանությանը վերաբերող մասով) կրում է քաղաքացիական պատասխանատվություն, եթե այն ոչ ամբողջական կամ ապակողմնորոշիչ է Ծրագրային ազդագրի մյուս մասերի հետ դիտարկելու դեպքում:

Ներդրողը կարող է ձեռք բերել Ծրագրային ազդագրին կից ներկայացվող փաստաթղթերը փաստաթղթային տարբերակով Բանկի գլխամասային գրասենյակում և մասնաճյուղերում, իսկ էլեկտրոնային տարբերակով՝ Բանկի ինտերնետային էջում www.amiobank.am:

1. Տեղեկատվություն Թողարկողի և Թողարկողի գործունեության վերաբերյալ

1.1. Բանկի անվանումը և կապի միջոցները

Բանկի լրիվ ֆիրմային անվանումը

հայերեն՝ «ԱՄԻՕ ԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերություն

ռուսերեն՝ Закрытое Акционерное Общество “АМИО БАНК”

անգլերեն՝ “AMIO” Closed Joint Stock Company

Բանկի կրճատ ֆիրմային անվանումը

հայերեն՝ «ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ

ռուսերեն՝ ЗАО “АМИО БАНК”

անգլերեն՝ “AMIO” CJSC

1.2 Բանկի գրանցման վայրը

Բանկի գրանցման վայրն է՝ ՀՀ, 0010, ք.Երևան, Նալբանդյան 48, գրանցման համարը՝ 40, տրված 10.12.1991թ.: Բանկի գտնվելու վայրն է ՀՀ, 0010, ք.Երևան, Նալբանդյան 48:

1.3 Կապի միջոցները

Հեռախոսահամար՝ (+374 10) 59-20-20, (+374 60) 37-25-00

Էլեկտրոնային փոստ՝ info@amiobank.am

Ինտերնետային կայք-էջ՝ www.amiobank.am

Բանկի հիմնադրման երկիրը՝ Հայաստանի Հանրապետություն:

Թողարկողին և պարտատոմսերին առնչվող հարցերի դեպքում ներդրողները կարող են կապ հաստատել «ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ-ի Ակտիվների, պարտավորությունների, կապիտալի և հաշվեկշռի կառավարման ծառայության պետ՝ Մարիաննա Պետրոսյանի հետ, հետևյալ հեռախոսահամարով՝ +374 10 592020 (ներքին հեռ. 215):

1.4 Թողարկողի համառոտ պատմությունը

«ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ-ն իր գործունեությունն սկսել է 1991 թվականի դեկտեմբերից և այդ ժամանակվանից ի վեր անցել է Հայաստանի տնտեսությանը բնորոշ բոլոր անցումային փուլերը:

Բանկը մինչև 2006 թվականը գործում էր որպես «Հայինվեստբանկ» ՓԲԸ, որը հիմնադրվել էր Բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ՝ համաձայն 1994թ-ի դեկտեմբերի 14-ին կնքված հիմնադիր պայմանագրի, որով հանդես էր գալիս որպես «Արմինվեստբանկ» փայտտիրական բանկի իրավահաջորդը, որը հիմնադրվել էր 1991թ-ի սեպտեմբերի 10-ին:

Բանկը գրանցվել է ՀՀ կենտրոնական բանկում 1991թ-ի դեկտեմբերի 10-ին և ստացել է բանկային գործունեության թիվ 40 լիցենզիան:

2006թ-ի օգոստոսի 10-ին «Հայինվեստբանկ» ՓԲԸ-ի բաժնետերերի արտահերթ ժողովում միաձայն որոշվեց բանկը վերանվանել «ՀԱՅԲԻՉՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի:

2009թ-ի մայիսին բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ Բանկի կանոնադրական կապիտալը համալրվեց 3,050 մլն դրամով: 2011թ-ի դեկտեմբերի 19-ին՝ համաձայն «ՀԱՅԲԻՉՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի Խորհրդի 16 սեպտեմբերի թիվ 228-Ա որոշման, կապիտալը համալրեց ևս 4,050 մլն դրամով: Այնուհետև, 2014թ-ի մայիսի 15-ին Բանկի Խորհրդի թիվ 164-Ա որոշման համաձայն՝ Բանկի կանոնադրական կապիտալը համալրվեց ևս 5,407.5 մլն դրամով: ԿԲ սահմանած նորմատիվային ընդհանուր կապիտալի անհրաժեշտ մակարդակը ապահովելու նպատակով՝ Բանկի Խորհրդի որոշմամբ 2016թ-ի հոկտեմբերի 19-ին Բանկի կանոնադրական կապիտալը համալրվեց ևս 8,467.06 մլն դրամով, իսկ 2019թ-ի օգոստոսի 21-ին Բանկի կանոնադրական կապիտալը համալրվեց ևս 8,635.85 մլն դրամով՝ կազմելով 40,010.41 մլն ՀՀ դրամը: 2021թ. 31 դեկտեմբերի դրությամբ Բանկի միակ բաժնետեր է «ԷՄ ԷՖ ԷՄ Գլոբալ Ինվեստ» ՍՊԸ-ն, իսկ 2022թ-ի հունվարի 21-ին «ԷՄ ԷՖ ԷՄ Գլոբալ Ինվեստ» ՍՊԸ-ն բաժնետոմսերի 25%-ը փոխանցվել է «ԲՆԱԿԱՐԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻՆ ՎՎԿ» ՓԲԸ-ին:

2022թ. մարտի 9-ին Բանկի կանոնադրական կապիտալը համալրվել է 128,002 մլն ՀՀ դրամով՝ կազմելով 170,092 մլն ՀՀ դրամ:

2023թ. վերջով կանոնադրական կապիտալը նույնն է՝ 170,092 մլն ՀՀ դրամ: Կանոնադրական կապիտալը բաժանված է 206,260 սովորական բաժնետոմսի՝ յուրաքանչյուրը 824,651 դրամ անվանական արժեքով: Բանկը վերաբրենդավորվել և 2023թ.-ի նոյեմբերի 17-ից վերանվանվել է «ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ, որը «ՀԱՅԲԻՉՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ լիիրավ իրավահաջորդն է:

1.5 Բանկի ռազմավարությունը

Բանկի ռազմավարությունն է ավելացնել իր մանրաձախ բանկային մասնաբաժինը շուկայում՝ միաժամանակ պահպանելով ամուր դիրքերը նաև կորպորատիվ հատվածում:

Բանկի առաքելությունն է՝ Թվային նոր տեխնոլոգիաներով և ֆինանսական հասանելի լուծումներով աջակցել մարդկանց կարևոր նախաձեռնություններում՝ հեշտ ու հարմար դարձնելով նրանց կյանքը:

Բանկի տեսլականն է՝ Լինել հոգատար գործընկեր ֆինանսական և հարակից ծառայությունների ոլորտում:

Բանկի արժեքները՝ Մարդակենտրոնություն, ազնվություն, վստահություն, պրոֆեսիոնալիզմ և դինամիզմ ... Այս արժեքները ներկայացնում են մեր գործունեության ողջ փիլիսոփայությունը: Բրենդի ճարտարապետության հիմքում ընկած արժեքներն ամբողջացնում են մեր կերպարը մարդկային հատկանիշների նկարագրության միջոցով:

Բանկի ռազմավարական նպատակն է բարձրացնել բաժնետերերի բարեկեցության մակարդակը՝ բարձրակարգ ապրանքներ և ծառայություններ մատուցելով մեր հասարակությանը:

1.6 Բանկի կանոնադրական կապիտալը

2023թ. վերջով Բանկի կանոնադրական կապիտալը 170,092 մլն ՀՀ դրամ է: Այն բաժանված է 206,260 սովորական բաժնետոմսի՝ յուրաքանչյուրը 824,651 դրամ անվանական արժեքով: 2023թ. 31 դեկտեմբերի դրությամբ Բանկի 75% բաժնետեր է ԷՄ ԷՖ ԷՄ Գլոբալ Ինվեստ ՍՊԸ-ն, իսկ 25%-ը պատկանում է ԲՆԱԿԱՐԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻՆ ՎՎԿ ՓԲԸ-ին:

1.7 Բանկի բիզնեսի համառոտ նկարագիրը

«Փոխել իրադրությունը». Սա ավանդական բանկից թվային մանրաձախ բանկի անցում կատարելու թափ է հավաքում և ՀՀ-ում թվային բանկինգի ոլորտում քիչ մրցակիցներ կան, Բանկը նպատակ ունի օգտագործել պահը և փոխել Բանկի

ընկալումը՝ մեծ և հնաոճ բանկից անցում կատարելով դեպի երիտասարդ, թարմ և ժամանակակից թվային բանկ:

Հետևյալ թվային բանկային գործառույթների մատուցումը աննախադեպ փորձ կապահովի Բանկի հաճախորդների համար՝

- **Հաշիվների բացում** հաշված ռոպեների ընթացքում, անկախ այն հանգամանքից, թե նրանք որտեղ են գտնվում և ինչ սարք են օգտագործում:
- **Peer-to-peer (P2P) վճարումներ (Ֆիզիկական անձանց միջև կատարվող վճարումներ)** 24/7/365
- **Ինտուիտիվ վարկային հավելվածներ**, որոնք հաճախորդներին թույլ կտան հեշտությամբ բացել լրացուցիչ հաշիվներ, ձեռք բերել վարկային քարտեր և դիմել վարկերի համար՝ ընդամենը մի քանի հպումով: Բանկը կհետևի դիմումի ընթացքին՝ մինչև վերջ աջակցություն և անհատականացված առաջարկ ապահովելով:
- **Պլանավորված վճարումներ**, ինչպիսիք են ամսական և տարեկան հաշիվները:
- **Անձնական թվային քարտերի կառավարումը** հաճախորդներին ավելի շատ վերահսկողության հնարավորություն կտա իրենց ֆինանսների նկատմամբ: Առցանց ծախսերի սահմանաչափերի սահմանումը և վճարային քարտերի արգելափակումն ընդամենը մի քանի հպումով տալիս է հարմարավետություն և անվտանգության ավելի լավ զգացողություն: Թվային քարտերի կառավարման միջոցով հաճախորդները կարող են կարգավորումները հարմարեցնել իրենց նախասիրություններին՝ համապատասխանեցնելով դրանք իրենց գնման վարքագծին՝ միացնելով կամ անջատելով անհպում NFC (Near Field Communication) տեխնոլոգիան և առցանց վճարումները: Գործարքների մանրամասն պատմությունն՝ ըստ երկրի, սպասարկման կետի և գտնվելու վայրի, օգնում է կանխել խախտումները և վաղ փուլում հայտնաբերել զեղծարարությունները:
- **Հուսալի անվտանգությունը** հաճախորդի համար որոշիչ դեր ունի թվային բանկերի միջև ընտրություն կատարելիս: Ընտրվում է այն բանկը, որն ընկալվում է

որպես ավելի ապահով: Բազմաշերտ կենսաչափական նույնականացումը, տեղադրության վայրի վրա հիմնված անվտանգությունը, կասկածելի գործողությունների մասին ծանուցումները, քարտերի տոկենիզացումը և հնարավոր խարդախությունների հայտնաբերման համակարգերը պարտադիր են ժամանակակից բանկային սպասարկման համար: Թվային բանկի համար, որը ցանկանում է առաջատար լինել, կարևոր է ապահովել բոլոր ծառայությունների անվտանգությունը և ամրապնդել իր դիրքը փողերի լվացման դեմ պայքարում: Բացի այդ, անվտանգության հարցերի վերաբերյալ հանրությանը կրթելը էական նշանակություն կունենա ավելի շատ վստահություն ձեռք բերելու համար, քան մյուսները: Սա կշարունակի մնալ նույնքան կարևոր ուղղություն ապագայում, որքան այսօր:

- Ներհավելվածային հաղորդագրությունների և զգուշացումների միջոցով **ժամանակին ուղարկվող ծանուցումները** հաճախորդներին թույլ են տալիս վերահսկել իրենց ֆինանսական գործունեությունը և իրենց պաշտպանել գումարների խարդախ ելքագրումներից և գործարքներից: Մուտքային և ելքային վճարումների վերաբերյալ իրական ժամանակի ռեժիմում ուղարկվող ծանուցումները, քիչ մնացորդի վերաբերյալ զգուշացումները, օվերդրաֆտից (գերաձախսից) զերծ մնալու և վճարումները սպասարկող կետերի վերաբերյալ ծանուցումները թույլ են տալիս հաճախորդներին տեղյակ լինել իրենց ֆինանսների մասին:

- **Անձնական ֆինանսների կառավարումը (ԱՖԿ)** թույլ կտա Բանկին ակտիվ դեր ունենալ սպառողների ֆինանսական վարքագծի կատարելագործմանն աջակցելու և սպառողների կողմից դրամական հարցերի շուրջ ավելի կշռադատված որոշումներ կայացնելու գործում: ԱՖԿ գործիքներն ու հնարավորությունները թույլ են տալիս հաճախորդներին պլանավորել իրենց ֆինանսները՝ ըստ ծախսերի և խնայողությունների նպատակների: Հստակ տեսագծապատկերների օգնությամբ մշտադիտարկելով շաբաթական և ամսական զարգացումները, հաճախորդները

կարող են ընտրել իրենց եկամտի ավելի մեծ մասը խնայողական կամ կենսաթոշակային հաշիվներին հատկացնելու տարբերակը: Բանկերը, որոնք օգնում են իրենց հաճախորդներին ավելի կշռադատված որոշումներ կայացնել, կարող են ավելի ամրապնդել իրենց հաճախորդների վստահությունը և բարձրացնել նրանց հավատարմությունը:



- **Հավատարմության դիմաց արժեքավոր արտոնություններ.** սա այն միջոցն է, որով Բանկը կարող է պարգևատրել հաճախորդներին կատարված ընտրության համար, օրինակ՝ բացառիկ անդամությունը բանկային համայնքին: Խրախուսական կուպոնները, մաքսային քարտերը, հատուկ առաջարկները, հետվճարները (քեշբեք) և խրախուսական պարգևներն ընդամենը այն ռազմավարություններից են, որոնց վրա կարող ենք հույս դնել՝ տվյալ ապրանքանիշին հավատարմության համար հաճախորդներին պարգևատրելու համար: Գոհ և բավարարված հաճախորդները դառնում են ապրանքանիշի լավագույն դեսպանները:

- **Թվային ապահովագրական փաթեթները,** որոնք տրամադրվում են հաշվի հետ միասին, կբարձրացնեն հաճախորդների գոհունակությունը՝ միաժամանակ եկամուտների նոր հոսքեր ստեղծելով:

1.8 Բանկի կազմակերպական կառուցվածքը

Բանկի կազմակերպական կառուցվածքը հետևյալն է.

«ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ



1.9 Բանկի ակտիվների և եկամտաբեր ակտիվների ամփոփ բնութագիրը

Հազար ՀՀ դրամ

	31/12/23	31/12/22	31/12/21
Ակտիվներ, այդ թվում՝	813,065,716	859,826,031	898,914,949
Եկամտաբեր ակտիվներ, այդ թվում՝	736,456,500	704,600,138	769,518,488
Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	497,825,975	498,062,177	577,361,958
Բանկերին և ֆինանսական կազմ. տրված վարկեր և փոխատվություններ	12,870,505	4,555,351	3,380,342
Բանկերի թղթակցային հաշիվներ	1,350,000	1,487,428	881,464
Արժեթղթեր	192,102,444	169,780,533	155,484,954
Ռեպո համաձայնագրեր	20,497,929	29,620,814	32,170,007
Այլ եկամտաբեր ակտիվներ	11,809,647	1,093,835	239,763
Եկամտաբեր ակտիվների տեսակարար կշիռը	90.6%	81.9%	85.6%

2. Թողարկողին և պարտատոմսերին առնչվող ռիսկերի համառոտ նկարագիր

Ռիսկերի ճիշտ կանխատեսումը, գնահատումն ու կառավարումը ցանկացած ձեռնարկատիրական գործունեության հաջողության գրավականն է:

Բանկի գործունեության ընթացքում հատկապես կարևորվում է հետևյալ ռիսկերի կառավարումը.

Թողարկողին առնչվող ռիսկերի համառոտ նկարագիրը

Քաղաքական և տնտեսական ռիսկերը կապված են աշխարհաքաղաքական, տարածաշրջանային և ներքաղաքական անբարենպաստ փոփոխությունների արդյունքում երկրի մակրոտնտեսական իրավիճակի վատթարացման հետ, մասնավորապես տնտեսական աճի անկման կամ բարձր գնաճի հետ: Դրանք իրենց հերթին կարող են ազդել բանկի վարկային պայուսակի որակի, կամ Բանկի հասույթի վրա:

Մրցակցային ռիսկն առաջանում է բանկային համակարգում առկա մրցակցության պայմաններում և այն կարող է իր ազդեցությունը թողնել Բանկի ֆինանսական ցուցանիշների վրա:

Օրենսդրական և նորմատիվային ռիսկն օրենսդրական դաշտի փոփոխությունների հնարավոր բացասական ազդեցությունն է Բանկի գործունեության վրա: Բանկային գործունեությունը ՀՀ-ում ամենախիստ վերախսկվող ոլորտն է, իսկ Բազել 3-ի ներդրման արդյունքում կավելանան բանկային ռիսկերի կառավարման նոր սկզբունքներ՝ ավելի նվազեցնելով բանկային համակարգի ռիսկայնությունը:

Վարկային ռիսկը Բանկի ֆինանսական վնաս կրելու ռիսկն է, փոխառուի կամ ֆինանսական գործիքի պայմանագրային կողմի՝ Բանկի հանդեպ ստանձնած պայմանագրային պարտականությունները չկատարելու հետևանքով:

Իրացվելիության ռիսկը կապված է նորմալ կամ սթրեսային իրավիճակներում Բանկի կողմից ֆինանսական պարտավորությունները ժամանակին մարելու դժվարությունների հետ: Իրացվելիության ռիսկն առաջանում է Բանկի ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության անհամապատասխանության դեպքում, և այն մեղմելու համար բանկերը կիրառում են տարբեր գործիքներ, ինչպիսիք են օրինակ իրացվելի միջոցների բավարար պաշարի պահպանումը (պարտատոմսերի կամ բարձր իրացվելի այլ ակտիվների տեսքով), հասանելիությունը ֆինանսավորման այլընտրանքային աղբյուրներին, և այլն:

Շուկայական ռիսկն առաջանում է փոխարժեքների, շուկայական տոկոսադրույքների և գների ոչ բարենպաստ փոփոխությունների արդյունքում՝ հանգեցնելով Բանկի ակտիվների արժեքի նվազմանը: Այս ռիսկը նվազեցնելու նպատակով Բանկը սահմանել է շուկայական ռիսկի ախորժակը, ինչպես նաև մի շարք սահմանաչափեր և ցուցանիշներ՝ այն հսկելու և ընդունելի սահմաններում պահպանելու նպատակով:

Գործառնական ռիսկը Բանկի գործունեության ընթացքում կորստի ռիսկն է, որն առաջանում է անհամապատասխան կամ ձախողված ներքին գործընթացներից, մարդկանց և համակարգերի կամ արտաքին գործոնների պատճառով:

Բանկին առնչվող ռիսկերի մանրամասն նկարագրությանը ներդրողը կարող է ծանոթանալ սույն ազդագրի Բաժին 3-ի երկրորդ կետում:

Պարտատոմսերին առնչվող ռիսկերի համառոտ նկարագիրը

Ինչպես ցանկացած ներդրում, այնպես էլ պարտատոմսերում իրականացվող ներդրումն իր մեջ պարունակում է որոշակի ռիսկային գործոններ:

Տոկոսադրույքի ռիսկը տոկոսադրույքների անբարենպաստ փոփոխությունների արդյունքում պարտատոմսի գնի տատանման արդյունքում հնարավոր կորուստների ռիսկն է: Տոկոսադրույքները և պարտատոմսերի գներն իրար հետ ունեն հակադարձ կախվածություն, այն է՝ պարտատոմսերի շուկայում տոկոսադրույքների բարձրացումը ենթադրում է պարտատոմսի գնի նվազում, և հակառակը, ինչի արդյունքում ներդրողը կարող է չստանալ նախատեսվող շահույթը, կամ անգամ վնաս կրել: Նշված ռիսկը, սակայն, էական է, երբ նախատեսվում է պարտատոմսերի վաճառք մինչև դրանց մարվելը:

Իրացվելիության ռիսկը պարտատոմսերը երկրորդային շուկայում վաճառելու հետ կապված հնարավոր խնդիրներն են՝ կախված արժեթղթերի շուկայում առկա իրավիճակից: Բանկը պարտատոմսերի իրացվելիության ապահովման համար ձեռնարկելու է համապատասխան միջոցներ, այդ թվում՝ շուկա ստեղծողի հետ պայմանագրի կնքում, սակայն իրացվելիության ռիսկն այնուամենայնիվ կարող է ի հայտ գալ:

Արտարժույթային ռիսկն առաջանում է ազգային արժույթի փոխարժեքի տատանումների հետևանքով և կարող է բացասական ազդեցություն ունենալ ներդրողի՝ պարտատոմսերից ստացվող եկամուտների վրա: Կախված այն բանից,

թե ինչպիսի նպատակով է կատարվում ներդրումը, հետագայում դրանք ՀՀ դրամի կամ այլ արժույթի փոխարկելիս հնարավոր են կորուստներ:

Պարտատոմսերին առնչվող ռիսկերի մանրամասն նկարագրությանը ներդրողը կարող է ծանոթանալ սույն ազդագրի Բաժին 2-ի առաջին կետում:

3. Բանկի գործունեության զարգացման և ֆինանսական վիճակի փոփոխություններ

Բանկի գործունեությունը մշտապես գտնվում է Բանկի խորհրդի, Գործադիր մարմնի ուշադրության ներքո և իրականացվում է համաձայն Բանկի խորհրդի կողմից հաստատված «Էռանկարային զարգացման ծրագրի», ինչը հնարավորություն է տալիս օպերատիվ կերպով արձագանքել շուկայական իրավիճակի փոփոխություններին՝ համապատասխանեցնելով Բանկի գործունեությունը շուկայի պահանջներին, ինչպես նաև նվազագույնի հասցնել մի շարք ռիսկային գործոնների բացասական ազդեցությունը: 2023թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի պարտավորությունները կազմել են 673.960 մլն դրամ: Պարտավորությունների ամենախոշոր տարրը ներգրավված ժամկետային ավանդներն են՝ 44.0%: Վերջինս նախորդ տարվա համեմատ աճել է 3.3%-ով և կազմել 296,936 մլն դրամ: Ցպահանջ միջոցները կազմել են ընդհանուր պարտավորությունների 24.7%-ը՝ կազմելով 166,703 մլն դրամ: Նախորդ տարեվերջի համեմատ ցուցանիշն աճել է 10.6%-ով: Վերջինս պայմանավորված է իրավաբանական անձանց հաշիվների աճով: Պարտավորությունների հաջորդ խոշոր տարրը ՀՀ ԿԲ-ի հետ ռեպո համաձայնագրերն են: Վերջիններս կազմել են պարտավորությունների 11.4%-ը կամ 77,000 մլն դրամ: 2023թ. ընթացքում Բանկի կողմից ֆիզիկական անձանցից ներգրավված ավանդների տոկոսադրույքները տատանվել են 1.0-10.25%-ի սահմաններում (կախված ավանդների արժույթից և ժամկետայնությունից): 31.12.2023թ. դրությամբ Բանկի զուտ շահույթը կազմել է 2,142 մլն ՀՀ դրամ: Տոկոսային եկամուտները նախորդ տարվա համեմատ ավելացել են 0.6%-ով և

կազմել 63,727 մլն դրամ, տոկոսային ծախսերը նվազել են 8.61%-ով՝ կազմելով 45,166 մլն դրամ: Ոչ տոկոսային եկամուտները նախորդ տարվա համեմատ նվազել են 84.9%-ով՝ կազմելով 10,258 մլն դրամ: նախորդ տարվա բարձր ցուցանիշը հիմնականում պայմանավորված էր ՀՀ ԿԲ-ից ներգրավված վարկի զեղչատոկոսի գումարով և ՎՏԲ բանկից ձեռքբերված վարկային պորտֆելից ստացված եկամտով: Ոչ տոկոսային ծախսերն ավելացել են 56%-ով՝ կազմելով 18,472 մլն դրամ: Բանկի ընդհանուր ակտիվները դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել են 830,459 մլն ՀՀ դրամ: Ընդհանուր ակտիվների 59.9%-ը կամ 497,826 մլն դրամ կազմել են Բանկի՝ հաճախորդներին տրվող ամորտիզացված արժեքով հաշվառվող վարկային ներդրումները և փոխառությունները: Կանխիկ դրամական միջոցներ և մնացորդներ ՀՀ ԿԲ-ում հոդվածը ընդհանուր ակտիվներում տարեվերջի դրությամբ ունի 7.0% տեսակարար կշիռ: Նախորդ տարվա համեմատ հոդվածը նվազել է 38.07%-ով: Արժեթղթերի պորտֆելը կազմել է ակտիվների 25.9%՝ կազմելով 202,7140 մլն ՀՀ դրամ:

4. Բանկի աուդիտ իրականացնող անձի մասին համառոտ տեղեկատվություն

Բանկի 2011թ. անկախ աուդիտն իրականացրել է «Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ն, 2012թ.՝ «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ն, 2013թ., 2014թ., 2015թ., 2016թ., 2017թ. և 2018թ.՝ «Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ն: Բանկի 2019թ., 2020թ., 2021թ., 2022թ., 2023թ. անկախ աուդիտը ևս իրականացրել է «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ն: «Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ի հասցեն է՝ ՀՀ, ք. Երևան, 0015, Գրիգոր Լուսավորիչ 9, Երևան Պլազա Բիզնես Կենտրոն հեռ. (+ 374 10) 500 964, ֆաքս՝ (374 10) 500 961, www.grantthornton.am

«Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ի հասցեն է՝

ՀՀ, ք. Երևան, 0010, Հանրապետության 22, հեռ. (+ 374 10) 544 301, (+ 374 10) 544 307, (+ 374 10) 544 309 ֆաքս՝ +374 10 562 404, www.bakertilly.am

5. Բանկի կառավարման մարմինների անդամների վերաբերյալ համառոտ տեղեկատվություն

Բանկի կանոնադրությամբ սահմանված են Բանկի կառավարման հետևյալ մարմինները՝

- Բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովը /այսուհետ՝ ժողով/,
- Բանկի խորհուրդը /այսուհետ՝ Խորհուրդ/,
- Բանկի գործադիր մարմինները՝ Բանկի վարչության նախագահը (այսուհետ՝ Վարչության նախագահ) և Բանկի վարչությունը (այսուհետ՝ Վարչություն):

5.1 Բանկի բաժնետերերն են՝

- «ԷՄ ԷՖ ԷՄ Գլոբալ Ինվեստ» ԲԸ - 154,694 (74.999515%) ձայնի իրավունք տվող բաժնետոմսերով
- «Բնակարան Երիտասարդներին» ՎՎԿ ՓԲԸ - 51,566 (25.000485%) ձայնի իրավունք տվող բաժնետոմսերով

Բանկի խորհուրդը կազմված է հիևա անդամներից՝

	<i>Անուն, ազգանուն</i>	<i>Պաշտոն</i>	<i>Փորձառությունը</i>
1	Ալֆրեդ Վալտեր Մոելլի	խորհրդի նախագահ	47 տարի
2	Քրիստոֆ Մաուխլե	խորհրդի անդամ	38 տարի
3	Պատրիկ Ջոզեֆ Սվինթ	խորհրդի անդամ	28 տարի
4	Ջերարդ Յոֆմանս	խորհրդի անդամ	26 տարի
5	Տիգրան Միրզոյան	խորհրդի անդամ	30 տարի

Բանկի խորհրդին կից կոմիտեներ՝

- Ռիսկերի կոմիտե,
- Աուդիտի կոմիտե,
- Նշանակումների և փոխհատուցումների կոմիտե:

Բանկի վարչությունը կազմված է 4 անդամներից՝

	<i>Վնուն, ազգանուն</i>	<i>Պաշտոն</i>	<i>Փորձառությունը</i>
1	Գևորգ Թառումյան	Վարչության նախագահ	34 տարի
2	Ազամատ Խակոյ	Գլխավոր Գործառնական Տնօրեն	36 տարի
3	Գրիգոր Պետրոսյան	Ռիսկերի կառավարման և հսկողության Գլխավոր Տնօրեն	14 տարի
4	Ռուբեն Մելքոնյան	Գլխավոր Ֆինանսական տնօրեն/Գլխավոր Հաշվապահ	22 տարի

Բանկի վարչությանը կից կոմիտեներ՝

- Վարային կոմիտե,
- Խնդրահարույց ակտիվների կոմիտե,
- Ակտիվների և պարտավորությունների կառավարման կոմիտե,
- Կարգապահական կոմիտե,
- Հաճախորդների սպասարկման կոմիտե:

Բանկի աշխատակիցների թիվը 31.12.2023թ-ի դրությամբ կազմում է 983 աշխատակից:

6. Բանկի պարտատոմսերի հիմնական տվյալները

Բանկն այս պահին շրջանառության մեջ ունի պարտատոմսերի 1 թողարկում՝ 17 մլն ԱՄՆ դոլար անվանական ծավալով (170 000 հատ 100 ԱՄՆ դոլար անվանական արժեքով): Պարտատոմսերն ցուցակված չեն Հայաստանի Ֆոնդային Բորսայում: Պարտատոմսերի մարման ամսաթիվն է 30.10.2026թ.:

Սույն Ծրագրային ազդագրով առաջարկվելու են անվանական, չփոխարկվող, արժեկտրոնային, ոչ փաստաթղթային արտարժույթային և դրամային պարտատոմսեր:

Արտարժույթային պարտատոմսերը տեղաբաշխվելու և մարվելու են ԱՄՆ դոլարով և դրանց դիմաց արժեկտրոնային վճարումները կատարվելու են ԱՄՆ դոլարով: Թողարկման (առաջարկի) ծրագրային ծավալը կազմելու է 15,000,000.00

(տասնհինգ միլիոն) ԱՄՆ դոլար: Մեկ պարտատոմսի անվանական արժեքն է 100 ԱՄՆ դոլար, թողարկվող պարտատոմսերի քանակը՝ 150,000 հատ: Պարտատոմսերի յուրաքանչյուր թողարկման ծավալը, արժեկտրոնային եկամտաբերությունը, պարտատոմսերի շրջանառության ժամկետը, արժեկտրոնների վճարման պարբերականությունը, տեղաբաշխման ժամկետը ենթակա են որոշման Թողարկողի Վարչության կողմից, տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ: Եթե արժեկտրոնի վճարման օրը ոչ աշխատանքային է, ապա արժեկտրոնի վճարման օր է համարվում այդ օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրը:

Պրամային պարտատոմսերը տեղաբաշխվելու և մարվելու են ՀՀ դրամով և դրանց դիմաց արժեկտրոնային վճարումները կատարվելու են ՀՀ դրամով: Թողարկման (առաջարկի) ծրագրային ծավալը կազմելու է 35,000,000,000.00 (երեսունհինգ միլիարդ) ՀՀ դրամ: Մեկ պարտատոմսի անվանական արժեքն է 100,000 ՀՀ դրամ, թողարկվող պարտատոմսերի քանակը՝ 350,000 հատ: Պարտատոմսերի յուրաքանչյուր թողարկման ծավալը, արժեկտրոնային եկամտաբերությունը, պարտատոմսերի շրջանառության ժամկետը, արժեկտրոնների վճարման պարբերականությունը, տեղաբաշխման ժամկետը ենթակա են որոշման Թողարկողի Վարչության կողմից, տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ: Եթե արժեկտրոնի վճարման օրը ոչ աշխատանքային է, ապա արժեկտրոնի վճարման օր է համարվում այդ օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրը:

Բանկի անվանական պարտատոմսերի թողարկման և դրան հետևող տեղաբաշխման հիմնական նպատակ է հանդիսանում շուկայից միջոցների ներգրավումը: Թողարկողի կողմից պարտատոմսերի տեղաբաշխման արդյունքում ներգրավված դրամական միջոցներն ուղղվելու են կարճաժամկետ և միջնաժամկետ վարկերի տրամադրմանը և ներդրումների իրականացմանը:

Պարտատոմսերի թողարկման, տեղաբաշխման, շրջանառության ու մարման վերջնական պայմանները ենթակա են որոշման Բանկի Վարչության կողմից տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ: Պարտատոմսերի յուրաքանչյուր թողարկման համար կազմվող թողարկման վերջնական պայմանները ՀՀ ԿԲ են ներկայացվում և հրապարակվում յուրաքանչյուր թողարկման տեղաբաշխումից առնվազն 2 (երկու) աշխատանքային օր առաջ Բանկի www.amiobank.am ինտերնետային կայք-էջում:

Պարտատոմսերի ձեռքբերման համար ներդրողները սահմանված կարգով պետք է լրացնեն համապատասխան պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարականը, պատշաճ կերպով ներկայացնեն Բանկ և կատարեն համապատասխան վճարում, որով կհավաստեն պարտատոմսերի թողարկման պայմաններն ընդունելը:

7. Պարտատոմսերի առաջարկի և դրանց առևտրին թույլտվության համակողմանի նկարագիրը

Պարտատոմսերի ձեռքբերման համար ներդրողները սահմանված կարգով պետք է լրացնեն համապատասխան պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարականը, պատշաճ կերպով ներկայացնեն Բանկ և կատարեն համապատասխան վճարում, որով կհավաստեն պարտատոմսերի թողարկման պայմաններն ընդունելը:

Յուրաքանչյուր տրանշի տեղաբաշխման ավարտից հետո Բանկը նախատեսում է դիմել «Հայաստանի Ֆոնդային Բորսա» ԲԲԸ կարգավորվող շուկայում պարտատոմսերը ցուցակելու և առևտրին թույլատրելու նպատակով և պարտատոմսերի իրացվելիության բարձրացման նպատակով արժեթղթերի շուկայի մասնակիցներից մեկի հետ կնքել շուկա ստեղծողի պայմանագիր: Բանկը կարող է դիմել նաև արտասահմանում գործող ֆոնդային բորսա՝ պարտատոմսերի կրկնակի

ցուցակման համար: Պարտատոմսերի ցուցակման դիմումը կարող է նաև չբավարարվել:

8. Բանկի ամփոփ ֆինանսական տվյալները

Ֆինանսական գործակիցների հաշվարկման բանաձևերը ներկայացված են Հավելված 2-ում:

<i>Ցուցանիշի անվանումը</i>	<i>31/12/23*</i>	<i>31/12/22*</i>	<i>31/12/21*</i>
Զուտ շահույթ շահութահարկի ծախսի նվազեցումից հետո	2,141,567	-8,597,887	537,224
Սեփական կապիտալի միջին մեծություն **	154,062,935	90,150,066	41,982,556
Սեփական կապիտալի շահութաբերություն (ROE)%	1.39%	-9.54%	1.28%
Զուտ շահույթ շահութահարկի ծախսի նվազեցումից հետո	2,141,567	-8,597,887	537,224
Ընդհանուր ակտիվների միջին մեծություն	821,762,307	836,445,874	879,370,490
Ակտիվների շահութաբերություն (ROA)%	0.26%	-1.03%	0.06%
Զուտ շահույթ շահութահարկի ծախսի նվազեցումից հետո	2,141,567	-8,597,887	537,224
Գործառնական եկամուտ	28,288,465	76,898,846	28,004,384
Զուտ շահույթի մարժա (NPM) %	7.57%	-11.18%	1.92%
Գործառնական եկամուտ	28,288,465	76,898,846	28,004,384
Ընդհանուր ակտիվների միջին մեծություն	821,762,307	836,445,874	879,370,490
Ակտիվների օգտագործման գործակից % (AU)	3.44%	9.19%	3.18%
Ընդհանուր ակտիվների միջին մեծություն	821,762,307	836,445,874	879,370,490
Սեփական կապիտալի միջին մեծություն	154,062,935	90,150,066	41,982,556
Սեփական կապիտալի մուլտիպլիկատոր	5.33	9.28	20.95

Ցուցանիշի անվանումը	31/12/23*	31/12/22*	31/12/21*
(EM)			
Զուտ տոկոսային եկամուտ	18,560,328	13,936,599	15,116,984
Եկամտաբեր ակտիվների միջին մեծություն	734,346,599	724,277,561	743,032,210
Զուտ տոկոսային մարժա %(NIM)	2.5%	1.9%	2.0%
Տոկոսային եկամուտ	63,726,752	63,357,152	59,548,068
Եկամտաբեր ակտիվների միջին մեծություն	734,346,599	724,277,561	743,032,210
Եկամտաբեր ակտիվների եկամտաբերություն, %	8.68%	8.75%	8.01%
Տոկոսային ծախսեր	45,166,424	49,420,553	44,431,084
Պարտավորություններ, որոնց գծով կատարվում են տոկոսային ծախսեր	660,885,846	675,634,527	800,244,457
Ծախսատարություն այն պարտավորությունների, որոնց գծով կատարվում են ծախսեր, %	6.83%	7.31%	5.55%
Զուտ շահույթ շահութահարկի ծախսի նվազեցումից հետո	2,141,567	-8,597,887	537,224
Բաժնետոմսերի միջին կշռված թիվը (հատ)	206,260	206,260	51,040
Զուտ շահույթը մեկ բաժնետոմսի հաշվով (EPS)	10.38	(41.68)	10.53
ՍՊՐԵԴ, %	1.8%	1.4%	2.5%

Բաժին 2. ԹՈՂԱՐԿՎՈՂ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

1. Ռիսկային գործոններ

Պարտատոմսերում ներդրումները ենթակա են որոշակի ռիսկերի, որոնք կապված են Բանկի ֆինանսատնտեսական վիճակի և գործունեության արդյունքների հետ (թողարկողի ռիսկ), ինչպես նաև ֆինանսական շուկայում առկա իրավիճակի հետ (շուկայական ռիսկ): Ներդրողը ներդրումային որոշում կատարելիս պետք է մանրակրկիտ ուսումնասիրի և վերլուծի դրա հետ կապված և սույն փաստաթղթում ներկայացված ռիսկային բոլոր գործոնները և այլ տեղեկատվությունը: Ներդրողը պետք է հաշվի առնի, որ սույն փաստաթղթում ներկայացված ռիսկային գործոնների ցանկը սպառիչ չէ, և հնարավոր է անկանխատեսելի բնույթի ռիսկերի ի հայտ գալը:

Տոկոսադրույքի ռիսկ. Տոկոսադրույքի ռիսկն առաջանում է շուկայական տոկոսադրույքների փոփոխության հետևանքով. տոկոսադրույքների աճի դեպքում պարտատոմսերի գինը նվազում է, ինչը կարող է հանգեցնել նրան, որ ներդրողը մինչև մարումը պարտատոմսը վաճառելու դեպքում կարող է կրել վնաս, կամ չստանալ նախատեսված եկամուտը: Այդ ռիսկի ի հայտ գալը կապված է տնտեսության ընդհանուր վիճակի, ֆինանսական շուկայում ռեսուրսների առաջարկի և պահանջարկի հարաբերակցության, գնաճի և այլ գործոնների հետ:

Նշված ռիսկը, սակայն, էական է, երբ նախատեսվում է պարտատոմսերի վաճառք մինչև դրանց մարումը: Բոլոր այն ներդրողների համար, ովքեր պարտատոմսերը պահելու են մինչև դրանց մարումը, տոկոսադրույքի ռիսկն էական է միայն ստացված արժեկտրոնների վերաներդրման իմաստով:

Վերաներդրման ռիսկ. այն ներդրողները, ովքեր Թողարկողի պարտատոմսերը ձեռք կբերեն ձեռք բերման գործարքով սահմանված մինչև մարումը եկամտաբերությունն ապահովելու ու ստանալու համար, պետք է նկատի ունենան, որ իրենց վրա են վերցնում վերաներդրման ռիսկ, որը պայմանավորված է Թողարկողի պարտատոմսերից պարբերաբար ստացվող արժեկտրոնային

եկամուտների առնվազն համարժեք եկամտաբերությամբ (ձեռք բերման/գնման գործարքով սահմանված մինչև մարումը եկամտաբերությամբ) ներդրում կատարելու հնարավորությունների հավանական բացակայությամբ: Վերաներդրման ռիսկը կարող է էական բացասական ազդեցություն ունենալ ներդրողների երկարաժամկետ ներդրումների վրա, սակայն էական գործոն չի կարող հանդիսանալ կարճաժամկետ ներդրումների համար:

Իրացվելիության ռիսկ. արժեթղթերի շուկայում կարող է ստեղծվել մի իրավիճակ, երբ պարտատոմսերի սեփականատերը չկարողանա ցանկացած պահի դրությամբ վաճառել իր պարտատոմսերը: Դրա պատճառներից կարող է լինել շուկայի ցածր զարգացվածության մակարդակը, շուկայական իրավիճակի կտրուկ փոփոխությունները: Թեև Բանկը իր պարտատոմսերի իրացվելիության բարձրացման համար դրանց տալիս է որոշակի մրցակցային և ներդրումային որակներ, սակայն, վերջինս, պայմանավորված տնտեսության ընդհանուր վիճակով և տատանումներով՝ ներդրողներին չի կարող երաշխավորել, որ դրանք կլինեն խիստ իրացվելի:

Արտարժույթային ռիսկ. այս ռիսկն առնչվում է այն ներդրողներին, որոնք պարտատոմսերի ձեռք բերման և մարման դիմաց ստացված գումարները փոխարկելու են մեկ արժույթից մեկ այլ արժույթի: Արտարժույթային ռիսկն առաջանում է ազգային արժույթի փոխարժեքի տատանումների պատճառով և կարող է բացասական ազդեցություն ունենալ ներդրողի՝ պարտատոմսերից ստացվող եկամուտների վրա: Մասնավորապես, ազգային արժույթի արժևորման դեպքում, պարտատոմսի մարումից ստացված գումարները՝ արտարժույթով արտահայտված, ՀՀ դրամի փոխարկելու դեպքում հաշվարկված եկամուտը կարող է նախատեսվածից քիչ լինել և հակառակը: Ուստի կախված թե ներդրողն ինչ արժույթով և ինչ նպատակով է պարտատոմսեր ձեռք բերում, ազգային արժույթի

արժևորումը կամ արժեզրկումը տարբեր ազդեցություն կունենան վերջինիս կողմից ստացվող եկամտի վրա:

Ինֆլացիոն ռիսկ. այս ռիսկը ի հայտ է գալիս, երբ փաստացի գնաճն ավելի բարձր է լինում քան սպասված գնաճը, կամ անսպասելի գնաճը իջեցնում է պարտատոմսից ակնկալվող եկամտաբերությունը: Ինֆլացիոն ռիսկը հաշվի է առնվում առանձին արժույթների ներդրման դեպքում առանձին: Այս ռիսկը բնորոշ է կայուն եկամտաբերություն ունեցող բոլոր ներդրումային գործիքներին, ուստի ներդրողները պետք է նաև ձևավորվեն իրենց սեփական սպասումները գնաճի հետ կապված և որոշում կայացնեն ներդրման արժույթի և ժամկետի առումով:

Վարկային ռիսկ. ներդրողները ցանկացած թողարկողի կորպորատիվ պարտատոմսեր ձեռք բերելիս (ապահովված պարտատոմսերի դեպքում ավելի քիչ) իրենց վրա են վերցնում թողարկողի վարկային ռիսկը, որը կապված է ապագայում թողարկողի հնարավոր ֆինանսական վիճակի վատթարացման, արժեկտրոնային վճարումներ իրականացնելու կամ պարտատոմսերը իրենց անվանական արժեքով մարման անհնարինության եւ հավանական սնանկացման հետ:

2. Հիմնական տեղեկատվություն

«ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ անվանական պարտատոմսերի թողարկման և դրան հետևող տեղաբաշխման հիմնական նպատակ է հանդիսանում ՀՀ արժեթղթերի շուկայում միջոցների ներգրավումը: Թողարկողի կողմից պարտատոմսերի տեղաբաշխման արդյունքում ներգրավված դրամական միջոցներն ուղղվելու են կարճաժամկետ և միջնաժամկետ վարկերի տրամադրմանը և ներդրումների իրականացմանը:

3. Տեղեկատվություն «ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ անվանական պարտատոմսերի վերաբերյալ

3.1. Արժեթղթերի տեսակը և դասը

«ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ կողմից թողարկվող պարտատոմսերն անվանական, արժեկտրոնային, առանց հետգնման հնարավորության, ոչ փաստաթղթային և ոչ

փոխարկելի պարտատոմսեր են: Թողարկվող պարտատոմսերը դեռևս չունեն տարբերակիչ ծածկագիր:

3.2. Երկիրը, որի օրենսդրության համաձայն թողարկվում են արժեթղթերը

Թողարկումն իրականացվում է ՀՀ օրենսդրության համաձայն, և դրա շուրջ ծագող վեճերը, այդ թվում՝ դատական, ենթակա են լուծման ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

3.3. Արժեթղթերի ձևը

Թողարկվող պարտատոմսերը ոչ փաստաթղթային են, իսկ պարտատոմսերի ռեեստրը վարվելու է «Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիա» ԲԲԸ-ի կողմից՝ ըստ համապատասխան կանոնների և ընթացակարգերի:

3.4 Արժեթղթերի անվանական արժեքը և քանակը

Թողարկվող արտարժույթային պարտատոմսերի ծրագրային ծավալը կազմում է 15,000,000.00 (տասնհինգ միլիոն) ԱՄՆ դոլար: Մեկ պարտատոմսի անվանական արժեքն է 100 ԱՄՆ դոլար, իսկ քանակը՝ 150,000 հատ: Թողարկվող դրամային պարտատոմսերի ծրագրային ծավալը կազմում է 35,000,000,000.00 (երեսունհինգ միլիարդ) ՀՀ դրամ: Մեկ պարտատոմսի անվանական արժեքն է 100,000 ՀՀ դրամ, իսկ քանակը՝ 350,000 հատ:

3.5 Թողարկման արժույթը

Պարտատոմսերը թողարկվում են ԱՄՆ դոլարով և ՀՀ դրամով՝ համաձայն սույն Ծրագրային ազդագրով սահմանված ծավալների:

3.6 Արժեթղթերից բխող իրավունքների նկարագրությունը

ՀՀ օրենսդրության համաձայն պարտատոմսերի սեփականատերերն ունեն պարտատոմսերից բխող հետևյալ իրավունքները.

- ստանալ վճարվող արժեկտրոնները՝ համաձայն սույն ազդագրի 2-րդ բաժնի 3-րդ կետի 3.8 ենթակետով սահմանված ժամանակացույցի և մարման գումարը՝

ըստ ազդագրով սահմանված կարգի: Արժեկտրոնային եկամտի ստացման և շրջանառության ժամկետի վերջում պարտատոմսերի մարման գումարի ստացման իրավունքի իրականացման համար ներդրողներից լրացուցիչ գործողությունների կատարում չի պահանջվում և արժեկտրոնային եկամուտը/պարտատոմսի մարման գումարը փոխանցվում է ներդրողի բանկային հաշվին Թողարկողի կողմից,

- թողարկողի կողմից պարտատոմսերի արժեկտրոնները և/կամ մարման գումարը սահմանված ժամկետում վճարելն ուշացնելու դեպքում ձեռնարկել պարտատոմսերի սեփականության իրավունքից բխող իր պահանջների բավարարման ուղղությամբ օրենքով թույլատրվող գործողություններ,

- գրավադրել պարտատոմսերն օրենքով սահմանված կարգով, իր ցանկությամբ օտարել պարտատոմսերը ֆոնդային բորսայում (ցուցակված և առևտրին թույլատրված լինելու դեպքում) կամ արտաբորսայում՝ օրենքով սահմանված կարգով, ընդ որում՝ ներդրողները պետք է հաշվի առնեն, որ ՀՀ օրենսդրությամբ չի թույլատրվում կարգավորվող շուկայից (ֆոնդային բորսա) դուրս վաճառել կարգավորվող շուկայում առևտրին թույլատրված արժեթղթեր. բացառություն են կազմում ՀՀ ԿԲ կողմից կնքվող գործարքները: Դրանք ՀՀ ԿԲ և ֆինանսական շուկայի մասնագիտացված ընկերությունների միջև հնարավոր գործարքներն են և թողարկողի կողմից իր թողարկած արժեթղթերի հետզնման կամ ձեռքբերման գործարքները:

Համաձայն սույն ազդագրի 2-րդ բաժնի 3-րդ կետի 3.9 ենթակետի՝ Բանկի թողարկած պարտատոմսերի սեփականատերերին պարտատոմսերում կատարված ներդրումները մարվելու են պարտատոմսի անվանական արժեքով անկանխիկ ձևով՝ պարտատոմսերի սեփականատերերի/անվանատերերի ռեեստրում նշված բանկային հաշիվներին փոխանցելու միջոցով:

3.7 Առաջարկվող արժեթղթերի դասակարգման մասին տեղեկատվություն

Համաձայն «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» ՀՀ օրենքի՝ բանկի լուծարման դեպքում նրա պարտատերերի պահանջները բավարարվում են հետևյալ հերթականությամբ.

- **առաջին՝** ադմինիստրացիայի, լուծարային կառավարչի կողմից օրենքով սահմանված լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ և հիմնավորված ծախսերը, այդ թվում՝ աշխատավարձը՝ ՀՀ ԿԲ-ի խորհրդի կողմից հաստատված նախահաշվի շրջանակներում,

- **երկրորդ՝** այն պարտատերերի պահանջները, որոնք բանկին վարկ, փոխառություն են տրամադրել կամ բանկում ավանդ են ներդրել կամ բանկային հաշվին դրամական միջոցներ են մուտքագրել բանկում ադմինիստրացիա նշանակվելուց հետո, բացառությամբ պարտատիրոջ և ՀՀ ԿԲ-ի միջև կնքված պայմանագրով սահմանված դեպքերի,

- **երրորդ՝** ՀՀ և օտարերկրյա քաղաքացիների, ինչպես նաև քաղաքացիություն չունեցող անձանց ՀՀ դրամով բանկային ավանդները և բանկային հաշիվներին առկա մնացորդները՝ մինչև 16 միլիոն դրամի չափով, իսկ արտարժույթային ավանդների (հաշիվների) դեպքում՝ 7 միլիոն դրամին համարժեք չափով, ընդ որում՝ բանկի նկատմամբ ունեցած պահանջի գումարը 16 միլիոն դրամը (պահանջը արտարժույթով արտահայտված լինելու դեպքում՝ 7 միլիոն դրամին համարժեք չափը) գերազանցելու դեպքում տվյալ անձի՝ մինչև 16 միլիոն դրամի չափով (պահանջը արտարժույթով արտահայտված լինելու դեպքում՝ 7 միլիոն դրամին համարժեք չափով) պահանջը բավարարվում է երրորդ հերթով, իսկ այդ գումարը գերազանցող պահանջը՝ չորրորդ հերթով,

- **չորրորդ՝** բանկի այլ պարտավորությունները, ներառյալ՝ «Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամ»-ի կողմից հատուցման կազմակերպման

հետ կապված ծախսերը, բացառությամբ երկրորդ հերթում ընդգրկված բանկային ավանդների և բանկային հաշիվների մնացորդների,

- **հինգերորդ՝** պետական բյուջեի և համայնքների բյուջեների նկատմամբ բանկի պարտավորությունները, ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ պարտադիր վճարումները,
- **վեցերորդ՝** ստորադաս փոխառություններից բխող պահանջները,
- **յոթերորդ՝** բանկի մասնակիցների պահանջները:

Թողարկողի կողմից առաջարկվող պարտատոմսերի սեփականատերերի յուրաքանչյուր հերթի պահանջները բավարարվում են նախորդ հերթի պահանջները լրիվ բավարարվելուց հետո:

Բանկի սնանկ ճանաչվելու դեպքում պարտատերերին վճարումները կատարվում են «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածով սահմանված հերթականությամբ, որի համաձայն բանկի կողմից առաջարկվող պարտատոմսերի սեփականատերերի պահանջները բավարարվում են 4-րդ հերթին, բացառությամբ «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքի իմաստով ավանդ հանդիսացող ներդրումներից, որոնք հատուցվում են 3-րդ հերթին: Ընդ որում, յուրաքանչյուր հերթի պահանջները բավարարվում են նախորդ հերթի պահանջները լրիվ բավարարելուց հետո: Պարտատոմսերի սեփականատերերը կարող են օգտվել օրենքով և իրավական ակտերով սահմանված այլ իրավունքներից:

Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին ՀՀ օրենքի և նույն օրենքի հիման վրա ընդունված իրավական այլ ակտերի իմաստով բանկի թողարկած անվանական արժեթղթերով, տվյալ դեպքում՝ պարտատոմսերով, ֆիզիկական անձանցից (այդ թվում՝ անհատ

ձեռնարկատերերից) ներգրավված դրամական միջոցները համարվում են բանկային ավանդ, որոնց հատուցումը երաշխավորված է նույն օրենքով սահմանված կարգով և պայմաններով, հետևյալ չափերով.

- եթե ավանդատուն անվճարունակ բանկում ունի միայն դրամային բանկային ավանդ, ապա երաշխավորված ավանդի չափը տասնվեց միլիոն հայկական դրամ է,

- եթե ավանդատուն անվճարունակ բանկում ունի միայն արտարժույթային բանկային ավանդ, ապա երաշխավորված ավանդի չափը յոթ միլիոն հայկական դրամ է,

- եթե ավանդատուն անվճարունակ բանկում ունի դրամային և արտարժույթային բանկային ավանդներ, և դրամային բանկային ավանդի գումարը յոթ միլիոն հայկական դրամից ավել է, ապա երաշխավորվում է միայն դրամային ավանդը՝ մինչև տասնվեց միլիոն հայկական դրամով,

- եթե ավանդատուն անվճարունակ բանկում ունի դրամային և արտարժույթային բանկային ավանդներ, և նրա դրամային բանկային ավանդի գումարը պակաս է յոթ միլիոն հայկական դրամից, ապա երաշխավորվում է դրամային բանկային ավանդն ամբողջությամբ և արտարժույթային բանկային ավանդը՝ յոթ միլիոն դրամի և հատուցված դրամային բանկային ավանդի տարբերության չափով:

Պարտատոմսերի սեփականատերերն իրավունք ունեն ինքնուրույն տնօրինել, տիրապետել և օգտագործել իրենց սեփականության ներքո գտնվող պարտատոմսերը:

Պարտատոմսերում ներդրումներ կատարող անձինք պարտավոր են նախքան պարտատոմսերի ձեռք բերումը ՀԿԴ արժեթղթերի հաշվառման և հաշվարկային միասնական համակարգում կամ ՀԿԴ հաշվի օպերատորներից որևէ մեկի մոտ ունենալ սեփականատիրոջ (անվանատիրոջ) արժեթղթերի հաշիվ, ինչպես նաև

կատարել պարտատոմսերի ձեռք բերման կամ օտարման հետ կապված պարտադիր վճարները՝ կապված սեփականության իրավունքի գրանցման կամ գործարքների ձևակերպման հետ:

Բանկի պարտատոմսերի նկատմամբ իրավունքների և պարտավորությունների գրանցումը և հաշվառումն իրականացնում է «Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիա» ԲԲԸ-ը՝ հաշվի օպերատորի միջոցով:

3.8 Արժեկտրոնի տոկոսադրույքը և դրա վճարման պայմանները

Պարտատոմսերի յուրաքանչյուր տրանշի ծավալը, արժեկտրոնային եկամտաբերությունը և վճարման պարբերականությունը ենթակա են որոշման Բանկի Վարչության կողմից տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ: Եթե արժեկտրոնի վճարման օրը ոչ աշխատանքային է, ապա արժեկտրոնի վճարման օր է համարվում այդ օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրը:

Պարտատոմսերի դիմաց նախատեսվող արժեկտրոնային եկամուտը ԱՄՆ դոլարով թողարկվող պարտատոմսերի դեպքում հաշվարկվելու և վճարվելու է ԱՄՆ դոլարով: Դրամային պարտատոմսերի դիմաց նախատեսվող արժեկտրոնային եկամուտը հաշվարկվելու և վճարվելու է ՀՀ դրամով:

Պարտատոմսերի դիմաց նախատեսվող արժեկտրոնային եկամտի գումարը վճարվելու է հաշվարկման նախորդ աշխատանքային օրվա ժամը 18:00-ի դրությամբ պարտատոմսերի սեփականատերերի ռեեստրում գրանցված անձանց (սեփականատերեր կամ անվանատերեր)՝ վերջիններիս հաշվեհամարներին համապատասխան վճարումների մուտքագրման միջոցով: Վճարվելիք արժեկտրոնները հաշվարկվելու են տասնորդական ճշտությամբ՝ կլորացված ստորակետից հետո մեկ նիշի ճշտությամբ՝ ըստ կլորացման թվաբանական կանոնների: Պարտատոմսերի սեփականատերերի և/կամ անվանատերերի ռեեստրում նշված բանկային հաշվեհամարների բացակայության կամ ճիշտ չլինելու

դեպքում գումարը կմուտքագրվի Բանկի համապատասխան տարանցիկ հաշվեհամարին՝ մինչև հաճախորդի կողմից համապատասխան հանձնարարականների ստացումը:

Պարտատոմսերի ոչ ռեզիդենտ սեփականատերերի առկայության դեպքում, Բանկն արժեկտրոնի վճարումը ՀՀ տարածքում գործող բանկերում կիրականացնի այնպես, ինչպես ռեզիդենտ սեփականատերերին, իսկ ՀՀ տարածքից դուրս գործող բանկերում՝ սեփականատիրոջ հանձնարարագրով և Բանկի կողմից մատուցվող լրացուցիչ ծառայությունների համար Բանկում գործող սակագներով կփոխանցի սեփականատերերի կողմից նշված համապատասխան հաշվեհամարներին:

Տեղաբաշխման ավարտից հետո երկու աշխատանքային օրվա ընթացքում Բանկի ինտերնետային կայքում՝ www.amiobank.am, կիրապարակվի նաև տեղաբաշխված պարտատոմսերի դիմաց արժեկտրոնների վճարման, ինչպես նաև պարտատոմսերի մարման ժամանակացույցը՝ հստակ ամսաթվերով:

Յուրաքանչյուր պարտատոմսի գծով արժեկտրոնային եկամտի հաշվարկը կկատարվի հետևյալ բանաձևով՝

$$ԱԳ = (FV * C)/k$$

որտեղ՝

ԱԳ - արժեկտրոնի գումարն է,

FV - մեկ պարտատոմսի անվանական արժեքը,

C - տարեկան արժեկտրոնային անվանական տոկոսադրույքն է՝ արտահայտված տոկոսներով,

k - մեկ տարում վճարվող արժեկտրոնների թիվն է:

Արժեկտրոնի կուտակումն իրականացվելու է հետևյալ բանաձևով՝

$$AI = FV * C/k * DCS/DCC$$

որտեղ՝

AI - կուտակված արժեկտրոնային եկամուտն է,

FV - մեկ պարտատոմսի անվանական արժեքն է,

C - տարեկան արժեկտրոնային անվանական տոկոսադրույքն է՝ արտահայտված տոկոսներով,

k - մեկ տարում վճարվող արժեկտրոնների թիվն է (հաճախականությունը),

DCS – հաշվարկին նախորդող արժեկտրոնի վճարման օրից մինչև հաշվարկի կատարման օրն օրերի քանակն է՝ համապատասխան օրերի հաշվարկման պայմանականության դեպքում,

DCC - հաշվարկին նախորդող արժեկտրոնի վճարման օրից մինչև հաշվարկին հաջորդող արժեկտրոնի վճարման օրն ընկած օրերի քանակն է՝ համապատասխան օրերի հաշվարկման պայմանականության դեպքում:

Օրերի հաշվարկման պայմանականությունը Թողարկողի պարտատոմսերի համար համարվում է Actual/ Actual-ը:

Պարտատոմսի տարեկան արդյունավետ տոկոսային եկամտաբերությունը հաշվարկվում է հետևյալ կերպ՝

$$\text{ՊՏԵ} = (1 + S/\zeta)^{\zeta} - 1$$

որտեղ՝

ՊՏԵ - տարեկան արդյունավետ տոկոսային եկամտաբերությունն է,

S - տարեկան արժեկտրոնային տոկոսադրույքն է,

ζ - մեկ տարվա ընթացքում արժեկտրոնների վճարման հաճախականությունն է:

3.9 Պարտատոմսերի մարման ժամկետը և արժեքը

Պարտատոմսերի յուրաքանչյուր տրանշի մարման ժամկետը ենթակա է որոշման Բանկի Վարչության կողմից տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ: Եթե մարման օրը ոչ աշխատանքային է, ապա վճարման օր է համարվում այդ օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրը:

Պարտատոմսերի մարման և վճարման ամսաթվերը նույնն են:

Պարտատոմսերի մարման գումարների վճարումները կատարվում է մարման օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 18:00-ի դրությամբ պարտատոմսերի սեփականատերերի և/կամ անվանատերերի ռեեստրում գրանցված անձանց՝ վերջիններիս բանկային հաշիվներին համապատասխան վճարումների մուտքագրման միջոցով: Պարտատոմսերի սեփականատերերի և/կամ անվանատերերի ռեեստրում նշված բանկային հաշվեհամարների բացակայության կամ ճիշտ չլինելու դեպքում գումարը կմուտքագրվի Բանկի համապատասխան տարանցիկ հաշվեհամարին՝ մինչև հաճախորդի կողմից համապատասխան հանձնարարականների ստացումը:

Թողարկողի կողմից պարտատոմսերի վաղաժամկետ մարում չի նախատեսվում:

3.10 Արժեթղթերի տարեկան եկամտաբերությունը

Պարտատոմսերի տարեկան եկամտաբերությունը ենթակա է որոշման Վարչության կողմից տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ, սույն Ազդագրի 4.14 կետում բերված բանաձևի:

3.11 Իրավասու մարմնի որոշման համառոտ բովանդակությունը թողարկման մասին

«ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ պարտատոմսերը թողարկվում են համաձայն Խորհրդի 2024թ. փետրվարի 15-ի թիվ 3 արձանագրության N 10.1 արձանագրային որոշման: Սահմանվել է, որ Բանկի անվանական պարտատոմսերի բաժանորդագրություն չի իրականացվելու: Որոշմամբ ամրագրվել է այն առավելագույն ծավալը, որի շրջանակներում Բանկի Վարչությունը առանձին որոշմամբ (որոշումներով) կարող է իրականացնել պարտատոմսերի տեղաբաշխում (տեղաբաշխումներ): Պարտատոմսերի տեղաբաշխումներին վերաբերող վերջնական պայմանները հաստատված են համարվում համաձայն պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ կայացված Բանկի

Վարչության որոշման (որոշումների)՝ չհակասելով օրենսդրությանը և Բանկի Խորհրդի որոշման պայմաններին:

3.12 Շրջանառության սահմանափակումներ

ՀՀ օրենսդրությամբ, Բանկի կանոնադրությամբ և Բանկի անվանական պարտատոմսերի թողարկման Բանկի Խորհրդի կամ Վարչության որոշմամբ պարտատոմսերում ներդրումներ կատարողների նկատմամբ սահմանափակումներ չեն սահմանվում:

Պարտատոմսերի ազատ շրջանառության հետ կապված սահմանափակումներ չկան՝ բացառությամբ օրենքով և ենթաօրենսդրական ակտերով սահմանված դեպքերի:

Թողարկողը պարտադիր դիմելու է պարտատոմսերը կարգավորվող շուկայում ցուցակելու համար, և, համաձայն ՀՀ գործող օրենսդրության, պարտատոմսերի ցուցակման դեպքում վերջիններիս հետագա շրջանառությունը կարող է իրականացվել միայն կարգավորվող շուկայում:

Ներդրողները կարող են իրենց ցանկությամբ օտարել պարտատոմսերը ֆոնդային բորսայում (ցուցակված և առևտրին թույլատրված լինելու դեպքում) կամ արտաբորսայում՝ օրենքով սահմանված կարգով, ընդ որում՝ ներդրողները պետք է հաշվի առնեն, որ ՀՀ օրենսդրությամբ չի թույլատրվում կարգավորվող շուկայից (ֆոնդային բորսա) դուրս վաճառել կարգավորվող շուկայում առևտրին թույլատրված արժեթղթեր, բացառություն են կազմում.

- ՀՀ ԿԲ կողմից կնքվող գործարքները, դրանք ՀՀ ԿԲ և ֆինանսական շուկայի մասնագիտացված ընկերությունների միջև հնարավոր գործարքներն են,
- թողարկողի կողմից իր թողարկած արժեթղթերի հետզնման կամ ձեռքբերման գործարքները:

3.13 Արժեթղթերից ստացվող եկամուտների հարկումը

Պարտատոմսերում ներդրում կատարող անձը կարող է եկամուտ ստանալ հետևյալ դեպքերում՝

- պարտատոմսերի դիմաց ստացվող տոկոսից,
- մինչև մարումը վաճառքի և գնման գների դրական տարբերությունից (կապիտալի հավելած):

Պարտատոմսերից ստացվող եկամուտը ենթակա է հարկման շահութահարկով (հրավաբանական անձանց համար) և եկամտային հարկով (ֆիզիկական անձանց համար): Հայաստանի Հանրապետությունում շահութահարկ են վճարում ՀՀ-ում ստեղծված կազմակերպությունները և ոչ ռեզիդենտները (օտարերկրյա պետություններում ստեղծված կազմակերպությունները, ինչպես նաև միջազգային կազմակերպությունները և դրանց կողմից Հայաստանի Հանրապետությունից դուրս ստեղծված կազմակերպությունները): Ընդ որում՝ վերջիններիս համար հարկվող օբյեկտ

է համարվում հայաստանյան աղբյուրներից ստացվող հարկվող շահույթը: Հարկվող շահույթը հարկատուի համախառն եկամտի և ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված նվազեցումների դրական տարբերությունն է: Շահութահարկի գումարը սույն Ծրագրային ազդագրի հրապարակման պահին հաշվարկվում է հարկվող շահույթի նկատմամբ՝ 18 տոկոս դրույքաչափով:

Շահութահարկի վճարումից ազատվում են ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողները՝ 35

1) Հայաստանի Հանրապետությունում գործող ֆոնդային բորսայում ցուցակված բաժնետոմսերից ստացվող շահաբաժինների, ինչպես նաև նշյալ բաժնետոմսերի օտարումից, այլ արժեթղթերով փոխանակումից կամ նման այլ գործարքներից ստացվող եկամուտների մասով:

2) Հայաստանի Հանրապետությունում գործող ֆոնդային բորսայում ցուցակված պարտատոմսերից տոկոսի կամ մարելիս գեղչի ձևով ստացվող եկամուտների, ինչպես նաև նշյալ պարտատոմսերի օտարումից, այլ արժեթղթերով փոխանակումից կամ նման այլ գործարքներից ստացվող եկամուտների մասով:

ՀՀ-ում եկամտային հարկ են վճարում ՀՀ ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձինք: Ընդ որում՝ ռեզիդենտ է համարվում այն ֆիզիկական անձը, որը հարկային տարում սկսվող կամ ավարտվող տասներկուամսյա ցանկացած ժամանակահատվածում գտնվել է Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր առմամբ 183 օր և ավելի, կամ ում կենսական շահերի կենտրոնը գտնվում է Հայաստանի Հանրապետությունում:

Հարկվող եկամուտը հարկատուի համախառն եկամտի և ՀՀ հարկային օրենսգրքի դրույթներին համաձայն իրականացված նվազեցումների դրական տարբերությունն է:

ՀՀ Հարկային օրենսգրքի 149-րդ հոդվածի 1-ին մասով եկամտահարկի մասով հարկման բազան որոշելու նպատակով նվազեցվող եկամուտներ են համարվում Հայաստանի Հանրապետությունում գործող ֆոնդային բորսայում ցուցակված բաժնետոմսերից, պարտատոմսերից կամ ներդրումը վկայող այլ արժեթղթերից ստացվող եկամուտը, բացառությամբ բանկերի թողարկած այն պարտատոմսերի, որոնց տեղաբաշխման պահից մինչև մարումն ընկած ժամկետը պակաս է երկու տարուց:

Նման արժեթղթեր ձեռք բերելու դեպքում ֆիզիկական անձանց պարտատոմսերից ստացված տոկոսային եկամուտները ենթակա չեն հարկման:

Վերը նկարագրված կետերը վերաբերվում են ՀՀ ֆոնդային բորսայի՝ բաժնետոմսերի և պարտատոմսերի հիմնական ու երկրորդային ցուցակներում ընդգրկված արժեթղթերին և տարածվում են այն արժեթղթերի (դրանց դասերի) վրա, որոնք ՀՀ-ում գործող ֆոնդային բորսայում (կարգավորվող շուկայում) ցուցակվել (առևտրին թույլատրվել) են ոչ ուշ, քան 2024 թվականի դեկտեմբերի 31-ը: Պարտատոմսերից կապիտալի հավելածից ստացված եկամուտները ենթակա չեն հարկման: Պարտատոմսերից ստացված եկամուտների հարկման կանոնները նույնն

են ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց համար և սահմանվում են ՀՀ օրենսդրությամբ:

Ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց, ինչպես նաև ոչ ռեզիդենտ իրավաբանական անձանց համար որպես հարկային գործակալ հանդես է գալիս Բանկը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Բանկի կողմից թողարկվող պարտատոմսերի մինչև մարումն ընկած ժամկետը նախատեսվելու է երկու տարուց ավել, և Բանկը Թողարկվող պարտատոմսերի մասով Ազդագրում սահմանված ժամկետներում նախաձեռնելու է ցուցակման գործընթաց, Բորսայի կողմից դրական եզրակացության դեպքում՝ Թողարկվող պարտատոմսերից ստացված տոկոսային եկամուտները չեն հարկվելու:

Ծանուցում

Չնայած այն հանգամանքին, որ Թողարկողը, իրականացնելով իր լավագույն ջանքերը և առկա գիտելիքները, սույն բաժնում ներկայացնում է արժեթղթերից ստացվող եկամուտների հարկման մոտեցումները ՀՀ-ում, այնուամենայնիվ Թողարկողը հայտարարում է, որ ներդրողներն այն չպետք է համարեն հարկային խորհրդատվություն և ներդրումներ անելիս հիմնվեն միայն այս բաժնում ներկայացված նյութի վրա: Թողարկողը չի երաշխավորում, որ ներդրողի կողմից Ազդագրի ստացման և ծանոթացման պահին հարկային օրենսդրությունը կհամապատասխանի ներկայացվածին, կամ համարժեքորեն կիրառություն կունենա ՀՀ հարկային մարմինների կողմից և ցանկացած պարագայում խորհուրդ է տալիս օգտվել մասնագիտացված հարկային խորհրդատվության ծառայություններից: Թողարկողը ցանկանում է հայտարարել, որ սույնով զերծ է մնում ցանկացած ներդրողի հնարավոր պահանջներից կապված հարկային օրենսդրության և հարկման մեխանիզմների կիրառման և/կամ փոփոխության արդյունքում առաջացած ֆինանսական պահանջների նկատմամբ պատասխանատվությունից:

4 Առաջարկի ժամկետները և պայմանները

4.1 Բանկի կողմից թողարկվող անվանական պարտատոմսերի ընդհանուր ծավալը

Սույն Ծրագրային ազդագրով առաջարկվող արտարժույթային պարտատոմսերի ընդհանուր անվանական ծավալը կազմում է 15,000,000 (Տասնհինգ միլիոն) ԱՄՆ դոլար: Տեղաբաշխվող արտարժույթային պարտատոմսերի քանակն է 150,000 հատ, մեկ պարտատոմսի անվանական արժեքը՝ 100 ԱՄՆ դոլար:

Սույն Ծրագրային ազդագրով առաջարկվող դրամային պարտատոմսերի ընդհանուր անվանական ծավալը կազմում է 35,000,000,000 (Երեսունհինգ միլիարդ) ՀՀ դրամ: Տեղաբաշխվող դրամային պարտատոմսերի քանակն է 350,000 հատ, մեկ պարտատոմսի անվանական արժեքը՝ 100,000 ՀՀ դրամ:

4.2 Առաջարկի իրականացման սկիզբը և ավարտը

Պարտատոմսերի տեղաբաշխման ձևը (աճուրդ կամ ուղղակի վաճառք), ինչպես նաև տեղաբաշխումը սկսելու և ավարտելու օրերը ենթակա են որոշման Բանկի Վարչության կողմից՝ տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատամքային օր առաջ: Բանկի Վարչության կողմից որոշվում է նաև տեղաբաշխման կազմակերպման եղանակը՝ Հայաստանի ֆոնադային բորսայի համակարգով կամ ֆոնդային բորսային դուրս:

Հայաստանի ֆոնդային բորսայի տեղաբաշխման համակարգով պարտատոմսերի տեղաբաշխումն իրականացվում է համաձայն Արժեթղթերի տեղաբաշխման կազմակերպման կանոնների:

Ֆոնդային բորսայից դուրս տեղաբաշխման դեպքում գործում են 4.3 կետում ներկայացված պայմանները:

Կենտրոնական բանկն իր որոշմամբ կարող է կասեցնել պարտատոմսերի տեղաբաշխման ընթացքը՝ «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի համաձայն:

Տեղաբաշխողի նախաձեռնությամբ տեղաբաշխման ընթացքը կարող է կասեցվել միայն Կենտրոնական բանկի համաձայնությամբ՝ առավելագույնը 10

աշխատանքային օրով: Եթե կասեցման ժամկետն ավարտվելու պահից՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում, տեղաբաշխումը չի շարունակվում, ապա տեղաբաշխողը պարտավոր է դադարեցնել տեղաբաշխումը և վերադարձնել տեղաբաշխման ընթացքում ստացված միջոցներն արժեթղթերը ձեռք բերած անձանց «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածով սահմանված կարգով՝ կասեցման ժամկետի ավարտից 10 աշխատանքային օրվա ընթացքում:

Առաջարկից օգտվելու համար դիմելու գործընթացի նկարագրությունը

Հայաստանի ֆոնդային բորսայի տեղաբաշխման համակարգով պարտատոմսերի տեղաբաշխման դեպքում, ներդրողները պարտատոմսերի ձեռք բերման հայտերը կարող են ներկայացնել միայն Բորսայի մասնակից հանդիսացող կազմակերպությունների միջոցով:

Ֆոնդային բորսային դուրս տեղաբաշխման դեպքում, Պարտատոմսերի ձեռք բերման համար ներդրողները սահմանված կարգով պետք է լրացնեն և պատշաճ կերպով Բանկ ներկայացնեն պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարական/ները, որով կհավաստեն պարտատոմսերի թողարկման պայմաններն ընդունելու իրենց պատրաստակամությունը և որով այդ պայմանները կդառնան ներդրողների համար պարտադիր:

Պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարականի լրացումից և պատշաճ կերպով Բանկ ներկայացնելուց հետո, սակայն ոչ ուշ քան նույն աշխատանքային օրվա ժամը 16:30-ը, պարտատոմս ձեռք բերել ցանկացող անձը պետք է թողարկման նպատակով Բանկում բացված համապատասխան հաշվեհամարին կատարի վճարում պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարականում նշված քանակի պարտատոմսեր ձեռք բերելու համար, իսկ սահմանված ժամկետում և կարգով համապատասխան վճարում չիրականացվելու դեպքում տվյալ հայտ-հանձնարարականը համարվում է անվավեր:

Թողարկման նպատակով Բանկում բացված համապատասխան հաշվեհամարներին դրամական միջոցների ստացումից անմիջապես հետո Բանկը Դեպոզիտարիային ներկայացնում է պարտատոմսերի տեղաբաշխման հանձնարարագիր

համապատասխան քանակի պարտատոմսերը՝ ներդրողի կամ ներդրողի անվանատիրոջ արժեթղթերի հաշվին հաշվեգրման համար:

Դեպոզիտարիայից ներդրողի կամ ներդրողի անվանատիրոջ դեպո հաշվին պարտատոմսերի փոխանցման վերաբերյալ համապատասխան հաստատում ստանալուց անմիջապես հետո Բանկը թողարկման նպատակով բացված համապատասխան տարանցիկ հաշեհամարներից իր օգտագործման համար մատչելի է դարձնում համապատասխան հայտ-հանձնարարականում նշված դրամական միջոցները:

Պարտատոմսերի տեղաբաշխման նախատեսված վերջնաժամկետից հետո թողարկման նպատակով բացված համապատասխան տարանցիկ հաշվեհամարներին ստացված գումարները ենթակա են հետ վերադարձման, իսկ դրանց համապատասխան հայտ-հանձնարարականները չեն կարող բավարարվել անկախ դրանց առաքման և/կամ Բանկի կողմից ստացման ժամկետից:

Իրավաբանական անձ ներդրողների համար հայտ-հանձնարարականի ձևը ներկայացված է ազդագրի Հավելված 3-ում: Ֆիզիկական անձ ներդրողների համար հայտ-հանձնարարականի ձևը ներկայացված է ազդագրի Հավելված 4-ում:

Պարտատոմսերի ձեռքբերմանը մասնակցել ցանկացող ֆիզիկական և/կամ իրավաբանական անձինք կարող են ներկայացնել մեկից ավելի հայտ-հանձնարարականներ:

4.3 Առաջարկի ընդհանուր ծավալի նվազեցման հնարավորությունը

Բանկի վարչության կողմից կարող է նախատեսվել տեղաբաշխման ընթացքում առաջարկի ընդհանուր ծավալ նվազեցման հնարավորություն՝ տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 աշխատամքային օր առաջ: Նույն որոշմամբ պետք է սահմանվեն նաև նման դեպքում ներդրողների կողմից վճարված գումարները հետ վերադարձնելու եկանակը:

Տեղաբաշխման ընթացքում հնարավոր է պարտատոմսերի ձեռքբերման որևէ հայտ-հանձնարարականի մերժում կամ հայտ-հանձնարարականների մասնակի բավարարում, եթե հայտում նշված ծավալը գերազանցում է հայտ-

հանձնարարականի ներկայացման պահին չտեղաբաշխված ծավալը: Այս դեպքում հայտ-հանձնարարականը բավարարվում է չտեղաբաշխված ծավալի չափով: Հայտ-հանձնարարականի մասնակի բավարարման կամ մերժման դեպքում, եթե առկա է լինում ներդրողին հետ վերադարձման ենթակա գումար, ապա տեղաբաշխման ավարտից հետո 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում նշված գումարը Թողարկողի կողմից ենթակա է վերադարձման, ինչն իրականացվում է անկանխիկ եղանակով՝ համապատասխան ներդրողի բանկային հաշվին փոխանցմամբ:

4.4 Հայտը հետ կանչելու ժամանակաշրջանը

Հայտ-հանձնարարականի ներկայացումից հետո սահմանված ժամկետում համապատասխան վճարում չիրականացրած ներդրողների հայտ-հանձնարարականները համարվում են անվավեր և չեն մասնակցում տեղաբաշխմանը:

Բացի վերոնշյալ դեպքերից, ներդրողները պարտատոմսերի հայտ-հանձնարարականները պատշաճ կերպով առաքելուց, Բանկի կողմից հայտ-հանձնարարականի ստացման հաստատումը/ծանուցումը ստանալուց և համապատասխան վճարումը կատարելուց հետո դրանք չեն կարող հետ կանչել:

4.5 Ձեռք բերման հայտի նվազագույն և առավելագույն գումարները

Բանկի վարչության կողմից կարող են սահմանվել Պարտատոմսերի ձեռքբերման քանակական կամ գումարային սահմանափակումներ՝ տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 աշխատանքային օր առաջ կայացրաչ որոշմամբ:

4.6 Արժեթղթերի դիմաց վճարներ կատարելու մեթոդները

Ֆոնդային բոսայից դուրս տեղաբաշխման դեպքում, հայտ-հանձնարարականի լրացումից և պատշաճ կերպով Բանկ ներկայացումից հետո պարտատոմս ձեռք բերել ցանկացող իրավաբանական և/կամ ֆիզիկական անձինք պետք է թողարկման նպատակով Բանկում բացված 11500236924369 (ԱՄՆ դոլարային պարտատոմսերի դեպքում) տարանցիկ հաշվեհամարին կամ 11500579062790 («ՀՀ դրամային պարտատոմսերի դեպքում») տարանցիկ հաշվեհամարին կատարեն վճարում պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարականում նշված քանակի պարտատոմսեր ձեռք բերելու համար: Եթե ներդրողի կողմից պարտատոմսերի ձեռքբերման համար միջոցները հաշվեհամարներին են վճարվում մինչև տվյալ աշխատանքային օրվա ժամը 16:30-ը, ապա այդ դրամական միջոցները ստացված են համարվում այդ օրը, իսկ եթե համապատասխան գումարները վճարվում են տվյալ աշխատանքային օրվա 16:30-ից հետո, ապա դրանք ստացված են համարվում վճարման օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրը:

Պարտատոմսերի ձեռքբերման հայտը մինչև տվյալ օրվա ժամը 16:30-ը ներկայացնելու դեպքում պարտատոմսերի դիմաց վճարվող գումարը հաշվարկվում է՝ պարտատոմսի ձեռքբերման տվյալ օրվա համար սահմանված գինը բազմապատկելով ձեռք բերվող պարտատոմսերի քանակով: Պարտատոմսերի ձեռքբերման հայտը տվյալ օրվա ժամը 16:30-ից հետո ներկայացնելու դեպքում պարտատոմսերի դիմաց վճարվող գումարը հաշվարկվում է՝ պարտատոմսի ձեռքբերման հաջորդ աշխատանքային օրվա համար սահմանված գինը բազմապատկելով ձեռք բերվող պարտատոմսերի քանակով:

Պարտատոմսերի ձեռքբերման համար կատարվող վճարումը համարվում է պատշաճ կերպով կատարված Թողարկողի կողմից բացված և սույն ազդագրում նշված համապատասխան տարանցիկ հաշվեհամարին դրամական միջոցների մուտքագրման պահից: Համապատասխան հայտ-հանձնարարականները

բավարարվելուց հետո ներդրողներն արժեթղթերի սեփականության վերաբերյալ քաղվածք կարող են ստանալ իրենց արժեթղթերի հաշիվը սպասարկող Պահառուից կամ Հաշվի Օպերատորից՝ Թողարկողից իրենց հայտ-հանձնարարականների բավարարման մասին տեղեկացվելուց հետո:

Հայաստանի ֆոնդային բորսայի տեղաբաշխման համակարգով տեղաբաշխելու դեպքում, պարտատոմս ձեռ բերել ցանկացող անձինք պետք է նախապես կատարեն դրամական միջոցների դեպոզիտացում՝ համաձայն արժեթղթերի տեղաբաշխման կազմակերպման կանոնների:

4.7 Առաջարկի արդյունքների հրապարակման ձևը և ժամկետների ամբողջական նկարագրությունը

Բանկի անվանական պարտատոմսերի թողարկման և տեղաբաշխման արդյունքները կհրապարակվեն Օրենսդրությամբ սահմանված կարգով: Հրապարակային տեղաբաշխումը սկսելու պահից, յուրաքանչյուր 30-րդ օրվա ավարտից ոչ ուշ քան 15-րդ օրը, ինչպես նաև տեղաբաշխման ավարտից հետո՝ 30 օրվա ընթացքում, Փողարկողը պարտավոր է ՀՀ ԿԲ ներկայացնել հրաշքվետվություն է տեղաբաշխման ընթացքի և արդյունքների մասին (ՀՀ ԿԲ նորմատիվ իրավական ակտերով սահմանված ձևով և կարգով): Արդյունքները հրապարակվում են նաև Բանկի ինտերնետային՝ www.amiobank.am կայք-էջում տեղաբաշխման ավարտի օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում:

4.8 Նախապատվության իրավունքից օգտվելու գործընթացի նկարագրությունը

Պարտատոմսերի տեղաբաշխումն իրականացվելու է ըստ պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարականների և դրանց դիմաց կատարված վճարման ստացման հերթականության, այսինքն՝ առաջնահերթություն ունի այն ներդրողը, ում հայտ-հանձնարարականի համաձայն վճարումը թողարկման նպատակով «ԱՄԻՕ

ԲԱՆԿ» ՓԲԸ-ում բացված համապատասխան տարանցիկ հաշվեհամարին ավելի վաղ է ստացվել:

Հայաստանի ֆոնդային բորսայի տեղաբաշխման համակարգով տեղաբաշխելու դեպքում, պարտատոմս ձեռքերման հայտերի բավարարման հետթականությունը կախված է տեղաբաշխման համար ընտրված աճուրդի եղանակից և ձևից և կարգավորվում է Արժեթղթերի տեղաբաշխման կազմակերպման կանոններով:

Պարտատոմսերը ձեռք բերելու նախապատվության իրավուն ոչ մի անձի չի տրվում:

4.9 Պարտատոմսերի տեղաբաշխման պլանը

4.9.1 Ներդրողների թիրախային խմբերը

Պարտատոմսերի առաջարկն ուղղված է ՀՀ ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ հանդիսացող ֆիզիկական և իրավաբանական անձանց, ինչպես նաև որակավորված ներդրողներին:

4.9.2 Հայտի բավարարման մասին ծանուցման եղանակները

Ֆոնդային բորսայից դուրս տեղաբաշխման դեպքում, Ներդրողները Թողարկողի կողմից տեղեկացվում են իրենց հայտ-հանձնարարականների բավարարման մասին մինչև հայտի ներկայացման օրվան հաջորդող աշխատանքային օրվա ավարտը: Հայտ-հանձնարարականների բավարարման մասին ներդրողին տեղեկացումը տրամադրվում է այն կապի միջոցով, որով ներդրողը Բանկ է ներկայացրել պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարականը/ները: Բանկի որևէ մասնաճյուղ ներկայացած և մասնաճյուղերի աշխատակիցների միջոցով համապատասխան հայտ-հանձնարարականը լրացրած ներդրողը իր հայտ-հանձնարարականի բավարարման մասին տեղեկանալու համար պարտավոր է ներկայանալ Բանկ և իր հայտ-հանձնարարականը լրացրած աշխատակցի միջոցով տեղեկանալ իր հայտ-հանձնարարականի բավարարման մասին:

Հայաստանի ֆոնդային բորսայի տեղաբաշխման համակարգով տեղաբաշխելու դեպքում, Ներդրողները հայտերի բավարարման մասին տեղեկանում են

Արժեթղթերի տեղաբաշխման կազմակերպման կանոններով սահմանված կարգով և ձևով:

4.10 Առաջարկի գինը

Պարտատոմսերի լրիվ գինը յուրաքանչյուր 100 միավոր անվանական արժեքի դիմաց, տեղաբաշխման առաջին օրվանից սկսած հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$DP = \frac{C}{f} \sum_{t=1}^N \frac{1}{\left(1 + \frac{y}{100 * f}\right)^{t-1+\tau}} + \frac{100}{\left(1 + \frac{y}{100 * f}\right)^{N-1+\tau}}$$

որտեղ՝

$$\tau = \frac{DSN}{DCC}$$

DP – պարտատոմսի գինն է,

DSN - գործարքի կատարման օրվան հաջորդող արժեկտրոնի մարման ամսաթվի և գործարքի կատարման օրվա մեջ եղած օրերի քանակն է՝ համապատասխան պայմանականության դեպքում,

DCC – գործարքին կատարման օրվան նախորդող արժեկտրոնի վճարման օրից մինչև գործարքի կատարման օրվան հաջորդող արժեկտրոնի վճարման օրերի քանակն է՝ համապատասխան պայմանականության դեպքում,

f - արժեկտրոնի վճարման հաճախականությունն է (f=4 եռամսյակային վճարումների դեպքում),

N - գործարքի կատարման օրվանից հետո արժեկտրոնների մնացած վճարումների քանակն է,

Y – մինչև մարում եկամտաբերությունն է,

C – տարեկան արժեկտրոնն է 100 միավոր անվանական արժեքի դիմաց:

Մինչև տեղաբաշխման սկիզբը տեղաբաշխման ամբողջ ժամանակահատվածի համար՝ ըստ օրերի, պարտատոմսերի վաճառքի գինը կիրապարակվի Բանկի ինտերնետային կայքում:

Բանկային փոխանցման միջոցով պարտատոմսերի ձեռք բերման համար կատարվող վճարման դեպքում ներդրողները պարտավոր են իրենց հաշվին հոգալ հնարավոր բանկային միջնորդավճարների հետ կապված ծախսերը:

Ներդրողները պարտավոր են նաև Դեպոզիտարիայում կամ լիցենզավորված որևէ այլ ենթապահառուի մոտ բացել արժեթղթերի հաշվառման անձնական դեպո հաշիվ և կրել վերջինիս հետ կապված ծախսերը:

4.10.1 Այլ ծախսեր

Պարտատոմսերի թողարկման և տեղաբաշխման գծով «ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ կողմից մատուցվող ծառայությունների կամ խորհրդատվության դիմաց ներդրողը որևիցե ծախս չի կատարում:

«Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» ԲԲԸ հաշվի օպերատորի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց վճարները գանձվում են համաձայն հաշվի օպերատորի կողմից հաստատված սակագների, որոնց հետ ներդրողը կարող է ծանոթանալ համապատասխան հաշվի օպերատորի ինտերնետային կայք էջի միջոցով:

4.11 Տեղաբաշխումը

Երաշխավորված տեղաբաշխում. Երաշխավորված տեղաբաշխում իրականացնողներ առկա չեն:

Երաշխավորված և չերաշխավորված տեղաբաշխողների հետ կնքված պայմանագրերի էական պայմանները. Թողարկողը և տեղաբաշխողը նույն իրավաբանական անձն են՝ «ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ: Թողարկող/տեղաբաշխողն այլ տեղաբաշխողների և/կամ խմբի հետ համատեղաբաշխման պայմանագիր չի կնքել:

Երաշխավորված պայմանագրի կնքում. Երաշխավորված տեղաբաշխման պայմանագիր չի կնքվել:

Վճարումներն ընդունող բանկերի ցանկը. Ֆոնդային բորսայից դուրս տեղաբաշխման դեպքում, պարտատոմսերի դիմաց անհրաժեշտ է վճարում կատարել «ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ-ում (գլխամասային գրասենյակի՝ ք. Երևան, Նալբանդյան 48 հասցեում, և մասնաճյուղերում, որոնց անվանումները և հասցեները բերված են սույն ազդագրի 3-րդ բաժնի, 3-րդ կետի 3.6. ենթակետում) թողարկման նպատակով բացված 11500236924369 (ԱՄՆ դոլարային պարտատոմսերի դեպքում) և 11500579062790 (ՀՀ դրամային պարտատոմսերի դեպքում) տարանցիկ հաշվեհամարներին: Թողարկողի պարտատոմսերի նկատմամբ իրավունքների և պարտավորությունների հաշվառումն ու (կամ) գրանցումն (սեփականատերերի/անվանատերերի ռեեստրի վարում) իրականացվելու է Դեպոզիտարիայի միջոցով, որը հանդես է գալու որպես Գլխավոր պահառու՝ համաձայն ՀՀ օրենսդրության և կազմակերպության գործունեությունը կարգավորող կանոնների:

Պարտատոմսերը կարող են հաշվառվել նաև ՀՀ ԿԲ կողմից լիցենզավորված որևէ պահառուի կողմից (դեպոզիտարիայի ենթապահառու)՝ այդ պահառուի մոտ պարտատոմսերի սեփականատիրոջ/անվանատիրոջ համար արժեթղթերի հաշիվ բացելու և վարելու միջոցով:

Դեպոզիտարիայի հասցեն է՝ ՀՀ, Երևան 0010, Վազգեն Սարգսյան 26/1, Էրեբունի Պլազա բիզնես կենտրոն, 5-րդ հարկ (հեռ՝ +374 60 61 55 55 լրաց. 111 կամ 126): Պարտատոմսերի ռեեստրի վարման Հաշվի Օպերատոր հանդիսանում է «ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ-ն: Մինչև պարտատոմսերի ձեռքբերումը ներդրողները պարտավոր են Դեպոզիտարիայում կամ լիցենզավորված որևէ այլ ենթապահառուի մոտ բացել արժեթղթերի հաշվառման դեպո հաշիվ:

5 Առևտրի թույլտվությունը և առևտրի կազմակերպումը

5.2 Առևտրին թույլտվությունը

Սույն ծրագրային ազդագիրը ՀՀ ԿԲ-ում գրանցելուց և պարտատոմսերը տեղաբաշխելուց հետո կարգավորվող շուկայում պարտատոմսերը ցուցակելու և առևտրին թույլատրելու նպատակով Բանկը դիմելու է «Հայաստանի Ֆոնդային Բորսա» ԲԲԸ: Առևտրին թույլտվության հայցը կարող է նաև չբավարարվել: Պարտատոմսերի ցուցակման դիմումը կարող է նաև չբավարարվել: Այդ դեպքում, տեղաբաշխումը կհամարվի չեղյալ:

Բանկը կարող է դիմել նաև արտասահմանում գործող ֆոնդային բորսա՝ պարտատոմսերի կրկնակի ցուցակման համար:

5.3 Առևտրի շուկաները

Այս պահին Թողարկողի կողմից սույն ազդագրով գրանցվող պարտատոմսերը թույլատրված չեն հրապարակային առևտրի որևէ շուկայում:

Բանկի կողմից նախկինում տեղաբաշխված պարտատոմսերը թույլատրվել են առևտրի «Հայաստանի Ֆոնդային Բորսա» ԲԲԸ կարգավորվող շուկայի կորպորատիվ պարտատոմսերի հարթակում:

5.4 Շուկա ստեղծողները

Բանկը պարտատոմսերի տեղաբաշխումն ավարտելուց հետո կնքելու է շուկա ստեղծողի պայմանագիր երկրորդային շուկայում վաճառքի ակտիվացման գործառույթներ իրականացնողի հետ (շուկա ստեղծող)՝ Բանկի պարտատոմսերի շուկան ձևավորելու նպատակով: Շուկա ստեղծողը «Հայաստանի Ֆոնդային Բորսա» ԲԲԸ-ում իրականացնում է պարտատոմսերի առքի և վաճառքի գնանշումներ: Շուկա ստեղծողի պարտավորությունների հիմնական պայմանները սահմանվելու են վերջինիս և Թողարկողի միջև կնքվելիք ծառայությունների մատուցման պայմանագրով և «Հայաստանի Ֆոնդային Բորսա» ԲԲԸ-ի «Շուկա ստեղծողի կանոններ»-ով: Առևտրին թույլտվության հայցը կարող է նաև չբավարարվել:

6 Լրացուցիչ տեղեկատվություն

Ներգրավված խորհրդատուներ. Սույն ազդագրի պատրաստման ընթացքում Բանկը չի օգտվել այլ խորհրդատուների ծառայություններից:

Աուդիտորական եզրակացություն. Բացի սույն ազդագրում ներկայացված Թողարկողի պատմական ֆինանսական հաշվետվություններից, որոնք ենթարկվել են աուդիտի անկախ աուդիտորական ընկերությունների կողմից, սույն ազդագրում ներկայացված այլ տեղեկատվություն չի ենթարկվել աուդիտի անկախ աուդիտորական ընկերությունների կողմից:

Երրորդ անձանցից ստացված տեղեկատվություն. Որպես սույն բաժնում ներկայացված տեղեկատվության ստացման աղբյուր, երրորդ անձինք ներգրավված չեն:

Շնորհված վարկանիշներ. Թողարկվող պարտատոմսերին վարկանիշ չի շնորհվել:

Բաժին 3. ԲԱՆԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

1. Անկախ աուդիտորները

Բանկի 2011թ. անկախ աուդիտն իրականացրել է «Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ն, 2012թ.՝ «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ն, 2013թ., 2014թ., 2015թ., 2016թ., 2017թ. և 2018թ.՝ «Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ն: Բանկի 2019թ., 2020թ., 2021թ., 2022թ., 2023թ. անկախ աուդիտը ևս իրականացրել է «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ն:

«Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ի հասցեն է՝ ՀՀ, ք. Երևան, 0015, Գրիգոր Լուսավորիչ 9, Երևան Պլազա Բիզնես Կենտրոն հեռ. (+ 374 10) 500 964, ֆաքս՝ (374 10) 500 961, www.grantthornton.am

«Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ի հասցեն է՝ ՀՀ, ք. Երևան, 0010, Հանրապետության 22, հեռ. (+ 374 10) 544 301, (+ 374 10) 544 307, (+ 374 10) 544 309 ֆաքս՝ +374 10 562 404, www.bakertilly.am

Ռիսկային գործոններ

Ռիսկերի կառավարման գործընթացը կազմակերպվում է Բանկի առաքելությանը, ռազմավարական ու միջանկյալ նպատակներին համահունչ և ուղղված է Բանկի ֆինանսական կայունության ապահովմանն ու հեղինակության ամրապնդմանը:

Բանկը հատկապես կարևորում է ներքոնշյալ ռիսկերի կառավարումը, սակայն ներդրողը պետք է գիտակցի, որ նշված ռիսկերից բացի հնարավոր են նաև այլ ոչ բարենպաստ դեպքերի զարգացումներ, որոնք հետագայում կարող են անցանկանալի հետևանք ունենալ Բանկի ֆինանսական վիճակի, արդյունքների, **հեղինակության վրա, ինչպես նաև պարտատոմսերի ներդրումային որակների վրա:**

Վարկային ռիսկը Բանկի ֆինանսական վնաս կրելու ռիսկն է փոխառուի կամ ֆինանսական գործիքի պայմանագրային կողմի՝ Բանկի հանդեպ ստանձնած պայմանագրային պարտականությունները չկատարելու հետևանքով: Վարկային ռիսկը Բանկում տարանջատվում է երկու խմբի՝ վարկառուի ռիսկ, պորտֆելային ռիսկ: Վարկային ռիսկերի կառավարման գլխավոր խնդիրը բանկի համար

հանդիսանում է վարկային ռիսկերի ժամանակին բացահայտումը, գնահատումը և դրանց նվազեցման ուղղությամբ համապատասխան քայլերի իրականացումը: Բանկի կողմից մշակված համապատասխան մեթոդաբանության համաձայն՝ նախքան վարկի տրամադրումը, գնահատվում է պոտենցիալ վարկառուի վարկունակությունը: Վարկային ռիսկի կանխարգելման տեսանկյունից վարկավորման ժամանակ էապես կարևորվում է այնպիսի սկզբունքների պահպանումը, ինչպիսիք են վարկի ապահովվածությունն ու նպատակայնությունը: Վարկի տրամադրումից հետո, վարկային պայմանագրի գործողության ամբողջ ընթացքում, Բանկի կողմից իրականացվում է վարկի մոնիթորինգ՝ վարկառուի վճարունակությունը և վարկի ապահովվածությունը պարբերաբար գնահատելու և հնարավոր վարկային ռիսկի զսպման ուղղությամբ համապատասխան քայլեր ձեռնարկելու նպատակով:

Պարբերաբար վերլուծության է ենթարկվում նաև Բանկի ընդհանուր վարկային պորտֆելը՝ ըստ տնտեսության ճյուղերի, հաճախորդների և վարկատեսակների, պորտֆելի դիվերսիֆիկացիան և որակն ապահովելու նպատակով: Բանկի Խորհրդի կողմից հաստատված համապատասխան ներքին իրավական ակտով սահմանված են վարկային ռիսկը զսպող ներբանկային նորմատիվներ (տնտեսության մեկ ճյուղի գծով ռիսկի առավելագույն չափի, վարկային ընդհանուր ռիսկի առավելագույն չափի, վարկային պորտֆելի որակի ռիսկի առավելագույն չափի, վարկային պորտֆելի որակի ռիսկի առավելագույն չափի՝ ըստ առանձին վարկատեսակների, մեկ փոխառուի գծով ռիսկի առավելագույն չափի, խոշոր փոխառուների գծով ռիսկի առավելագույն չափի, Բանկի հետ կապված մեկ անձի գծով ռիսկի առավելագույն չափի, Բանկի հետ կապված բոլոր անձանց գծով ռիսկի առավելագույն չափի և այլն):

Ստորև ներկայացված է 31.12.2023թ. դրությամբ Բանկի կողմից տրամադրված վարկերի և փոխատվությունների պորտֆելի որակն՝ ըստ առանձին վարկավորման ոլորտների:

հազ. ՀՀ դրամ

<i>Ակտիվներ</i>	<i>Աշխարհող ակտիվներ</i>	<i>Չաշխարհող ակտիվներ</i>
1. Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն և ձկնորսություն	6,276,665	836,786
2. Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում	16,930,781	-
3. Մշակող արդյունաբերություն	14,177,397	8,483,317
4. Էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում	13,134,320	-
5. Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում	1,282	-
6. Շինարարություն	67,989,568	7,778,834
7. Առևտուր	95,036,065	28,190,933
8. Փոխադրումներ և պահեստային տնտեսություն	4,872,334	608
9. Կեցության և հանրային սննդի կազմակերպում	14,175,199	7,379,296
10. Տեղեկատվություն և կապ	3,595,964	-
11. Անշարժ գույքի հետ կապված գործունեություն	650	-
12. Մասնագիտական, գիտական և տեխնիկական գործունեություն	21,532,176	1,465
13. Կրթություն	2,030,766	86,165
14. Առողջապահություն	332,579	-
15. Մշակույթ, զվարճություն, հանգիստ	5,254,773	-
16. Տնտեսության այլ ճյուղեր	11,339,276	49,877
17. Հիպոթեկային վարկեր	88,852,023	1,305,441
18. Սպառողական և այլ վարկեր	69,957,571	8,223,863

Իրացվելիության ռիսկը պայմանավորված է Բանկի ֆինանսական պարտավորությունները ժամանակին մարելու կարողությամբ նորմալ և սթրեսային իրավիճակներում: Իրացվելիության ռիսկն առաջանում է Բանկի ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության անհամապատասխանության դեպքում: Բանկում իրացվելիության կառավարման նպատակն է՝ ստեղծել այնպիսի ֆինանսական կարողությունների ամբողջություն, որը հնարավորություն կտա առանց լուրջ խնդիրների բավարարելու բոլոր տեսակի կրեդիտորների, ավանդատուների և այլ հաճախորդների օրինական դրամական պահանջները, որոնք կարող են արտացոլված լինել Բանկի հաշվեկշռային և հետհաշվեկշռային հոդվածներում, ինչպես նաև ապահովել շահութաբերության հնարավոր առավելագույն մակարդակ:

Գործառնական ռիսկը Բանկի գործունեության ընթացքում կորստի ռիսկն է, որն առաջացել է անբավարար կամ ձախողված ներքին գործարար-գործընթացների, համակարգերի, մարդկային գործոնի կամ արտաքին գործոնների արդյունքում: Գործառնական ռիսկը ներառում է նաև իրավական, տեղեկատվական տեխնոլոգիաների և հեղինակության ռիսկերը:

Բանկում գործառնական ռիսկերի կառավարման նպատակով աշխատանքային գործընթացներում, գործառնություններում և գործառույթներում ներդրված են ներքին հսկողության համապատասխան մեխանիզմներ:

Շուկայական ռիսկն առաջանում է արժույթների փոխարժեքների, շուկայական տոկոսադրույքների և գների ոչ բարենպաստ փոփոխությունների արդյունքում:

Բանկում **արտարժույթային ռիսկը** գնահատվում է միջազգային պրակտիկայում ընդունված VaR (Value at Risk) մոդելով, որը որոշակի հավանականությամբ կանխատեսում է արտարժույթի՝ ապագայում սպասվող առավելագույն տատանման մակարդակը՝ հաշվարկելով Բանկի հավանական կորստի առավելագույն մեծությունը: Արտարժույթային ռիսկի զսպման նպատակով Բանկում իրականացվում

է արտարժութային դիրքերի ամենօրյա մոնիթորինգ: Իսկ արտարժութային բաց դիրքերի առկայության դեպքում՝ հնարավոր կորուստներից խուսափելու նպատակով կիրառվում են հեջավորման գործիքներ:

Բանկում **տոկոսադրույքի ռիսկի** կառավարման խնդիրն է՝ պահպանել ակտիվների ու պարտավորությունների տոկոսադրույքների սպրեդի և զուտ տոկոսային մարժայի ընդունելի մակարդակներ: Տոկոսադրույքի ռիսկի զսպման նպատակով Բանկում գործում են ակտիվների և պարտավորությունների գնագոյացման (տոկոսադրույքների սահմանման) հատուկ մշակված մեխանիզմներ:

Գնային ռիսկի հնարավոր նվազագույն մակարդակն ապահովվում է հետևյալ միջոցառումների շրջանակներում՝ ֆինանսական շուկայի կառուցվածքային, ծավալային և գնային ցուցանիշների դինամիկայի, առանձին ֆինանսական գործիքների իրացվելիության վերլուծություն, առկա միտումների բացահայտում, հնարավոր կորուստների գնահատում ամսական կտրվածքով կիրառվող սթրես թեստերի միջոցով, ֆինանսական գործիքների գծով սահմանաչափերի սահմանում:

Մրցակցային ռիսկն առաջանում է բանկային համակարգում առկա մրցակցության պայմաններում և կարող է իր ազդեցությունը թողնել Բանկի ֆինանսական ցուցանիշների վրա: Մրցակցային ռիսկի կառավարումը Բանկում իրականացվում է բիզնես ստորաբաժանումների և Մարքեթինգային հետազոտությունների բաժնի կողմից՝ պարբերաբար իրականացվող Բանկի և այլ բանկերի կողմից առաջարկվող ծառայությունների տեսականու և պայմանների համեմատության միջոցով:

Այլ ռիսկեր. վերը նշված ռիսկերից բացի այլ ռիսկեր, ինչպես օրինակ՝ քաղաքական, օրենսդրական և այլն:

2. Տեղեկատվություն Բանկի մասին

2.1. Բանկի ֆիրմային անվանումը

Բանկի լրիվ ֆիրմային անվանումն է՝

հայերեն՝ «ԱՄԻՕ ԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերություն

ռուսերեն՝ Закрытое Акционерное Общество “АМИО БАНК”

անգլերեն՝ “AMIO BANK” Closed Joint Stock Company

Բանկի կրճատ ֆիրմային անվանումն է՝

հայերեն՝ «ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ

ռուսերեն՝ ЗАО “АМИО БАНК”

անգլերեն՝ “AMIO BANK” CJSC

Բանկը հիմնադրվել է որպես «Արմինվեստբանկ» փայատիրական բանկ, 1994թ. վերակազմավորվել է որպես «Հայինվեստբանկ» փակ բաժնետիրական ընկերություն, իսկ 2006թ.՝ վերանվանվել «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ի: Բանկը վերաբրենդավորվել և 2023թ.-ի նոյեմբերի 17-ից վերանվանվել է «ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ, որը «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ լիիրավ իրավահաջորդն է:

Բանկի ապրանքանիշը ներկայացված է ստորև:



2.2. Բանկի գրանցման վայրը և պետական գրանցման համարը

Բանկի գրանցման վայրն է՝ ՀՀ, 0010, ք. Երևան, Նալբանդյան 48, գրանցման համարը՝ 40:

2.3. Բանկի ստեղծման ամսաթիվը

Բանկը փաստացի գործունեությունը սկսել է իրականացնել 1991 թվականի դեկտեմբերից, մինչ օրս՝ շուրջ 33 տարի:

3.4 Բանկի գտնվելու վայրը.

ՀՀ, 0010, ք. Երևան, Նալբանդյան 48:

3.5 Կապի միջոցները

Հեռախոսահամարներ՝ (+374 10) 59-20-20, (+374 60) 37-25-00

Էլեկտրոնային փոստ՝ info@amiobank.am

Ինտերնետային կայք-էջ՝ www.amiobank.am

3.6 Բանկի հիմնադրման երկիրը, մասնաճյուղային ցանցը

Բանկի հիմնադրման երկիրը Հայաստանի Հանրապետությունն է:

2023թ. ընթացքում իր նոր թվային ռազմավարության շրջանակներում մասնաճյուղային ցանցի 35% օպտիմալացման արդյունքում՝ Բանկը ներկայումս ունի 35 մասնաճյուղ, որոնցից 19-ը գտնվում են ք. Երևանում, 16-ը՝ ՀՀ մարզերում: Բանկի Գլխամասային գրասենյակը գտնվում է ՀՀ, ք. Երևան, Նալբանդյան 48 հասցեում:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացվում են մասնաճյուղերի գործունեության հասցեները:

	Մասնաճյուղ	Հասցե
1.	Գործառնական վարչություն	ՀՀ, ք. Երևան, Նալբանդյան 48
2.	Կենտրոն	ՀՀ, ք. Երևան, Մաշտոցի 20
3.	Շենգավիթ	ՀՀ, ք. Երևան, Գ. Նժդեհի 31/36
4.	Արցախ	ՀՀ, ք. Երևան, Էրեբունի 23 շենք, 73 և 74 շինություն
5.	Էրեբունի	ՀՀ, ք. Երևան, Տիտոգրադյան փողոց 1/4
6.	Մալաթիա	ՀՀ, ք. Երևան, Արա Սարգսյան 19
7.	Նոր-Նորք	ՀՀ, ք. Երևան, Թոթովենցի 4 նրբանցք
8.	Սեբաստիա	ՀՀ, ք. Երևան, Րաֆֆու փող., 77 շենք, շինություն 60
9.	Քանաքեռ	ՀՀ, ք. Երևան, Զ. Սարկավազի փող., թիվ 72/9
10.	Վանաձոր	ՀՀ, ք. Վանաձոր, Տիգրան Մեծ 44

11.	Արմավիր	ՀՀ, ք. Արմավիր, Հանրապետության 6
12.	Արարատ	ՀՀ, ք. Արարատ, Շահումյան 30/1
13.	Գյումրի	ՀՀ, ք. Գյումրի, Անկախության հրապարակ 8
14.	Ագարակ	ՀՀ, ք. Ագարակ, Գ. Նժդեհի 76
15.	Աբովյան	ՀՀ, ք. Աբովյան, Ռոսիայի փող. թիվ 1/20
16.	Աշտարակ	ՀՀ, ք. Աշտարակ, Ն. Աշտարակեցու փողոց 45-47
17.	Գավառ	ՀՀ, ք. Գավառ, Բունիայան 6
18.	Մասիս	ՀՀ, ք. Մասիս, Կենտրոնական հրապարակ 55
19.	Արթիկ	ՀՀ, ք. Արթիկ, Բաղրամյան փողոց, թիվ 14/10
20.	Կոմիտաս	ՀՀ, ք. Երևան, Կոմիտասի պողոտա 61 շենք, 60-61 շին.
21.	Ալաշկերտ	ՀՀ, ք. Մարտունի, Պողոսյան փողոց 2 շենք, թիվ 17-18
22.	Արտաշատ	ՀՀ, ք. Արտաշատ, Օգոստոսի 23 փողոց 107
23.	Արաբկիր	ՀՀ, ք. Երևան, Ն. Ադոնցի 17 շենք, 58 շինություն
24.	Ավան	ՀՀ, ք. Երևան, Խուդյակով 165/4
25.	Արտաշիսյան	ՀՀ, ք. Երևան, Արտաշիսյան փողոց 84/2
26.	Հրազդան	ՀՀ, ք. Հրազդան, Միկրոշրջան թաղ., 4-րդ փողոց, թիվ 8
27.	Տերյան	ՀՀ, ք. Երևան, Տերյան 69
28.	Մերգեղյան	ՀՀ, ք. Երևան, Կոմիտաս 1, 274
29.	Քաջազնունի	ՀՀ, ք. Երևան, Քաջազնունու փողոց 5 շենք, 26 շինություն

30.	Դավթաշեն	ՀՀ, ք. Երևան, Դավթաշեն, Տ. Պետրոսյան փողոց, թիվ 1/11
31.	Կապան	ՀՀ, ք. Կապան, Մ. Ստեփանյան փողոց, 3/12
32.	Աջափնյակ	ՀՀ, ք. Երևան, Աջափնյակ, Բաշինջաղյան փողոց, 165/2
33.	Զվարթնոց	ՀՀ, ք. Երևան, Զվարթնոց օդանավակայան
34.	Կումայրի	ՀՀ, ք. Գյումրի, Թբիլիսյան խճուղի 2/14
35.	Իջևան	ՀՀ, ք. Իջևան, Ա. Մելիքբեկյան փողոց 5/9

3.7 Բանկի տնտեսական նորմատիվները

Բանկային գործունեության վերահսկման նպատակով՝ սահմանված են տնտեսական նորմատիվներ, որոնցով կարևորվում է նաև բանկերի իրացվելիությունը: Ստորև ներկայացվում են իրացվելիության նորմատիվները 2021-2023 թվականների համար՝

Նորմատիվներ	ՀՀ ԿԲ-ի սահմանած նորմատիվի թույլատրելի մեծությունը	Նորմատիվի փաստացի մեծություն	Նորմատիվի փաստացի մեծություն	Նորմատիվի փաստացի մեծություն
		31.12.2023թ.	31.12.2022թ.	31.12.2021թ.
Ն ₁ (Ընդհանուր կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների գումարների միջև վազագույն հարաբերակցություն)	նվազագույնը՝ 11%	17.04	18.25	12.05
Ն ₂ ¹ (Բանկի բարձր իրացվելի ակտիվների և ընդհանուր ակտիվների գումարների միջև նվազագույն հարաբերակցություն)	նվազագույնը՝ 15%	22.91	23.32	15.85
Ն ₂ ² (Բանկի բարձր իրացվելի ակտիվների և ցպահանջ պարտավորությունների միջև նվազագույն)	նվազագույնը՝ 60%	90.63	103.97	60.66

հարաբերակցություն)				
Ն ₃ ¹ (մեկ փոխառուի գծով ռիսկի առավելագույն չափը)	առավելագույնը՝	19.95	19.79	19.28
	20%			
Ն ₃ ² (խոշոր փոխառուների գծով ռիսկի առավելագույն չափը)	առավելագույնը՝	169.62	152.66	499.12
	500%			
Ն ₄ ¹ (բանկի հետ կապված մեկ անձի գծով ռիսկի առավելագույն չափը)	առավելագույնը՝	0.33	0.36	3.55
	5%			
Ն ₄ ² (բանկի հետ կապված բոլոր անձանց գծով ռիսկի առավելագույն չափը)	առավելագույնը՝	2.3	2.67	18.24
	20%			

Բանկի այլ տնտեսական նորմատիվների վերաբերյալ տեղեկատվություն ներդրողները կարող են գտնել Բանկի ինտերնետային կայք էջի Հաշվետվություններ ենթաբաժնում:

3. Բիզնեսի նկարագիրը

3.1. Հիմնական գործունեությունը

Բանկն իրականացնում է օրենքով և այլ իրավական ակտերով բանկերին թույլատրված ֆինանսական գործառնություններ, որոնք իրականացնելիս ղեկավարվում է հետևյալ սկզբունքներով՝ ֆինանսների ճիշտ ժամանակին բաշխում, լիակատար տնտեսական ինքնուրույնություն և իր գործունեության արդյունքների համար տնտեսական պատասխանատվություն, ծախսերի կրճատում կամ հիմնավորված անխուսափելի ավելացում, ժամանակի և ռեսուրսների արդյունավետ օգտագործում, բանկային ռիսկերի նվազեցում, կառավարում և զսպման նպատակով հաստատված տնտեսական և իրավական նորմատիվ ակտերի դրույթների պահպանում: Բանկն իր հիմնական գործունեությունը ծավալելով ՀՀ-ում առաջարկում է հետևյալ բանկային ծառայությունները.

- վճարահաշվարկային գործառնություններ,

- ավանդների ներգրավում,
- դրամական փոխանցումներ,
- հաճախորդների հաշիվների սպասարկում,
- վարկերի տրամադրում,
- արտարժույթի առք ու վաճառք,
- կոմունալ ծառայությունների դիմաց վճարումների ընդունում,
- ֆինանսական վարձակալություն (լիզինգ),
- առևտրային գործարքների (պարտքի) ֆինանսավորում (ֆակտորինգ),
- պլաստիկ քարտերի տրամադրում և սպասարկում,
- աշխատավարձային նախագծերի իրականացում,
- գործառնություններ պետական և կորպորատիվ արժեթղթերի շուկայում,
- ֆինանսական գործառնություններ միջբանկային շուկայում,
- բանկային երաշխիքների և ակրեդիտիվների տրամադրում,
- միջազգային ինկասո գործառնություններ,
- ինտերնետ-բանկինգ,
- մոբայլ-բանկինգ,
- «Բանկ-հաճախորդ» համակարգ,
- ապահովագրության ոլորտում գործակալական ծառայություններ,
- անհատական բանկային պահատեղերի տրամադրում,
- առարկայազուրկ մետաղական հաշիվների բացում և այլն:

31.12.2023թ. դրությամբ Բանկի հաճախորդների թիվը կազմում 292,270 հաճախորդ, որից 281,266-ը ֆիզիկական անձինք են, իսկ 11,004-ը՝ իրավաբանական անձինք: Թղթակցային հարաբերություններ ունի 34 բանկերի հետ, որից 25-ը ոչ ռեզիդենտ բանկեր են: Բանկը նոստրո թղթակցային հաշիվներ ունի 9 ռեզիդենտ և 25 ոչ ռեզիդենտ բանկերում, իսկ Բանկում լրոտ թղթակցային հաշիվներ ունեն 5 ռեզիդենտ և 5 ոչ ռեզիդենտ բանկեր: 31.12.2023թ.-ի դրությամբ Բանկը սպասարկում է 474

POS-տերմինալ, 139 ԱԳՓՄ: Բանկը Հանդիսանում է Armenian Card տեղական, MasterCard Worldwide և VISA INTERNATIONAL միջազգային վճարային համակարգերի անդամ: Բանկը, հանդիսանալով Armenian Card, MasterCard Worldwide և VISA International վճարային համակարգերի լիիրավ անդամ, իրականացնում է վճարային քարտերի թողարկում և սպասարկում: Թվային մանրածախ բանկինգը բավականին նոր փիլիսոփայություն է Հայաստանի բանկային ոլորտում, և նույնիսկ ինտերնետ բանկինգ ծառայություն տրամադրող և բջջային հավելվածներ ունեցող ոչ բոլոր բանկերն են ապահովում վերը նկարագրված թվային բանկային գործառույթները, թեև դրանցից առնվազն երկուսը դիրքավորում են իրենց որպես թվային բանկեր (Էվոկա և Այ Դի Բանկ): Մրցակցային միջավայրն այս առումով բավականին բարենպաստ է Բանկի համար, քանի որ Բանկը կարող է օգուտ քաղել իր բավականին մեծ հաճախորդների բազայից և թվային տեխնոլոգիաների, մարքեթինգի և այդ ոլորտներում լավագույն մասնագետների ներգրավման գործում անհրաժեշտ ներդրումներ կատարելու կարողությունից: Բանկը հատուկ ուշադրություն է դարձնելու սպառողների ուսումնասիրությանը՝ հաճախորդների վարքագծի և անհատ հաճախորդի կարիքների խորը և օպերատիվ ըմբռնման համար: Այս հետազոտության հիման վրա Բանկը կմշակի և կներկայացնի նոր ապրանքներ և ծառայություններ՝ հաճախորդների կարիքներին համապատասխան և ոչ միայն: Բանկի ռազմավարությունն է ավելացնել իր մանրածախ բանկային մասնաբաժինը շուկայում՝ միաժամանակ պահպանելով ամուր դիրքերը նաև կորպորատիվ հատվածում: Ստորև բերված աղյուսակում ներկայացված են հայկական բանկերի համապատասխան շուկայական մասնաբաժինները:

4.2 Հիմնական շուկաներ

Բանկը շարունակում է իր ակտիվ գործունեությունը սեփական ռեսուրսներով և միջազգային ծրագրերով վարկավորման բնագավառում:

2023թ. ընթացքում Կորպորատիվ բիզնեսի կառավարման դեպարտամենտի կողմից կատարվել են աշխատանքներ Բանկում իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին մատուցվող ծառայությունների, ապրանքատեսակների կատարելագործման գծով: Կատարելագործվել և արդիականացվել են հետևյալ բանկային ապրանքատեսակները.

- «ABB-Կորպորատիվ» ավանդատեսակ,
- «AMIO - ԱԳՐՈ» «ԳՀՀ-ՀՀ Գյուղատնտեսության ոլորտի աջակցում» ծրագրի շրջանակներում տրամադրվող վարկեր,
- «AMIO - ԱԳՐՈ» «Գյուղական ֆինանսավորման կառույց-Ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ի կողմից իրականացվող գյուղատնտեսական վարկավորման ծրագրի շրջանակներում տրամադրվող վարկեր,
- «AMIO - ԱԳՐՈ» Գյուղատնտեսական հումքի մթերումների (գնումների) նպատակով տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրի շրջանակներում տրամադրվող վարկեր,
- «AMIO - ԱԳՐՈ» ՀՀ-ում 2019-2024 թվականների տավարաբուծության զարգացման նպատակով տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրի շրջանակներում տրամադրվող վարկեր,
- «AMIO – ՓՄՁ ԲԻԶՆԵՍ» Գերմանահայկական Հիմնադրամի «ՓՄՁ ֆինանսական միջոցների հասանելիություն» վարկային ծրագրի (Համաշխարհային Բանկ) շրջանակներում տրամադրվող վարկեր, վարկային գծեր,
- «AMIO – ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ» Իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին տրամադրվող ֆինանսավորում,
- «AMIO –ԲԻԶՆԵՍ» Իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին տրամադրվող վարկեր, վարկային գծեր և օվերդրաֆտներ,
- «AMIO – ԷՆԵՐԳՈ+» «ԳՀՀ-Էներգաարդյունավետություն ՓՄՁ-ների համար» ծրագրի շրջանակներում տրամադրվող վարկեր, չվերականգնվող վարկային գծեր,

- «AMIO-ԲԻՉՆԵՍ ԷՔՍՊՐԵՍ» Իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին բիզնես քարտով տրամադրվող օվերդրաֆտներ,
- Բանկային երաշխիքներ:
- Ներդրվել են նոր բանկային ծառայություններ
- «ABB-Կորպորատիվ+» ավանդատեսակ,
- «AMIO – ՄՓՄՁ ԱՋԱԿՑՈՒՄ» Գերմանահայկական Հիմնադրամի «ՄՓՄՁ Աջակցում» վարկային ծրագրի շրջանակներում տրամադրվող վարկեր:

2023թ. ընթացքում Կորպորատիվ հաճախորդների ներգրավման համար Կորպորատիվ բիզնեսի կառավարման դեպարտամենտն իրականացրել է բանակցություններ պոտենցիալ հաճախորդների հետ, հավաքագրել և վերլուծել է Բանկի կորպորատիվ հաճախորդների ընթացիկ գործունեության վերաբերյալ տեղեկատվությունը և բացահայտել բանկային ծառայություններից օգտվելու ընթացիկ և ապագա պահանջարկը, իրականացրել է Հաճախորդի վարկավորման գործընթացում նրանց վերաբերյալ ստացված տեղեկատվության (գործունեության ցուցանիշների) և Բանկի հետ բիզնեսի զարգացման հնարավորությունների վերլուծություն, Կորպորատիվ հաճախորդի գծով սպասարկման անհատական պայմաններ սահմանելու հնարավորության վերլուծություն, տրամադրել է նրանց ընթացիկ սպասարկման հարցերի շուրջ օպերատիվ և ամբողջական խորհրդատվություն, կորպորատիվ հաճախորդների հաշիվների մոնիթորինգ, բանկային ապրանքատեսակների վաճառք:

Կորպորատիվ հաճախորդների սպասարկման գործընթացների օպտիմալացման նպատակով վերանայվել են համապատասխան ներքին իրավական ակտերը:

2024-2026թթ. ընթացքում Բանկում իրավաբանական անձ և ԱՁ հաճախորդների համար ներդրվելու է Լիզինգ, AMIO-Էներգո Վերականգնվող էներգիայի զարգացում վարկային ծրագիրը, Visa Business Signature քարտատեսակ, կատարելագործվելու

են առկա ապրանքատեսակների պայմանները: Նախատեսվում է օպտիմալացնել բանկային երաշխիքների տրամադրման և կառուցապատման հատուկ հաշիվների բացման և սպասարկման գործընթացները:

Մանրաձախ բիզնեսի թվային բիզնեսի և պրոդուկտների զարգացում

Մանրաձախ բանկային պրոդուկտների զարգացման մասով 2023թ. իրականացվել են մի շարք միջոցառումներ ուղղված թվային պրոդուկտների զարգացմանը, վարկային, ավանդային և կոմիսիոն գործող պրոդուկտների բարելավմանը և նոր պրոդուկտների ներդրմանը, շեշտադրումը դնելով մաքսիմալ ավտոմատացված մոտեցումներին, ապահովելով գործարքների կատարման արագություն, հարմարություն և անվտանգություն

Մասնավորապես, թվային ուղիների զարգացման առումով՝

2023թ. հունվար ամսին Բանկը անցում կատարեց Նոր թարմացված Մոբայլ Բանկ հավելվածին, ներդրվելով միանգամից Apple-pay, Google pay in-app վճարման գործիքներով:

2023թ. Մոբայլ Բանկ հավելվածում ներդրվեցին հաշվի, կուտակային հաշվի, առանց Բանկ այցելության ակնթարթային բացման լուծումները:

Ավանդի ներդրման առցանց լուծումը, որի շնորհիվ 2023թ. 2 ամսում, արդեն 18% մասնաբաժին ունենալով թվային հարթակներում:

Առաջին անգամ Հայաստանյան շուկայում թվային քարտի բացման լուծումը, որի դեպքում բացումը և քարտի ակտիվացումը կատարվում է ակնթարթորեն և PIN ծածկագրի ուղարկումը SMS- ի միջոցով, որը թույլ է տալիս հաճախորդներին կանխիկացում կատարել իրենց թվային քարտերից NFC բանկոմատների միջոցով:

Նպատակ ունենալով զարգացնել քարտային բիզնեսի և կոմիսիոն եկամուտների աճը, Visa և MasterCard վճարահաշվարկային ընկերությունների հետ կնքվեցին քեշ-

բքերի ստացման պայմանագրեր, համաձայն որի վերջիններիս փոխհատուցում են Բանկի կողմից իրականացվելիք տարատեսակ միջոցառումների ուղղված անկանխիկ վճարումների զարգացմանը: Համալրվեց Մոբայլ բանկի միջոցով տարատեսակ վճարումներ իրականացնելու ցանկը՝ հաճախորդներին ֆիզիկական մասնաճյուղային ցանցից դեպի մոբայլ հավելված տեղափոխելու և վճարումների առցանց կատարելու նպատակով, որոնք պարբերական համալրվում են: Ներդրվեց օնլայն հայտերի առկայությունը մոբայլ բանկում՝ արագ դրամական փոխանցումները օնլայն քարտին ստանալու համար, կանխիկի պատվիրման, քարտի պատվիրման և այլն:

Վարկավորման ուղղության մեջ՝

Բանկի վարկավորման շեշտադրումը 2023թ.՝

- ուղղված էր սեփական ռեսուրսներով հիփոթեքային վարկերի տրամադրմանը՝ կառուցապատողների նկատմամբ կիրառելով ռիսկ զսպողական մեխանիզմներ, ռեֆինանսավորող կազմակերպությունների ռեսուրսներից տրամադրվող ծրագրային վարկերին, որոնց դեպքում ապահովվում է բարձր մարժա /3%/ և վերաֆինանսավորումը կատարվում է նախապես:

Բանկը սկսել է համագործակցել նոր 4 Կառուցապատման ծրագրերով՝ վերափոխված ռիսկերի զսպման մեխանիզմներով:

Մեկնարկել է ՀՀ ՊՆ հետ զինձառայողներին և Քաղշին կոմիտեի հետ հանրային ձառայողներին հիփոթեքային վարկավորման պետ. ծրագրերի մեկնարկ: Սահմանվել են այլ ֆին. կառույցներից հիփոթեքների գնման նոր պայմաններ:

- ներդրվել է նախահաստատված վարկավորման տրամաբանությունը, որի համար սահմանվել են հաճախորդների սեգմենտներ, որոնց նախնական վերլուծելով՝ կիրառելով արդեն իսկ ավտոմատացման հարցման մեթոդներ Նորք

տեղեկատվական կենտրոն և Աքրա վարկային բյուրոյին, հաշվարկելով վարկի սահմանաչափ և առաջարկելով հաճախորդներին:

- զարգացվել է վարկային գծերի պրոդուկտները՝ ներդնելով վարկային քարտ արտոնյալ ժամանակահատվածով
- վերանայվել է տոկոսադրույքների քաղաքականությունը, բարձրացնելով գործող տոկոսադրույքները և 60 ամիս և ավել ժամկետով վարկերի համար ներդնելով հաստատուն ճշգրտվող տոկոսադրույքը:
- Անց է կացվել վարկային հոսքուղու տենդեր՝ ընտրելով համագործակցող կազմակերպություն և ակտիվ աշխատանքներ տարվել պրոյեկտի ներդրման ուղղությամբ, որի առաջին ներդնումը սպառողական վարկերով պլանավորված է 2024թ. ապրիլին:

Բանկը մեծ մասնակցություն է ունեցել սոցիալական ուղղվածությամբ ծրագրերին, մասնավորապես՝

- Կենսաթոշակառուների անկանխիկ գործարքների հետվճարի տրամադրման ծրագիր,
- Պետական աջակցության, միանվագ և պարբերական վճարումների ծրագիր,
- Սոցիալական փաթեթների հաշիվների սպասարկման ծրագիր,
- ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագրի հայաստանյան գրասենյակի հետ սննդի քարտերի տրամադրման ծրագիր:

Բանկը ամբողջությամբ վերանայել է ավանդային պրոդուկտները /ունենալով հաճախորդի կարիքները բավարարող բոլոր տեսակները և պայմանները/, հիմք դնելով տրանսֆերտային տոկոսների հաշվարկները, արդյունքում ապահովելով 1% միջին կշռված ավելի բարձր եկամտաբերություն: Բանկում ներդրվել է նոր հաշվի տեսակ՝ խնայողական հաշիվ:Քարտային բիզնեսի ուղղվածության զարգացման նպատակով ներդրվել են աշխատավարձային քարտերի ներ փաթեթներ: Ավտոմատացվել և ամբողջությամբ վերանայվել է Բանկի հաշվարկադրամարկղային

քաղաքականությունը՝ գործարքների իրականացման, հաշիվների, քարտերի սպասարկման միջնորդավճարներում՝ նպատակ ունենալով ապահով կոմիսիոն եկամուտի աճ, միևնույն առումով ունենալով շուկայական սակագներ: Մանրածախ բիզնեսի զարգացման նպատակով՝ 2023թ. ընթացքում իրականացվել են նաև հետևյալ հիմնական աշխատանքները՝

- Հիմք ընդունելով համապատասխան տեղեկատվական բազաների հետ Բանկի համագործակցումը, ավտոմատացվել և օպտիմիզացվել են բանկային ծառայությունների շրջանակներում տարբեր գործընթացներ (օրինակ՝ հաճախորդի գրանցում, եկամտի մասին տեղեկատվության ստացում և այլ):
- Հիփոթեքային վարկերի մասով իրականացվել է բեք օֆիսում վարկերի տրամադրման գործընթացի կենտրոնացում, որի շնորհիվ մասնաճյուղերի գործառնությունների մի մասը համակարգվել և տեղափոխվել է Բանկի գլխամասային գրասենյակ:

Մանրածախ ծառայությունների զարգացման քաղաքականությունը 2024-2026թթ.

Որդեգրելով Բանկի զարգացման նոր ռազմավարություն 2024-2026թթ. համար Բանկը նախատեսում է ֆիզիկական անձանց մատուցվող ծառայությունների ընդլայնումը և կատարելագործումը, շարունակելով շեշտադրումը դնել ծառայությունների մատուցման թվայնացմանը: Բանկը նպատակ ունի մատուցվող ծառայությունների 80%-ից ավելին հասանելի դարձնել իր հաճախորդներին հեռահար սպասարկման ուղիներով: Բանկի թվայնացմանը զուգահեռ՝ նախատեսվում է մասնաճյուղերից դեպի թվային հարթակներ (Մոբայլ/Ինտերնետ բանկ, վճարային տերմինալներ և այլն) տեղափոխել միատիպ գործարքների (վարկի մարումներ, հաշվին մուտքեր/ելքեր, կոմունալ և այլ վճարումներ) 80%/85%/92% համապատասխանաբար 2024թ./2025թ./2026թ. վերջի դրությամբ: Նույն

ժամանակահատվածում նախատեսվում է թվային հարթակներ (Մոբայլ/Ինտերնետ բանկ, Բանկի և գործընկերների կայքեր) տեղափոխել՝

- վարկային պրոդուկտների վաճառքի 20%/50%/70% համապատասխանաբար 2024թ./2025թ./2026թ. վերջի դրությամբ:

- Ավանդների ներգրավումը 40%/60%/80% համապատասխանաբար 2024թ./2025թ./2026թ. վերջի դրությամբ:

- Ակտիվ հաճախորդների բազայում մոբայլ բանկի օգտատերերի մասնաբաժին 50%/70%/80% համապատասխանաբար 2024թ./2025թ./2026թ. վերջի դրությամբ:

2024թ. ընթացքում նախատեսվում է թվայնացնել նաև ֆիզիկական անձանց վարկավորման գործընթացն՝ ի հաշիվ վարկային հոսքագծի ներդրման, վարկային որոշումների ավտոմատ կայացման, արտաքին աղբյուրներից տեղեկատվության ավտոմատ ներբեռնման, ինչպես նաև բեք-օֆիսային գործառնությունների տեղափոխման մասնաճյուղերից դեպի Բանկի գլխամասային գրասենյակ (վարկի ձևակերպում, նոտարական վավերացումներ և այլն):

Բանկը առանձնացնում է ծառայությունների զարգացման հետևյալ ուղղությունները՝

Վարկավորում՝

- Վարկային հոսքուղու ներդնում և փուլերով բոլոր վարկային պրոդուկտների տեղափոխում վարկային հոսքուքի, որոշումների 80% ավտոմատ կայացման նպատակով:

- Սքրինգի հիման վրա ավտոմատ որոշման կայացման մեխանիզմով վարկերի տրամադրում:

- Հիփոթեքների զարգացում՝ երկարաժամկետ հարաբերություններ կառուցելով հաճախորդների հետ, ինչը շարունակական հնարավորություն է տալիս cross -

վաճառքների և հաճախորդին հավելյալ ֆինանսական ծառայությունների մատուցման համար

- Ֆոնդավորմամբ հիփոթեքների զարգացում (լրացուցիչ ռեսուրսներին հասանելիություն, բացառելով հետագայում չվերաֆինանսավորման ռիսկը)

- Վարկային հոսքագծի և հաճախորդների բիոմետրիկ նույնականացման մեխանիզմները կիրառելով օնլայն վարկավորման ներդնում՝ Բանկի ինտերնետային կայքի և Մոբայլ Բանկ հավելվածի միջոցով:

- Այլ ֆինանսական կառույցներից սպառողական վարկերի վերաֆինանսավորում՝ որոշումների ավտոմատ կայացման հիմնա վրա և հաճախորդին տալով մաքսիմալ հարմար պայմաններ և տարբերակներ իր այլ ֆինանսական հաստատություններից վարկերը Բանկ տեղափոխելու համար :

- Ապառիկ վարկավորման մեկնարկ:

- Ավտովարակավորման զարգացում՝ համագործակցելով ավտոսրահների հետ

- Նախահաստատված վարկերի զարգացում նոր սեգմենտների հաճախորդների համար

- Փոքր բիզնեսի վարկավորման ընդլայնում: Հաճախորդների որակյալ և մասնագիտացված ծառայություններ մատուցելու և Բանկի վարկային ռիսկը նվազացնելու համար Բանկը նախատեսելու է ստեղծել փոքր բիզնեսի սուբյեկտների վարկավորման կենտրոն, որը կհամապատասխանի Բանկի նոր պահանջներին:

Հաճախորդների սեգմենտավորմամբ ծառայությունների մշակում և մատուցում՝ սքրինգի կիրառմամբ:

2024-2026թթ. Բանկի կարևոր ուղղություններից է էկվայրինգային ծառայությունների/բիզնեսի և փոխանցման ուղղությունների զարգացումը :

Հեռահար պրոդուկտների զարգացում և հաճախորդների հեռահար ուղիներով սպասարկման ընդլայնում՝

Բանկը իր ստրատեգիկ նպատակներում կարևորում է նոր հաճախորդների հեռահար նույնակայացման պրոցեսները և արդեն իսկ գործող հաճախորդների համար 80% պրոդուկտների հասանելիությունը հեռահար հարթակներում:

2024թ-ին պլանավորվում է՝

- Նոր հաճախորդների ներգավվում և պրոդուկտների մատուցում հեռահար՝ կիրառելով բիոմետրիկ նույնականացում մեխանիզմներ;
- Մոբայլ Բանկ հավելվածի շարունակական կատարելագործում և ներդրված վարկավորման, փոխանցման, քարտային պրոդուկտների և ծառայությունների հասանելիություն;
- Վճարային գործիքների ներդնում և զարգացում՝ նպաստելով հաճախորդների անկանխիկ վճարումների ավելացմանը;
- Էլեկտրոնային դրամապանակների հետ համագործակցում
- Վճարային տերմինալների կիրառությամբ ծառայությունների մատուցում Քարտային ծառայությունների զարգացում, ներդնելով նոր լուծումներ ինչպիսին՝ քարտի ակտիվացումն է ՄԲ-ի միջոցով առանց ATM-ների կիրառման, PIN ծածկագրի փոփոխման հնարավորություն և այլն:

4.3 Բանկի մրցակցային դիրքի նկարագրությունը

Բանկն իր գործունեությունն իրականացնելիս ղեկավարվում է հետևյալ սկզբունքներով, որոնք Բանկին հնարավորություն են տալիս պահպանել և ամրապնդել մրցակցային առաջատար դիրքերը « Բանկային համակարգում՝

- ա) ֆինանսների ճիշտ ժամանակին բաշխում,
- բ) լիակատար տնտեսական ինքնուրույնություն և իր գործունեության արդյունքների համար տնտեսական պատասխանատվություն,
- գ) ծախսերի կրճատում կամ հիմնավորված անխուսափելի ավելացում,
- դ) ժամանակի և ռեսուրսների արդյունավետ օգտագործում,
- ե) բանկային ռիսկերի նվազեցում,
- զ) կառավարում և զսպման նպատակով հաստատված տնտեսական և իրավական նորմատիվ ակտերի դրույթների պահպանում:

Բանկի համար առաջնային է հաճախորդների և գործընկերների հետ փոխհարաբերություններում անհատական մոտեցման ապահովումը: Հարաբերությունները բացառապես կառուցվում են փոխշահավետության, փոխվստահության և բիզնես էթիկայի նորմերի հիման վրա: Նման մոդելում փոխհարաբերությունները դրված են շուկայական հիմքի վրա, կրում են պայմանագրային բնույթ, ինչպես նաև ենթադրում են հաճախորդի ժամանակի խնայում, սպասարկման չափանիշների և որակի բարձրացում, բանկ-հաճախորդ բիզնեսի զարգացում: Բանկի գործունեության կարևորագույն սկզբունքներից է Բանկի աշխատակիցների նկատմամբ ղեկավարների կողմից արդարացի և հետևողական վերաբերմունքի ապահովումը: Կարևորելով համախմբված թիմային աշխատանքը՝ որպես առաջընթացի և զարգացման հիմնական գործոն, Բանկը միշտ գնահատում է իր յուրաքանչյուր աշխատակցի պոտենցիալը և կարողությունները, ստեղծում է խթանող և խաղաղ աշխատանքային պայմաններ, օգտվելով մրցութային ընտրությունից՝ ներգրավում նոր, հեռանկարային կադրեր:

Աշխատանքի արդյունավետ կազմակերպման գործում Բանկը առաջնորդվում է նաև դինամիկ զարգացող տեղեկատվական տեխնոլոգիաների քաղաքականության իրականացման սկզբունքով: Վերջինս ենթադրում է առաջավոր համակարգչային տեխնիկայի, ժամանակակից տեխնոլոգիաների, ներբանկային և միջբանկային ավտոմատացված համակարգերի, միջազգային վճարային ու ֆինանսական համակարգերի արդյունավետ և նպատակային կիրառում, գործընթացների աշխատատարության, ծախսատարության և գործառնական ռիսկերի նվազեցում: Սեփական պրոցեսինգային կենտրոնի ներդնումը Բանկին հնարավորություն տվեց կրճատել քարտային գործառնությունների հետ կապված ծախսերը, ինչի շնորհիվ Բանկը կարողացավ առավել գրավիչ առաջարկություններով հանդես գալ շուկայում և ընդլայնել քարտապան հաճախորդների բազան:

Իր կողմից առաջարկվող ծառայությունները բնակչության լայն զանգվածներին հասանելի դարձնելու նպատակով՝ Բանկը կարևորում է մասնաճյուղային լայն ցանցի առկայությունը:

Բանկը ներկայումս ունի 35 մասնաճյուղ, որոնցից 19-ը գտնվում են ք. Երևանում, 16-ը՝ ՀՀ մարզերում : Տնտեսության գլոբալացման և տեխնոլոգիական առաջընթացի հետ կապված՝ առավել կարևորվում է գործուն ներքին վերահսկողության համակարգի ներդնումը՝ զեղծարարություններից և անփութություններից խուսափելու համար: Հուսալի ներքին հսկողության համակարգը հանդիսանում է Բանկի առողջ և ապահով գործունեության երաշխիքը: Ներքին վերահսկողության համակարգը կոչված է վերահսկել հետևյալ գործառույթները՝ արդյոք ֆինանսական և գործառնական տեղեկատվությունը ճշգրիտ է և հուսալի, արդյոք հնարավոր ռիսկերը բացահայտված և հասցված են նվազագույնի, արդյոք Բանկը հետևողական է ՀՀ կենտրոնական բանկի, բանկային գործունեությունը կանոնակարգող ընթացակարգերի, այլ ներքին իրավական ակտերի պահանջներին, արդյոք ապահովված է Բանկի կառուցվածքային ստորաբաժանումների կողմից

իրականացվող աշխատանքների բավարար մակարդակ, արդյոք ռեսուրսներն օգտագործվում են արդյունավետ և արդյոք Բանկի կողմից սահմանված խնդիրները ստանում են արդյունավետ լուծումներ: Ներքին վերահսկողության համակարգը գործում է անկախ և օբյեկտիվության սկզբունքի հիման վրա:

Բանկի ղեկավարությունը, ռիսկերի արդյունավետ կառավարումը դիտելով որպես կորպորատիվ կառավարման և Բանկի բնականոն գործունեության ապահովման կարևորագույն պայման, խիստ կարևորում է այդ գործընթացի պատշաճ իրականացման անհրաժեշտությունը, ուստի և Բանկի գործունեության հետ առնչվող բոլոր ռիսկերը մշտապես գտնվում են ղեկավարության անմիջական վերահսկողության ներքո:

Բանկի ղեկավարությունը մշտապես մեծ ուշադրություն է դարձնում առկա խնդիրների լուծման որոշումների կայացման կոլեգիալության սկզբունքին, որի իրագործման համար Բանկում գործում են հատուկ մասնագիտացված կոմիտեներ և հանձնաժողովներ, որոնցից են «Վարկային կոմիտեն», «Ակտիվների և պարտավորությունների կառավարման կոմիտեն», «Խնդրահարույց ակտիվների կոմիտեն», «Կարգապահական կոմիտեն», «Հաճախորդների սպասարկման կոմիտեն»: Վերջիններիս գործունեությունը նպատակաուղղված է Բանկի գործունեության արդյունավետության բարձրացմանը, ընթացիկ և ռազմավարական նպատակների իրագործման ապահովմանն ու Բանկի գործունեության հետ առնչվող ռիսկերի արդյունավետ կառավարմանը:

Բանկում գործող Ռիսկերի կառավարման համակարգը պարբերաբար վերանայվում է՝ ելնելով արտաքին և ներքին միջավայրում տեղի ունեցող փոփոխություններից, շուկայում առկա միտումներից և մրցակցության մակարդակից: Ռիսկերի կառավարման համակարգի արդյունավետությունն ապահովելու նպատակով Բանկում իրականացվում է հնարավոր ռիսկերի բացահայտում, քանակական գնահատում, մշակվում են համապատասխան միջոցառումներ՝ կանխելու կամ

նվազագույնի հասցնելու հնարավոր ռիսկերի ազդեցությունը Բանկի ընթացիկ գործունեության վրա՝ ապահովելով Բանկի բնականոն գործունեությունն ու ֆինանսական կայունությունը:

4. Բանկի կառուցվածքը

Բանկի կազմակերպական կառուցվածքը ներկայացված է սույն ազդագրի Հավելված 1-ում:

5. Զարգացման վերջին միտումները

Բանկը, մշտապես կարևորելով հաճախորդների սպասարկման բարձր որակն ու նրանց հետ երկարաժամկետ կայուն հարաբերություններ հաստատելը, 2023թ. ընթացքում ևս վերանայել է առաջարկվող ծառայությունների սակագներն ու ծավալները, որոնք իրենց հերթին ազդել են Բանկի ֆինանսական ցուցանիշների վրա: Վերջին հաշվետու տարվա ավարտից մինչև ազդագրի ներկայացման օրն ընկած ժամանակահատվածի համար մատուցվող ծառայությունների սակագների էական աճ չի գրանցվել: Այսպիսով, ստորև աղյուսակներում ներկայացված են 31.12.2023թ. դրությամբ Բանկի հաշվեկշռային հիմնական հոդվածների փոփոխությունները նախորդ համադրելի ժամանակահատվածի նկատմամբ՝ տարվա կտրվածքով վերջիններիս դինամիկան արտացոլելու նպատակով:

հազ. ՀՀ դրամ

	31.12.2023թ.	31.12.2022թ.	Աճ/նվազում
Ընդամենը ակտիվներ, այդ թվում՝	830,458,899	813,065,716	17,393,183
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	54,617,870	88,186,796	-33,568,926
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	37,644,442	20,642,973	17,001,469
Հաճախորդներին տրված վարկեր	497,825,975	498,062,177	236,202

	31.12.2023թ.	31.12.2022թ.	Աճ/նվազում
Ընդամենը պարտավորություններ, թվում՝	673,959,814	661,438,932	12,520,882
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	496,808,089	462,791,704	34,016,385
	31.12.2023թ.	31.12.2022թ.	Աճ/նվազում
Ընդամենը կապիտալ	156,499,085	151,626,784	4,872,301


Հարկ ենք համարում նշել, որ 31.12.2023թ. դրությամբ ՀՀ առևտրային բանկերի հրապարակած ծանոթագրությունների հիման վրա կատարված վերլուծության համաձայն Բանկը 31.12.2023թ. դրությամբ ֆիզիկական անձանցից ներգրավված ժամկետային ավանդների գծով շարունակում է զբաղեցնել առաջին հորիզոնականը ՀՀ բանկային համակարգում:

6. Բանկի կառավարման մարմինները և կառավարման մարմինների անդամները

Բանկի կանոնադրությամբ սահմանված են Բանկի կառավարման հետևյալ մարմինները՝

- Բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովը /այսուհետ՝ Ժողով/,
- Բանկի խորհուրդը /այսուհետ՝ Խորհուրդ/,
- Բանկի գործադիր մարմինները՝ Բանկի վարչության նախագահը (այսուհետ՝ Վարչության նախագահ) և Բանկի վարչությունը (այսուհետ՝ Վարչություն):

Կառավարման մարմինների սխեմատիկ կառուցվածքը ներկայացված է ստորև.



6.1. Բանկի կանոնադրությամբ Բանկի կառավարման մարմիններին վերապահված իրավասությունները

Բանկի Ժողովը

Ժողովը Բանկի կառավարման բարձրագույն մարմինն է:

Ժողովի իրավասություններն են՝

- Բանկի կանոնադրության հաստատումը, դրանում փոփոխությունների և լրացումների կատարումը,
- Բանկի վերակազմակերպումը,
- Բանկի լուծարումը,
- ամփոփ, միջանկյալ և լուծարման հաշվեկշիռների հաստատումը, լուծարային հանձնաժողովի նշանակումը,
- խորհրդի քանակական կազմի հաստատումը, ինչպես նաև դրա անդամների ընտրությունը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը, բացառությամբ «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված դեպքերի, երբ Ժողովը չունի խորհրդի անդամների ընտրության և լիազորությունների դադարեցման իրավասություն: Խորհրդի քանակական կազմի հաստատման և դրա անդամների ընտրության

հարցերը քննարկվում են բացառապես տարեկան ժողովներում, բացառությամբ Կանոնադրությամբ նախատեսված դեպքերի, երբ խորհրդի քանակական կազմը կարող է հաստատվել արտահերթ ժողովում: Խորհրդի անդամների ընտրության հարցն արտահերթ ժողովում կարող է քննարկվել, եթե ժողովը որոշում է ընդունել խորհրդի կամ նրա առանձին անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին,

- խորհրդի անդամների վարձատրության (ներառյալ՝ պարգևատրումների) չափի սահմանումը,
 - հայտարարված բաժնետոմսերի ծավալի առավելագույն չափի սահմանումը,
 - Խորհրդի ներկայացմամբ Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձի հաստատումը,
 - Բանկի տարեկան ֆինանսական հաշվետվությունների, շահույթների և վնասների բաշխման հաստատումը: Տարեկան շահութաբաժինների վճարման մասին որոշման ընդունումը և տարեկան շահութաբաժինների չափի հաստատումը,
 - ժողովի վարման կարգի հաստատումը,
 - հաշվիչ հանձնաժողովի ձևավորումը,
 - բաժնետոմսերի համախմբումն ու բաժանումը,
 - հաստատված օրակարգի շրջանակում օրենքով նախատեսված այլ հարցեր:
- Վերը նշված հարցերով որոշումների ընդունումը վերապահվում է Բանկի ժողովի բացառիկ իրավասությանը և չի կարող փոխանցվել Բանկի Խորհրդին, Բանկի գործադիր մարմնի անդամներին կամ այլ անձի:

Բանկի Խորհուրդը

Խորհուրդն իրականացնում է Բանկի գործունեության ընդհանուր ղեկավարումը՝ օրենքով և Բանկի կանոնադրությամբ խորհրդի իրավասությանը վերապահված հարցերի սահմաններում:

Խորհրդի իրավասություններն են՝

- Բանկի գործունեության հիմնական ուղղությունների որոշումը, ներառյալ՝ Բանկի հեռանկարային զարգացման ծրագրի և այլ ռազմավարական հարցերի հաստատումը,
- Ժողովի տարեկան և արտահերթ նիստերի գումարումը, օրակարգի հաստատումը, ինչպես նաև դրանց գումարման և անցկացման կազմակերպման հետ կապված՝ նախապատրաստական աշխատանքների իրականացման ապահովումը,
- Բանկի գործադիր մարմնի անդամների նշանակումը, նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը և վարձատրության պայմանների հաստատումը,
- Բանկում ներքին հսկողության ստանդարտների սահմանումը, Բանկի ներքին աուդիտի ստորաբաժանման ձևավորումը, նրա տարեկան աշխատանքային ծրագրի հաստատումը, ներքին աուդիտի աշխատակիցների լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը և վարձատրության պայմանների հաստատումը,
- Բանկի տարեկան ծախսերի նախահաշվի ու կատարողականի հաստատումը,
- Բանկի ներքին վարչակազմակերպական կառուցվածքի հաստատումը,
- Բանկի կանոնադրական հիմնադրամի ավելացումը,
- շահութաբաժինների վճարման վերաբերյալ Ժողովին առաջարկությունների ներկայացումը, այդ թվում՝ շահութաբաժինների յուրաքանչյուր վճարման համար շահութաբաժիններ ստանալու իրավունք ունեցող Բանկի բաժնետերերի ցուցակի կազմումը, որում պետք է ընդգրկվեն Բանկի այն բաժնետերերը, որոնք ընդգրկվել են Բանկի բաժնետերերի ռեեստրում՝ Բանկի տարեկան Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու օրվա դրությամբ,
- Բանկի տարեկան ֆինանսական հաշվետվությունների նախնական հաստատումը և Ժողովին ներկայացումը,

- Ժողովի հաստատմանը բանկի արտաքին աուդիտ իրականացնող անձի ներկայացումը՝
- Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձի վճարման չափի սահմանումը,
- Բանկում իրականացված աուդիտորական կամ այլ ստուգումների արդյունքում անհրաժեշտության դեպքում բացահայտված թերությունների վերացմանն ուղղված միջոցառումների նախաձեռնումն ու դրանց իրականացման վերահսկումը,
- Բանկի կողմից Բանկի կանոնադրությամբ սահմանված ֆինանսական գործառնությունների իրականացման կարգը սահմանող ներքին իրավական ակտերի ընդունումը,
- Բանկի տարածքային և ինքնուրույն կառուցվածքային ստորաբաժանումների կանոնադրությունների հաստատումը, Բանկի ինքնուրույն կառուցվածքային ստորաբաժանումների միջև գործառնության պարտականությունների բաշխումը,
- Բանկի վերակազմակերպման հարցի ներկայացումն Ժողովի քննարկմանը,
- Բանկի պարտատոմսերի և այլ արժեթղթերի տեղաբաշխման մասին որոշման ընդունումը,
- Բանկի պահուստային և այլ հիմնադրամների օգտագործումը,
- Բանկի մասնաճյուղերի, ներկայացուցչությունների և հիմնարկների ստեղծումը,
- Բանկի հաշվապահական հաշվառման քաղաքականության՝ հաշվապահական հաշվառում վարելու և ֆինանսական հաշվետվություններ կազմելու նպատակով կիրառվող սկզբունքների, հիմունքների, եղանակների, կանոնների, ձևերի և կարգերի սահմանումը,
- դուստր կամ կախյալ ընկերությունների ստեղծումը,
- դուստր և կախյալ ընկերություններին մասնակցությունը,
- առևտրային կազմակերպությունների միությունների հիմնադրումը,

- առևտրային կազմակերպությունների միություններում մասնակցությունը,
- օրենքով և Բանկի կանոնադրությամբ, Բանկի Խորհրդի գործունեության կանոնակարգով և Բանկի ներքին իրավական ակտերով նախատեսված այլ որոշումների ընդունումը:

Գործադիր մարմինը

Բանկի ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է վարչության նախագահը և վարչությունը:

Վարչության նախագահը (Վարչության անդամները) նշանակվում է (են) Խորհրդի կողմից, իսկ վարչության նախագահի տեղակալները՝ Խորհրդի կողմից՝ վարչության նախագահի ներկայացմամբ: Վարչության կառուցվածքում պարտադիր ընդգրկվում են Բանկի վարչության նախագահը, նրա տեղակալը (տեղակալները), գլխավոր հաշվապահը:

Բանկի վարչությունը՝

- կազմակերպում և իրականացնում է Բանկի օպերատիվ գործունեության ղեկավարումը,
- սահմանում է Բանկի կողմից մատուցվող ծառայությունների միջնորդավճարների չափերը, ներգրավվող ավանդների և տրամադրվող վարկերի տոկոսադրույքները,
- քննարկում է վերստուգումների, ստուգումների նյութերը, տարածքային և կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների հաշվետվությունները,
- լուծում է Բանկի վարչության նախագահի իրավասությանը չպատկանող այլ հարցեր, որոնք սահմանվում են Բանկի Ժողովի և Խորհրդի կողմից հաստատված ներքին իրավական ակտերով,
- հաստատում է հաստիքացուցակը (աշխատատեղերը) Բանկի Խորհրդի կողմից հաստատված Բանկի տարեկան ծախսերի նախահաշվի (բյուջեի) շրջանակներում:

Վարչության նախագահը՝

- տնօրինում է Բանկի գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս է կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը,
 - ներկայացնում է Բանկը Հայաստանի Հանրապետությունում և արտասահմանում,
 - գործում է Բանկի անունից առանց լիազորագրի,
 - տալիս է լիազորագրեր,
 - Բանկի անունից կնքում է գործարքներ,
 - Բանկի անունից աշխատակիցների հետ աշխատանքային հարաբերություններում հանդես է գալիս որպես գործատուի ներկայացուցիչ, աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում է Բանկի աշխատողներին,
 - Բանկի աշխատակիցների նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ,
 - խորհրդի հաստատմանն է ներկայացնում Բանկի խորհրդի կողմից հաստատվող ներքին իրավական ակտերը, առանձնացված ստորաբաժանումների կանոնակարգերը, Բանկի վարչակազմակերպական կառուցվածքը,
 - ապահովում է Բանկի ժողովի և խորհրդի որոշումների կատարումը,
 - իրականացնում է օրենքով, սույն կանոնադրությամբ, ինչպես նաև խորհրդի կողմից սահմանված իրավական ակտերի շրջանակներում նախատեսված՝ Բանկի ընթացիկ գործունեության ղեկավարման հետ կապված այլ իրավասություններ:
- Այն հարցերը, որոնք օրենքով, սույն կանոնադրությամբ, Բանկի ժողովի կամ խորհրդի կողմից չեն սահմանվել որպես ժողովի, խորհրդի կամ ներքին աուդիտի ստորաբաժանման իրավասությանը պատկանող, պատկանում են վարչության նախագահի (վարչության) իրավասությանը:

Վարչության նախագահը (վարչությունը) եռամսյակը մեկ խորհրդին խորհրդի սահմանած ձևով ներկայացնում են իրենց գործունեության վերաբերյալ հաշվետվություններ սույն կանոնադրությամբ և վարչության կանոնակարգով սահմանված կարգով:

Վարչության նախագահի (վարչության) իրավասությանը ենթակա հարցերով որոշումների ընդունումը չի կարող փոխանցվել Բանկի կառավարման այլ մարմինների, Բանկի ներքին աուդիտին, Բանկի գլխավոր հաշվապահին կամ այլ անձի, բացառությամբ եթե Բանկի վարչության նախագահի լիազորությունների իրականացումը պատշաճ կերպով ժամանակավորապես փոխանցվել է նրան փոխարինող անձին: Վարչության նախագահի լիազորությունները պատշաճ կերպով ժամանակավորապես կարող են փոխանցվել նրան փոխարինող անձին, եթե վերջինս համապատասխանում է Կենտրոնական բանկի սահմանած որակավորման և մասնագիտական համապատասխանության չափանիշներին:

6.2. Տեղեկություններ Բանկի կառավարման մարմինների անդամների վերաբերյալ

Բանկի խորհրդի նախագահ՝ Ալֆրեդ Վ. Մոէկլի

Բնակության վայրը	Հոհեստրասսե 23, 8702 Զոլլիկոն, Շվեյցարիա
Իրավասությունները	Սահմանված է ՀՀ օրենսդրությամբ և Բանկի կանոնադրությամբ
Պարտականությունները	
Բանկից դուրս կառավարման մարմնի անդամի ծավալած գործունեությունը	Moeckli Finance and Management Ltd տնօրեն

Խորհրդի անդամ՝ Տիգրան Միրզոյան

Բնակության վայրը	ՀՀ, ք. Երևան, Թումանյան փող., շենք 11, բն. 48
Իրավասությունները	Սահմանված է ՀՀ օրենսդրությամբ և Բանկի կանոնադրությամբ
Պարտականությունները	
Բանկից դուրս կառավարման մարմնի անդամի ծավալած գործունեությունը	«Բնակարան՝ երիտասարդներին» ՎՎԿ ՓԲԸ գործադիր տնօրեն

Խորհրդի անդամ՝ Քրիստոֆ Մաուխլե

Բնակության վայրը	Քաղթնավեգ փող. 16, 9490, Վադուց, Լիխտենշտեյն
Իրավասությունները	Սահմանված է ՀՀ օրենսդրությամբ և Բանկի կանոնադրությամբ
Պարտականությունները	
Բանկից դուրս կառավարման մարմնի անդամի ծավալած գործունեությունը	Privatbank IHAG Zürich AG
	Sնօրենների խորհրդի փոխնախագահ JMA Asset Management AG, Zurich Sնօրենների խորհրդի անդամ

Խորհրդի անդամ՝ Ջերարդ Հոֆմանն

Բնակության վայրը	Բյուեյշտրասսե 38, CH-8707 Ուետիկոն Էմ Սի, Ցյուրիխ, Շվեյցարիա
Իրավասությունները	Սահմանված է ՀՀ օրենսդրությամբ և Բանկի կանոնադրությամբ
Պարտականությունները	
Բանկից դուրս կառավարման մարմնի անդամի ծավալած գործունեությունը	Gotthard Partners AG Գործընկեր

Խորհրդի անդամ՝ Պատրիկ Ջոզեֆ Սվինթ

Բնակության վայրը	Էնիսմոր Գարդենս Նայթսբրիջ, 41, Լոնդոն, Մեծ Բրիտանիա
Իրավասությունները	Սահմանված է ՀՀ օրենսդրությամբ և Բանկի կանոնադրությամբ
Պարտականությունները	
Բանկից դուրս կառավարման մարմնի անդամի ծավալած գործունեությունը	Salsa Properties LLC, տնօրեն
	Knightsbridge Ventures Ltd. Co Հիմնադիր/գործադիր տնօրեն
	Bondstone Խորհրդի անդամ
	Roberts and Ryan Investments, Inc Sնօրեն /Խորհրդի անդամ

Ժողովի կողմից խորհրդի անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարեցվում են եթե՝

ա) նա դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ.

բ) նրա պաշտոնավարման ընթացքում ի հայտ են եկել այնպիսի հանգամանքներ, որոնց ուժով նրան արգելվում է լինել բանկի խորհրդի անդամ (բանկի ղեկավար).

գ) մեկ տարվա ընթացքում բացակայել է խորհրդի նիստերի առնվազն 1/4-ից անհարգելի պատճառներով կամ ընդհանուր առմամբ (ներառյալ՝ հարգելի և անհարգելի բացակայությունները) նիստերի առնվազն կեսից (իրական ժամանակի ռեժիմով և սույն կանոնադրությամբ սահմանված հեռակա մասնակցությունը համարվում է լիարժեք մասնակցություն).

դ) օրենքով սահմանված կարգով որակագրկվել է կամ զրկվել է որոշակի պաշտոն վարելու իրավունքից:

Խորհրդի անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարում են՝

ա) իր դիմումի համաձայն.

բ) մահանալու դեպքում.

Բանկի Վարչության նախագահ՝ Գևորգ Թառումյան

Բնակության վայրը	ՀՀ, ք.Երևան, Բյուզանդի փող., 91շ. բն. 29
Իրավասությունները	Սահմանված է Բանկի կանոնադրությամբ
Պարտականությունները	
Բանկից դուրս կառավարման մարմնի անդամի ծավալված գործունեությունը	Բացակայում է

Գլխավոր գործառնական տնօրեն, Վարչության անդամ՝ Ազամատ Խակոյ

Բնակության վայրը	ՀՀ, ք.Երևան, Տերյան փող., 66շ. բն. 43
Իրավասությունները	Սահմանված է Բանկի կանոնադրությամբ
Պարտականությունները	
Բանկից դուրս կառավարման մարմնի անդամի ծավալված գործունեությունը	Բացակայում է

Գլխավոր ֆինանսական տնօրեն/գլխավոր հաշվապահ՝ Ռուբեն Մելքոնյան

Բնակության վայրը	ՀՀ, ք.Երևան, Նալբանդյան փող., 332. բն. 12
Իրավասությունները	Սահմանված է Բանկի կանոնադրությամբ
Պարտականությունները	
Բանկից դուրս կառավարման մարմնի անդամի ծավալած գործունեությունը	Բացակայում է

Ռիսկերի կառավարման և հսկողության գլխավոր տնօրեն՝ Գրիգոր Պետրոսյան

Բնակության վայրը	ՀՀ, ք.Երևան, Կոմիտասի պող., 632. բն. 129
Իրավասությունները	Սահմանված է Բանկի կանոնադրությամբ
Պարտականությունները	
Բանկից դուրս կառավարման մարմնի անդամի ծավալած գործունեությունը	Բացակայում է

Ազդագրի ներկայացման պահին Բանկի ակտիվների 10 և ավելի տոկոսը որևիցե մասնաճյուղում կենտրոնացված չէ: Բանկի և նրա կառավարմանը մասնակցող անձանց միջև ազդագրի ներկայացման պահի դրությամբ շահերի բախում չկա:

8. Հսկող անձինք

«Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի իմաստով «ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ գտնվում է՝

- 154,694 (74.999515%) ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի սեփականատեր «ԷՄ ԷՖ ԷՄ Գլոբալ Ինվեստ» ԲԸ և

- թվով 51,566 (25.000485%) ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող «Բնակարան Երիտասարդներին» ՎՎԿ ՓԲԸ

ուղղակի հսկողության ներքո:

9. Տեղեկատվություն Բանկի ակտիվների, պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի մասին

9.1 Պատմական ֆինանսական տեղեկատվություն

Բանկի 2021-2022թթ. տարեկան ֆինանսական հաշվետվությունները՝ անկախ աուդիտորական եզրակացություններով և 2023 թվականի առաջինից չորրորդ եռամսյակների միջանկյալ ֆինանսական հաշվետվությունները ներառված են ազդագրում: Ցանկության դեպքում ներդրողները Բանկի ֆինանսական հաշվետվությունները կարող են ստանալ նաև Բանկի գլխավոր գրասենյակից և մասնաճյուղերից, ինչպես նաև ծանոթանալ Բանկի ինտերնետային կայք-էջում:

Բանկի ֆինանսական վիճակի էական փոփոխությունները

2023 թվականի դեկտեմբերի 31-ից մինչև ազդագիրը ՀՀ ԿԲ գրանցման ներկայացնելու օրն ընկած ժամանակահատվածում Բանկի ֆինանսական վիճակի էական փոփոխություն տեղի չի ունեցել:

9.2 Դատական, արբիտրաժային և վարչական վարույթների մասին տեղեկատվություն

Ծրագրային ազդագրի գրանցման ներկայացմանը նախորդող 12 ամիսների ընթացքում Բանկը ներգրավված չի եղել դատական այնպիսի վարույթներում, որոնք Բանկի ֆինանսական վիճակի կամ շահութաբերության վրա կարող են ունենալ էական ազդեցություն:

10. Էական պայմանագրերը

Բանկում առկա չեն Ծրագրային ազդագրի գրանցման ներկայացմանը նախորդող 1 տարվա ընթացքում Բանկի կողմից բնականոն գործունեության շրջանակներից դուրս կնքված և գործողության մեջ գտնվող պայմանագրեր, որոնց գինը գերազանցում է Բանկի վերջին հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվություններում նշված սեփական կապիտալի արժեքի 5 տոկոսը:

11. Փորձագետի, գնահատողի, խորհրդատուի կամ հաշվապահի մասնագիտական կարծիքը և երրորդ անձանցից վերցված տեղեկատվությունը


Ներկայացվող Ծրագրային ազդագրում փորձագետի, գնահատողի, խորհրդատուի կամ հաշվապահի մասնագիտական կարծիք կամ երրորդ անձանցից վերցված տեղեկատվություն չի օգտագործվել:

12. Այլ տեղեկատվություն

Ծրագրային ազդագրի կիրառության ողջ ժամկետի ընթացքում Բանկի կանոնադրությունը, միջանկյալ և տարեկան ֆինանսական հաշվետվությունները, տարեկան անկախ աուդիտորական եզրակացությունները, ինչպես նաև որպես հաշվետու թողարկող, ներդրումների համար պատրաստվող տարեկան և միջանկյալ հաշվետվություն – վերլուծությունները մշտապես մատչելի են հանրությանն ինչպես էլեկտրոնային, այնպես էլ թղթային ձևով: Նշված փաստաթղթերի էլեկտրոնային տարբերակները տեղադրված են Բանկի ինտերնետային կայք-էջում <https://www.amiobank.am/>, իսկ թղթային տարբերակով ստանալու համար ներդրողները կարող են դիմել Բանկի գլխամասային գրասենյակ:

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Հավելված 1. «ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ կազմակերպական կառուցվածքը



Հավելված 2. Ֆինանսական գործակիցների հաշվարկման բանաձևեր

Սեփական կապիտալի շահութաբերություն (ROE) =

(Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո / Սեփական կապիտալի միջին մեծություն) x 100

Ակտիվների շահութաբերություն (ROA) =

(Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո / Ընդհանուր ակտիվների միջին մեծություն) x 100

Զուտ շահույթի մարժա (NPM) =

Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո / Գործառնական եկամուտ

Ակտիվների օգտագործման գործակից (AU) =

Գործառնական եկամուտ / Ընդհանուր ակտիվների միջին մեծություն

Սեփական կապիտալի մուլտիպլիկատոր (EM) =

Ընդհանուր ակտիվների միջին մեծություն / Սեփական կապիտալի միջին մեծություն

Զուտ տոկոսային մարժա (NIM) =

Զուտ տոկոսային եկամուտ / Եկամտաբեր ակտիվների միջին մեծություն

Եկամտաբեր ակտիվների եկամտաբերություն =

Տոկոսային եկամուտներ / Եկամտաբեր ակտիվների միջին մեծություն

Ծախսատարություն այն պարտավորությունների, որոնց գծով կատարվում են տոկոսային ծախսեր =

Տոկոսային ծախսեր / Պարտավորություններ, որոնց գծով կատարվում են տոկոսային ծախսեր

Զուտ շահույթը մեկ բաժնետոմսի հաշվով (EPS) =

Զուտ շահույթ շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո / Բաժնետոմսերի միջին կշռված թիվը

Սպրեդ

(Տոկոսային եկամուտներ / Եկամտաբեր ակտիվների միջին մեծություն) - (Տոկոսային ծախսեր/Պարտավորություններ, որոնց գծով կատարվում են տոկոսային ծախսեր)

Հավելված 3. Հայտ-հանձնարարականի օրինակելի ձև /իրավաբանական անձ/

«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ թողարկած պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարական

Հայտի Բանկ ներկայացման ամսաթիվը և ժամը _____
(օր, ամիս, տարի, ժամ)

Իրավաբանական անձի անվանումը _____
(Ֆիրմայի անվանում, կազմակերպատիրական ձև)

Պետական գրանցման տվյալները _____
(Գրանցման վկայականի համար, ամսաթիվ)

Գրանցման և գտնվելու վայրը _____
(Գրանցման և գտնվելու վայրի հասցեները)

ՀՎՀՀ _____

Ռեզիդենտությունը _____

(*ռեզիդենտ/ ոչ ռեզիդենտ*)

Սույն հայտ-հանձնարարականի ներկայացմամբ ընդունում ենք «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ (այսուհետ՝ Բանկ) առաջարկը, որով և ցանկություն ենք հայտնում ձեռք բերել թողարկված պարտատոմսերը հետևյալ պայմաններով՝

Ձեռք բերվող պարտատոմսերի քանակը՝ հատ (_____)
(*տատերով*) *քանակը* *թվերով*

Ձեռք բերվող պարտատոմսերի ձեռքբերման գինը (_____)
(*տատերով*) *գինը* *թվերով*

Ձեռք բերվող պարտատոմսերի (_____)

**ձեռքբերման դիմաց վճարված
(տառերով)
ընդհանուր գումարը**

_____ *ընդհանուր գումարը թվերով*

**Անձի ԱՄՆ դոլարով
բանկային հաշվի համարը
(պարտավորումների ձեռք բերման դեպքում)**

_____ *(լրացվում է արտարժույթային*

**Անձի ՀՀ դրամով
բանկային հաշվի համարը**

Բանկի անվանումը

**Արժեթղթերի հաշիվը հաշվառող
անձի անվանումը**

**Արժեթղթերի հաշվի
համարը**

Սույնով հավաստում ենք, որ հայտ-հանձնարարականը ներկայացնելուց առաջ, ըստ էության, ծանոթացել ենք վերջինիս անբաժանելի մասը հանդիսացող Բանկի պարտատոմսերի հրապարակային առաջարկի Ծրագրային ազդագրին, ստանձնում ենք այդ պարտատոմսերում ներդրումների հետ կապված պարտականությունները և հնարավոր ռիսկերը:

Հաստատում ենք, որ ֆինանսական միջոցները, որոնք փոխանցվում են Բանկ, ստացված են օրինական ճանապարհով և ոչ մի կերպ կապված չեն ահաբեկչության ֆինանսավորման, թմրանյութերի վաճառքի, մարդկանց վաճառքի, հարկերի վճարումից խուսափելու և այլ հանցավոր գործունեության հետ:

Հաստատում ենք, որ սույն հայտ-հանձնարարականը Բանկի կողմից ընդունվելու/ակցեպտավորելու պահից, այն կհանդիսանա Կողմերի միջև կնքված և ուժի մեջ մտած պայմանագիր:

Լրացվում է Բանկի կողմից

Ձեռք բերվող

պարտատոմսերի ԱՄՏԾ _____

Թողարկված պարտատոմսերի
ընդհանուր քանակ՝ հատ
(տասներով)

(_____)
քանակը թվերով

Դրամական միջոցների փոխանցման/
մուտքագրման ամսաթիվը
(տարի)

(օր, ամիս,

Ստորագրություն _____

Անուն Ազգանուն _____
(իրավաբանական անձի ներկայացուցչի կամ
լիազորված անձի անուն, ազգանունը)

Կ.Տ.

Եթե ներդրողի կողմից պարտատոմսերի ձեռքբերման համար դրամական միջոցները համապատասխանաբար 11500236924369 (ԱՄՆ դոլարային պարտատոմսերի դեպքում) և 11500579062790 (ՀՀ դրամային պարտատոմսերի դեպքում) հաշվեհամարներին են վճարվում մինչև տվյալ աշխատանքային օրվա ժամը 16:30-ը, ապա այդ դրամական միջոցները ստացված են համարվում այդ օրը, իսկ եթե համապատասխան գումարները վճարվում են տվյալ աշխատանքային օրվա 16:30-ից հետո, ապա դրանք ստացված են համարվում վճարման օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրը:

Հավելված 4. Հայտ-հանձնարարականի օրինակելի ձև /Ֆիզիկական անձ կամ անհատ ձեռնարկատեր/

«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ թողարկած պարտավորումների ձեռքբերման հայտ-հանձնարարական

Հայտի Բանկ ներկայացման ամսաթիվը և ժամը _____
(օր, ամիս, տարի, ժամ)

Հայտ ներկայացնողի անունը _____
(անուն, ազգանուն)

Անձը հաստատող փաստաթղթի տվյալները _____
(Անձնագրի համար, տրման ամսաթիվ)

Ռեզիդենտությունը _____
(ռեզիդենտ/ ոչ ռեզիդենտ)

Գրանցման հասցեն _____

Սոցիալական քարտի համարը _____

Սույն հայտ-հանձնարարականի ներկայացմամբ ընդունում ենք «ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ (այսուհետ՝ Բանկ) առաջարկը, որով և ցանկություն ենք հայտնում ձեռք բերել թողարկված պարտատոմսերը հետևյալ պայմաններով՝

Ձեռք բերվող պարտատոմսերի քանակը՝ հատ _____ (_____)
(տատերով) քանակը թվերով

Ձեռք բերվող պարտատոմսերի ձեռքբերման գինը _____ (_____)
(տատերով) գինը թվերով

Ձեռք բերվող պարտատոմսերի _____ (_____)

ձեռքբերման դիմաց վճարված
(տառերով)
ընդհանուր գումարը

_____ *ընդհանուր գումարը թվերով*

Անձի ԱՄՆ դոլարով
բանկային հաշվի համարը
պարտավորումների ձեռք բերման դեպքում)

_____ *(լրացվում է արտարժույթային*

Անձի ՀՀ դրամով
բանկային հաշվի համարը

Բանկի անվանումը

Արժեթղթերի հաշիվը հաշվառող
անձի անվանումը

Արժեթղթերի հաշվի
համարը

Սույնով հավաստում եմ, որ հայտ-հանձնարարականը ներկայացնելուց առաջ, ըստ էության, ծանոթացել եմ վերջինիս անբաժանելի մասը հանդիսացող Բանկի պարտատոմսերի հրապարակային առաջարկի Ծրագրային ազդագրին, ստանձնում ենք այդ պարտատոմսերում ներդրումների հետ կապված պարտականությունները և հնարավոր ռիսկերը:

Տեղյակ ենք, որ արժեթղթերում կատարվող ներդրումները ՀՀ օրենսդրությամբ սահմանված չափերով երաշխավորված են ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի միջոցներով, ծանուցվել, ստացել և համաձայն եմ Ավանդների հատուցման երաշխավորման պայմաններին ու կարգին:

Հաստատում եմ, որ ֆինանսական միջոցները, որոնք փոխանցվում են Բանկ, ստացված են օրինական ճանապարհով և ոչ մի կերպ կապված չեն ահաբեկչության ֆինանսավորման, թմրանյութերի վաճառքի, մարդկանց վաճառքի, հարկերի վճարումից խուսափելու և այլ հանցավոր գործունեության հետ:

Կողմերի միջև ծագած վեճերն ու տարաձայնությունները լուծվում են Կողմերի փոխադարձ բանակցությունների միջոցով, իսկ համաձայնության չգալու դեպքում՝ ՀՀ օրենսդրությամբ:

Տեղեկացված եմ(ենք), որ տասը միլիոն ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթով գումարը չգերազանցող գույքային պահանջի դեպքում ծագած

վեճերն ու տարաձայնությունները կարող են լուծվել Ֆինանսական համակարգի հաշտարարի միջոցով (ՀՀ օրենսդրության համաձայն, անհատ ձեռնարկատերը չի օգտվում իր պահանջները Ֆինանսական համակարգի հաշտարարին ներկայացնելու հնարավորությունից):

Հաստատում եմ, որ սույն հայտ-հանձնարարականը Բանկի կողմից ընդունվելու/ակցեպտավորելու պահից, այն կհանդիսանա Կողմերի միջև կնքված և ուժի մեջ մտած պայմանագիր:

Լրացվում է Բանկի կողմից

Ձեռք բերվող

պարտատոմսերի ԱՄՏԾ

Թողարկված պարտատոմսերի

ընդհանուր քանակ՝ հատ

(տասներով)

(_____)

քանակը թվերով

Դրամական միջոցների փոխանցման/

մուտքագրման ամսաթիվը

(օր, ամիս, տարի)

Ստորագրություն

Անուն Ազգանուն

_____ *(Ֆիզիկական անձի տվյալները)*

Կ.Տ.

Եթե ներդրողի կողմից պարտատոմսերի ձեռքբերման համար դրամական միջոցները համապատասխանաբար 11500236924369 (ԱՄՆ դոլարային պարտատոմսերի դեպքում) և 11500579062790 (ՀՀ դրամային պարտատոմսերի դեպքում) հաշվեհամարներին են վճարվում մինչև տվյալ աշխատանքային օրվա ժամը 16:30-ը, ապա այդ դրամական միջոցները ստացված են համարվում այդ օրը, իսկ եթե համապատասխան գումարները վճարվում են տվյալ աշխատանքային օրվա 16:30-ից հետո, ապա դրանք ստացված են համարվում վճարման օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրը:

Հավելված 5. Թողարկման վերջնական պայմաններ

Թողարկման վերջնական պայմաններ

.....20..թ.

ԱՄԻՕ բանկ ՓԲԸ

անվանական, արժեկտրոնային, ոչ փաստաթղթային, ոչ փոխարկելի պարտատոմս

Թողարկողի և թողարկվող արժեթղթերի վերաբերյալ ամբողջական տեղեկատվության ձեռքբերման համար անհրաժեշտ է համատեղ դիտարկել ծրագրային ազդագիրը (գրանցված է ----- 20..թ.), դրա լրացումները և սույն թողարկման վերջնական պայմանները: Ծրագրային ազդագիրը, դրա լրացումները գտնվում են ԱՄԻՕ ԲԱՆԿ ՓԲԸ-ում 48 Նալբանդյան փողոց, Երևան, ՀՀ հասցեում:

Ընդհանուր տեղեկություններ	
(Այն տեղեկությունները, որոնք կիրառելի չեն, նշվում է «ոչ կիրառելի»: Եթե միևնույն սերիայի ներքո տարբեր հիմնական պայմաններով (թողարկման արժույթ, առաջարկի գին, անվանական արժեք և այլն) արժեթղթեր են թողարկվում, ապա յուրաքանչյուր պայմանին բավարարող արժեթղթերի խմբի համար տարբերվող պայմանները ներկայացվում են տարանջատված:)	
1.	Թողարկողը (թողարկողի անվանումը) ԱՄԻՕ ԲԱՆԿ ՓԲԸ
2.	Երաշխավորողը Թողարկողը չի նախատեսում ներգրավել երաշխավոր
3.	Սերիան (տվյալ ծրագրային ազդագրի հիման վրա իրականացվող հերթական թողարկման համարը և տարեթիվը, օրինակ, 2016 թ-ի 1-ին թողարկման համար`

	2016-1)	
4.	Տվյալ սերիայի թողարկման ընդհանուր ծավալը	Յուրաքանչյուր տրանշի համար ենթակա է որոշման Բանկի Վարչության կողմից տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ
5.	Արժեթղթերի դասակարգման մասին տեղեկատվություն՝ թողարկողի պարտավորությունների մարման հերթականության տեսանկյունից (ստորադասությունը), ներառյալ՝ տվյալ սերիայի ներքին յուրաքանչյուր թողարկման ծավալը՝ ըստ ստորադասության	Թողարկողի կողմից առաջարկվող պարտատոմսերի սեփականատերերի յուրաքանչյուր հերթի պահանջները բավարարվում են նախորդ հերթի պահանջները լրիվ բավարարվելուց հետո: Առաջարկվող պարտատոմսերի դեպքում սեփականատերերի պահանջները կբավարարվեն «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների և ապահովագրական կազմակերպությունների սնանկության մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ կետի ա) և բ) ենթակետերով սահմանված պահանջները բավարարելուց հետո: Կազմակերպության պարտավորությունների մարման հերթականության տեսանկյունից պարտատոմսերից բխող պահանջները ենթակա չեն վերադասակարգման:
6.	Թողարկման արժույթը	ԱՄՆ դոլար, ՀՀ դրամ
7.	Առաջարկի գինը	Տեղաբաշխման ընթացքում և տեղաբաշխումից հետո պարտատոմսի գինը որոշվելու է հետևյալ բանաձևով. $DP = \frac{C}{f} \sum_{t=1}^N \frac{1}{\left(1 + \frac{y}{100 * f}\right)^{i-1+\tau}} + \frac{100}{\left(1 + \frac{y}{100 * f}\right)^{N-1+\tau}}$ $\tau = \frac{DSN}{DCC}$ DP – Պարտատոմսի գինն է. DSN – գործարքի կատարման օրվան հաջորդող

		<p>արժեկտրոնի մարման ամսաթվի և գործարքի կատարման օրվա մեջ եղած օրերի քանակն է համապատասխան պայմանականության դեպքում:</p> <p>DCC – գործարքին նախորդող արժեկտրոնի վճարման օրից մինչև գործարքի հաջորդող արժեկտրոնի վճարման օրերի քանակն է համապատասխան պայմանականության դեպքում:</p> <p>f- արժեկտրոնի վճարման հաճախականությունն է (f=4 եռամսյակային վճարումների դեպքում)</p> <p>N – գործարքի կատարման օրվանից հետո արժեկտրոնների մնացած վճարումների քանակն է:</p> <p>y- մինչև մարում եկամտաբերությունն է</p> <p>C- տարեկան արժեկտրոնն է 100 միավոր անվանական արժեքի դիմաց:</p> <p>Տեղաբաշխումը սկսելուց 2 օր առաջ Բանկի ինտերնետային կայք-էջում կիրապարակվի վերոնշյալ բանաձևով հաշվարկված պարտատոմսի տեղաբաշխման գինը՝ տեղաբաշխման ամբողջ ժամանակահատվածի համար՝ ըստ օրերի:</p>
8.	Անվանական արժեքը	100 (մեկ հարյուր) ԱՄՆ դոլար, 100,000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ
9.	Քանակը	15,000,000 (տասնհինգ միլիոն) 150,000 (հարյուր հիսուն հազար) հատ ԱՄՆ դոլար, 35,000,000,000 (երեսունհինգ միլիարդ) 350,000 (երեք հարյուր հազար) հատ ՀՀ դրամ
10.	Առաջարկի իրականացման սկիզբը (ներառյալ՝ ժամկետի ցանկացած հնարավոր փոփոխությունները)	Ենթակա է որոշման Բանկի Վարչության կողմից

11.	Առաջարկի իրականացման ավարտը (ներառյալ՝ ժամկետի ցանկացած հնարավոր փոփոխությունները)	Ենթակա է որոշման Բանկի Վարչության կողմից
12.	Արժեթղթի տարբերակիչ ծածկագիրը (ISIN) կամ այլ նմանատիպ տարբերակիչ ծածկագիր	
13.	Թողարկման տեղաբաշխման վերաբերյալ որոշում ընդունած իրավասու մարմինը և որոշման ամսաթիվը (լրացվում է այն դեպքում, եթե տվյալ հրապարակային առաջարկի համար առանձին որոշում է ընդունվել, հակառակ դեպքում նշվում է «ոչ կիրառելի»)	և Բանկի Խորհրդի 15.02.24թ. նիստի թիվ 3 արձանագրության N 10.1 արձանագրային որոշման
Արժեկտրոնի վերաբերյալ տեղեկություններ		
14.	Արժեկտրոնի հաշվարկման առաջին օրը	Ենթակա է որոշման Բանկի Վարչության կողմից
15.	Արժեկտրոնի տոկոսադրույքը և վճարման պարբերականությունը, եթե արժեկտրոնի տոկոսադրույքը լողացող է, ապա ներկայացնել տեղեկատվություն, թե	Ենթակա է որոշման Բանկի Վարչության կողմից

	ինչ ցուցանիշից (դրափոփոխությունից) է կախված տոկոսադրույքի մեծությունը, և որտեղ կարելի է ստանալ այդ ցուցանիշի/դրափոփոխության մասին տեղեկատվություն	
16.	Արժեկտրոնի վճարման հստակ օրերը (օր, ամիս, տարի)	Կորոշվի պարտատոմսերի տեղաբաշխումը սկսելու ամսաթվից առնվազն 2 (երկու) աշխատանքային օր առաջ
17.	Արժեկտրոնի օրերի հաշվարկման կարգը (օրինակ 30/360, Act/Act, Act/360 և այլն)	Փաստացի օրեր արժեկտրոնի փուլի ընթացքում/Փաստացի օրեր տարվա ընթացքում (Actual/Actual)
18.	Լողացող արժեկտրոնի հաշվարկն իրականացնողը	ոչ կիրառելի
19.	Արժեկտրոնի հաշվարկման այլ էական պայմաններ	Ենթակա է որոշման Բանկի Վարչության կողմից
20.	Զրոյական արժեկտրոնով (զեղչատոկոսային) արժեթղթերի վերաբերյալ դրույթ (նշվում է «կիրառելի» կամ «ոչ կիրառելի»)	ոչ կիրառելի
	Մայր գումարի մարման վերաբերյալ տեղեկություններ	
21.	Մարման (մասնակի մարումների) ժամկետը	Ենթակա է որոշման Բանկի Վարչության կողմից

22.	Մարման (մասնակի մարումների) արժեքը, եթե հնարավոր չէ, ապա նշվում է հաշվարկման մեթոդաբանությունը	100 (մեկ հարյուր) ԱՄՆ դոլար, 100,000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ
23.	Մարման արժեքի փոփոխությունը (լրացվում է այն բոլոր պայմանները, որոնց դեպքում հնարավոր է մարման արժեքի փոփոխություն)	ոչ կիրառելի
24.	Վաղաժամկետ մարման հնարավորություն թողարկողի նախաձեռնությամբ/քոլ օպցիոն (նշվում է «կիրառելի է» կամ «ոչ կիրառելի»)	ոչ կիրառելի
	1) Ժամկետ(ներ)ը	
	2) Օպցիոնի իրականացման գինը, դրա հաշվարկման մեթոդը (առկայության դեպքում),	
	3) Մասնակի մարման հնարավորության դեպքում՝ նվազագույն և առավելագույն մարման արժեքը	
	4) Այլ տեղեկություններ	
25.	Վաղաժամկետ մարման հնարավորություն	ոչ կիրառելի

	ներդրողի նախաձեռնությամբ/փութօսացիոն (նշվում է «կիրառելի» կամ «ոչ կիրառելի»)	
	1) Ժամկետ(ներ)ը	
	2) Օպցիոնի իրականացման գինը, դրա հաշվարկման մեթոդը (առկայության դեպքում),	
	3) Այլ տեղեկություններ (տեղեկացման ժամանակաշրջանը)	
Տեղաբաշխման վերաբերյալ տեղեկություններ		
26.	Տեղաբաշխողի անվանումը, գտնվելու վայրը	ԱՄԻՕ ԲԱՆԿ ՓԲԸ , ՀՀ ք. Երևան, Նալբանդյան 48
27.	Տեղաբաշխման պայմաններ ներառված ազդագրում) այլ (որոնք չեն	Ենթակա է որոշման Բանկի Վարչության կողմից

Այլ տեղեկություններ	
28. Տվյալ դասի արժեթղթերի կարգավորվող շուկայում առևտրին թույլտվության առկայություն (նշվում է համապատասխան կարգավորվող շուկաների անվանումները, թույլտվության ամսաթիվը)	Արժեթղթերը դեռ թույլատրված չեն կարգավորվող շուկայում
29. Եթե առաջարկվող արժեթղթերի մասով հետագայում հայցվելու է կարգավորվող շուկայում առևտրին թույլտվություն, ապա նշվում է տեղեկություններ այդ մասին (շուկայի անվանումը, նաև դրույթ, որ առևտրին թույլտվության հայցը կարող է չբավարարվել, առևտրին թույլտվության սպասվող ամսաթիվը (հնարավորության դեպքում))	Թողարկողը պարտադիր դիմելու է պարտատոմսերը կարգավորվող շուկայում ցուցակելու համար, և համաձայն ՀՀ գործող Օրենսդրության՝ պարտատոմսերի ցուցակման դեպքում վերջիններիս հետագա շրջանառությունը կարող է իրականացվել միայն կարգավորվող շուկայում: Կարգավորվող շուկա ասելով՝ Թողարկողն ի նկատի ունի Հայաստանի Ֆոնդային Բորսա ԲԲԸ-ն: Առևտրին թույլտվության հայցը կարող է նաև չբավարարվել:
30. Արժեթղթի վարկանիշը	Արժեթղթերը վարկանշված չեն
31. Արժեթղթերի դիմաց վճարներ կատարելու մեթոդները (պարբերականությունը, բանկային հաշիվները և այլն) և ժամկետները, ինչպես նաև	Թողարկողի կողմից թողարկվող պարտատոմսերի ձեռքբերման համար իրավաբանական և/կամ ֆիզիկական անձինք կարող են վճարումը կատարել/համապատասխան գումարը

<p>արժեթղթերը ստանալու մեթոդները, ժամկետները, արժեթղթերի սեփականության վերաբերյալ քաղվածք ստանալու ձևը</p>	<p>փոխանցել ԱՄԻՕ ԲԱՆԿ ՓԲԸ-ում բացված և համապատասխան տարանցիկ հաշվեհամարին:</p>
--	--

Թողարկողը պատասխանատու է սույն «Թողարկման վերջնական պայմաններում» ներառված տեղեկությունների համար: Թողարկողը հավաստիացնում է, որ սույն փաստաթղթում ներառված տեղեկությունները համապատասխանում են այն տեղեկություններին (ներկայացված ընդհանուր մեթոդաբանությանը), որոնք ներառված են ծրագրային ազդագրում, դրա լրացումներում, ինչպես նաև ճշգրիտ են (այնքանով, որքանով հայտնի են), և որևէ փաստ բաց չի թողնվել կամ խեղաթյուրվել:

Ազամատ Խակույ

(անուն, ազգանուն)

**Գլխավոր
գործառնական
տնօրեն**

(պաշտոնը)

(ստորագրություն)

(ամսաթիվ)

**Ռուբեն
Մելքոնյան**

(անուն, ազգանուն)

**Գլխավոր
ֆինանսական
տնօրեն/Գլխավոր
հաշվապահ**

(պաշտոնը)

(ստորագրություն)

(ամսաթիվ)

**Գրիգոր
Պետրոսյան**

(անուն, ազգանուն)

**Ռիսկերի
կառավարման և
հսկողության
գլխավոր տնօրեն**

(պաշտոնը)

(ստորագրություն)

(ամսաթիվ)

Ստորագրությունները վավերացնում են՝

**Գևորգ
Թառումյան**

(անուն, ազգանուն)

**Վարչության
նախագահ**

(պաշտոնը)

(ստորագրություն)

(ամսաթիվ)

Հավելված 6. «ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ ֆինանսական հաշվետվություններ

« Հ Ա Յ Բ Ի Ձ Ն Ե Ս Բ Ա Ն Կ »
Փակ Բաժնետիրական Ընկերություն

**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ՀԱՅԿԱԿԱՆ ԴՐԱՄՈՎ
31 դեկտեմբեր 2021թ.**

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Անկախ աուդիտորի եզրակացություն	3
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն	6
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	7
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն	8
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	10
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	12

29.04.2022
N 012203

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ
«Բեքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ
Փխտավոր տնօրեն
Փ. Գևորգյան

Աուդիտորական ծառայությունների իրականացման
լիցենզիա թիվ 054՝ տրված ՀՀ ֆինանսների
և էկոնոմիկայի նախարարության կողմից

ԱՆԿԱՆ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ»

Փակ բաժնետիրական ընկերության Բաժնետիրոջը

Կարծիք

Մեր կողմից իրականացվել է «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» Փակ բաժնետիրական ընկերության (Բանկ) ֆինանսական հաշվետվությունների աուդիտ, որոնք ներառում են 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա համար շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը, սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը, ինչպես նաև հաշվապահական քաղաքականության ամփոփ նկարագիրը և այլ պարզաբանող ծանոթագրություններ:

Մեր կարծիքով կից ֆինանսական հաշվետվությունները տալիս են Բանկի՝ 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ):

Կարծիքի հիմքեր

Մենք աուդիտն իրականացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Բանկից՝ համաձայն Հաշվապահների միջազգային դաշնության պրոֆեսիոնալ հաշվապահների վարքագրի (ՀՄԴ-ի Վարքագիրը) և Հայաստանի Հանրապետությունում կիրարկելի՝ ֆինանսական հաշվետվությունների աուդիտի նկատմամբ վարքագծի պահանջների, և մենք կատարել ենք վարքագծի նկատմամբ մեր մյուս պարտականությունները՝ այդ պահանջների համաձայն: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

ADVISORY • ASSURANCE • ACCOUNTING • TAX

Baker Tilly Armenia CJSC is a member of the global network of Baker Tilly International Ltd., the members of which are separate and independent legal entities.

Հանգամանքի լուսաբանում

Ձեր ուշադրությունն ենք հրավիրում ֆինանսական հաշվետվություններին կից Ծանոթագրություն 38-ին (էջ 86), որտեղ լուսաբանված է 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի ընդհանուր կապիտալի սահմանաչափը: Հաշվետու ամսաթվից հետո առաջին եռամսյակում Բանկի կանոնադրական կապիտալը համալրվել է 128,002,328 ՀՀ հազար դրամով, որ էլ հիմք է հանդիսացել մեր կարծիքը չձևափոխելու համար:

Ղեկավարության և կառավարման օղակներում ներգրավված անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Բանկի ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՄ-երի համապատասխան ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման համար: Այդ նպատակով ղեկավարությունը սահմանում է անհրաժեշտ վերահսկողության համակարգ, որը թույլ է տալիս պատրաստել ֆինանսական հաշվետվություններ, որոնք զերծ են խարդախության կամ սխալի արդյունքում էական խեղաթյուրումից:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս, ղեկավարությունը պատասխանատու է Բանկի անընդհատ գործելու հնարավորությունը գնահատելու, անընդհատ գործելուն առնչվող հարցերը բացահայտելու, ինչպես նաև գործունեության անընդհատության ենթադրության վրա հիմնված հաշվառում վարելու համար, քանի դեռ ղեկավարությունը չի նախատեսում լուծարել Բանկը կամ դադարեցնել դրա գործունեությունը կամ չունի իրատեսական այլընտրանք, բացի նշվածները:

Կառավարման օղակներում ներգրավված անձինք պատասխանատու են Բանկի ֆինանսական հաշվետվությունների կազմման գործընթացը վերահսկելու համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ երաշխիքներ՝ խարդախությունների կամ սխալների հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրումներից զերծ լինելու վերաբերյալ, ինչպես նաև ներկայացնել աուդիտորի եզրակացություն, որը կներառի մեր կարծիքը: Ողջամիտ հավաստիացումը բարձր աստիճանի հավաստիացում է, սակայն այն երաշխիք չի հանդիսանում, որ ԱՄՄ համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումներ, երբ այդպիսիք կան: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի հետևանքով և համարվում են էական, եթե ակնկալվում է, որ դրանք առանձին-առանձին կամ միասին վերցրած կարող են ազդել այս ֆինանսական հաշվետվությունների օգտագործողների՝ դրանց հիման վրա կայացրած տնտեսական որոշումների վրա:

ԱՄՄ-ների համապատասխան իրականացվող աուդիտի շրջանակներում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն ամբողջ աուդիտի ընթացքում: Բացի այդ, մենք.

- Բացահայտում և գնահատում ենք ֆինանսական հաշվետվություններում խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք այդ ռիսկերին ուղղված աուդիտորական ընթացակարգեր և ձեռք ենք բերում բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար: Խարդախության արդյունք հանդիսացող էական խեղաթյուրման չբացահայտման ռիսկն ավելի մեծ է, քան սխալի հետևանքով առաջացած խեղաթյուրման չբացահայտման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, փաստաթղթերի կեղծում, միտումնավոր բացթողումներ, կեղծ հայտարարությունների տրամադրում կամ ներքին վերահսկողության համակարգի չարաշահում:

ADVISORY • ASSURANCE • ACCOUNTING • TAX

Baker Tilly Armenia CJSC is a member of the global network of Baker Tilly International Ltd., the members of which are separate and independent legal entities.

- Պատկերացում ենք կազմում աուդիտին առնչվող ներքին վերահսկողության վերաբերյալ, որպեսզի մշակենք համապատասխան աուդիտորական ընթացակարգեր, բայց ոչ Բանկի ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:

- Գնահատում ենք կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականության պատշաճությունը, ինչպես նաև ղեկավարության կատարած հաշվապահական գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:

- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից անընդհատության սկզբունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և ձեռք բերված աուդիտորական ապացույցների հիման վրա հետևություն ենք անում, թե արդյոք առկա է իրադարձությունների կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է էական կասկած առաջացնել Բանկի անընդհատ գործելու հնարավորության վերաբերյալ: Եթե մենք գալիս ենք եզրահանգման, որ գոյություն ունի էական անորոշություն, մենք պետք է մեր աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրենք ֆինանսական հաշվետվություններում համապատասխան բացահայտումներին, կամ եթե նման բացահայտումները պատշաճ կերպով ներկայացված չեն, մենք պետք է ձևափոխենք կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր աուդիտորական եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա իրադարձությունները կամ հանգամանքները կարող են հանգեցնել նրան, որ Բանկը կորցնի իր անընդհատ գործելու կարողությունը:

- Գնահատում ենք ընդհանուր առմամբ ֆինանսական հաշվետվությունների ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները և արդյոք ֆինանսական հաշվետվությունները ներկայացնում են դրանց հիմքում ընկած գործարքներն ու իրադարձությունները այն ձևով, որն ապահովում է ճշմարիտ ներկայացումը:

- Ձեռք ենք բերում բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ Բանկի ֆինանսական տեղեկատվության կամ գործունեության վերաբերյալ ֆինանսական հաշվետվությունների մասին կարծիք արտահայտելու նպատակով: Մենք պատասխանատվություն ենք կրում աուդիտորական աշխատանքների ուղղորդման, վերահսկման ու կատարման համար: Մենք լիովին պատասխանատու ենք մեր աուդիտորական կարծիքի համար:

Այլ հարցերի հետ մեկտեղ, մենք հաղորդակցվում ենք կառավարման օղակներում ներգրավված անձանց հետ աուդիտի պլանավորած շրջանակների և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված էական թերացումների վերաբերյալ, որոնք ներառում են աուդիտի ընթացքում մեր կողմից բացահայտված ներքին վերահսկողության կարևոր թերությունները:

Աուդիտոր
Լ.Ղևոնդյան

29.04.2022թ

**ՇԱՀՈՒՑԹԻ ԿԱՍ ՎՆԱՍԻ ԵՎ ԱՅԼ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՏԻՆԱՆՍԱԿԱՆ
ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար**


Հազար ՀՀ դրամ	Ծանոթ.	2021թ	2020թ
Տոկոսային և նմանատիպ եկամուտներ	6	59,502,623	54,099,796
Տոկոսային և նմանատիպ ծախսեր	6	(44,049,196)	(38,381,374)
Զուտ տոկոսային եկամուտներ		15,453,427	15,718,422
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ	7	5,720,106	7,250,865
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր	7	(2,205,155)	(2,022,728)
Զուտ կոմիսիոն և այլ եկամուտներ		3,514,951	5,228,137
Զուտ առևտրային եկամուտ	8	7,271,277	3,845,245
Արտարժույթի փոխարկումից զուտ օգուտ/(վնաս)		(4,303,796)	3,352,637
Այլ եկամուտներ	9	4,246,864	3,323,701
Արժեզրկման ծախս	10	(39,114,103)	(19,298,377)
Անձնակազմի գծով ծախսեր	11	(5,572,719)	(5,902,196)
Հիմնական միջոցների մաշվածություն	19	(1,384,750)	(1,049,512)
Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիա	20	(428,252)	(403,146)
Այլ ծախսեր	12	(3,544,691)	(4,436,206)
Գործառնական շահույթ		(23,861,792)	378,705
Շահութահարկի գծով փոխհատուցում/(ծախս)	13	3,853,689	(290,702)
Տարվա շահույթ		(20,008,103)	88,003
<i>Հոդվածներ, որոնք հետագայում վերադասակարգվելու են շահույթում կամ վնասում</i>			
Ներդրումային արժեթղթերի իրական արժեքի զուտ փոփոխություն՝ առանց հետաձգված հարկի		(3,081,388)	1,639,917
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք		(23,089,491)	1,727,920

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
31 դեկտեմբերի 2021թ-ի դրությամբ

Հազար ՀՀ դրամ	Ծանոթ.	31 դեկտեմբերի 2021թ.	31 դեկտեմբերի 2020թ.
<i>Ակտիվներ</i>			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	14	54,385,807	87,914,454
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	16	14,738,754	30,359,941
Հաճախորդներին տրված վարկեր	17	565,239,862	635,054,512
Ածանցյալ ֆինանսական ակտիվներ	15	7,730	70,317
Ներդրումային արժեթղթեր			
- Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	18	30,213,792	680,321
- Հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր	18	125,325,567	66,652,356
Հիմնական միջոցներ	19	12,064,146	12,704,383
Ոչ նյութական ակտիվներ	20	1,931,006	2,151,160
Հետաձգված հարկային ակտիվ	13	7,015,388	1,529,091
Բռնագանձված ակտիվներ	21	7,866,678	6,174,931
Այլ ակտիվներ	22	4,344,842	4,504,277
Ընդամենը՝ ակտիվներ		823,133,572	847,795,743
<i>Պարտավորություններ և սեփական կապիտալ</i>			
Պարտավորություններ			
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	15	91,668	171,409
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	23	228,711,786	191,449,030
Պարտավորություններ ՀՀ կառավարության նկատմամբ	24	767,544	627,692
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	25	556,659,294	603,633,107
Թողարկված պարտքային արժեթղթեր	26	10,872,660	2,916,675
Ընթացիկ հարկի գծով պարտավորություն		334,244	185,242
Այլ պարտավորություններ	27	3,076,204	3,102,925
Ընդամենը՝ պարտավորություններ		800,513,400	802,086,080
<i>Սեփական կապիտալ</i>			
Բաժնետիրական կապիտալ	28	42,090,187	42,090,187
Գլխավոր պահուստ		917,427	913,027
Այլ պահուստներ		(465,840)	2,615,548
Զբաղիված շահույթ		(19,921,602)	90,901
Ընդամենը՝ սեփական կապիտալ		22,620,172	45,709,663
Ընդամենը՝ պարտավորություններ և սեփական կապիտալ		823,133,572	847,795,743

Արտավազդ Սարգսյան
Վարչության նախագահ
29.04.2022թ.

Դավիթ Եղիզարյան
Ֆինանսական տնօրեն/Գլխավոր հաշվապահ



ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

Հազար ՀՀ դրամ	Բաժնե- տիրական կապիտալ	Գլխավոր պահուստ	Իրական արժեքի պահուստ	Հիմնական միջոցների վերագնա- հատման պահուստ	Զբաղիված շահույթ	Ընդամենը
Հաշվեկշիռը 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	42,090,187	913,027	2,147,024	468,524	90,901	45,709,663
Տարվա շահույթ	-	-	-	-	(20,008,103)	(20,008,103)
<i>Սյլ համապարփակ ֆինանսական արդյունք</i>						
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային գործիքների իրական արժեքի գուտ փոփոխություն(ներառյալ ակնկալվող պարտքային կորուստների պահուստում գուտ փոփոխությունները)	-	-	(3,081,388)	-	-	(3,081,388)
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	(934,364)	468,524	(19,917,202)	22,620,172
Հատկացում պահուստին	-	4,400	-	-	(4,400)	-
Ընդամենը սեփականատերերի հետ գործարքներ	-	4,400	-	-	(4,400)	-
Հաշվեկշիռը 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	42,090,187	917,427	(934,364)	468,524	(19,921,602)	22,620,172

Հազար ՀՀ դրամ	Բաժնե- տիրական կապիտալ	Գլխավոր պահուստ	Իրական արժեքի պահուստ	Հիմնական միջոցների վերագնա- հատման պահուստ	Չբաշխված շահույթ	Ընդամենը
Հաշվեկշիռը						
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	40,010,409	797,803	507,107	471,422	2,304,473	44,091,214
Տարվա շահույթ	-	-	-	-	88,003	88,003
<i>Այլ համապարփակ ֆինանսական արդյունք</i>						
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային գործիքների իրական արժեքի գուտ փոփոխություն(ներառյալ անկնկալվող պարտքային կորուստների պահուստում գուտ փոփոխությունները)	-	-	1,639,917	-	-	1,639,917
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	1,639,917	-	88,003	1,727,920
Վերագնահատված հիմնական միջոցների ապաճանաչում	-	-	-	(2,898)	2,898	-
Հատկացում պահուստին	-	115,224	-	-	(115,224)	-
Ներդրումներ կապիտալում	2,079,778	-	-	-	-	2,079,778
Շահաբաժիններ	-	-	-	-	(2,189,249)	(2,189,249)
Ընդամենը սեփականատերերի հետ գործարքներ	2,079,778	115,224	-	-	(2,304,473)	(109,471)
Հաշվեկշիռը						
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	42,090,187	913,027	2,147,024	468,524	90,901	45,709,663

ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

Հազար ՀՀ դրամ	2021թ	2020թ
<i>Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր</i>		
Շահույթ մինչև հարկումը	(23,861,792)	378,705
<i>Ճշգրտումներ</i>		
Մաշվածության և ամորտիզացիոն մասհանումներ	1,813,002	1,452,658
Արժեզրկման ծախս	39,114,103	19,195,587
Առևտրային գործիքների իրական արժեքի փոփոխությունից զուտ (օգուտ)/վնաս	(2,299,107)	3,285,318
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվների վերագնահատումից զուտ (օգուտ)/վնաս	(429,311)	(1,674,836)
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվների ձեռքբերումից և/կամ վաճառքից (օգուտ)/վնաս	(74,215)	(81,922)
Ստացվելիք տոկոսներ	(54,354,821)	(39,361,728)
Վճարվելիք տոկոսներ	3,577,571	3,213,845
Արտարժույթի վերագնահատումից (օգուտ)/վնաս	4,303,796	(3,352,637)
<i>Դրամական միջոցների հոսքեր նախքան գործառնական ակտիվներում և պարտավորություններում փոփոխությունները (Ավելացում)/նվազում գործառնական ակտիվներում</i>	(32,210,774)	(16,945,010)
Ածանցյալ ֆինանսական ակտիվներ	62,587	(4,115)
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	13,944,141	1,774,291
Հաճախորդներին տրված վարկեր	52,288,997	(110,069,886)
Բոնազանձված ակտիվներ	(1,691,747)	(1,916,425)
Վարձակալության մեկնարկի ամսաթվի դրությամբ, Բանկը պետք է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչի օգտագործման իրավունքի ձևով ակտիվը և վարձակալության գծով պարտավորությունը: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվը չափվում է սկզբնական արժեքով, որը ձևավորվում է վարձակալության գծով պարտավորության սկզբնական չափումից, Բանկի կատարած ցանկացած սկզբնական ուղղակի ծախսերից, վարձակալության ժամկետի ավարտին ակտիվի ապատեղակայման և քանդման ցանկացած ծախսի գնահատումից և նախքան վարձակալության մեկնարկի ամսաթիվը կատարված ցանկացած վարձակալական վճարներից (հանած ստացված ցանկացած խրախուսումները): Բանկը հաշվարկում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվի մաշվածությունը գծային հիմունքով վարձակալության մեկնարկի ամսաթվից մինչև օգտագործման իրավունքի ձևով ակտիվի օգտակար ծառայության ավարտի ամսաթվից կամ վարձակալության ժամկետի ավարտի ամսաթվից ամենավաղը: Բանկը նաև գնահատում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվը արժեզրկման համար, երբ այդպիսի ցուցանիշներ կան: Վարձակալված գույքի բարելավումները կապիտալիզացվում և մաշվում են գծային հիմունքով՝ որպես հիմք ընդունելով վարձակալության ժամկետից և վարձակալված գույքի օգտակար ծառայության ժամկետից նվազագույնը:

Մեկնարկի ամսաթվին Բանկը չափում է վարձակալության գծով պարտավորությունը այդ ամսաթվին դեռևս չվճարված վարձավճարների ներկա արժեքով՝ դրանք գեղջելով՝ կիրառելով վարձակալությամբ ենթադրվող տոկոսադրույքը, եթե այդ դրույքը կարելի է հեշտությամբ որոշել, կամ Բանկի լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը: Վարձակալության գծով պարտավորության չափման մեջ ներառվող վարձավճարները պարունակում են հաստատուն վճարումներ (ներառյալ՝ ըստ էության հաստատուն վճարումներ), վարձակալության փոփոխուն վճարումներ, որոնք կախված են ինդեքսից կամ դրույքից, գումարներ, որոնք, ինչպես սպասվում է կվճարվեն մնացորդային արժեքի երաշխիքի ներքո և վճարումներից, որոնք առաջանում են օպցիոններից, որոնց իրագործման վերաբերյալ կա խելամիտ համոզմունք:

Սկզբնական չափումից հետո պարտավորությունը կնվազեցվի կատարված վճարումների և կմեծացվի տոկոսների չափով: Այն վերաչափվում է՝ արտացոլելու ցանկացած վերագնահատում կամ փոփոխություն, կամ եթե առկա են փոփոխություններ ըստ էության հաստատուն վճարումներում: Երբ վարձակալության գծով պարտավորությունը վերաչափվում է, համապատասխան ճշգրտումը արտացոլվում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվում կամ շահույթում և վնասում, եթե օգտագործման իրավունքի ձևով ակտիվը նվազեցվել է գրոյի:

Բանկը կարճաժամկետ վարձակալությունների և փոքրարժեք ակտիվների վարձակալությունների հաշվառման համար ընտրել է գործնական մոտեցումներ: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվ և վարձակալության գծով պարտավորություն ճանաչելու փոխարեն, դրանց հետ կապված վճարումները վարձակալության ժամկետի ընթացքում ճանաչվում են շահույթում կամ վնասում որպես ծախս՝ գծային հիմունքով: Բանկը սահմանում է իր լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը՝ վերլուծելով փոխառությունները արտաքին տարբեր աղբյուրների հիման վրա և կատարում է որոշակի ճշգրտումներ՝ արտացոլելու վարձակալության պայմանները և վարձակալված ակտիվի տեսակը: Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում օգտագործման իրավունքի ձևով ակտիվները ընդգրկվել են հիմնական միջոցների տողում, իսկ վարձակալության գծով պարտավորությունները՝ այլ պարտավորություններում:

4.12 Թանկարժեք մետաղներ

Ոսկին և այլ թանկարժեք մետաղները հաշվառվում են ՀՀ ԿԲ կողմից սահմանվող գներով, ինչը մոտավորապես դրանց իրական արժեքն է և հիմնված է Լոնդոնի Թանկարժեք Մետաղների բորսայի գնանշումների վրա:

Գների տատանումներն արտացոլվում են թանկարժեք մետաղներով գործառնություններից զուտ օգուտ/վնաս հոդվածում՝ այլ եկամուտներում կամ ծախսերում:

4.13 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները ներկայացված են սկզբնական արժեքի և կուտակված մաշվածության տարբերությամբ: Բանկի շենքերը ներկայացված են իրական արժեքի և կուտակված մաշվածության տարբերությամբ: Երբ ակտիվի հաշվեկշռային արժեքը ավելի մեծ է նրա գնահատված փոխհատուցվող գումարից ոչ ժամանակավոր հանգամանքների պատճառով, այն անմիջապես նվազեցվում է մինչև այդ փոխհատուցվող գումարը: Հողը հաշվառվում է սկզբնական արժեքով և ունի անսահմանափակ օգտակար ծառայության ժամկետ և, հետևաբար, չի ամորտիզացվում:

Մաշվածությունը հաշվարկվում է գծային մեթոդով ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում՝ կիրառելով հետևյալ տարեկան դրույքաչափերը.

	Օգտակար ծառայության ժամկետ (տարիներ)	Տոկոսադրույք (%)
Շենքեր	30	3.3
Համակարգիչներ և կապի միջոցներ	3	33.3
Բանկումատներ	10	10
Տրանսպորտային միջոցներ	8	12.5
Մարքավորումներ	8	12.5
Այլ հիմնական միջոցներ	8	12.5

Վարձակալված հիմնական միջոցների վրա ուղղված կապիտալ բնույթի ծախսումները կապիտալացվում և ամորտիզացվում են գծային հիմունքով վարձակալման ժամկետի և հիմնական միջոցների և դրանց օգտակար ծառայության ժամկետներից նվազագույնով: Անավարտ շինարարությանը պատկանող ակտիվները հաշվառվում են փաստացի ծախսերի և արժեզրկումից կորուստների տարբերությամբ: Շինարարական աշխատանքների ավարտից հետո ակտիվները փոխանցվում են հիմնական միջոցներին և հաշվառվում են իրենց մնացորդային արժեքով: Անավարտ շինարարությանը պատկանող ակտիվները չեն ամորտիզացվում քանի դեռ պատրաստ չեն օգտագործման համար:

Հիմնական միջոցների վերանորոգման և պահպանման հետ կապված ծախսումները շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչվում են որպես ծախս՝ դրանց կատարման պահին: Կապիտալ բնույթի նորոգման ծախսումները ավելացվում են ակտիվի հաշվեկշռային արժեքին, երբ հավանական է, որ դրանց շնորհիվ ապագա տնտեսական օգուտները՝ ավելի շատ, քան ակնկալվում էր առկա ակտիվի նորմատիվային ցուցանիշների սկզբնական գնահատումից, կհոսեն դեպի Բանկ: Այս ծախսումների մաշվածությունը հաշվարկվում է համապատասխան ակտիվի օգտակար ծառայության մնացորդային ժամկետի ընթացքում:

Հիմնական միջոցի իրացումից առաջացած օգուտ կամ վնասը որոշվում է որպես ակտիվի իրացումից զուտ մուտքերի և հաշվեկշռային արժեքի տարբերություն և հաշվառվում է գործառնական շահույթում: Շենքերը վերագնահատվում են կանոնավոր կերպով: Վերագնահատման հաճախականությունը կախված է ակտիվների իրական արժեքի փոփոխություններից: Այն դեպքում, երբ նշանակալի շեղում կա վերագնահատված ակտիվների իրական արժեքի և նրանց մնացորդային արժեքների միջև, ապա

անցկացվում է հետագա վերագնահատում: Վերագնահատումը կատարվում է հիմնական միջոցների ողջ դասի համար:

Վերագնահատման արդյունքում ակտիվի արժեքի աճը արտացոլվում է կապիտալում՝ հիմնական միջոցների վերագնահատման պահուստում, բացի այն դեպքերից, երբ այն փոխհատուցում է ֆինանսական արդյունքներում տվյալ ակտիվի գծով նախկինում ճանաչված վերագնահատումից վնասը: Այս դեպքում վերագնահատումից աճը նույնպես ճանաչվում է ֆինանսական արդյունքներում: Վերագնահատման արդյունքում ակտիվի արժեքի նվազումը ճանաչվում է ֆինանսական արդյունքներում, բացի այն դեպքերից, երբ այն փոխհատուցում է նախկինում տվյալ ակտիվի գծով կապիտալում ճանաչված վերագնահատումից աճը:

Վերագնահատված արժեքով հաշվառվող հիմնական միջոցների իրացման կամ դուրս գրման դեպքում այդ հիմնական միջոցներին վերաբերվող վերագնահատման պահուստի մնացորդն ամբողջությամբ փոխանցվում է չբաշխված շահույթին:

4.14 Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները բաղկացած են համակարգչային ծրագրերից, արտոնագրերից և այլն: Առանձին ձեռք բերված ոչ նյութական ակտիվները սկզբնապես ճանաչվում են ինքնարժեքով: Նախնական ճանաչումից հետո ոչ նյութական ակտիվները հաշվառվում են ինքնարժեքով՝ նվազեցնելով կուտակված ամորտիզացիան կամ արժեզրկումից կորուստները: Ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայությունների ժամկետները կարող են լինել որոշակի կամ անորոշ:

Որոշակի օգտակար ծառայությունների ժամկետներ ունեցող ոչ նյութական ակտիվներն ամորտիզացվում են գծային հիմունքով օգտակար ծառայության ընթացքում և գնահատվում են արժեզրկման առումով, երբ առկա են արժեզրկման հատկանիշներ: Ամորտիզացիայի հաշվառման մեթոդները և ժամկետները վերանայվում են յուրաքանչյուր ֆինանսական տարվա վերջում:

Համակարգչային ծրագրերի ընթացիկ սպասարկման ծախսերը հաշվառվում են որպես ծախս դրանց կատարման ժամանակ:

4.15 Բռնագանձված ակտիվներ

Բանկի քաղաքականությունն է սահմանել՝ արդյոք բռնագանձված ակտիվը կարող է լավագույնս օգտագործվել իր ներքին գործառնությունների համար, թե պետք է վաճառվի: Ներքին գործառնությունների համար օգտագործման ենթակա ակտիվները փոխանցվում են իրենց համապատասխան ակտիվների դասակարգման և պահովված ակտիվի բռնագանձված կամ հաշվեկշռային արժեքի նվազագույնով: Ակտիվները, որոնց համար վաճառքն ավելի լավ տարբերակ է ճանաչվում, ըստ Բանկի քաղաքականության՝ փոխանցվում են վաճառքի համար մատչելի ակտիվների դաս՝ իրենց իրական արժեքով (ֆինանսական ակտիվների դեպքում), իսկ ոչ ֆինանսական ակտիվների դեպքում՝ իրական արժեքով՝ հանած բռնագանձման ամսաթվի դրությամբ վաճառքից ծախսերը:

Որոշ դեպքերում, ակտիվները բռնագանձվում են վարկային պարտավորությունների չկատարման արդյունքում: Բռնագանձված ակտիվները չափվում են սկզբնական արժեքից և իրացման գուտ արժեքից նվազագույնով:

Շնորհներ

Ակտիվներին վերաբերող շնորհները ներառվում են այլ պարտավորություններում և կրեդիտագրվում են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությանը գծային մեթոդով՝ համապատասխան ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում:

4.16 Ներգրված միջոցներ

Ներգրված միջոցները, որոնք ներառում են ՀՀ կառավարության և ՀՀ կենտրոնական բանկի, այլ միջազգային և ՀՀ ֆինանսական կազմակերպությունների և հաճախորդների հաշիվները և թողարկված արժեթղթերը, սկզբնապես ճանաչվում են ստացված միջոցների իրական արժեքով՝ հանած գործառնությունների գծով ուղղակի ծախսերը: Սկզբնական ճանաչումից հետո ներգրված միջոցները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Եկամուտները և ծախսերը գրանցվում են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, ինչպես պարտավորությունների ապահանջման ժամանակ, այնպես էլ ամորտիզացիայի ընթացքում:

Երբ Բանկը գնում է իրեն պատկանող արժեթղթերը, դրանք դուրս են գրվում հաշվեկշռից, և հաշվեկշռային արժեքի ու վճարված գումարի տարբերությունն արտացոլվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

4.17 Ֆինանսական երաշխիքներ և վարկային պարտավորվածություններ

Ֆինանսական երաշխավորության պայմանագրերը այն պայմանագրերն են, որոնք պահանջում են, որ երաշխիքը տրամադրողը փոխհատուցի երաշխիքը ստացողին կոնկրետ պարտապանի կողմից պարտքային գործիքի ժամկետներին համաձայն վճարումները ժամանակին չկատարելու պատճառով վերջինիս կողմից կրած վնասների դիմաց: Վարկային պարտավորվածությունները նախապես որոշված պայմաններով և ժամկետներով վարկեր տրամադրելու պարտավորվածություններն են:

Ֆինանսական երաշխիքները կամ շուկայականից ցածր տոկոսադրույքով վարկեր տրամադրելու պարտավորվածությունները սկզբնապես չափվում են իրական արժեքով, իսկ սկզբնական իրական արժեքը ամորտիզացվում է երաշխիքի կամ պարտավորվածության գործողության ամբողջ ժամկետի ընթացքում: Հետագայում, դրանք չափվում են ամորտիզացված գումարից և կորուստների գծով պահուստների գումարից առավելագույնով:

Ֆինանսական երաշխիքների գծով առաջացած պարտավորությունները ներառվում են պահուստներում՝ «Այլ պարտավորություններում»: Վարկային պարտավորությունների գծով ակնկալվող կորուստները ներառված են հաճախորդներին տրված վարկերի գծով ձևավորված պահուստներում (տես ծանոթագրություն 17):

4.18 Պահուստներ

Պահուստը ճանաչվում է, երբ Բանկը ունի ներկա իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և հավանական է, որ այդ պարտականությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսք, և պարտավորության գումարը հնարավոր է արժանահավատորեն գնահատել: Պահուստները ներառում են նաև ֆինանսական երաշխիքների գծով պարտավորությունները, ինչպես ներկայացվում է 4.17 ծանոթագրությունում:

4.19 Մեփական կապիտալ

Բաժնետիրական կապիտալ

Մովորական բաժնետոմսերը դասակարգվում են որպես կապիտալ: Նոր բաժնետոմսերի թողարկմանը վերաբերող ուղղակի ծախսերը նվազեցվում են կապիտալի աճից: Երբ թողարկման արդյունքում ստացված գումարների իրական արժեքը գերազանցում է բաժնետոմսերի անվանական արժեքը, տարբերությունը հաշվառվում է որպես հավելավճար:

Չբաշխված շահույթ

Չբաշխված շահույթը ներառում է ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների կուտակված շահույթը:

Շահաբաժիններ

Հաշվապահական հաշվեկշռի ամսաթվով շահաբաժինները դուրս են գրվում կապիտալից և ճանաչվում են որպես պարտավորություն, միայն երբ դրանք հաստատվում են հաշվապահական հաշվեկշռի ամսաթվով կամ մինչև այդ: Հաշվապահական հաշվեկշռի ամսաթվից հետո մինչև ֆինանսական հաշվետվությունների հրապարակման ամսաթիվը հայտարարված կամ հաստատված շահաբաժինները բացահայտվում են:

Հիմնական միջոցների վերագնահատման պահուստ

Հիմնական միջոցների վերագնահատման աճը օգտագործվում է գրանցելու համար հիմնական միջոցների իրական արժեքի աճը և նվազումը այն չափի, որ նման նվազումը վերաբերում է նույն ակտիվի աճին, որը նախկինում ճանաչվել էր սեփական կապիտալում:

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերի իրական արժեքի պահուստ

Այս պահուստը արտացոլում է Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերի իրական արժեքի փոփոխությունները:

5. Կարևորագույն հաշվապահական գնահատումներ և դատողություններ

ՖՀՄՍ համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որ Բանկի ղեկավարությունը կատարի կարևորագույն հաշվապահական գնահատումներ, դատողություններ և ենթադրություններ, որոնք ազդեցություն են թողնում ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների ներկայացվող գումարների, ինչպես նաև հաշվետու ժամանակաշրջանի եկամուտների և ծախսերի վրա: Գնահատումները և դրանց հետ կապված ենթադրությունները, հիմնվելով պատմական փորձի և այլ գործոնների վրա, որոնք հիմնավորված են տվյալ պայմաններում, հիմք են հանդիսանում դատողություններ անելու այն ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների վերաբերյալ, որոնց արժեքը հնարավոր չէ որոշել այլ վստահելի աղբյուրներից: Ամեն դեպքում, չնայած գնահատումները հիմնվում են ղեկավարության կողմից ընթացիկ իրադարձությունների լավագույն պատկերացումների վրա, փաստացի արդյունքները վերջին հաշվով կարող են տարբերվել կատարված գնահատումներից:

Ներկայացվող ֆինանսական հաշվետվությունների առումով նշանակալից դատողությունները և գնահատումները ներկայացվում են ստորև:

Բիզնես մոդել և մայր գումարի և չմարված մայր գումարի տոկոսագումարների վճարումներ

Բանկը գնահատում է այն բիզնես մոդելը, որի ընթացքում ակտիվները պահվում են և գնահատում, թե արդյոք ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները բացառապես մայր գումարի և չմարված մայր գումարի տոկոսագումարների վճարումներն են (տես 4.4.2 ծանոթագրությունը):

Իրական արժեքի չափումը

Ֆինանսական գործիքների (երբ ակտիվ շուկայի գնանշումներ չկան) և ոչ ֆինանսական ակտիվների իրական արժեքը սահմանելու համար ղեկավարությունն օգտագործում է գնահատման տեխնիկան: Սա ներառում է զարգացող գնահատումները և ենթադրությունները համապատասխան նրան, թե շուկայի մասնակիցները ինչպես կգնահատեն գործիքները:

Ղեկավարությունն իր ենթադրություններում որքան հնարավոր է հիմնվում է դիտարկվող տվյալների վրա, սակայն դրանք միշտ չէ, որ հասանելի են: Այդ դեպքում, ղեկավարությունն օգտագործում է իր ունեցած ամենալավ տեղեկատվությունը: Գնահատված իրական արժեքը կարող է տարբերվել փաստացի արժեքից, որը հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ կարող է հասանելի լինել անհատական գործարքների դեպքում:

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետ

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետի գնահատումը դատողության արդյունք է՝ հիմնված նման ակտիվի հետ կապված փորձի վրա: Ապագա տնտեսական օգուտները մարմնավորվում են ակտիվներում և սպառվում հիմնականում օգտագործմանը զուգընթաց: Այնուամենայնիվ, այնպիսի գործոնները, ինչպիսիք են գործառնական, տեխնիկական կամ առևտրային մաշվածությունները, հաճախ հանգեցնում են ակտիվի տնտեսական օգուտների նվազեցմանը:

Ղեկավարությունը մնացորդային օգտակար ծառայության ժամկետը գնահատում է ակտիվի ընթացիկ տեխնիկական վիճակին համապատասխան և ըստ այն գնահատված ժամանակաշրջանի, որի ընթացքում Բանկը կանխատեսում է ստանալ օգուտներ: Մնացորդային օգտակար ծառայության ժամկետի գնահատման համար հաշվի են առնվում հետևյալ հիմնական գործոններն. ակտիվների կանխատեսվող օգտագործումը, գործառնական գործոններից և պահպանման ծրագրից կախված՝ մաշվածությունը և շուկայական պայմանների փոփոխություններից առաջացող տեխնիկական և առևտրային մաշվածությունը:

Կապակցված կողմերի հետ գործառնություններ

Բանկն իր գործունեության ընթացքում իրականացնում է գործառնություններ կապակցված կողմերի հետ: Նշված գործառնությունները հիմնականում իրականացվում են շուկայական պայմաններով: Գործող շուկայի բացակայության դեպքում Բանկը կատարում է դատողություններ գործառնությունների շուկայական կամ ոչ շուկայական բնույթի վերաբերյալ: Դատողությունները հիմնվում են այլ հաճախորդների հետ նմանատիպ գործառնությունների, ինչպես նաև արդյունավետ դրույքների վերլուծությունների վրա (տես 30 ծանոթագրություն):

Ֆինանսական ակտիվների արժեզրկում

Բանկը գնահատում է, թե արդյոք ֆինանսական ակտիվի գծով պարտքային ռիսկը եականորեն է աճել սկզբնական ճանաչումից հետո և ակնկալվող պարտքային կորուստների չափման գործընթացում կանխատեսվող տեղեկատվության ներառումը (տես 34.1.2 ծանոթագրություն), ինչպես նաև վերականգնվող դրամական միջոցների հոսքերի գնահատման համար օգտագործվող հիմնական ենթադրությունները (տես 4.4.6 ծանոթագրություն):

Հարկային օրենսդրություն

ՀՀ հարկային օրենսդրությունը ենթակա է տարակարծիք մեկնաբանությունների (տես՝ 29 ծանոթագրություն):

6. Տոկոսային և նմանատիպ եկամուտներ և ծախսեր

Հազար ՀՀ դրամ	2021	2020
Վարկեր հաճախորդներին	45,165,926	48,921,450
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	10,955,608	2,562,498
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	618,956	827,122
Հակադարձ ռեպո գործառնություններ	2,762,133	1,788,726
Ընդամենը տոկոսային և նմանատիպ եկամուտներ	59,502,623	54,099,796
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	5,840,486	4,968,785
Ռեպո գործառնություններ	8,552,681	2,408,228
Պարտավորություններ ՀՀ կառավարության նկատմամբ	116,461	126,828
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	29,078,306	29,993,022
Թողարկված պարտքային արժեթղթեր	461,262	884,511
Ընդամենը տոկոսային և նմանատիպ ծախսեր	44,049,196	38,381,374

7. Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ և ծախսեր

Հազար ՀՀ դրամ	2021	2020
Դրամարկղային գործառնություններ	410,177	918,592
Հաշվարկային գործառնություններ/փոխանցումներ	949,623	2,583,870
Վարկերի սպասարկում	603,954	1,032,510
Վճարային քարտերով գործառնություններ	3,037,429	1,712,253
Երաշխիքներ	634,598	940,990
Արժեթղթերով գործառնություններ	5,125	24,573
Այլ վճարներ և կոմիսիոն եկամուտներ	79,200	38,077
Ընդամենը կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ	5,720,106	7,250,865
Հաշվարկային գործառնություններ/փոխանցումներ	345,614	603,615
Դրամարկղային գործառնություններ	172,796	125,762
Վճարային քարտերով գործառնություններ	1,662,631	1,261,964
Ակրեդիտիվով գործառնություններ	-	22,394
Այլ ծախսեր	24,114	8,993
Ընդամենը կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր	2,205,155	2,022,728

8. Զուտ առևտրային եկամուտ

Հազար ՀՀ դրամ	2021	2020
Արտաբժույթային գործարքներից զուտ եկամուտ	2,710,614	4,707,057
Արտաբժույթային սվոպից զուտ եկամուտ/(վնաս)	4,057,137	(2,620,480)
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվների զուտ եկամուտ	503,526	1,756,758
Աժանցյալ գործիքների վերագնահատումից եկամուտ	-	1,910
Ընդամենը զուտ առևտրային եկամուտ	7,271,277	3,845,245

9. Այլ եկամուտներ

Հազար ՀՀ դրամ	2021	2020
Ստացված տույժեր և տուգանքներ	3,065,591	2,556,466
Հիմնական միջոցների վաճառքից եկամուտ	87	-
Բռնագանձված գույքի վաճառքից եկամուտ	175,854	114,692
Հաշիվների փակումից եկամուտ	8,847	11,520
Տեղեկանքների տրամադրումից եկամուտ	10,161	8,253
Վարկային և երաշխիքային հայտերի ընդունումից եկամուտ	34,729	38,941
Դրամային փոխանցումներից եկամուտ	67,717	160,793
Ինտերնետ բանկային ծառայություններից եկամուտ	114,272	151,446
Ավտոմեքենաների տեխնիկական կտրոնների տրամադրումից	21,790	41,383
Թանկարժեք մետաղներով գործառնություններից եկամուտ	2,961	57,704
Այլ եկամուտ	744,855	182,503
Ընդամենը այլ եկամուտներ	4,246,864	3,323,701

10. Արժեզրկման ծախս

Հազար ՀՀ դրամ	12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներ	Գործողության ամբողջ ժամկետի ընթացքում չարժեզրկված ակնկալվող պարտքային կորուստներ	Գործողության ամբողջ ժամկետի ընթացքում արժեզրկված ակնկալվող պարտքային կորուստներ	Ընդամենը 2021թ.
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	31,386	-	-	31,386
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	(147,470)	-	-	(147,470)
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	67,560	-	-	67,560
Վարկեր հաճախորդներին	2,025,602	1,512,102	35,387,566	38,925,270
Այլ ակտիվներ	348,433	-	-	348,433
Ֆինանսական երաշխիքներ և վարկային պարտավորվածություններ	(111,076)	-	-	(111,076)
Ընդամենը պարտքային կորուստների արժեզրկման ծախս/(հակադարձում)	<u>2,214,435</u>	<u>1,512,102</u>	<u>35,387,566</u>	<u>39,114,103</u>
Հազար ՀՀ դրամ	12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներ	Գործողության ամբողջ ժամկետի ընթացքում չարժեզրկված ակնկալվող պարտքային կորուստներ	Գործողության ամբողջ ժամկետի ընթացքում արժեզրկված ակնկալվող պարտքային կորուստներ	Ընդամենը 2020թ.
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	44	-	-	44
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	135,591	-	-	135,591
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	84,196	-	-	84,196
Վարկեր հաճախորդներին	33,201	645,160	18,349,156	19,027,517
Այլ ակտիվներ	68,877	-	-	68,877
Ֆինանսական երաշխիքներ և վարկային պարտավորվածություններ	(17,848)	-	-	(17,848)
Ընդամենը պարտքային կորուստների արժեզրկման ծախս/(հակադարձում)	<u>304,061</u>	<u>645,160</u>	<u>18,349,156</u>	<u>19,298,377</u>

11. Անձնակազմի գծով ծախսեր

Հազար ՀՀ դրամ	2021	2020
Աշխատավարձ և այլ փոխհատուցումներ աշխատակիցներին	5,570,343	5,897,919
Այլ ծախսեր	2,376	4,277
Ընդամենը անձնակազմի գծով ծախսեր	5,572,719	5,902,196

12. Այլ ծախսեր

Հազար ՀՀ դրամ	2021	2020
Խորհրդատվական և այլ ծառայությունների գծով ծախսեր	59,718	64,875
Վարձակալության գծով ծախսեր	77,067	61,912
Հարկեր (բացառությամբ շահութահարկի) և տուրքեր	303,657	257,715
Գովազդի ծախսեր	201,257	234,245
Ապահովագրության գծով ծախսեր	61,748	41,796
Ներկայացուցչական ծախսեր	33,943	195,911
Պլաստիկ քարտերի ձեռք բերման և թողարկման ծախսեր	37,351	58,871
Իրավաբանական ծառայությունների ստացման ծախսեր	107,354	36,127
Ինկասացիոն ծախսեր	81,564	79,308
Ադմինիստրատիվ ծախսեր	291,579	267,847
Ֆինանսական օգնություն	47,815	332,122
Բռնագանձված ակտիվների վաճառքից վնաս	17,238	226,521
Նյութական ակտիվների վերանորոգման և սպասարկման ծախսեր	376,119	342,281
Համակարգչային ծրագրերի օգտագործման և սպասարկման ծախսեր	221,233	263,065
Կապի և հաղորդակցման միջոցների գծով ծախսեր	173,840	137,374
Անվտանգության գծով ծախսեր	220,428	218,701
Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի գծով ծախսեր	888,596	1,243,911
Գրասենյակային ծախսեր	71,420	84,641
Գործուղման ծախսեր	99,106	61,228
Վարկերի տրամադրման և վերադարձման գծով ծախսեր	18,313	17,895
Ֆինանսական համակարգի հաշտարարին վճարներ	89,891	78,143
Վճարված տուգանքներ	40,114	2,548
Այլ կորուստներ	12,508	92,610
Այլ ծախսեր	12,832	36,559
Ընդամենը այլ ծախսեր	3,544,691	4,436,206

13. Շահութահարկի գծով փոխհատուցում/(ծախս)

Հազար ՀՀ դրամ	2021	2020
Ընթացիկ հարկի գծով ծախս	(941,377)	(727,975)
Հետաձգված հարկ	4,795,066	437,273
Ընդամենը շահութահարկի գծով փոխհատուցում/(ծախս)	3,853,689	(290,702)

Հայաստանի Հանրապետությունում շահութահարկի դրույքաչափը կազմում է 18% (2020թ.՝ 18%): ՀՀ հարկային օրենսդրության և ՖՀՄՄ-ի միջև եղած տարբերությունը մի շարք ակտիվների և պարտավորությունների գծով առաջացնում է ժամանակավոր տարբերություններ ֆինանսական հաշվետվությունների կազմման նպատակներով դրանց հաշվեկշռային արժեքների և հարկման բազայի միջև:

Ստորև ներկայացվում է շահութահարկի գծով ծախսի և հաշվապահական շահույթի միջև փոխկապակցվածությունը.

Հազար ՀՀ դրամ	2021	2020
Շահույթ մինչև հարկումը	(23,861,792)	378,705
Շահութահարկ՝ 18% դրույքաչափով	(4,295,123)	68,167
Չհարկվող եկամուտներ	249,140	113,180
Չնվազեցվող ծախսեր	554,258	128,280
Արտարժույթի (դրական)/բացասական փոխարժեքային տարբերություն	(361,964)	(18,925)
Ընդամենը շահութահարկի գծով (փոխհատուցում)/ծախս	(3,853,689)	290,702

Ժամանակավոր տարբերությունների գծով հետաձգված հարկի հաշվարկ.

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2020		Այլ	31 դեկտեմբերի 2021		
	Զուտ մնացորդ	Շահույթում կամ վնասում ճանաչված		Համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված	Զուտ մնացորդ	Հետաձգված հարկային ակտիվ
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	1,971	5,632	-	7,603	7,603	-
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	(2,176)	(2,960)	-	(5,136)	-	(5,136)
Հաճախորդներին տրված վարկեր	2,325,467	3,954,892	-	6,280,359	6,280,359	-
Ներդրումներ արժեթղթերում	(435,511)	462,804	691,231	718,525	718,525	-
Հիմնական միջոցներ	(251,265)	14,526	-	(236,739)	-	(236,739)
Այլ ակտիվներ	(159,418)	326,233	-	166,815	166,815	-
Այլ պարտավորություններ	50,023	33,939	-	83,962	83,962	-
Հետաձգված հարկային ակտիվ/(պարտավորություն)	1,529,091	4,795,066	691,231	7,015,388	7,257,264	(241,875)

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2019		Այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված	31 դեկտեմբերի 2020		
	Զուտ մնացորդ	Շահույթով կամ վնասում ճանաչված		Զուտ մնացորդ	Հետաձգված հարկային ակտիվ	Հետաձգված հարկային պարտավորություն
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	1,963	8	-	1,971	1,971	-
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	11,424	(13,600)	-	(2,176)	-	(2,176)
Հաճախորդներին տրված վարկեր	1,711,554	613,913	-	2,325,467	2,325,467	-
Ներդրումներ արժեթղթերում	(175,624)	15,154	(275,041)	(435,511)	-	(435,511)
Հիմնական միջոցներ	(241,814)	(9,451)	-	(251,265)	-	(250,754)
Այլ ակտիվներ	(14,003)	(145,415)	-	(159,418)	-	(159,418)
Այլ պարտավորություններ	73,359	(23,336)	-	50,023	50,023	-
Հետաձգված հարկային ակտիվ/(պարտավորություն)	1,366,859	437,273	(274,041)	1,529,091	2,377,461	(847,859)

14. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2021թ.	31 դեկտեմբերի 2020թ.
Կանխիկ դրամական միջոցներ	8,137,930	7,498,900
Թղթակցային հաշիվներ ՀՀ ԿԲ-ում	42,320,297	73,133,003
Թղթակցային հաշիվներ այլ բանկերում	3,969,918	7,293,503
	54,428,145	87,925,406
Արժեզրկումից պահուստներ	(42,338)	(10,952)
Ընդամենը դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	54,385,807	87,914,454

Թղթակցային հաշիվները ՀՀ ԿԲ-ում ներառում են նաև ՀՀ բանկային օրենսդրության համաձայն ՀՀ ԿԲ-ում տեղաբաշխված պարտադիր պահուստները, որոնք դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշվարկվել են Բանկի կողմից ներգրաված դրամային որոշ միջոցների 2%-ի (2020թ.՝ 2%) և արտարժույթով որոշ միջոցների 18%-ի չափով ամբողջությամբ ՀՀ դրամով: Այդ միջոցները 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմում են 63,371,166 հազար դրամ (2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 68,923,530): Այդ միջոցների ելքագրումն արգելված չէ, սակայն պահուստավորման նվազագույն չափը չպահպանելը հանգեցնում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից տույժերի կիրառման: Պարտադիր պահուստավորման միջոցների դիմաց Բանկը տուկոսներ չի ստանում:

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 2,504,029 հազար դրամ գումարով (63%) թղթակցային հաշիվները կենտրոնացված են երկու բանկերում, ինչն իրենից ներկայացնում է էական կենտրոնացում (2020թ.՝ 5,184,761 հազար դրամ (71%)):

Դրամական միջոցների և դրանց համարժեքների գծով ակնկալվող պարտքային կորուստների փոփոխությունների վերլուծությունը ներկայացված է ստորև.

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2021թ.	31 դեկտեմբերի 2020թ.
	12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներ	12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներ
Դրամական միջոցների և դրանց համարժեքներ		
Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ հունվարի 1-ի դրությամբ	10,952	10,908
Կորուստների գծով պահուստների գուտ վերաչափում	31,386	44
Մնացորդը տարվա վերջի դրությամբ	42,338	10,952

2021թ. ընթացքում իրականացվել են հետևյալ անկանխիկ գործառնությունները.

- վարկի մարում գրավների բռնագանձման միջոցով 3,595,737 հազար դրամ գումարով (2020թ.՝ 3,831,235 հազար դրամ):

15. Ածանցյալ ֆինանսական գործիքներ

Արժույթի և տոկոսադրույքի սվոպերը դրամական միջոցների մեկը մյուսով փոխարինման ապահովումներ են: Սվոպերը հանգեցնում են արտարժույթների տնտեսական փոխանակման: Բանկի պարտքային ռիսկը ներկայացնում է սվոպային պայմանագրերի փոխարինման պոտենցիալ ծախս, այն դեպքում, եթե պայմանագրային կողմերը չմարեն իրենց պարտավորությունները:

Առկա ածանցյալ ֆինանսական գործիքների համախառն պայմանագրային կամ պայմանական գումարները, համաձայն որոնց գործիքները նպաստավոր են կամ ոչ, կարող են ժամանակ առ ժամանակ նշանակալիորեն տատանվել՝ հանգեցնելով ածանցյալ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների համախառն իրական արժեքների տատանման:

Ածանցյալ ֆինանսական գործիքների իրական արժեքները ներկայացված են ստորև.

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2021թ.		
	Պայմանական գումար	Ակտիվների իրական արժեք	Պարտավորությունների իրական արժեք
<i>Արտարժույթով պայմանագրեր</i>			
Արտաժութային սվոփ պայմանագրեր	28,809,095	-	91,668
Արտաժութային սվոփ պայմանագրեր	28,893,033	7,730	-
	83,938	7,730	91,668
Ընդամենը ածանցյալ ֆինանսական գործիքներ			
Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2020թ.		
	Պայմանական գումար	Ակտիվների իրական արժեք	Պարտավորությունների իրական արժեք
<i>Արտարժույթով պայմանագրեր</i>			
Արտաժութային սվոփ պայմանագրեր	31,206,736	-	171,409
Արտաժութային սվոփ պայմանագրեր	31,307,828	70,317	-
	101,092	70,317	171,409
Ընդամենը ածանցյալ ֆինանսական գործիքներ			

16. Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2021թ.	31 դեկտեմբերի 2020թ.
Դեպոնացված միջոցներ ՀՀ ԿԲ-ում	1,410,000	810,000
Ֆինանսական կազմակերպություններին տրամադրված վարկեր	2,840,948	11,798,687
Հակադարձ վաճառքի և հետգնման պայմանագրեր	9,338,456	15,928,309
Դեպոնացված միջոցներ ոչ ռեզիդենտ այլ ֆինանսական կազմակերպություններում	547,516	595,520
Այլ հաշիվներ	653,419	1,426,480
	<u>14,790,339</u>	<u>30,558,996</u>
Արժեզրկումից պահուստներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջների գծով	(51,585)	(199,055)
Ընդամենը պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	<u>14,738,754</u>	<u>30,359,941</u>

Դեպոնացված գումարը ՀՀ ԿԲ-ում իրենից ներկայացնում է ԱրՔա վճարային համակարգով իրականացվող փոխհաշվարկների երաշխիքային ավանդ:

Վարկերը ժամկետանց կամ արժեզրկված չեն:

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ «Ֆինանսական կազմակերպություններին տրամադրված վարկեր» հոդվածում ներառված հաշիվները կենտրոնացված են մեկ ֆինանսական կազմակերպությունում և կազմում են 2,840,948 հազար դրամ (100%) (2020թ.՝ 9,508,396 հազար դրամ (81%)՝ կենտրոնացված մեկ ֆինանսական կազմակերպությունում):

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ «Դեպոնացված միջոցներ ոչ ռեզիդենտ այլ ֆինանսական կազմակերպություններ» հոդվածում ներառված գումարներն իրենցից ներկայացնում են Բանկի գործառնությունների համար տեղաբաշխված երաշխիքային միջոցներ և ներառում են Մաստեր Բարդ վճարային համակարգին անդամակցության համար սառեցված միջոց 316,747 հազար դրամ գումարով (2020թ.՝ 344,464 հազար դրամ), ինչպես նաև Visa վճարային համակարգին անդամակցության համար սառեցված միջոց 230,769 հազար դրամ գումարով (2020թ.՝ 251,056 հազար դրամ):

Ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջների գծով ակնկալվող պարտքային կորուստների փոփոխությունների վերլուծությունը ներկայացվում է ստորև.

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2021թ.	31 դեկտեմբերի 2020թ.
	12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներ	12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներ
<i>Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ</i>		
Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ հունվարի 1-ի դրությամբ	199,055	63,464
Կորուստների գծով պահուստների գուտ վերաչափում	(147,470)	135,591
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	<u>51,585</u>	<u>199,055</u>

17. Հաճախորդներին տրված վարկեր

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2021թ.			31 դեկտեմբերի 2020թ.		
	Համախառն հաշվեկշռային ն արժեք	Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ	Հաշվեկշռային արժեք	Համախառն հաշվեկշռային արժեք	Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ	Հաշվեկշռային արժեք
<i>Հիփոթեքային և սպառողական վարկեր</i>						
Հիփոթեքային վարկեր	42,529,664	(137,562)	42,392,102	23,326,645	(327,052)	22,999,593
Սպառողական վարկեր	70,312,340	(4,213,131)	66,099,209	95,976,621	(4,824,319)	91,152,302
<i>Առևտրային վարկեր</i>						
Հակադարձ վաճառքի և հետզման պայմանագրեր	22,831,551	(50,396)	22,781,155	23,077,469	(50,939.00)	23,026,530
Արդյունաբերություն	64,983,559	(5,323,122)	59,660,437	69,694,978	(2,145,176)	67,549,802
Շինարարություն	107,514,823	(2,171,191)	105,343,632	101,660,482	(5,071,650)	96,588,832
Առևտուր	170,833,670	(26,370,503)	144,463,167	173,947,509	(2,641,258)	171,306,251
Այլ	131,102,871	(6,602,711)	124,500,160	169,112,059	(6,680,857)	162,431,202
Ընդամենը	<u>610,108,478</u>	<u>(44,868,616)</u>	<u>565,239,862</u>	<u>656,795,763</u>	<u>(21,741,251)</u>	<u>635,054,512</u>

Վերոնշյալ աղյուսակում ակնկալվող պարտքային կորուստների պահուստները ներառում են նաև որոշ վարկային պարտավորվածությունների գծով ակնկալվող պարտքային կորուստները (վճարային քարտեր և օվերդրաֆտներ), քանզի Բանկը չի կարող առանձնացնել վարկային պարտավորվածության բաղադրիչը ֆինանսական գործիքների բաղադրիչից:

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ավարտված տարվա ընթացքում Բանկը ձեռք է բերել հաճախորդներին տրամադրված վարկերի դիմաց ստացած գրավը, այդ ակտիվների հաշվեկշռային արժեքը կազմել է 7,703,301 հազար դրամ (2020թ.՝ 6,011,555 հազար դրամ): Բանկը մտադիր է վաճառել այս ակտիվները կարճ ժամանակահատվածում:

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաճախորդներին տրված վարկերի միջին կշռված արդյունավետ տոկոսադրույքը կազմում է ՀՀ դրամով վարկերի համար 11.42% (2020թ.՝ 11.48%) և ԱՄՆ դոլարով և Եվրոյով վարկերի համար՝ 8.03 % (2020թ.՝ 7.37%):

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկն ունի կենտրոնացում տրամադրված վարկերի գծով 257,172,019 հազար դրամ (համախառն վարկային պորտֆելի 42.15%-ը) ընդհանուր գումարով՝ տրամադրված թվով 10 վարկառուների և նրանց հետ փոխկապակցված անձանց (2020թ.՝ 218,266,649 հազար դրամ կամ համախառն վարկային պորտֆելի 34,37%-ը): Նշված վարկերի գծով արժեզրկումից պահուստները կազմում են 20,819,725 հազար դրամ (2020թ.՝ 2,619,200 հազար դրամ):

Հիփոթեքային, սպառողական և առևտրային վարկերի գծով ակնկալվող պարտքային կորուստների պահուստներում փոփոխությունների վերլուծությունը ներկայացված է ստորև.

Հազար ՀՀ դրամ			2021	2020	
	12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներ	Գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստներ (չարժեզրկված ակտիվներ)	Գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստներ (արժեզրկված ակտիվներ)	Ընդամենը	Ընդամենը
<i>Հիփոթեքային և սպառողական վարկեր</i>					
Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ 2021թ. հունվարի 1-ի դրությամբ					4,402,281
Տարվա ծախս	1,107,885	1,196,261	4,547,226	6,851,372	
Վերականգնում	(130,173)	(215,208)	5,191,905	4,846,524	7,289,940
Դուրս գրում տարվա ընթացքում	-	-	276,196	276,196	1,891,120
Մնացորդ 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	977,712	981,053	2,391,928	4,350,693	6,851,371

Հազար ՀՀ դրամ			2021	2020	
	12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներ	Գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստներ (չարժեզրկված ակտիվներ)	Գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստներ (արժեզրկված ակտիվներ)	Ընդամենը	Ընդամենը
<i>Առևտրային վարկեր</i>					
Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ 2021թ. հունվարի 1-ի դրությամբ					
Տարվա ծախս	2,678,466	2,327,675	9,883,739	14,889,880	15,167,305
Վերականգնում	2,155,774	1,727,310	30,195,662	34,078,746	11,737,577
Դուրս գրում տարվա ընթացքում	-	-	5,893,022	5,893,022	2,853,008
Մնացորդ 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	4,834,240	4,054,985	31,628,698	40,517,923	14,889,880

Վարկային պորտֆելի ակնկալվող պարտքային կորուստների աճը պայմանավորված է եղել պորտֆելի համախառն չափի աճով և պարտքային ռիսկի աճի և տնտեսական պայմանների վատթարացման հետևանքով փուլերի միջև շարժով: Տնտեսական գործոնների հետագա վերլուծությունը ներկայացված է 34.1.2 ծանոթագրությունում:

18. Ներդրումային արժեթղթեր

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2021թ.	31 դեկտեմբերի 2020թ.
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր		
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր (պարտքային գործիքներ)	30,159,387	629,569
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր (բաժնային գործիքներ)	54,405	50,752
Ընդամենը իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	<u>30,213,792</u>	<u>680,321</u>
Հետգնման պայմանագրերով գրավադրված իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային գործիքներ	125,325,567	66,652,356

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող, ինչպես նաև հետգնման պայմանագրերով գրավադրված ներդրումային արժեթղթերի գծով ակնկալվող պարտքային կորուստների փոփոխությունների վերլուծությունը ներկայացված է ստորև.

Հազար ՀՀ դրամ	2021	2020
	12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներ	12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներ
Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ հունվարի 1-ի դրությամբ	95,413	11,217
Կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում	67,560	84,196
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	<u>162,973</u>	<u>95,413</u>

Վերոնշյալ կորուստների գծով պահուստները չեն ճանաչվում ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, քանզի իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող և հետգնման պայմանագրերով գրավադրված պարտքային գործիքների հաշվեկշռային արժեքը հենց իրենց իրական արժեքն է:

Բոլոր պարտքային արժեթղթերն ունեն հաստատուն տոկոսներ:
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերն ըստ արդյունավետ տոկոսադրույքների և մարմանը մնացած ժամկետների ներառում են.

	31 դեկտեմբերի 2021թ.		31 դեկտեմբերի 2020թ.	
	%	Ժամկետ	%	Ժամկետ
ՀՀ պետական պարտատոմսեր	7-12	2022-2050	6.5-13	2021-2050
ՀՀ կորպորատիվ պարտատոմսեր	5.95-10	2022-2031	5.95-9.9	2021-2025

19. Հիմնական միջոցներ

	Հոդ և շենքեր	Սարքավ որումներ	Փոխա դրա միջոց ներ	Համակարգ չային տեխնիկա	Այլ հիմնական միջոցներ	Անավարտ շինարարու թյուն	Երկարա ժամկետ օգտագոր ծման իրավունքով հիմնական միջոցներ	Վարձակալ. հիմնական միջ. գծով կապ.ներդ.	Ընդամենը
<i>Սկզբնական կամ վերագնահատված արժեք</i>									
2020թ. հունվարի 1-ի դրությամբ	11,233,774	705,252	298,043	4,187,523	2,041,218	-	922,294	426,824	19,814,928
Ավելացում	51,927	209,867	7,002	483,493	96,921	-	141,490	54,714	1,045,414
Օտարում	-	-	-	-	-	-	-	-	-
Դուրս գրում	(71,820)	(35,925)	-	(61,326)	-	-	-	(25,992)	(195,063)
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	11,213,881	879,194	305,045	4,609,690	2,138,139	-	1,063,784	455,546	20,665,279
Ավելացում	-	30,048	5,739	306,560	51,504	7,610	85,039	3,133	489,633
Օտարում	-	-	-	-	-	-	(25,180)	-	(25,180)
Դուրս գրում	-	-	(64,001)	(31,683)	(136)	-	-	-	(95,820)
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	11,213,881	909,242	246,783	4,884,567	2,189,507	7,610	1,123,643	458,679	21,033,912
<i>Կուտակված մաշվածություն</i>									
2020թ. հունվարի 1-ի դրությամբ	1,862,754	550,816	136,372	3,118,618	1,132,171	-	168,977	52,072	7,021,780
Տարվա ծախս	382,331	39,324	33,478	256,737	121,265	-	202,440	13,836	1,049,411
Օտարում	(18,898)	(9,637)	-	(58,652)	(14,852)	-	(4,251)	(4,005)	(110,295)
Դուրս գրում	-	-	-	-	-	-	-	-	-
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2,226,187	580,503	169,850	3,316,703	1,238,584	-	367,166	61,903	7,960,896
Տարվա ծախս	383,866	36,636	34,394	303,468	136,423	-	207,542	14,745	1,117,074
Օտարում	-	-	-	-	-	-	(25,180)	-	(25,180)
Դուրս գրում	-	-	(51,708)	(31,180)	(136)	-	-	-	(83,024)
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2,610,053	617,139	152,536	3,588,991	1,374,871	-	549,528	76,648	8,969,766
<i>Հաշվեկշռային արժեք</i>									
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	8,987,694	298,691	135,195	1,292,987	899,555	-	696,618	393,643	12,704,383
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	8,603,828	292,103	94,247	1,295,576	814,636	7,610	574,115	382,031	12,064,146

Ակտիվների վերագնահատում

Բանկի սեփականությունը հանդիսացող շենքերի վերագնահատումը կատարվել է 31 դեկտեմբերի 2013թ. դրությամբ անկախ գնահատող կազմակերպության կողմից՝ կիրառելով համեմատական և եկամտային մեթոդները, որի արդյունքում առաջացել է վերագնահատման աճ 589,278 հազար դրամ գումարով: Իրական արժեքով Բանկի սեփականությունը հանդիսացող շենքի գնահատման համար դեկավարությունը հիմք է ընդունում անկախ գնահատողների կողմից ներկայացված արդյունքները: Հիմնական միջոցների իրական արժեքի հիերարխիայի համար տես ծանոթագրություն 31.3-ը:

Բանկի դեկավարության գնահատմամբ 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ շենքերի վերագնահատված արժեքն էականորեն չի տարբերվում դրանց իրական արժեքից: 2020թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը հաշվեկշռից դուրս է գրել Հաղրութ և Շուշի մասնաձյուղերի շենքերը՝ ընդհանուր 30,660 հազար դրամ հաշվեկշռային արժեքով՝ կապված Լեռնային Ղարաբաղի հակամարտության արդյունքում տարածքների կորստի հետ: Եթե վերագնահատված շենքերը ներկայացվեին սկզբնական արժեքի մոդելի կիրառմամբ, ապա հաշվեկշռային արժեքները կունենան հետևյալ տեսքը՝

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2021թ.	31 դեկտեմբերի 2020թ.
Սկզբնական արժեք	7,153,179	7,153,179
Կուտակված մաշվածություն	(2,163,065)	(1,898,125)
Հաշվեկշռային արժեք	4,990,114	5,255,054

Ամբողջությամբ մաշված ակտիվներ

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հիմնական միջոցների ցանկում ներառված ամբողջությամբ մաշված ակտիվների սկզբնական արժեքը կազմում է 690,186 հազար դրամ (2020թ.՝ 649,811 հազար դրամ):

Ներդրման փուլում գտնվող հիմնական միջոցներ

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հիմնական միջոցների ցանկում ներառված ներդրման փուլում գտնվող հիմնական միջոցների գումարը կազմում է 416,704 հազար դրամ (2020թ.՝ 602,222 հազար դրամ):

Հիմնական միջոցների սահմանափակումներ

2021թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը չի տիրապետել պարտավորությունների դիմաց գրավադրված կամ որևէ այլ սահմանափակման ենթակա հիմնական միջոցների:

Պայմանագրային պարտավորություններ

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը չունի պայմանագրային պարտավորություններ հիմնական միջոցների ձեռք բերման գծով (2020թ. նույնպես):

20. Ոչ նյութական ակտիվներ

Հազար ՀՀ դրամ	Արտոնագրեր	Համակարգչային ծրագրեր	Կապիտալ ներդրումներ	Այլ	Ընդամենը
<i>Սկզբնական արժեք</i>					
2020թ. հունվարի 1-ի դրությամբ	2,901,803	281,391	30,573	140,419	3,354,186
Ավելացում	217,111	4,209	59,993	17,222	298,535
Դուրս գրում	(16,423)	-	-	-	(16,423)
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	3,102,491	285,600	90,566	157,641	3,636,298
Ավելացում	203,843	2,777	1,600	-	208,220
Դուրս գրում	(41,104)	-	-	-	(41,104)
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	3,265,230	288,377	92,166	157,641	3,803,414
<i>Կուտակված ամորտիզացիա</i>					
2020թ. հունվարի 1-ի դրությամբ	937,778	118,106	-	42,529	1,098,413
Մասհանումներ	365,443	19,323	-	18,382	403,148
Դուրս գրում	(16,423)	-	-	-	(16,423)
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,286,798	137,429	-	60,911	1,485,138
Մասհանումներ	390,473	19,637	-	18,143	428,253
Դուրս գրում	(40,983)	-	-	-	(40,983)
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,636,288	157,066	-	79,054	1,872,408
<i>Հաշվեկշռային արժեք</i>					
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,815,693	148,171	90,566	96,730	2,151,160
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,628,642	131,311	92,166	78,587	1,931,006

Պայմանագրային պարտավորություններ

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկն չունի պայմանագրային պարտավորություններ ոչ նյութական ակտիվների ձեռք բերման գծով (2020թ. 101,816 հազար դրամ՝ արտոնագրերի գնման գծով):

21. Բռնագանձված ակտիվներ

Բանկի կողմից տրամադրված վարկերի ապահովվածություն հանդիսացող գրավների տնօրինման արդյունքում տարվա ընթացքում ձեռք բերված ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվների մանրամասները դեկտեմբերի 31-ի դրությամբ ներկայացված են ստորև.

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2021թ.	31 դեկտեմբերի 2020թ.
Անշարժ գույք	7,627,473	5,935,726
Այլ	239,205	239,205
Ընդամենը ոչ ֆինանսական ակտիվներ	7,866,678	6,174,931

Բռնագանձման ամսաթվի դրությամբ գրավը չափվում է չմարած վարկային պարտավորության հաշվեկշռային արժեքից և գրավի իրացման գուտ արժեքից նվազագույնով:

Բանկի քաղաքականությունն է հետամուտ լինել այդ ակտիվների իրացմանը պատշաճ կերպով և սեղմ ժամկետներում: Բանկը հիմնականում չի օգտագործում ոչ կանխիկ գրավները իր սեփական գործունեության իրականացման համար: Ակտիվները չափվում են հաշվեկշռային արժեքից և իրական արժեքից հանած վաճառքի ծախսումները նվազագույնով:

22. Այլ ակտիվներ

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2021թ.	31 դեկտեմբերի 2020թ.
Դեբիտորական պարտքեր և այլ ստացվելիք գումարներ	2,179,564	2,020,585
Արժեգրկումից պահուստներ այլ ակտիվների գծով	(546,311)	(197,877)
Ընդամենը այլ ֆինանսական ակտիվներ	1,633,253	1,822,708
Կանխավճարներ	501,530	628,768
Կանխավճարներ բռնագանձված ակտիվների գծով	1,794,582	1,627,704
Հաշվարկներ աշխատակիցների հետ	1,750	-
Նկարներ	47,050	47,050
Ապագա ժամանակաշրջանի ծախսեր	82,633	65,818
Թանկարժեք մետաղներ	16,812	24,689
Պահեստ	238,267	218,580
Այլ	28,965	68,960
Ընդամենը ոչ ֆինանսական ակտիվներ	2,711,589	2,681,569
Ընդամենը այլ ակտիվներ	4,344,842	4,504,277

Այլ ֆինանսական ակտիվների գծով ակնկալվող պարտքային կորուստներում փոփոխությունների վերլուծությունը ստորև.

Հազար ՀՀ դրամ	2021	2020
	Ակնկալվող պարտքային կորուստներ	Ակնկալվող պարտքային կորուստներ
Այլ ֆինանսական ակտիվներ		
Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ հունվարի 1-ի դրությամբ	197,877	129,000
Կորուստների գծով պահուստների զուտ վերաչափում	348,434	68,877
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	546,311	197,877

23. Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2021թ.	31 դեկտեմբերի 2020թ.
Վարկեր ֆինանսական կազմակերպություններից	39,838,115	40,887,190
Ավանդներ ֆինանսական կազմակերպություններից	40,424,432	44,911,180
Ֆինանսական կազմակերպությունների ընթացիկ հաշիվներ	3,247,257	4,469,728
Այլ բանկերի թղթակցային հաշիվներ	1,606,990	2,751,076
Վարկեր ռեպո համաձայնագրերով	143,594,992	98,429,856
Ընդամենը պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	228,711,786	191,449,030

Ֆինանսական կազմակերպություններից ավանդները և վարկերն ունեն հաստատուն տոկոսադրույքներ:

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական կազմակերպություններից ավանդները 32,917,134 հազար դրամ գումարով (81.43%) ստացված են մեկ ֆինանսական կազմակերպությունից (2020թ.՝ 35,987,521 հազար դրամ գումարով (80.13%) ստացված են մեկ ֆինանսական կազմակերպությունից):

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական կազմակերպություններից վարկերը 17,249,226 հազար դրամ գումարով (43.3%) ստացված են մեկ ֆինանսական կազմակերպությունից (2020թ.՝ 15,981,004 հազար դրամ գումարով (39.09%) ստացված են մեկ ֆինանսական կազմակերպությունից):

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ ՀՀ դրամով պարտավորությունների գծով միջին կշռված արդյունավետ տոկոսադրույքները կազմել են 7.81% (2020թ.՝ 7.95%), ԱՄՆ դոլարով պարտավորությունների համար՝ 4.44% (2020թ.՝ 4.89%):

24. Պարտավորություններ ՀՀ կառավարության նկատմամբ

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2021թ.	31 դեկտեմբերի 2020թ.
Ընթացիկ/հաշվարկային հաշիվներ	116,652	134,983
Ստացված վարկեր	650,892	492,709
Ընդամենը պարտավորություններ ՀՀ կառավարության նկատմամբ	767,544	627,692

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ կառավարության նկատմամբ պարտավորություններում ներառված է Համաշխարհային բանկի «Գյուղական բարեփոխումների» ծրագրի շրջանակներում և Գյուղացիական ֆինանսավորման կառույց ԾԻԳ-ից ներգրավված 133,801 հազար դրամ վարկը (2020թ.՝ 175,462 հազար դրամ):

25. Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2021թ.	31 դեկտեմբերի 2020թ.
<i>Իրավաբանական անձինք</i>		
Ընթացիկ/հաշվարկային հաշիվներ	159,227,282	202,749,515
Ժամկետային ավանդներ	43,778,295	67,523,415
	203,005,577	270,272,930
<i>Ֆիզիկական անձինք</i>		
Ընթացիկ/հաշվարկային հաշիվներ	46,539,153	59,967,335
Ժամկետային ավանդներ	307,114,564	273,392,842
	353,653,717	333,360,177
Ընդամենը պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	556,659,294	603,633,107

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ իրավաբանական/ֆիզիկական անձանց ավանդներում ներառված են ժամկետային ավանդներ, որոնք հանդիսանում են ապահովվածություն տրամադրված ակրեդիտիվների և երաշխիքների գծով 19,014,069 հազար դրամ գումարով (2020թ.՝ 20,924,018 հազար դրամ): Այդ ավանդների իրական արժեքը մոտ է դրանց հաշվեկշռային արժեքին:

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի ամենամեծ տաս հաճախորդների միջոցների ընդհանուր գումարը (ներառյալ կապակցված անձինք, տես ծանոթ. 30) կազմում է 72,086,359 հազար դրամ (2020թ.՝ 98,325,309 հազար դրամ) կամ հաճախորդներից ներգրավված միջոցների ընդհանուր գումարի 12.88% (2020թ.՝ 16.51%):

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաճախորդների նկատմամբ ՀՀ դրամով պարտավորությունների գծով արդյունավետ տոկոսադրույքները տատանվում են 3.00-21.93% (2020թ.՝ 3.00-14.60%), ԱՄՆ դոլարով և Եվրոյով պարտավորությունների համար 0.7-9.9% (2020թ.՝ 0.05-9.38%):

Հաշվետու ժամականաշրջանում Բանկը չի ունեցել մայր գումարի, տոկոսների չվճարումներ կամ այլ խախտումներ (2020թ.՝ նույնպես):

26. Թողարկված պարտքային արժեթղթեր

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2021թ.	31 դեկտեմբերի 2020թ.
Պարտատոմսեր	10,872,660	2,916,675
Ընդամենը թողարկված պարտքային արժեթղթեր	10,872,660	2,916,675

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը թողարկել է տոկոսային պարտատոմսեր հետևյալ պայմաններով.

Թողարկման ամսաթիվ	Արժույթ	Արժեքը մեկ պարտատոմսի դիմաց	Քանակ	%	Պարտատոմսի մարման ժամկետ	Ընդամենը անվանական արժեք
09.01.2020	AMD	10,000	25,000	10.5	09.07.2023	250,000,000
09.01.2020	USD	100	50,000	5.8	09.07.2023	5,000,000
13.04.2021	USD	100	170,000	6.6	02.11.2026	17,000,000

Բանկի պարտատոմսերը ցուցակված են «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ Արմենիա ֆոնդային բորսայում:

Տարվա ընթացքում Բանկը հետ չի գնել իր կողմից թողարկված արժեթուղթ (2020թ.՝ 5,100,000 USD ընդհանուր ծավալի արժեթուղթ) և մարվում չի կատարվել (2020թ.՝ մարվել է 17,200,000 USD ընդհանուր ծավալի արժեթուղթ):

Հաշվետու ժամականաշրջանում Բանկը չի ունեցել մայր գումարի, տոկոսների չվճարումներ կամ այլ խախտումներ (2020թ.՝ նույնպես):

27. Այլ պարտավորություններ

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2021թ.	31 դեկտեմբերի 2020թ.
Վճարվելիք գումարներ	364,070	396,148
Վարձակալության գծով պարտավորություններ	924,559	742,185
Պարտավորություն անձնակազմի նկատմամբ	646,344	638,739
Ընդամենը այլ ֆինանսական պարտավորություններ	1,934,973	1,777,072
Պարտավորություններ հարկերի գծով՝ բացառությամբ շահութահարկի	402,450	486,466
Ապագա ժամանակաշրջանի եկամուտներ	12,941	2,788
Պահուստներ*	725,063	836,139
Այլ	770	460
Ընդամենը այլ ոչ ֆինանսական պարտավորություններ	1,141,224	1,325,853
Ընդամենը այլ պարտավորություններ	3,076,197	3,102,925

*Պահուստները ստեղծվել են ֆինանսական երաշխիքների գծով կորուստներից:

28. Մեփական կապիտալ

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի գրանցված և ամբողջությամբ վճարված բաժնետիրական կապիտալը կազմում էր 42,090,187 հազար դրամ (2020թ.՝ 42,090,187 հազար դրամ):

Համաձայն Բանկի կանոնադրության, բաժնետիրական կապիտալը կազմված է թվով 51,040 սովորական բաժնետոմսերից յուրաքանչյուրը 824,651 դրամ անվանական արժեքներով:

Բանկի բաժնետերերն են.

Հասցար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2021թ.		31 դեկտեմբերի 2020թ.	
	Վճարված բաժնետիրական կապիտալ	Բաժնեմասը վճարված կապիտալում %	Վճարված բաժնետիրական կապիտալ	Բաժնեմասը վճարված կապիտալում %
Վիտալի Գրիգորյանց	-	-	39,985,678	95
Արսեն Միքայելյան	-	-	2,104,509	5
ԷՄ ԷՖ ԷՄ Գլոբալ Ինվեստ ՍՊԸ	42,090,187	100	-	-
	<u>42,090,187</u>	<u>100</u>	<u>42,090,187</u>	<u>100</u>

2021թ. 31 դեկտեմբերի դրությամբ Բանկի բաժնետոմսերը գրավադրված չեն պարտավորությունների դիմաց (2020թ.՝ 95%ը գրավադրված էին որպես Բանկի կողմից տրված վարկային պարտավորությունների ապահովածություն):

2021թ. Դեկտեմբերի 27-ին տեղի է ունեցել Բանկի բաժնետերերի փոփոխություն: 2021թ. 31 դեկտեմբերի դրությամբ Բանկի միակ բաժնետեր է ԷՄ ԷՖ ԷՄ Գլոբալ Ինվեստ ՍՊԸ-ն:

Բաշխման ենթակա Բանկի պահուստները սահմանափակվում են կուտակված շահույթով՝ հաշվարկված համաձայն ՀՀ օրենսդրության: Բաշխման ոչ ենթակա միջոցները ներկայացված են գլխավոր պահուստով, որը ստեղծված է համաձայն ՀՀ օրենսդրության պահանջների՝ ընդհանուր բանկային ռիսկերը, ներառյալ հնարավոր կորուստները և այլ չնախատեսված ռիսկերը և ծախսերը փոխհատուցելու նպատակով: Պահուստը ստեղծվել է համաձայն Բանկի կանոնադրության, որը նախատեսում է պահուստի ստեղծում այդ նպատակների համար ոչ պակաս քան հաշվապահական հաշվառման հաշիվներում արտացոլված բաժնետիրական կապիտալի 15%-ի չափով:

29. Պայմանական պարտավորություններ

Իրավական և հարկային պարտավորություններ

Հայաստանում հարկային համակարգը համեմատաբար նոր է, և նրան բնորոշ է օրենսդրության, պաշտոնական հայտարարությունների և դատարանի որոշումների հաճախակի փոփոխությունները, որոնք երբեմն անհասկանալի են, հակասական և ենթակա տարբեր մեկնաբանությունների: Հարկերը ենթակա են ստուգման և ուսումնասիրման հարկային մարմինների կողմից, որոնք իրավասու են կիրառել տույժեր և տուգանքներ: Հարկային օրենսդրության խախտման դեպքում, հարկային մարմինների կողմից չի կարող կիրառվել հավելյալ հարկերի պարտավորումներ, տույժեր և տուգանքներ, ավելի քան ստուգման նախորդող հաշվետու 3 տարիների համար:

Այս հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել հարկային ռիսկեր, որոնք ավելի զգալի են քան այլ երկրներում: Ղեկավարությունը համոզված է, որ պատշաճ կերպով կատարել է իր հարկային պարտավորությունները, հիմնվելով Հայաստանում կիրառվող հարկային օրենսդրության, պաշտոնական հայտարարությունների և դատարանի որոշումների իր մեկնաբանությունների վրա: Այնուամենայնիվ, համապատասխան մարմինների մեկնաբանությունները կարող են տարբերվել, և եթե ղեկավար մարմիններին հաջողվի հարկադրել իրենց մեկնաբանությունները, ապա այս ֆինանսական հաշվետվությունների վրա ազդեցությունը կարող է էական լինել:

Ղեկավարությունը համոզված է, որ Բանկն իր գործունեությունը ծավալում է օրենսդրությամբ նախատեսված պահանջների շրջանակներում, և ամբողջությամբ կատարել է իր հարկային պարտավորությունները:

Բանկին ներկայացվող դատական հայցերի առումով Բանկի ղեկավարությունը համոզված է, որ դրանց հետևանքով առաջացող պարտավորությունները էական ազդեցություն չեն ունենա Բանկի ֆինանսական վիճակի կամ ապագա գործառնությունների արդյունքների վրա:

Վարկային պարտավորվածություններ և ֆինանսական երաշխիքներ

Իր գործունեության ընթացքում Բանկը տրամադրում է իր հաճախորդներին հետհաշվեկշռային ռիսկ պարունակող ֆինանսական գործիքներ: Նշված ֆինանսական գործիքները, որոնք ունեն պարտքային ռիսկի տարբեր մակարդակներ, չեն արտացոլվում ֆինանսական վիճակի մասին հաշվետվության մեջ:

Դեկտեմբերի 31-ի դրությամբ անվանական կամ պայմանագրային գումարները հետևյալն են.

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2021թ.	31 դեկտեմբերի 2020թ.
Վարկային գծերի չօգտագործված մաս	8,697,161	29,656,223
Տրամադրված երաշխիքներ	70,394,453	81,178,532
Չօգտագործված օվերդրաֆտներ	275,500	190,119
Ընդամենը պարտքային ռիսկ պարունակող պարտավորություններ	79,367,114	111,024,874

Ֆինանսական երաշխիքների գծով ակնկալվող պարտքային կորուստների փոփոխությունների վերլուծությունը ներկայացվում է ստորև: Վարկային պարտավորվածությունների գծով ակնկալվող պարտքային կորուստները ներառված են հաճախորդներին տրված վարկերի պահուստներում:

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2021թ.	31 դեկտեմբերի 2020թ.
	12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներ	12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներ
<i>Ֆինանսական երաշխիքներ</i>		
Ակնկալվող պարտքային կորուստների պահուստ հունվարի 1-ի դրությամբ	836,139	853,987
Կորուստների գծով պահուստների գուտ վերաչափում	(111,076)	(17,848)
Մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ	725,063	836,139

Պարտավորություններ գործառնական վարձակալության գծով՝ Բանկը որպես վարձակալ

Չեղյալ չհայտարարվող գործառնական վարձակալության գծով վճարվելիք ապագա ընդհանուր նվազագույն վարձավճարների կառուցվածքը հետևյալն է.

	31 դեկտեմբերի 2021թ.	31 դեկտեմբերի 2020թ.
Մինչև 1 տարի	77,067	61,912
Ընդամենը պարտավորություններ գործառնական վարձակալության գծով	77,067	61,912

Ապահովագրություն

Հայաստանում ապահովագրության ոլորտը գտնվում է զարգացման փուլում, և այլ երկրներին հատուկ բազմաթիվ ապահովագրության ձևաչափեր հիմնականում դեռևս կիրառելի չեն:

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկն իրականացրել է աշխատակիցների ազնվության, շինությունների, փոխադրումների, կեղծված չեկերի, կեղծ արժեթղթերի և արժույթի, գրասենյակային պարունակության, համակարգչային հանցագործությունների, տնօրենի և պաշտոնատար անձանց պատասխանատվության և մասնագիտական պատասխանատվության ապահովագրություն:

Քանի դեռ Բանկը չի նախատեսել ամբողջական ապահովագրություն, առկա է ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է ունենալ բացասական ազդեցություն Բանկի գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

30. Գործարքներ կապակցված կողմերի հետ

Համաձայն ՀՀՄՍ 24 «Կապակցված կողմերի բացահայտում» կողմերը համարվում են կապակցված, եթե նրանցից մեկը կարող է վերահսկել մյուսին կամ նշանակալի ազդեցություն ունենալ մյուսի վրա՝ ֆինանսական և գործառնական որոշումներ կայացնելիս: Ներկայացվող հաշվետվությունների առումով Բանկի կապակցված կողմերն են՝ նրա բաժնետերերը, ղեկավար անձնակազմի անդամները, ինչպես նաև նրանց հետ կապակցված անձիք և նրանց կողմից վերահսկվող կազմակերպությունները: Բանկի վերջնական վերահսկող է հանդիսանում ՌԴ քաղաքացի գործարար Վիտալի Սարգսի Գրիգորյանը:

Բանկն իր գործունեության ընթացքում ներգրավված է լինում կապակցված կողմերի հետ մի շարք գործարքներում: Այդ գործարքները ներառում են վարկերը, ավանդները և այլն: Նշված գործարքները իրականացվել են՝ շուկայում գործող պայմաններից և տոկոսադրույքներից ելնելով:

Գործարքների ծավալները, մնացորդները տարվա վերջի դրությամբ և տարվա եկամուտ և ծախսերը հետևյալն են.

Հազար ՀՀ դրամ

2021

2020

	Բաժնետերեր և կապակցված կողմեր	Ղեկավար անձնակազմը և կապակցված կողմեր	Բաժնետերեր և կապակցված կողմեր	Ղեկավար անձնակազմը և կապակցված կողմեր
<i>Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն</i>				
<i>Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ</i>				
Հունվարի 1-ի դրությամբ	3,947,620	-	2,054,850	-
Տարվա ընթացքում տրամադրված	5,405,709	9,353,329	2,227,323	-
Տարվա ընթացքում մարված	9,353,329	4,503,647	(334,553)	-
Մնացորդը դեկտեմբերի 31 դրությամբ, համախառն	-	4,849,682	3,947,620	-
Արժեզրկումից պահուստ	-	(48,497)	(39,476)	-
Դեկտեմբերի 31-ի դրությամբ	-	4,801,185	3,908,144	-
<i>Հաճախորդներին տրված վարկեր</i>				
Վարկի մնացորդը 1 հունվարի դրությամբ, համախառն	8,165,073	666,567	7,766,678	860,678
Տարվա ընթացքում տրամադրված վարկեր	1,362,324	1,006,121	6,603,111	1,042,067
Տարվա ընթացքում մարված վարկեր	9,527,397	1,222,579	(6,204,716)	(1,236,177)
Վարկի մնացորդը դեկտեմբերի 31-ի դրությամբ, համախառն	-	450,109	8,165,073	666,568
Արժեզրկումից պահուստ	-	(4,501)	(81,651)	(6,665)
Դեկտեմբերի 31-ի դրությամբ	-	445,608	8,083,422	659,903

Հազար ՀՀ դրամ

	2021		2020	
	Բաժնետերեր և կապակցված կողմեր	Ղեկավար անձնակազմը և կապակցված կողմեր	Բաժնետերեր և կապակց- ված կողմեր	Ղեկավար անձնակազմը և կապակցված կողմեր
<i>Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ</i>				
Հունվարի 1-ի դրությամբ	5,058,566	-	5,649,950	-
Տարվա ընթացքում ստացված	16,466,305	21,524,871	9,145,487	-
Տարվա ընթացքում վճարված	21,524,871	16,865,104	(9,736,871)	-
Դեկտեմբերի 31-ի դրությամբ	-	4,659,767	5,058,566	-

Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ

Հունվարի 1-ի դրությամբ	6,356,444	327,408	10,987,387	120,147
Տարվա ընթացքում ստացված	32,167,404	3,623,085	48,285,548	3,069,406
Տարվա ընթացքում վճարված	38,523,848	3,336,137	(52,916,491)	(2,862,146)
Դեկտեմբերի 31-ի դրությամբ	-	614,356	6,356,444	327,407

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

Տոկոսային եկամուտ	894,538	80,892	519,826	52,029
Տոկոսային ծախսեր	1,330,980	10,637	826,766	9,233
Արժեզրկման ծախս/(հակադարձում)	(22,911)	1,942	121,127	(46,333)

Տնօրեններին և ղեկավար անձնակազմի այլ անդամներին (և ընտանիքի անդամներին) տարվա ընթացքում տրամադրված վարկերն ունեն 1-20 տարի մարման ժամկետ և դրանց տոկոսադրույքը կազմում է 4-22% (2020թ.՝ 6-19%, 1 տարուց 20 տարի): Տնօրեններին տրամադրված վարկերը ապահովված են ոսկով, անշարժ գույքով, դրամական միջոցներով և այլ գույքով:

Ղեկավար անձնակազմի գծով կատարված փոխհատուցումները հետևյալն են՝

Հազար ՀՀ դրամ	2021	2020
Աշխատավարձ և պարգևատրումներ	518,049	535,995
Ընդամենը ղեկավար անձնակազմի գծով կատարված փոխհատուցումներ	518,049	535,995

31. Իրական արժեքի չափումը

Բանկի Խորհուրդը սահմանում է ինչպես իրական արժեքի պարբերաբար չափման քաղաքականությունն ու ընթացակարգերը, ինչպես օրինակ չգնանշվող առևտրային և իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ներդրումային արժեթղթերը, չգնանշվող ածանցյալ ֆինանսական գործիքները, այնպես էլ ոչ-պարբերաբար չափման քաղաքականությունն ու ընթացակարգերը, ինչպես օրինակ վաճառքի համար պահվող ակտիվները:

Անկախ գնահատողները ներգրավվում են նշանակալի ակտիվների, ինչպես օրինակ՝ անշարժ գույքի և բռնագանձված գույքի, գնահատման համար: Անկախ գնահատողների ընդգրկումը յուրաքանչյուր տարի որոշվում է Բանկի Խորհրդի կողմից:

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվին Բանկի ղեկավարությունը վերլուծում է ակտիվների և պարտավորությունների արժեքների փոփոխությունները, որոնք պետք է վերագնահատվեն համաձայն Բանկի հաշվապահական հաշվառման քաղաքականության: Այս վերլուծությունների

համար ճշտվում են հիմնական տվյալները, որոնք կիրառվել են նախորդ գնահատման ժամանակ, համադրելով գնահատման հաշվարկի տեղեկատվությունը պայմանագրերի և այլ համապատասխան փաստաթղթերի հետ: Ղեկավարությունը Բանկի անկախ գնահատողների հետ միասին համեմատում է յուրաքանչյուր ակտիվի և պարտավորության իրական արժեքի յուրաքանչյուր փոփոխությունը համապատասխան արտաքին աղբյուրների հետ, որոշելու համար, թե հիմնավորված է արդյոք տվյալ փոփոխությունը:

Ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվները և պարտավորությունները ներկայացվում են համաձայն իրական արժեքի հիերարխիայի: Այս հիերարխիան բաժանում է ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները երեք մակարդակների՝ հիմք ընդունելով դրանց իրական արժեքի չափման ժամանակ օգտագործված գործիքների նշանակալիությունը: Իրական արժեքի հիերարխիան ունի հետևյալ երեք մակարդակները

Մակարդակ 1՝ նույն ակտիվների և պարտավորությունների գծով ակտիվ շուկաներում գնանշվող գները (չճշգրտված):

Մակարդակ 2՝ Մակարդակ 1-ում ներառված գնանշվող գներից տարբեր այլ ելակետային տվյալներ, որոնք ակտիվի և պարտավորության համար դիտարկելի են ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ) և թե՛ անուղղակիորեն (այսինքն՝ գների հիման վրա ստացվող):

Մակարդակ 3՝ ակտիվի կամ պարտավորության գծով ելակետային տվյալներ, որոնք հիմնված չեն դիտարկվող շուկայական տվյալների վրա (ոչ դիտարկելի ելակետային տվյալներ):

31.1 Իրական արժեքով չչափվող ֆինանսական գործիքներ

Ստորև բերված աղյուսակը ներկայացնում է ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքը, որոնք ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում չեն չափվել իրենց իրական արժեքով և ըստ մակարդակի վերլուծում է դրանք իրական արժեքի հիերարխիայում, թե իրական արժեքի չափումը որ դասում է դասակարգված:

Հազար ՀՀ դրամ

31 դեկտեմբերի 2021թ.

	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3	Ընդամենը իրական արժեք	Ընդամենը հաշվեկշռային արժեք
<i>Ֆինանսական ակտիվներ</i>					
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	-	54,385,807	-	54,385,807	54,385,807
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	-	14,738,754	-	14,738,754	14,738,754
Հաճախորդներին տրված վարկեր	-	565,239,862	-	565,239,862	565,239,862
Այլ ֆինանսական ակտիվներ	-	1,633,253	-	1,633,253	1,633,253
<i>Ֆինանսական պարտավորություններ</i>					
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	-	228,711,786	-	228,711,786	228,711,786
Պարտավորություններ ՀՀ կառավարության նկատմամբ	-	767,544	-	767,544	767,544
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	-	556,659,294	-	556,659,294	556,659,294
Թողարկված պարտքային արժեթղթեր	-	10,872,660	-	10,872,660	10,872,660
Այլ ֆինանսական պարտավորություններ	-	1,934,980	-	1,934,980	1,934,980

Հազար ՀՀ դրամ

31 դեկտեմբերի 2020թ.

	Մակար դակ 1	Մակար դակ 2	Մակար դակ 3	Ընդամենը իրական արժեք	Ընդամենը հաշվեկշռային արժեք
<i>Ֆինանսական ակտիվներ</i>					
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	-	87,914,454	-	87,914,454	87,914,454
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	-	30,359,941	-	30,359,941	30,359,941
Հաճախորդներին տրված վարկեր	-	635,054,512	-	635,054,512	635,054,512
Այլ ֆինանսական ակտիվներ	-	1,822,708	-	1,822,708	1,822,708
<i>Ֆինանսական պարտավորություններ</i>					
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	-	191,449,030	-	191,449,030	191,449,030
Պարտավորություններ ՀՀ կառավարության նկատմամբ	-	627,692	-	627,692	627,692
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	-	603,633,107	-	603,633,107	603,633,107
Թողարկված պարտքային արժեթղթեր	-	2,916,675	-	2,916,675	2,916,675
Այլ ֆինանսական պարտավորություններ	-	1,777,072	-	1,777,072	1,777,072

Պահանջներ և պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ

Մեկ ամիս մարման ժամկետ ունեցող ակտիվների և պարտավորությունների համար, հաշվեկշռային արժեքը մոտավոր արտացոլում է իրական արժեքը, քանի որ այս ֆինանսական գործիքների մարման ժամկետները բավականին կարճ են: Մեկ ամսից ավելի մարման ժամկետ ունեցող ակտիվների և պարտավորությունների իրական արժեքը սահմանվում է ակնկալվող ապագա դրամական միջոցների հոսքերի հաշվարկից ելնելով և զեղչվում է տարվա վերջի դրությամբ գործող համապատասխան տոկոսադրույքներով, որոնք հիմնականում համընկնում են գործող տոկոսադրույքներին:

Հաճախորդներին տրված վարկեր

Փոփոխվող դրույքաչափերով գործիքների իրական արժեքը հավասար է նրանց հաշվեկշռային արժեքին: Այն միջոցների գնահատված իրական արժեքները, որոնք ունեն ֆիքսված տոկոսադրույք, սահմանվում են ելնելով ակնկալվող ապագա դրամական միջոցների հոսքերի հաշվարկից, որոնք զեղչվում են նման պարտքային ռիսկ և մարման ժամկետ ունեցող գործիքների ընթացիկ տոկոսադրույքներով: Կիրառվելիք տոկոսադրույքերը կախված են վարկառուի պարտքային ռիսկից և տատանվում են 1% մինչև 24% տարեկան (2020թ.՝ 2% մինչև 24% տարեկան):

Արժեզրկված վարկերի իրական արժեքը հաշվարկվում է գրավի առարկայի վաճառքից ակնկալվող դրամական միջոցների հոսքերի հիման վրա: Գրավի առարկայի արժեքը հիմնված է անկախ, մասնագիտական որակավորում ունեցող գույքի գնահատողի իրականացրած գնահատումների վրա:

Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների և հաճախորդների նկատմամբ

Ֆինանսական կազմակերպությունների և հաճախորդների ավանդների իրական արժեքը գնահատվում է՝ օգտագործելով զեղչված դրամական միջոցների հոսքերի մեթոդը, կիրառելով նմանատիպ մարման ժամկետ ունեցող ավանդների համար առաջարկվող դրույքաչափերը: Ցպահանջ վճարվելիք ավանդների իրական արժեքը հաշվետու ամսաթվին վճարվելիք գումարն է:

31.2 Իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ

Հազար ՀՀ դրամ

31 դեկտեմբերի 2021թ.

	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3	Ընդամենը
<i>Ֆինանսական ակտիվներ</i>				
Ցուցակված պարտատոմսեր				
Ածանցյալ ֆինանսական ակտիվներ	-	7,730	-	7,730
Չցուցակված պարտատոմսեր՝ ներառյալ հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթերը	-	155,484,954	-	155,484,954
Չցուցակված բաժնային գործիքներ	-	54,405	-	54,405
Ընդամենը	-	155,547,089	-	155,547,089
<i>Ֆինանսական պարտավորություններ</i>				
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	-	91,668	-	91,668
Ընդամենը	-	91,668	-	91,668
Զուտ իրական արժեք	-	155,455,421	-	155,455,421

Հազար ՀՀ դրամ

31 դեկտեմբերի 2020թ.

	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3	Ընդամենը
<i>Ֆինանսական ակտիվներ</i>				
Ցուցակված պարտատոմսեր				
Ածանցյալ ֆինանսական ակտիվներ	-	70,317	-	70,317
Չցուցակված պարտատոմսեր՝ ներառյալ հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթերը	-	67,281,925	-	67,281,925
Չցուցակված բաժնային գործիքներ	-	50,752	-	50,752
Ընդամենը	-	67,402,994	-	67,402,994
<i>Ֆինանսական պարտավորություններ</i>				
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	-	171,409	-	171,409
Ընդամենը	-	171,409	-	171,409
Զուտ իրական արժեք	-	67,231,585	-	67,231,585

Իրական արժեքի չափման մեթոդները և գնահատման մեխանիզմը չեն փոփոխվել նախորդ հաշվետու ժամանակաշրջանի համեմատությամբ:

Գնանշվող ներդրումներ

Բոլոր ցուցակված պարտատոմսերը թողարկվել են Հայաստանում հրապարակայնորեն գնանշվող ընկերությունների կողմից:

Չգնանշվող պարտքային արժեթղթեր

Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող չգնանշվող պարտքային արժեթղթերի իրական արժեքը չափվում է գնահատման մեթոդների միջոցով՝ կիրառելով

տվյալ պահին գործող շուկայական տոկոսադրույքները ֆինանսական գործիքների ապագա դրամական հոսքերը գեղջելու նպատակով:

Չգնանշվող բաժնային գործիքներ

Բանկը չգնանշվող բաժնային գործիքների իրական արժեքը որոշելու համար օգտագործում է շուկայական և եկամտային մոտեցումների համադրությունը: Շուկայական և եկամտային մոտեցումները ոչ հրապարակային բաժնային գործիքների գնահատմանը բնորոշ մեթոդներ են: Շուկայական մոտեցման համաձայն՝ Բանկն օգտագործում է գները և նույնական կամ համադրելի արժեթղթերով շուկայական գործարքներից հավաքված այլ համապատասխան տեղեկատվություն: Եկամտային մոտեցման ներքո ապագա գումարները վերափոխվում են մեկ ներկա գումարի (օրինակ՝ գեղջված դրամական հոսքերի մոդել): Շուկայական մոտեցումը համարվում է նախընտրելի, քանի որ հիմնական օգտագործվող տեղեկատվությունը, արպես կանոն, դիտարկելի է:

Ածանցյալներ

Երբ ածանցյալները շրջանառվում են կա՛մ բորսայում, կա՛մ բորսայից դուրս, Բանկը օգտագործում է հաշվետու ամսաթվի դրությամբ փակման գինը:

Ընդհանրապես, Բանկի կողմից իրականացվող ածանցյալները չեն շրջանառվում գործող շուկաներում: Այս պայմանագրերի իրական արժեքները գնահատվում են՝ օգտագործելով այն գնահատման մեխանիզմը, որը առավելագույնս մեծացնում է դիտարկելի շուկայի գործիքների օգտագործումը, օր.՝ շուկայի արժույթի փոխանակման դրույքը (մակարդակ 2): Բանկի կողմից ներդրվող ածանցյալների մեծամասնությունը ներառված է 2-րդ մակարդակում և բաղկացած է արտարժույթային սվոպ պայմանագրերից:

31.3 Ոչ ֆինանսական ակտիվների իրական արժեքի չափումը

Հազար ՀՀ դրամ	2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ			
	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3	Ընդամենը
Ոչ ֆինանսական ակտիվներ				
<i>Շենքեր</i>	-	-	11,213,881	11,213,881
Զուտ իրական արժեք	-	-	11,213,881	11,213,881
Հազար ՀՀ դրամ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ			
	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3	Ընդամենը
Ոչ ֆինանսական ակտիվներ				
<i>Շենքեր</i>	-	-	11,213,881	11,213,881
Զուտ իրական արժեք	-	-	11,213,881	11,213,881

Իրական արժեքի չափումը Մակարդակ 3-ում

3-րդ մակարդակում դասակարգված Բանկի ոչ ֆինանսական ակտիվների գնահատման մեխանիզմների օգտագործումը հիմնված է այն ելակետային տվյալների վրա, որոնք հիմնված չեն դիտարկվող շուկայի տվյալների վրա: Այս մակարդակում ոչ ֆինանսական ակտիվների շարժը ներկայացվում է ստորև.

Հազար ՀՀ դրամ	<u>2021</u>
	<u>Հիմնական միջոցներ</u>
Ոչ ֆինանսական ակտիվներ	
2021թ. հունվարի 1-ի դրությամբ	11,213,881
Առք	-
Վաճառք	-
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	<u>11,213,881</u>
Զուտ իրական արժեք	<u>11,213,881</u>
Հազար ՀՀ դրամ	<u>2020</u>
	<u>Հիմնական միջոցներ</u>
Ոչ ֆինանսական ակտիվներ	
2020թ. հունվարի 1-ի դրությամբ	11,233,774
Առք	51,927
Վաճառք	(71,820)
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	<u>11,213,881</u>
Զուտ իրական արժեք	<u>11,213,881</u>

Բանկի հիմնական գույքային ակտիվների իրական արժեքը հաշվարկվում է գնահատումների հիման վրա՝ իրականացված անկախ, մասնագիտական որակավորում ունեցող գույքի գնահատողների կողմից: Նշանակալի ելակետային տվյալները և ենթադրությունները մշակվում են համաձայն ղեկավարության հետ սերտ խորհրդակցության: Գնահատման գործընթացները և իրական արժեքի փոփոխությունները վերանայվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվին:

Գնահատումը իրականացվել է՝ կիրառելով համեմատական և եկամտային մեթոդները, որոնք արտացոլում են նմանատիպ գույքերի վերջին շուկայական գործարքների գները և ներառում է վերոնշյալ հոդին հատուկ գործոնների ճշգրտումներ, այդ թվում հողամասի չափը, գտնվելու վայրը, գրավադրումը և ներկայիս օգտագործումը և այլն:

Շենքերը վերագնահատվել են 2013թ.:

Նշանակալի չդիտարկվող ներդրումը՝ վերոնշյալ հոդին հատուկ գործոնների ճշգրտումն է: Այս ճշգրտումների ծավալն ու ուղղությունը կախված է դիտարկվող շուկայում նմանատիպ գույքի գործարքների քանակից և բնույթից, որոնք կիրառվում են որպես գնահատման մեկնարկային կետ: Չնայած նրան, որ այս ելակետային տվյալը սուբյեկտիվ դատողություն է, ղեկավարությունը գտնում է, որ ողջամտորեն հնարավոր այլընտրանքային ենթադրությունները նյութապես ազդեցություն չեն ունենա ընդհանուր գնահատման վրա:

32. Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հաշվանցում

Իր գործունեության ընթացքում Բանկը ֆինանսական գործիքների հետ իրականացնում է տարբեր գործառնություններ, որոնք կարող են ներկայացվել զուտ արժեքով, եթե գոյություն ունի օրենսդրորեն հաստատված իրավունք իրականացնելու հաշվառված գումարների հաշվանցում, ինչպես նաև մտադրություն իրականացնելու հաշվանցում կամ միաժամանակ իրացնելու ակտիվը և մարելու պարտավորությունը:

Ստորև բերված աղյուսակը ներկայացնում է ֆինանսական ակտիվներն ու ֆինանսական պարտավորությունները, որոնք հաշվանցված են ֆինանսական վիճակի մասին հաշվետվության մեջ, կամ ենթակա են կատարման համաձայն հաշվանցման գլխավոր համաձայնագրի կամ համանման պայմանագրերի, որը ներառում է նմանատիպ ֆինանսական գործիքները, անկախ այն բանից, դրանք հաշվանցվել են ֆինանսական վիճակի մասին հաշվետվության մեջ թե ոչ:

Հազար ՀՀ դրամ

	Ճանաչված ֆինանսական ակտիվների/ Պարտավորությունների համախառն գումար	Ճանաչված ֆինանսական ակտիվների/ Պարտավորությունների համախառն գումար	Ֆինանսական ակտիվների/ պարտավորությունների գուտ գումար ներկայացված ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում	31 դեկտեմբերի 2021թ.	
				Կապակցված գումարներ, որոնց գծով ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում հաշվանցում չի իրականացվել	Ֆինանսական Ստացված դրամական սպահովում
<i>Ֆինանսական ակտիվներ</i>					
Հակադարձ վաճառքի և հետգնման պայմանագրեր	22,831,551	-	22,831,551	(22,831,551)	-
<i>Ֆինանսական պարտավորություններ</i>					
Վարկեր ու պահ համաձայնագրերով	(143,594,992)	-	(143,594,992)	125,325,567	(18,269,425)

Հազար ՀՀ դրամ

	Ճանաչված ֆինանսական ակտիվների/ Պարտավորությունների համախառն գումար	Ճանաչված ֆինանսական ակտիվների/ Պարտավորությունների համախառն գումար	Ֆինանսական ակտիվների/ պարտավորությունների գուտ գումար ներկայացված ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում	31 դեկտեմբերի 2020թ.	
				Կապակցված գումարներ, որոնց գծով ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում հաշվանցում չի իրականացվել	Ֆինանսական Ստացված դրամական սպահովում
<i>Ֆինանսական ակտիվներ</i>					
Հակադարձ վաճառքի և հետգնման պայմանագրեր	23,077,469	-	23,077,469	(23,077,469)	-
<i>Ֆինանսական պարտավորություններ</i>					
Վարկեր ու պահ համաձայնագրերով	(98,370,112)	-	(98,370,112)	66,652,356	(31,717,756)

33. Ակտիվների և պարտավորությունների ժամկետային վերլուծություն

Հետևյալ աղյուսակը ներկայացնում է ֆինանսական ակտիվները և պարտավորություններն ըստ սպասվելիք մարման ժամկետների:

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2021թ.						
	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-ից մինչև 12 ամիս	Մինչև 12 ամիս, ենթահանրա գումար	1-ից 5 տարի	5 տարուց ավելի	12 ամսից ավելի, ենթահանրա գումար	Ընդամենը
<i>Ակտիվներ</i>							
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	54,385,807	-	54,385,807	-	-	-	54,385,807
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	7,994,119	3,940,137	11,934,256	2,804,498	-	2,804,498	14,738,754
Հաճախորդներին տրված վարկեր	112,178,411	104,896,168	217,074,579	175,411,583	172,753,700	348,165,283	565,239,862
Ածանցյալ ֆինանսական ակտիվներ	7,730	-	7,730	-	-	-	7,730
Ներդրումային արժեթղթեր	-	-	-	-	-	-	-
- Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	54,405	1,621,590	1,675,995	28,537,797	-	28,537,797	30,213,792
- Հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր	-	-	-	27,444,760	97,880,807	125,325,567	125,325,567
Այլ ֆինանսական ակտիվներ	1,633,253	-	1,633,253	-	-	-	1,633,253
	176,253,725	110,457,895	286,711,620	234,198,638	270,634,507	504,833,145	791,544,765
<i>Պարտավորություններ</i>							
Հազար ՀՀ դրամ							
31 դեկտեմբերի 2021թ.							
	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-ից մինչև 12 ամիս	Մինչև 12 ամիս, ենթահանրա գումար	1-ից 5 տարի	5 տարուց ավելի	12 ամսից ավելի, ենթահանրա գումար	Ընդամենը
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	91,668	-	91,668	-	-	-	91,668
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	161,321,350	38,512,841	199,834,191	15,763,884	13,113,711	28,877,595	228,711,786
Պարտավորություններ ՀՀ կառավարության նկատմամբ	529,946	103,798	633,744	133,800	-	133,800	767,544
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	228,303,805	213,545,141	441,848,946	91,323,225	23,487,123	114,810,348	556,659,294
Թողարկված պարտքային արժեթղթեր	-	-	-	2,671,942	8,200,718	10,872,660	10,872,660
Այլ ֆինանսական պարտավորություններ	1,019,299	-	1,019,299	915,681	-	915,681	1,934,980
	391,266,068	252,161,780	643,427,848	110,808,532	44,801,552	155,610,084	799,037,932
Զուտ Դիրք	(215,012,343)	(141,703,885)	(356,716,228)	123,390,106	225,832,955	349,223,061	(7,493,167)
Կուտակված ձեռքբերված	(215,012,343)	(356,716,228)		(233,326,122)	(7,493,167)		

Հազար ՀՀ դրամ

31 դեկտեմբերի 2020թ.

	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-ից մինչև 12 ամիս	Մինչև 12 ամիս, ենթահանրա գումար		5 տարուց ավելի	12 ամից ավելի, ենթահանրա գումար		Ընդամենը
			1-ից 5 տարի	1-ից 5 տարի		12 ամից ավելի	12 ամից ավելի	
<i>Ակտիվներ</i>								
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	87,914,454	-	87,914,454	-	-	-	-	87,914,454
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	22,800,303	4,357,765	27,158,068	3,201,873	-	3,201,873	30,359,941	
Հաճախորդներին տրված վարկեր	127,374,305	163,366,466	290,740,772	194,939,663	149,374,077	344,313,740	635,054,512	
Աձանցյալ ֆինանսական ակտիվներ	70,317	-	70,317	-	-	-	70,317	
Ներդրումային արժեթղթեր								-
- Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	50,752	629,569	680,321	-	-	-	680,321	
- Հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր	-	689,277	689,277	24,194,821	41,768,258	65,963,079	66,652,356	
Այլ ֆինանսական ակտիվներ	1,822,708	-	1,822,708	-	-	-	1,822,708	
	240,032,839	169,043,077	409,075,917	222,336,357	191,142,335	413,478,692	822,554,609	
<i>Պարտավորություններ</i>								
Աձանցյալ ֆինանսական պարտավորություններ	171,409	-	171,409	-	-	-	171,409	
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	125,777,362	34,557,279	160,334,641	17,749,192	13,365,197	31,114,389	191,449,030	
Պարտավորություններ ՀՀ կառավարության նկատմամբ	452,230	965	453,195	141,622	32,875	174,497	627,692	
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	278,726,964	215,452,718	494,179,682	99,284,187	10,169,238	109,453,425	603,633,107	
Թողարկված պարտքային արժեթղթեր	-	-	-	2,916,675	-	2,916,675	2,916,675	
Այլ ֆինանսական պարտավորություններ	1,034,887	59374	1,094,261	682,811	-	682,811	1,777,072	
	406,162,852	250,070,336	656,233,188	120,774,487	23,567,310	144,341,797	800,574,985	
Զուտ Դիրք	(166,130,013)	(81,027,259)	(247,157,272)	101,561,870	167,575,025	269,136,895	21,979,624	
Կուտակված ձեռքվածք	(166,130,013)	(247,157,272)		(145,595,401)	21,979,624			

34. Ռիսկի կառավարում

Բանկային գործունեությանը բնորոշ է ֆինանսական ռիսկերի բազմազանություն, և այդ գործունեությունը ենթադրում է ռիսկերի որոշակի աստիճանի և համադրությունների վերլուծություն, գնահատում, ընդունում և կառավարում:

Ռիսկերի կառավարման գործընթացը կազմակերպվում է Բանկի առաքելությանը, հիմնական ու միջանկյալ նպատակներին համահունչ և ուղղված է Բանկի ֆինանսական վիճակի բարելավմանը և հեղինակության բարձրացմանը:

Բանկում իրականացվող ռիսկերի կառավարման քաղաքականության հիմնական նպատակներն են բացահայտել, գնահատել և կառավարելի դարձնել բոլոր այն հնարավոր ռիսկերը, որոնք անմիջականորեն առնչվում են Բանկի գործունեության հետ, օժանդակել Բանկի ղեկավարությանը

կայացնել հնարավորինս օպտիմալ որոշումներ, նպաստել Բանկի գործունեության ռազմավարական և մարտավարական իրատեսական պլանավորմանը, հաշվի առնելով ռիսկ/եկամտաբերություն ընդունելի հարաբերակցության սկզբունքները՝ ստանձնել կառավարելի ռիսկեր, սահմանել ռեսուրսների տեղաբաշխման նախընտրելի ոլորտները, ապահովել ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված նորմատիվների, ինչպես նաև Բանկի կողմից սահմանված ներքանկային նորմատիվների պահպանումը:

Բանկում իրականացվող ռիսկերի կառավարման քաղաքականությունը բխում է հետևյալ հիմնական սկզբունքներից.

- ✓ Ռիսկերի կառավարումը պետք է լինի կանխարգելող և հիմնավորված.
- ✓ Ռիսկերը պետք է հնարավորինս ամբողջությամբ բացահայտվեն, օբյեկտիվորեն գնահատվեն և արդյունավետորեն կառավարվեն.
- ✓ Բացահայտված ռիսկերին արձագանքելիս ռիսկերի կառավարման/հսկողության ծախսերը և ան-ցանկալի դեպքերի ի հայտ գալու հետևանքները պետք է կշռվեն ռիսկի նվազեցման արդյունքում ակնկալվող օգուտների հետ.
- ✓ Ռիսկերի կառավարումը կարող է ներառել այնպիսի մոտեցումներ, ինչպիսիք են՝ ռիսկերի նվազեցմանն ուղղված ընթացակարգերը, ռիսկի փոխանցումը երրորդ անձանց, օրինակ՝ ապահովագրության միջոցով, և ռիսկերի ընդունումը, երբ դրանց նվազեցման ծախսերը գերազանցում են գնահատված կորուստները կամ դրանց նվազեցումը գործնականորեն անհնար է: Այս նպատակով սահմանվում է ռիսկի ընդունելի մակարդակը:

Բանկի ռիսկերի բացահայտումը, չափումը, վերահսկումը և մոնիտորինգը կրում են պարբերական և շարունակական բնույթ: Բանկում իրականացվող ռիսկերի կառավարման քաղաքականությունը թույլ է տալիս հնարավոր ռիսկերով պայմանավորված կորուստների բացառման կամ դրանց նվազագույնի հասցնելու միջոցով արդյունավետ կառավարել Բանկի և Բանկի հաճախորդների ակտիվների և պարտավորությունների հետ առնչվող ռիսկերը՝ ապահովելով շահութաբերության, իրացվելիության և վճարունակության ընդունելի մակարդակ:

Բանկում ռիսկերի կառավարումն իրականացվում է հստակ և փաստաթղթավորված կերպով նկարագրված բոլոր բիզնես գործընթացների, վերջիններիս գործունեությունը կանոնակարգող ներքին իրավական ակտերի, բոլոր գործընթացների և գործառնությունների համար սահմանված համապատասխան սահմանաչափերի միջոցով:

Ռիսկերի կառավարման կառուցվածք

Բանկում պատշաճ ռիսկերի կառավարման համակարգի ձևավորման, կենսագործունեության և արդյունավետության համար պատասխանատու են Բանկի խորհուրդը, Վարչությունն ու Վարչության նախագահը, Բանկի ղեկավարները՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված ներքին իրավական ակտերով սահմանված իրենց պարտականությունների շրջանակներում:

Ռիսկերի կառավարման հանձնաժողով և Ռիսկերի կառավարման ստորաբաժանում

Բանկում ռիսկերի կառավարման քաղաքականության իրականացման համար պատասխանատու են Բանկի Ռիսկերի կառավարման հանձնաժողովը և Ռիսկերի կառավարման ստորաբաժանումը: Ռիսկերի կառավարման ստորաբաժանման կողմից շարունակաբար վերահսկվում են Բանկի ստանձնած ռիսկերի մակարդակները և դրանց գծով նախանշված սահմանաչափերի պահպանումը, տարբեր սթրես-թեստերի իրականացման միջոցով գնահատվում են հնարավոր ռիսկերի ազդեցությունը Բանկի գործունեության վրա:

Ռիսկերի կառավարման ստորաբաժանման (նաև այլ շահագրգիռ ստորաբաժանումների) կողմից ներկայացվող Բանկի գործունեությանն առնչվող ռիսկերի վերաբերյալ հաշվետվությունները, վերլուծություններն ու առաջարկությունները քննարկվում են Ռիսկերի կառավարման հանձնաժողովի նիստերին և ներկայացվում են Բանկի վարչությանը՝ համապատասխան որոշում ընդունելու նպատակով:

Ներքին աուդիտ

Բանկի կողմից իրականացվող ռիսկի կառավարման գործընթացը յուրաքանչյուր տարի աուդիտի է ենթարկվում ներքին աուդիտի վարչության կողմից, որը ստուգում է ինչպես ընթացակարգերի ամբողջականությունը և արդյունավետությունը, այնպես էլ Բանկի գործունեության համապատասխանությունը ընթացակարգերին: Ներքին աուդիտի վարչության անցկացված ստուգումների արդյունքները քննարկում է ղեկավարության հետ և իր եզրակացություններն ու առաջարկները ներկայացնում է Բանկի խորհուրդ:

Ռիսկերի բնորոշում և գնահատում

Կախված տարատեսակ գործոններից՝ Բանկը նպատակահարմար է գտնում բանկային ռիսկերը բաժանել արտաքին և ներքին ռիսկերի:

Արտաքին ռիսկերն են՝ երկրի, գնային, մրցակցային և ֆորսմաժորային ռիսկերը:

Ներքին ռիսկերն են՝ վարկային, իրացվելիության, տոկոսադրույքի, արտարժույթային, գործառնական, անձնակազմի և փողերի լվացման ռիսկերը:

Երկրի ռիսկ

Երկրի ռիսկը Բանկը կառավարում է՝ օգտվելով միջազգային վարկանիշային գործակալությունների (Moody's, S&P, Fitch) կողմից միջազգային բանկերին և կազմակերպություններին շնորհված վարկանիշներից: Ռիսկերի կառավարման ստորաբաժանումը կատարում է Բանկի կոնտրազենտ արտասահմանյան բանկերի վարկանիշների պարբերական մոնիտորինգ:

Գնային ռիսկ

Գնային ռիսկի հնարավոր նվազագույն մակարդակն ապահովվում է հետևյալ միջոցառումների շրջանակներում՝ ֆինանսական շուկայի կառուցվածքային, ծավալային և գնային ցուցանիշների դինամիկայի, առանձին ֆինանսական գործիքների իրացվելիության վերլուծություն, առկա միտումների բացահայտում, հնարավոր կորուստների գնահատում ամսական կտրվածքով կիրառվող սթրես թեստերի միջոցով, ֆինանսական գործիքների գծով լիմիտների (ըստ արժեթղթերով գործառնության տեսակի, ըստ դիվերսի, ըստ թողարկողի) սահմանում:

Մրցակցային ռիսկ

Մրցակցային ռիսկի կառավարումը Բանկում իրականացվում է բիզնես ստորաբաժանումների և Մարքեթինգային հետազոտությունների բաժնի կողմից, պարբերաբար պարբերաբար իրականացվող Բանկի և այլ բանկերի կողմից առաջարկվող ծառայությունների տեսականու և պայմանների համեմատության միջոցով:

Ֆորսմաժորային ռիսկ

ISO 27001-2005-ի պահանջներին համապատասխան Բանկն ունի սերվերային պահուստային կենտրոն: Կենտրոնի տեղակայվածությունը Բանկի գլխավոր գրասենյակից դուրս, հեռու տարածքում, թույլ կտա ապահովել Բանկի գործունեությունը ֆորսմաժորային իրավիճակների ժամանակ:

Վարկային ռիսկ

Վարկային ռիսկերի կառավարման գլխավոր խնդիրը Բանկի համար հանդիսանում է վարկային ռիսկերի ժամանակին բացահայտումը, գնահատումը և դրանց նվազեցման ուղղությամբ համապատասխան քայլերի իրականացումը:

Բանկում վարկային ռիսկը գնահատվում է ինչպես յուրաքանչյուր վարկառուի, այնպես էլ ամբողջ վարկային պորտֆելի գծով: Բանկի կողմից մշակված համապատասխան մեթոդաբանության համաձայն՝ նախքան վարկի տրամադրումը, գնահատվում է պոտենցիալ վարկառուի վարկունակությունը: Վարկային ռիսկի կանխարգելման տեսանկյունից, վարկավորման ժամանակ էապես կարևորվում է այնպիսի սկզբունքների պահպանումը, ինչպիսիք են վարկի ապահովվածությունն ու նպատակայնությունը: Վարկի տրամադրումից հետո, վարկային

պայմանագրի գործողության ամբողջ ընթացքում, Բանկի կողմից իրականացվում է վարկի մոնիթորինգ՝ վարկառուի վճարունակությունը և վարկի ապահովվածությունը պարբերաբար գնահատելու և հնարավոր վարկային ռիսկի զսպման ուղղությամբ համապատասխան քայլեր ձեռնարկելու նպատակով: Պարբերաբար վերլուծության է ենթարկվում նաև Բանկի ընդհանուր վարկային պորտֆելը ըստ տնտեսության ճյուղերի, հաճախորդների և վարկատեսակների՝ պորտֆելի ռիվերսիֆիկացիան և որակը ապահովելու նպատակով:

Վարկային ռիսկի զսպման գործում Բանկում խիստ կարևորվում է նաև Վարկային կոմիտեի գործունեությունը: Վարկային կոմիտեն հանդիսանում է Բանկի վարկային քաղաքականությունն իրականացնող մարմին, որի նպատակն է Բանկի վարկային գործունեության կառավարումը և որակյալ վարկային պորտֆելի ձևավորումը: Վարկային կոմիտեի հիմնական խնդիրն է կայացնել վարկային ռիսկ պարունակող գործարքների իրականացման և սպասարկման հետ կապված մասնագիտական կոլեգիալ արձանագրային կամ վերջնական որոշում:

Իրացվելիության ռիսկ

Բանկում իրացվելիության կառավարման նպատակն է՝ ստեղծել այնպիսի ֆինանսական կարողությունների ամբողջություն, որը հնարավորություն կտա առանց լուրջ հիմնախնդիրների բավարարելու բոլոր տեսակի կրեդիտորների, ավանդատուների և այլ հաճախորդների օրինական դրամական պահանջները, որոնք կարող են արտացոլված լինել Բանկի հաշվեկշռային և հետհաշվեկշռային հոդվածներում, ինչպես նաև այս ամենի հետ մեկտեղ ապահովել շահութաբերության հնարավոր առավելագույն մակարդակ:

Բանկում սահուն իրացվելիության ապահովման և իրացվելիության ռիսկի արդյունավետ կառավարման նպատակով իրականացվում է ակտիվների և պասիվների փոխհամաձայնեցված կառավարում՝ ապահովելով.

- ✓ բարձր իրացվելի ակտիվների բավարար առկայություն,
- ✓ ռեսուրսների կայունություն,
- ✓ ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության ճեղքվածքների ընդունելի սահմանաչափեր,
- ✓ արտաքին աղբյուրներից միջոցներ ներգրավելու հնարավորություններ:

Բանկում իրացվելիության կառավարման ճիշտ որոշումներ ընդունելու գործում հատկապես կարևորվում է ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության վերլուծությունը, որն իրականացվում է ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության ճեղքվածքների (GAP) հաշվարկման մոդելով՝ ակնթարթային (ցպահանջ) և կուտակային տարանջատումներով: Ակնթարթային իրացվելիությունը հաշվարկվում է ամենօրյա կտրվածքով՝ իրավիճակային ճիշտ որոշումներ կայացնելու նպատակով:

34.1 Պարտքային ռիսկ

Բանկի գործունեությունը ենթարկվում է պարտքային ռիսկի՝ կապված վարկառուի կողմից պարտավորության չկատարելու հետ, որը Բանկին կորուստներ կարող է պատճառել: Պարտքային ռիսկը Բանկի կարևորագույն ռիսկն է, այդ պատճառով էլ Բանկն այն առանձնակի ուշադրությամբ է վերահսկում: Պարտքային ռիսկը կապված է հիմնականում վարկային գործառնությունների հետ, որոնք հանգեցնում են վարկերի տրամադրմանը և ներդրումային գործունեության հետ, որոնք Բանկի ակտիվների պորտֆելի մեջ ավելացնում են պարտքային արժեթղթեր և այլ պարտքային գործիքներ: Ռիսկն առկա է նաև արտհաշվեկշռային ֆինանսական գործիքներում, ինչպիսիք են վարկային պարտավորությունները: Բանկի Ռիսկերի կառավարման վարչության կողմից համապատասխան հաշվետվություններն ու վերլուծությունները պարբերաբար ներկայացվում են Բանկի Վարչությանը:

Բանկում վարկային ռիսկը կառավարվում է համաձայն Բանկի վարկային քաղաքականության և ոլորտը կարգավորող այլ ներքին իրավական ակտերի: Ռիսկերի կառավարման վարչության կողմից կատարվում է վարկային պորտֆելի օրական կտրվածքով մոնիթորինգ, կառուցված շարքերի հիման

վրա վարկային պորտֆելի դինամիկայի հաշվարկ և պորտֆելի որակի վերլուծություն ըստ պրոդուկտների ու մասնաճյուղերի, ինչի հիման վրա կատարվում են վարկային պորտֆելի որակական ցուցանիշների կանխատեսումներ: Ռիսկերի կառավարման վարչությունը իրականացնում է նաև որոշ վարկատեսակների վարկերի մոնիտորինգ հաստատված ընթացակարգերով, իսկ հարկ եղած դեպքում այլ վարկեր էլնելով վարկառուի վարկունակության վատթարացումից: Բանկի տրամադրվող վարկերը հաստատվում են նաև ռիսկերի վարչության կողմից ներքին իրավական ակտերի պահանջների համաձայն նվազեցնելով վարկային ռիսկը:

34.1.1. Վարկերի որակի վերլուծություն

Հետևյալ աղյուսակը ներկայացնում է պարտքային ռիսկին ֆինանսական գործիքների ենթարկվածության վերլուծությունը, որոնց գծով ակնկալվող պարտքային կորուստների պահուստ է ճանաչվում: Ստորև բերված ֆինանսական ակտիվների համախառն հաշվեկշռային արժեքը ներկայացնում է Բանկի՝ այդ ակտիվների գծով պարտքային ռիսկի առավելագույն ենթարկվածությունը՝ հաշվի չառնելով որևէ ապահովվածություն կամ այլ բարելավումներ: Ստանձնված պարտավորվածությունների կամ երաշխիքների գումարները ներկայացնում են վարկային պարտավորվածությունների և ֆինանսական երաշխիքային պայմանագրերի գումարները:

Ներքին վարկանիշեր	31 դեկտեմբերի 2021թ.			31 դեկտեմբերի 2020թ.	
	Փուլ 1 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներ	Փուլ 2 Գործողության ամբողջ Ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստներ (չարժեզրկված ակտիվներ)	Փուլ 3 Գործողության ամբողջ Ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստներ (արժեզրկված ակտիվներ)	Ընդամենը	Ընդամենը
<i>Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ</i>					
Ստանդարտ	54,428,145	-	-	54,428,145	87,925,406
Համախառն հաշվեկշռային արժեք	54,428,145	-	-	54,428,145	87,925,406
Արժեզրկումից պահուստ	(42,338)	-	-	(42,338)	(10,952)
Զուտ հաշվեկշռային արժեք	54,385,807	-	-	54,385,807	87,914,454
<i>Պահանջներ բանկերի և ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ</i>					
Ստանդարտ	14,790,339	-	-	14,790,339	30,558,996
Համախառն հաշվեկշռային արժեք	14,790,339	-	-	14,790,339	30,558,996
Արժեզրկումից պահուստ	(51,585)	-	-	(51,585)	(199,055)
Զուտ հաշվեկշռային արժեք	14,738,754	-	-	14,738,754	30,359,941
<i>Հիփոթեքային և սպառողական վարկեր</i>					
Բարձր	101,610,397	-	-	101,610,397	98,615,592
Ստանդարտ	1,656,463	1,529,474	-	3,185,937	5,270,744
Ցածր	-	3,810,235	-	3,810,235	3,366,994
Չաշխատող	-	-	4,235,435	4,235,435	12,049,936
Համախառն հաշվեկշռային արժեք	103,266,860	5,339,709	4,235,435	112,842,004	119,303,266
Արժեզրկումից պահուստ	(977,712)	(981,053)	(2,391,928)	(4,350,693)	(6,851,371)
Զուտ հաշվեկշռային արժեք	102,289,148	4,358,656	1,843,507	108,491,311	112,451,895

Ներքին վարկանիշեր	Հազար ՀՀ դրամ		31 դեկտեմբերի 2021թ.		31 դեկտեմբերի 2020թ.	
	Փուլ 1 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներ	Փուլ 2 Գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստներ (չարժեզրկված ակտիվներ)	Փուլ 3 Գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստներ (արժեզրկված ակտիվներ)	Ընդամենը	Ընդամենը	Ընդամենը
<i>Առևտրային վարկեր</i>						
Բարձր	413,267,890	-	-	413,267,890	496,047,886	
Ստանդարտ	5,368,744	4,009,266	-	9,378,010	12,435,302	
Ցածր	-	15,176,020	-	15,176,020	18,482,015	
Չաշխատող	-	-	59,444,554	59,444,554	10,527,295	
Համախառն հաշվեկշռային արժեք	418,636,634	19,185,286	59,444,554	497,266,474	537,492,498	
Արժեզրկումից պահուստ	(4,834,240)	(4,054,985)	(31,628,698)	(40,517,923)	(14,889,880)	
Զուտ հաշվեկշռային արժեք	413,802,394	15,130,301	27,815,856	456,748,551	522,602,618	
<i>Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող պարտքային գործիքներ՝ ներառյալ գրավադրվածները</i>						
Ստանդարտ վարկանիշ	155,484,954	-	-	155,484,954	67,281,925	
Իրական արժեք	155,484,954	-	-	155,484,954	67,281,925	
Արժեզրկումից պահուստ	(162,973)	-	-	(162,973)	(95,413)	
<i>Այլ ֆինանսական ակտիվներ</i>						
Ստանդարտ	2,179,564	-	-	2,179,564	2,020,585	
Համախառն հաշվեկշռային արժեք	2,179,564	-	-	2,179,564	2,020,585	
Արժեզրկումից պահուստ	(546,311)	-	-	(546,311)	(197,877)	
Զուտ հաշվեկշռային արժեք	1,633,253	-	-	1,633,253	1,822,708	
<i>Վարկային պարտավորվածություններ ը և ֆինանսական երաշխիքներ</i>						
Ստանդարտ	70,394,453	-	-	70,394,453	81,178,532	
	70,394,453	-	-	70,394,453	81,178,532	
Արժեզրկումից պահուստ*	725,063	-	-	725,063	836,139	

*Վերոնշյալ աղյուսակում վարկային պարտավորվածություններ և տրամադրված երաշխիքներում բացահայտված ակնկալվող պարտքային կորուստների պահուստը վերաբերում է միայն տրամադրված երաշխիքներին: Վարկային պարտավորվածությունների վճարային քարտերի և օվերդրաֆտների գծով ակնկալվող պարտքային կորուստների պահուստը ներառված է վարկերի գծով ակնկալվող պարտքային կորուստների պահուստում, քանի որ Բանկը չի կարող վարկային պարտավորվածության բաղադրիչը տարանջատել ֆինանսական գործիքի բաղադրիչից և ակնկալվող պարտքային կորուստները ճանաչել առանձին-առանձին:

34.1.2 Արժեզրկման գնահատում

Ստորև բերված հղումները ցույց են տալիս, թե տվյալ հաշվետվության որ ծանոթագրություններում են բացահայտվում Բանկի՝ արժեզրկման գնահատման և չափման մոտեցումները: Այն պետք է ընթերցվի հաշվապահական հաշվառման քաղաքականության հետ միասին (տես 4.4.6 ծանոթագրությունը):

Պարտքային ռիսկի էական աճ

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ Բանկը գնահատում է, թե արդյոք էական է աճել ֆինանսական գործիքի պարտքային ռիսկը սկզբնական ճանաչումից հետո: Գնահատում կատարելիս, Բանկը օգտագործում է ֆինանսական գործիքի մարման ակնկալվող ժամկետի ընթացքում դեֆոլտի ռիսկի փոփոխությունները, այլ ոչ թե ակնկալվող պարտքային կորուստների գումարի փոփոխությունները:

Պարտքային ռիսկի էական աճը որոշելու համար, Բանկը հաշվի է առնում ապագային միտված ինչպես քանակական, այնպես էլ ապագային միտված որակական չափանիշներ:

Այնուամենայնիվ, եթե ապագային միտված տեղեկատվությունը (ինչպես անհատական, այնպես էլ խմբային կերպով) հասանելի չէ առանց չարդարացված ծախսերի կամ ջանքերի, Բանկը օգտագործում է ժամկետանց օրերի վերաբերյալ տեղեկատվությունը որոշելու համար, թե արդյոք առկա է պարտքային ռիսկի էական աճ սկզբնական ճանաչման պահից հետո:

Հաճախորդներին տրված վարկերի չափանիշներ

Ստորև ներկայացված են հաճախորդներին տրված վարկերի պարտքային ռիսկի էական աճի որոշման չափանիշները: Պարտքային ռիսկի էական աճը սահմանելիս ներկայացված բոլոր չափանիշներն ունեն նույն կշիռը:

- 30 օր ժամկետանց – Վարկերի ու փոխատվությունների 30 օրից ավել ժամկետանց լինելը պարտքային ռիսկի էական աճի ցուցիչ է:
- Ժամկետանց–30 օրից տարբերվող ժամկետանց: Պարտքային ռիսկի էական աճ է դիտարկվում այն դեպքում, եթե, չնայած հաշվետու ամսաթվի դրությամբ ժամկետանց օրերը 30-ից քիչ են, վերջին 6 ամսվա ընթացքում 60-ից ավել ժամկետանց օրերի առնվազն մեկ դեպք է գրանցվել:
- Համեմատական փոփոխություն 12-ամսյա դեֆոլտի հավանականության մեջ: 12-ամսյա դեֆոլտի հավանականության մեջ էական փոփոխությունը դիտարկվում է որպես դեֆոլտի հավանականության փոփոխություն գործիքի ամբողջ ժամկետի համար: Դա վկայում է պարտքային ռիսկի էական աճի մասին: Այս չափանիշը օգտագործվում է այն դեպքում, երբ Բանկը ունի վարկանիշային ներքին համակարգ:
- Դեֆոլտի հավանականության համեմատական փոփոխություն գործիքի ամբողջ ժամկետի համար - դեֆոլտի հավանականության էական աճը գործիքի ամբողջ ժամկետի համար վկայում է պարտքային ռիսկի էական աճի մասին: Այս չափանիշը օգտագործվում է այն դեպքում, երբ Բանկը ունի վարկանիշային ներքին համակարգ:
- Դեֆոլտ («փուլ 3») վերջին 12 ամիսների ընթացքում - գոյություն ունի պարտքային ռիսկի էական աճ, անկախ այն հանգամանքից, որ հաշվետու օրվա դրությամբ մնացորդները չեն դասակարգվում որպես դեֆոլտային, եթե մնացորդը վերջին 12 ամիսների ընթացքում ամենաքիչը մեկ անգամ գտնվել է 3-րդ փուլում:
- Փորձաշրջանում գտնող վարկեր. գոյություն ունի պարտքային ռիսկի էական աճ վերանայման պահին աշխատող կամ վերանայման պահին չաշխատող, այն վարկերի համար, որոնք գտնվում են փորձաշրջանում (առողջացման ժամանակաշրջանից հետո ընկած ժամանակաշրջան): Միաժամանակ այդ վարկերը չպետք է ունենան 30 օրից ավել ժամկետանց օր կամ քիչ հավանական վճարման որևէ չափանիշ:

Ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջների չափանիշներ

Ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջների պարտքային ռիսկի էական աճի որոշման չափանիշները ներկայացված են հետևյալ պարագրաֆներում: Պարտքային ռիսկի էական աճը սահմանելիս ներկայացված բոլոր չափանիշներն ունեն նույն կշիռը:

- 30 օր ժամկետանց – Վարկերի ու փոխատվությունների 30 օրից ավել ժամկետանց լինելը պարտքային ռիսկի էական աճի ցուցիչ է:
- 7 և ավել ժամկետանց օրեր հաշվարկային և ընթացիկ հաշիվների համար - Հաշվարկային և ընթացիկ հաշիվների համար 7 և ավել ժամկետանց օրերը վկայում է պարտքային ռիսկի էական աճի մասին:
- Ժամկետանց – 30 օրից տարբերվող ժամկետանց: Պարտքային ռիսկի էական աճ է դիտարկվում այն դեպքում, եթե, չնայած հաշվետու ամսաթվի դրությամբ ժամկետանց օրերը 30-ից քիչ են, վերջին 6 ամսվա ընթացքում 60-ից ավել ժամկետանց օրերի առնվազն մեկ դեպք է գրանցվել:
- Արտաքին վարկանիշային ցուցանիշի փոփոխություն - այս չափանիշի շրջանակներում հաշվի է առնվում կորպորատիվ վարկանիշը: Վարկանիշային ցուցանիշի էական փոփոխությունը վարկանիշային գործակալության կողմից (Standard & Poor's, Moody's և Fitch) վկայում է պարտքային ռիսկի էական աճի մասին: Պարտքային ռիսկի էական աճը հաշվի է առնվում, երբ ըստ S&P գործակալության սխեմայի (կամ համարժեք Moody's և Fitch գործակալությունների սխեմաներով) վարկանիշային ցուցանիշը սկսած BB մակարդակից ամեն անգամ մեկ մակարդակով իջնում է: Այն դեպքերում, երբ ֆինանսական հաստատությունները չունեն կորպորատիվ վարկանիշ վերոնշյալ վարկանիշային գործակալությունների կողմից և բանկը չունի համարժեք ներքին վարկանիշային համակարգ, կիրառվում է կորպորատիվ դեֆոլտի վարկանիշը, որը համապատասխանում է տվյալ երկրի սուվերեն վարկանիշին:
- Համեմատական փոփոխություն 12-ամսյա դեֆոլտի հավանականության մեջ: 12-ամսյա դեֆոլտի հավանականության մեջ էական փոփոխությունը դիտարկվում է որպես դեֆոլտի հավանականության փոփոխություն գործիքի ամբողջ ժամկետի համար: Դա վկայում է պարտքային ռիսկի էական աճի մասին: Այս չափանիշը օգտագործվում է այն դեպքում, երբ Բանկը ունի վարկանիշային ներքին համակարգ:
- Դեֆոլտի հավանականության համեմատական փոփոխություն գործիքի ամբողջ ժամկետի համար - դեֆոլտի հավանականության էական աճը գործիքի ամբողջ ժամկետի համար վկայում է պարտքային ռիսկի էական աճի մասին: Այս չափանիշը օգտագործվում է այն դեպքում, երբ Բանկը ունի վարկանիշային ներքին համակարգ:
- Դեֆոլտ («փուլ 3») վերջին 12 ամիսներին նթացքում - գոյություն ունի պարտքային ռիսկի էական աճ, անկախ այն հանգամանքից, որ հաշվետու օրվա դրությամբ մնացորդները չեն դասակարգվում որպես դեֆոլտային, եթե մնացորդը վերջին 12 ամիսների ընթացքում ամենաքիչը մեկ անգամ գտնվել է 3-րդ փուլում:

Ներդրումային արժեթղթերի չափանիշներ

Ստորև ներկայացված են արժեթղթերի պարտքային ռիսկի էական աճի որոշման չափանիշները, որոնք բոլորն էլ որոշման մեջ ունեն հավասար կշիռ.

- 12-ամսյա դեֆոլտի հավանականության համեմատական փոփոխություն - 12-ամսյա դեֆոլտի հավանականության էական փոփոխությունը դիտարկվում է որպես դեֆոլտի հավանականության փոփոխություն գործիքի ամբողջ ժամկետի համար: Դա վկայում է պարտքային ռիսկի էական աճի մասին: Այս չափանիշը օգտագործվում է այն դեպքում, երբ Բանկը ունի վարկանիշային ներքին համակարգ:
- Դեֆոլտի հավանականության համեմատական փոփոխություն գործիքի ամբողջ ժամկետի համար - դեֆոլտի հավանականության էական աճը գործիքի ամբողջ ժամկետի համար վկայում է

պարտքային ռիսկի էական աճի մասին: Այս չափանիշը օգտագործվում է այն դեպքում, երբ Բանկը ունի վարկանիշային ներքին համակարգ:

- Արտաքին վարկանիշային ցուցանիշի փոփոխություն - այս չափանիշի շրջանակներում հաշվի է առնվում երկրի (սուվերեն) վարկանիշը: Վարկանշային ցուցանիշի էական փոփոխությունը վարկանիշային գործակալության կողմից (Standard & Poor's, Moody's և Fitch) վկայում է պարտքային ռիսկի էական աճի մասին: Պարտքային ռիսկի էական աճը հաշվի է առնվում, երբ ըստ S&P գործակալության սխեմայի (կամ համարժեք Moody's և Fitch գործակալությունների սխեմաներով) վարկանիշային ցուցանիշը սկսած B2 մակարդակից ամեն անգամ մեկ մակարդակով իջնում է: Այն դեպքերում, երբ ֆինանսական հաստատությունները չունեն կորպորատիվ վարկանիշ վերոնշյալ վարկանիշային գործակալությունների կողմից և Բանկը չունի համարժեք ներքին վարկանիշային համակարգ, կիրառվում է կորպորատիվ դեֆոլտի վարկանիշը, որը համապատասխանում է տվյալ երկրի սուվերեն վարկանիշին:

Էական վատթարացման կարգավիճակից դուրս գալու չափանիշներ

Եթե առկա չէ Բանկի կողմից պարտքային ռիսկի էական աճի որոշման չափանիշներից որևիցե մեկը, ապա տեղի է ունենում փուլ 2-ից անցում փուլ 1-ին, բացառությամբ վերանայված պարտքերի, որոնց համար կիրառվում է փորձաշրջան:

Պարտքային ռիսկի մակարդակներ

Բանկը առանձնացնում է պարտքային ռիսկի մակարդակները տարբեր տվյալների հիման վրա, որոնք կանխատեսում են դեֆոլտի ռիսկը և հիմնվում են վարկային փորձված դատողության վրա: Պարտքային ռիսկի մակարդակները սահմանվում են որակական և քանակական (հիմնականում ժամկետանց օրերով պայմանավորված) գործոններով, որոնք մատնանշում են դեֆոլտի ռիսկը: Այս գործոնները տարբերվում են կախված ռիսկի բնույթից և փոխառուի տեսակից:

Խմբային կամ անհատական գնահատում

Բանկը ակնկալվող պարտքային կորուստները հաշվարկում է անհատական կամ խմբային հիմունքներով: Ակտիվների դասերը, որտեղ ակնկալվող պարտքային կորուստների հաշվարկները կատարվում են անհատական հիմունքներով, ներառում են.

- փուլ 3-ում գտնվող անհատապես նշանակալից վարկեր՝ ֆինանսական ակտիվների դասից անկախ,
- խոշոր և առանձնահատուկ վարկեր
- գանձապետական, առևտրային և միջբանկային հարաբերություններ, ինչպիսիք են բանկերում պահվող միջոցները, հետզման պայմանագրերով գրավադրված արժեթղթերը և ամորտիզացված արժեքով/իրական արժեքով՝ այլ համապատասխան արդյունքների միջոցով չափվող պարտքային գործիքները,
- Մնացորդներ, որոնք դասակարգվել են որպես ձեռքբերված կամ ստեղծված արժեզրկված, եթե սկզբնական վարկը ապաճանաչվել է, իսկ նոր վարկը ճանաչվել է պարտքի վերակազմավորման արդյունքում:

Բանկը խմբավորում է ակտիվները, որոնց ակնկալվող պարտքային կորուստները չեն հաշվարկվում անհատական հիմունքներով, ըստ համանման պարտքային ռիսկով առանձին դասերի՝ հիմնվելով վարկերի բնութագրերի վրա, ինչպես օրինակ՝

- վարկի տեսակը (կորպորատիվ, հիփոթեք, վարկային քարտ, սպառողական վարկ և այլն)
- հաճախորդի տեսակը (օրինակ՝ ֆիզիկական անձ կամ իրավաբանական անձ կամ ըստ տնտեսության ճյուղի),
- գրավի տեսակը (օրինակ՝ գույք, ստացվելիք գումարներ և այլն),
- արժույթ
- այլ բնորոշ հատկանիշներ:

Ղեֆոլտի սահմանում և «առողջացում»

Բանկը համարում է ֆինանսական գործիքը ղեֆոլտի ենթարկված, և, հետևաբար, Փուլ 3-ում դասակարգված (արժեզրկված)՝ ակնկալվող պարտքային կորուստների հաշվարկների համար, բոլոր այն դեպքերում, երբ փոխառուի պայմանագրային վճարումները 90 օր ժամկետանց են:

Բանկը միջբանկային հաշիվները համարում է ղեֆոլտի ենթարկված և անհապաղ գործողություններ է կատարում, երբ պահանջվող վճարումները չեն կատարվում մինչև աշխատանքային օրվա ավարտը, ինչպես նշված է անհատական պայմանագրերով:

Որպես որակական գնահատման մի մաս՝ առ այն՝ արդյոք հաճախորդը վճարունակ է, Բանկը նաև դիտարկում է տարբեր դեպքեր, որոնք կարող են մատնացույց անել «քիչ հավանական վճարման» կարգավիճակը: Նման դեպքերում Բանկը մանրամասն դիտարկում է, թե արդյոք այդ իրադարձությունը կարող է հանգեցնել հաճախորդի՝ ղեֆոլտի ենթարկված լինելուն, և, հետևաբար, գնահատվում է արդյոք պետք է վարկը դասակարգել Փուլ 3-ում՝ ակնկալվող պարտքային կորուստների հաշվարկների համար, թե արդյոք Փուլ 2-ում դասակարգումը բավարարում է: Նման իրադարձությունները ներառում են.

- դատավարություն, պարտքի հավաքագրման համար իրավական գործողությունների կատարում կամ հարկադիր կատարում,
- պարտապանի լիցենզիայի կասեցում,
- վարկառուի համարվում է համավարկառու, երբ հիմնական վարկառուի ղեֆոլտում է,
- նույն մնացորդի բազմակի վերաձևակերպում,
- կան հիմնավոր մտավախություններ վարկառուի ապագա ունակության վերաբերյալ՝ կայուն և բավարար դրամական հոսքերի ստեղծման հետ կապված,
- վարկառուի վարկերի օգտագործման մակարդակը՝ վարկային լծակը, զգալիորեն ավելացել է կամ առկա են վարկային լծակի նման փոփոխության համար արդարացված սպասումներ. հաշվետու ժամանակահատվածում կապիտալը 50%-ով կրճատվել է վնասների պատճառով,
- պարտքերի ծածկման գործակիցը ցույց է տալիս, որ պարտքը կայուն չէ,
- հիմնական հաճախորդի կամ վարձակալի կորուստ,
- փոխկապակցված և կարևոր հաճախորդ դիմել է սնանկ ճանաչվելու համար,
- վերաձևակերպում՝ վարկի զգալի մասի զիջմամբ,
- վարկային կազմակերպությունը սնանկության գործառույթ է սկսում փոխառուի նկատմամբ:

Ըստ Բանկի քաղաքականության՝ ֆինանսական գործիքը համարվում է «առողջացած», և հետևաբար վերադասակարգվում Փուլ 3-ից, եթե առնվազն երեք անընդմեջ ամիսների ընթացքում ղեֆոլտի սահմանված չափանիշներից որևէ մեկը բացակայել է: Ակտիվի՝ առողջանալուց հետո Փուլ 2-ում կամ Փուլ 1-ում դասակարգելու որոշումը կախված է առողջացման պահին ճշգրտված ռիսկի մակարդակից, և արդյոք սա նշանակում է, որ սկզբնական ճանաչման համեմատ եղել է պարտքային ռիսկի զգալի աճ: Բանկի՝ ակնկալվող պարտքային կորուստների «առողջացման» չափանիշն ավելի մեղմ է, քան վերանայված և չաշխատող պարտքերի վերաբերյալ 12-ամսյա պահանջը:

Վերանայված և փոփոխված վարկեր

Բանկը երբեմն զիջումներ կամ փոփոխություններ է կատարում վարկի սկզբնական պայմաններում՝ արձագանքելով վարկառուի ֆինանսական դժվարություններին՝ գրավը սեփականություն վերցնելու կամ այլ կերպ այն հավաքագրելու փոխարեն: Բանկը համարում է վարկը վերանայված այն ժամանակ, երբ կատարում է զիջումներ կամ փոփոխություններ՝ ելնելով վարկառուի ներկա կամ կանխատեսվող ֆինանսական դժվարություններից, և դրանք չէր կատարի, եթե վարկառուն ֆինանսապես առողջ լիներ: Ֆինանսական դժվարությունների ցուցիչներ են ֆինանսական ցուցանիշների ձախողումները կամ պարտքային ռիսկերի բաժնի կողմից բարձրացված էական մտահոգությունները: Վերանայման միջոցառումները կարող են ընդգրկել վճարման պայմանավորվածությունների երկարաձգում և վարկավորման նոր պայմանների համաձայնեցում: Պայմանների վերանայումից հետո ցանկացած արժեզրկում չափվում է արդյունավետ տոկոսադրույքի կիրառմամբ, որը հաշվարկվում է

պայմանների փոփոխությունից առաջ: Դա Բանկի՝ վերանայված վարկերի վերահսկման քաղաքականությունն է, ինչը կօգնի ապահովել ապագա վճարումների հավանականությունը: Ապաճանաչման վերաբերյալ որոշումները և Փուլ 2-ի ու Փուլ 3-ի միջև դասակարգումը կատարվում է դեպք առ դեպք:

Բանկը «առողջացման» ժամանակաշրջան է սահմանում վերանայումից հետո ընկած 12-ամսյա ժամանակաշրջանը, որը կիրառվում է միայն վերանայված և չաշխատող պարտքերի համար (բացառելով արտոնյալ ժամանակահատվածը): Հաշվի առնելով այն հանգամանքը, որ վերանայումից անմիջապես հետո հնարավոր չէ որոշել ֆինանսական դժվարությունների առկայությունը՝ անհրաժեշտ է օգտագործել «առողջացման» ժամանակաշրջանը՝ որոշելու համար արդյոք պարտքն արդյունավետ է «առողջացել»: Այսպիսով, բոլոր վերանայված և չաշխատող պարտքերը վերանայումից հետո՝ «առողջացման» ժամանակաշրջանում, պետք է մնան 3-րդ փուլում, անկախ պարտավորության դրական դրսևորումից (ժամկետանց օրերի բացակայություն և այլն):

Բանկը փորձաշրջան է համարում «առողջացման» ժամանակաշրջանից հետո ընկած 24-ամսյա ժամանակաշրջանը, որը կիրառվում է վերանայված և աշխատող պարտքերի համար: Ակտիվը՝ որպես վերանայված և աշխատող պարտքեր դասակարգվելուց հետո շարունակում է մնալ առնվազն 24-ամսյա փորձաշրջանում որպես վերանայված:

Որպեսզի վարկը չդասակարգվի վերանայված կատեգորիայում, հաճախորդը պետք է համապատասխանի բոլոր հետևյալ չափանիշներին.

- իր բոլոր պարտքերը պետք է դիտարկվեն աշխատող,
- երկու տարվա փորձաշրջանն ավարտվում է այն օրը, երբ վերանայման պայմանագիրը համարվում է աշխատող,
- փորձաշրջանի ժամկետի առնվազն կեսի ընթացքում ոչ էական համարվող մայր գումարի կամ տոկոսագումարի կանոնավոր վճարումներ,
- հաճախորդը չունի որևէ պայմանագիր, որը ավելի քան 30 օր ժամկետանց է:

Եթե փոփոխությունները զգալի են, վարկը ապաճանաչվում է, ինչպես բացատրվում է 4.4.4 ծանոթագրությունում:

Դեֆոլտի հավանականություն (PD)

PD- ն ներկայացնում է վարկառուի կողմից իր ֆինանսական պարտավորությունները կա՛մ առաջիկա 12 ամիսների (12mECL), կա՛մ պարտավորության գործողության ամբողջ ժամկետի (LTECL) ընթացքում չկատարելու հավանականությունը:

Գործողության ամբողջ ժամկետի ընթացքի PD հաշվարկվում է կիրառելով ժամկետայնության կառուցվածքը 12-ամսյա PD-ի վրա: Ժամկետայնության կառուցվածքը ցույց է տալիս, թե ինչպես է փոխվում պորտֆելի դեֆոլտ հավանականությունը՝ սկզբնական ճանաչման պահից սկսած՝ վարկի գործողության ամբողջ ժամկետի ընթացքում: Ժամկետայնության կառուցվածքը հիմնված է պատմականորեն դիտարկված տվյալների վրա և ենթադրվում է, որ նույնն է պորտֆելի և վարկային դասի խմբի բոլոր ակտիվների համար: Մա հաստատվում է պատմական վերլուծությունների հիման վրա:

Վնաս դեֆոլտի ժամանակ (LGD)

LGD- ն որոշվում է այն գործոնների հիման վրա, որոնք ազդում են դեֆոլտից հետո իրականացվող վերականգնումների վրա: Դրանք տարբերվում են ըստ ֆինանսական գործիքի տեսակի.

- ապահովված ֆինանսական գործիքների համար սա առաջին հերթին հիմնված է գրավի տեսակի և դրա կանխատեսվող արժեքների, պարտադիր վաճառքների դեպքում շուկայական/հաշվեկշռային արժեքների պատմական զեղչերի, բռնագանձման ժամանակահատվածի և դիտարկվող փոխհատուցման ծախսերի վրա:
- Չապահովված ֆինանսական գործիքների դեպքում LGD- ն սովորաբար սահմանվում է ըստ գործիքի տեսակի՝ տարբեր փոխառուների վերականգնման սահմանափակ տարբերակման պատճառով: LGD-ի վրա ազդում է հավաքագրման ռազմավարությունը՝ ներառյալ պայմանագրային պարտքերի վաճառքը և գինը:

Դեֆոլտի դեպքում ռիսկի տակ գտնվող գումար (EAD)

12-ամսյա և գործողության ամբողջ ժամկետի ընթացքում EAD- ները որոշվում են ակնկալվող վճարումների հիման վրա, որը տարբերվում է ըստ ֆինանսական գործիքի տեսակի.

- Պայմանագրային ժամկետ ունեցող ֆինանսական գործիքների դեպքում դա հիմնված է փոխառուի կողմից 12 ամսվա կամ ամբողջ ժամկետի ընթացքում իրականացվելիք պայմանագրային մարումների վրա: Սա նաև ճշգրտվում է փոխառուի կողմից կատարվելիք ակնկալվող գերավճարներով: Հաշվարկի մեջ ներառվում են նաև վաղաժամկետ մարման/վերաֆինանսավորման հետ կապված ենթադրությունները:
- Վերականգնվող ֆինանսական գործիքի համար դեֆոլտի ռիսկին ենթարկվածությունը կանխորոշվում է՝ ընթացիկ մնացորդային հաշվեկշռին գումարելով «վարկի շրջանառելիության գործակիցը», ինչը հաշվի է առնում դեֆոլտի պահին մնացած սահմանաչափի ակնկալվող օգտագործումը: Այս ենթադրությունները տարբերվում են ըստ ֆինանսական գործիքի տեսակի և ընթացիկ սահմանաչափերի օգտագործման՝ հիմնվելով Բանկի դեֆոլտների վերջին տվյալների վերլուծության վրա:

Կանխատեսվող տեղեկատվություն

Ակնկալվող պարտքային կորուստների գնահատման մոտեցումը ներկայացվում է 4.4.6 ծանոթագրության գնահատումներում ու ենթադրություններում: Ամբողջականության և ճշգրտության ապահովման նպատակով Բանկը օգտագործում է տեղեկատվություն երրորդ կողմի աղբյուրներից (ՀԲ, ԿԲ, ՀՀ Կառավարություն և այլն): Մակրոտնտեսական գործոնների ազդեցության գնահատման նպատակով Բանկը որոշում է ընտրված մակրոտնտեսական գործոնների և կանխատեսված տարբեր սցենարների (բազային, լավատեսական և վատատեսական) կշիռները: Մակրոտնտեսական գործոնների ազդեցությունը ակնկալվող պարտքային կորուստների վրա հաշվարկելու համար Բանկն օգտագործում է կանխատեսվող տեղեկատվության լայն շրջանակ որպես ելակետային տվյալներ իր մոդելների համար, այդ թվում՝

- ՀՆԱ-ի աճ,
- Զուտ ընթացիկ արտասահմանյան տրանֆերտներ,
- Գործազրկության մակարդակ,
- Բանկի չաշխատող վարկերի մասնաբաժինն ընդհանուր տրված վարկերում
- Արտարժույթի պաշտոնական փոխարժեք

Հաշվետու ամսաթվի դրությամբ ակնկալվող պարտքային կորուստները չեն ճշգրտվել ապագա կանխատեսումների վրա հիմնված մակրոտնտեսական գործոնների միջև մեծ տարբերությունների պատճառով՝ պայմանավորված COVID-19 համավարակի հետ կապված իրավիճակով, Լեռնային Ղարաբաղի հակամարտությամբ և այլ հանգամանքներով:

34.1.3 Պարտքային ռիսկի առավելագույն չափի կենտրոնացումներ

Աշխարհագրական սեգմենտներ

Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի՝ պարտքային ռիսկերի կենտրոնացումները հաշվեկշռային արժեքներով՝ դասակարգված ըստ աշխարհագրական սեգմենտների:

Հազար ՀՀ դրամ	ՀՀ	ՏՀԶԿ	Ոչ ՏՀԶԿ Երկրներ	Ընդամենը
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	50,416,908	173,754	3,795,145	54,385,807
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	13,773,958	833,009	131,787	14,624,568
Հաճախորդներին տրված վարկեր	474,059,092	1,373,518	89,807,252	565,239,862
Ածանցյալ ֆինանսական ակտիվներ	7,730	-	-	7,730

«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ

**2021թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա
ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ**

Ներդրումային արժեթղթեր				
- Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	30,191,375	22,417	-	30,213,792
- Հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր	125,325,567	-	-	125,325,567
Այլ ակտիվներ	1,633,253	-	-	1,633,253
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	<u>695,407,883</u>	<u>2,402,698</u>	<u>93,734,184</u>	<u>791,544,765</u>
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	<u>718,198,534</u>	<u>6,652,196</u>	<u>97,703,879</u>	<u>822,554,609</u>

Ակտիվները դասակարգվում են՝ հիմք ընդունելով այն երկիրը, որտեղ գործընկեր կողմը գրանցված է:

Արդյունաբերության ճյուղեր

Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի՝ պարտքային ռիսկերի կենտրոնացումները հաշվեկշռային արժեքներով՝ դասակարգված ըստ տնտեսության ճյուղերի:

	Ֆինանսական կազմակերպու թյուններ	Արդյունաբ երություն	Շինարարո ւթյուն	Առևտուր	Մպատողակ ան ոլորտ	Հիփոթեք	Այլ	Ընդամենը
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	54,385,807	-	-	-	-	-	-	54,385,807
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	14,738,754	-	-	-	-	-	-	14,738,754
Հաճախորդներին տրված վարկեր	-	59,660,437	42,392,102	167,244,322	66,099,209	105,343,632	124,500,160	565,239,862
Ածանցյալ ֆինանսական ակտիվներ	7,730	-	-	-	-	-	-	7,730
- Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	54,405	-	-	-	-	-	30,159,387	30,213,792
- Հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր	-	-	-	-	-	-	125,325,567	125,325,567
Այլ ակտիվներ	-	-	-	-	-	-	1,633,253	1,633,253
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	<u>69,186,696</u>	<u>59,660,437</u>	<u>42,392,102</u>	<u>167,244,322</u>	<u>66,099,209</u>	<u>105,343,632</u>	<u>281,618,367</u>	<u>791,544,765</u>
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	<u>118,395,464</u>	<u>67,549,802</u>	<u>96,588,832</u>	<u>194,332,781</u>	<u>89,452,302</u>	<u>22,999,593</u>	<u>233,235,835</u>	<u>822,554,609</u>

34.1.4 Գրավ և վարկային ապահովման այլ միջոցներ

Պահանջվող գրավի գումարը և տեսակը կախված են փոխառուի պարտքային ռիսկի գնահատումից: Գոյություն ունեն գրավադրման յուրաքանչյուր տեսակի ընդունելիության և գնահատման վերաբերյալ ուղեցույցեր:

Ստացված գրավի հիմնական տեսակները հետևյալն են.

- արժեթղթերի փոխառության և հակադարձ հետգնման գործարքների դեպքում՝, դրամական միջոցներ կամ արժեթղթեր,
- առևտրային վարկերի դեպքում՝ անշարժ և շարժական գույք, սարքավորումներ, պաշարներ և առևտրային դեբիտորական պարտքեր, իսկ հատուկ հանգամանքներում՝ պետական երաշխիքներ,
- գրավադրմամբ սպառողական վարկերի դեպքում՝ անշարժ գույք
- հիփոթեքային վարկերի դեպքում՝ անշարժ գույք:

Բանկը նաև երաշխիքներ է ստանում մայր ընկերություններից իրենց դուստր ընկերությունների վարկերի համար: Ղեկավարությունը վերահսկում է գրավի շուկայական արժեքը և անհրաժեշտության դեպքում՝ ըստ հիմնական համաձայնագրի՝ պահանջում լրացուցիչ գրավ:

Բանկը չի ունեցել որևէ ֆինանսական գործիք, որի կորուստների գծով պահուստը ճանաչված չէ գրավի առկայության պատճառով:

Կորպորատիվ կազմակերպությունների երկարաժամկետ ֆինանսավորումը և վարկավորումը հիմնականում ապահովվում են գրավով, ֆիզիկական անձանց գծով վերականգնվող վարկային գծերը հիմնականում ապահովված չեն: Ի լրումն, վարկային կորուստը նվազագույնի հասցնելու համար Բանկը վարկառուից լրացուցիչ երաշխիքներ է պահանջում, հենց որ համապատասխան անհատական վարկերի արժեզրկման հատկանիշներ են նկատվում:

Վարկերից տարբեր ֆինանսական ակտիվներ ապահովող գրավները որոշվում են ֆինանսական գործիքի բնույթով: Հիմնականում ֆինանսական հաստատություններին, հատկապես բանկերին, վարկեր և կանխավճարներ տրամադրելու համար գրավներ չեն պահանջվում: Բացառություն են կազմում այն գրավները, որոնք ձեռք են բերվել ըստ հետգնման պայմանագրերի և արժեթղթերի փոխառության գործարքներից: Պարտատոմսերը և այլ պարտքային արժեթղթերը հիմնականում չեն ապահովվում:

Համախառն վարկային պորտֆելի վերլուծությունն ըստ ապահովվածության.

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2021թ.	31 դեկտեմբերի 2020թ.
Անշարժ գույք	93,083,585	100,724,837
Ոսկի	18,512,541	20,565,548
Արժեթղթեր	12,983,560	16,817,896
Կազմակերպությունների երաշխիքներ	86,454,507	169,539,905
Մեքենաներ	6,876,448	849,675
Դրամական միջոցներ	50,743,652	62,787,750
Պաշարներ	1,172,131	15,949,464
Այլ գրավ	340,282,054	269,560,689
Ընդամենը վարկեր (համախառն)	610,108,478	656,795,764

Վերը նշված աղյուսակում ներկայացված արժեքները վարկերի հաշվեկշռային արժեքներն են, և պարտադիր չէ ներկայացնեն գրավների իրական արժեքը: Գրավների շուկայական արժեքների գնահատումները հիմնված են գրավի գնահատման վրա ըստ տրամադրված վարկերի ամսաթվի: Հիմնականում դրանք չեն թարմացվում մինչև վարկերը չգնահատվեն, որպես անհատապես արժեզրկված:

34.2 Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկն այն ռիսկն է, որ ֆինանսական գործիքների ապագա դրամական միջոցների հոսքերը կամ իրական արժեքը կտատանվի այնպիսի շուկայական փոփոխականների պատճառով, ինչպիսիք են տոկոսադրույքները և արտարժույթի փոխարժեքները: Բանկը տարանջատում է

շուկայական ռիսկերը առևտրային և ոչ առևտրային պորտֆելների: Առևտրային պորտֆելի շուկայական ռիսկը կառավարվում և վերահսկվում է VaR մեթոդով, որը արտացոլում է ռիսկի փոփոխականների միջև կախվածությունը: Ոչ առևտրային պորտֆելը կառավարվում և վերահսկվում է զգայունության վերլուծությունների օգնությամբ: *Արտարժույթների կենտրոնացումներից բացի, Բանկը չունի շուկայական ռիսկի զգալի այլ կենտրոնացումներ:*

34.2.1 Շուկայական ռիսկ՝ Ոչ առևտրային

Տոկոսադրույքի ռիսկ

Բանկում տոկոսադրույքի ռիսկի կառավարման խնդիրն է՝ պահպանել ակտիվների ու պարտավորությունների տոկոսադրույքների սպրեդի և զուտ տոկոսային մարժայի նպատակային մակարդակները: Տոկոսադրույքի ռիսկի զսպման նպատակով Բանկում գործում են ակտիվների և պարտավորությունների գնագոյացման (տոկոսադրույքների սահմանման) հատուկ մշակված մեխանիզմներ:

Տոկոսադրույքի ռիսկի գնահատման հիմքում ընկած է տոկոսադրույքի նկատմամբ զգայուն ակտիվների և տոկոսադրույքի նկատմամբ զգայուն պարտավորությունների ժամկետայնության ճեղքվածքի (GAP) հաշվարկման մոդելը, որը թույլ է տալիս գնահատել տոկոսադրույքի փոփոխության ազդեցությունը Բանկի սպասվող զուտ տոկոսային եկամտի վրա: Բանկում տոկոսադրույքի ռիսկը գնահատվում է նաև դյուրացիայի մոդելով, որը ցույց է տալիս տոկոսադրույքի փոփոխության արդյունքում կապիտալի տնտեսական արժեքի փոփոխությունը՝ հաշվի առնելով ներգրավված պարտավորությունների և տեղաբաշխված ակտիվների ժամկետայնության անհամապատասխանությունը:

Արտարժույթի ռիսկ

Արտարժույթի ռիսկն այն ռիսկն է, որ ֆինանսական գործիքների արժեքը կտատանվի արտարժույթի փոխարժեքներում փոփոխությունների հետևանքով: Արտարժույթային ռիսկը Բանկը կառավարում է՝ օգտվելով ստանդարտ և ՎաՌ մեթոդաբանություններից: Օրական կտրվածքով կատարվում է արտարժույթային կուրսերի մոնիթորինգ, որի հիման վրա ամսվա վերջին գալիք ամսվա համար կատարվում է արտարժույթային փոխարժեքների կանխատեսում: Վարչությունը սահմանել է սահմանաչափեր արտարժույթային դիրքերի համար:

Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս այն արտարժույթները, որոնք կարող են ազդել 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի ոչ առևտրային դրամային ակտիվների և պարտավորությունների և դրանց կանխատեսված դրամական հոսքերի վրա: Վերլուծությունը հաշվարկում է արտարժույթի ՀՀ դրամի նկատմամբ հնարավոր տատանումների ազդեցությունը, այլ փոփոխականները հաստատուն մնալու պայմանով, ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության վրա (կապված արտարժույթի նկատմամբ զգայուն ոչ առևտրային դրամային ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի փոփոխմամբ) և կապիտալի վրա (կապված կապիտալի գործիքների իրական արժեքի փոփոխման հետ): Աղյուսակում հանդիպող բացասական արժեքը արտացոլում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում կամ կապիտալում պոտենցիալ զուտ նվազում, մինչդեռ դրական արժեքը ցույց է տալիս պոտենցիալ զուտ աճ:

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2021թ.			31 դեկտեմբերի 2020թ.		
	Փոփոխություն արտարժույթի փոխարժեքում, տոկոս	Ազդեցությունը շահույթի վրա մինչև հարկումը	Ազդեցությունը կապիտալի վրա	Փոփոխություն արտարժույթի փոխարժեքում, տոկոս	Ազդեցությունը շահույթի վրա մինչև հարկումը	Ազդեցությունը կապիտալի վրա
ԱՄՆդոլար	+5	(133,707)	(133,707)	+5	605,271	605,271
ԱՄՆդոլար	-5	133,707	133,707	-5	(605,271)	(605,271)
Եվրո	+8	3,403,375	3,403,375	+8	7,984,759	7,984,759
Եվրո	-8	(3,403,375)	(3,403,375)	-8	(7,984,759)	(7,984,759)

Բանկի արտարժույթի ռիսկի վերլուծությունն ունի հետևյալ տեսքը.

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2021թ.			
	ՀՀ դրամ	Ազատ փոխարկելի արժույթ/ թանկարժեք մետաղներ	Ոչ փոխարկելի արժույթ	Ընդամենը
<i>Ակտիվներ</i>				
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	27,834,446	24,341,955	2,209,406	54,385,807
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	10,870,959	3,726,395	141,400	14,738,754
Ածանցյալ ֆինանսական ակտիվներ	7,730	-	-	7,730
Հաճախորդներին տրված վարկեր	295,197,405	267,625,248	2,417,209	565,239,862
<i>Ներդրումային արժեթղթեր</i>				
- իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	30,213,792	-	-	30,213,792
- հետզման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր	124,469,576	855,991	-	125,325,567
Այլ ֆինանսական ակտիվներ	1,474,356	133,294	25,603	1,633,253
Ընդամենը	490,068,264	296,682,883	4,793,618	791,544,765
<i>Պարտավորություններ</i>				
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	91,668	-	-	91,668
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	213,739,953	14,557,398	414,435	228,711,786
Պարտավորություններ ՀՀ կառավարության նկատմամբ	767,544	-	-	767,544
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	302,620,899	222,786,490	31,251,905	556,659,294
Թողարկված պարտքային արժեթղթեր	253,400	10,619,260	-	10,872,660
Այլ ֆինանսական պարտավորություններ	1,916,545	18,435	-	1,934,980
Ընդամենը	519,390,009	247,981,583	31,666,340	799,037,932
Զուտ դիրք 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	(29,321,745)	48,701,300	(26,872,722)	(7,493,167)
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	452,637,530	364,472,396	5,444,683	822,554,609
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	445,822,323	339,932,083	14,820,579	800,574,985
Զուտ դիրք 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	6,815,207	24,540,313	(9,375,896)	21,979,624

Ազատ փոխարկելի արտարժույթը հիմնականում ներկայացնում է ԱՄՆ դոլարը և Եվրոն, բայց ներառում է նաև ՏՀԶԿ-ի երկրների արժույթները: Ոչ փոխարկելի գումարները վերաբերվում են ԱՊՀ երկրների արժույթներին, բացառությամբ Հայաստանի Հանրապետությանը:

34.3 Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը կապված է Բանկի ֆինանսական պարտավորությունները ժամանակին մարելու կարողությամբ նորմալ և սթրեսային իրավիճակներում: Այս ռիսկի զսպման նպատակով Բանկը ներգրավում է լրացուցիչ ֆինանսական միջոցներ, ի լրումն իր հիմնական ավանդային բազայի, կառավարում է ակտիվները հաշվի առնելով իրացվելիության ռիսկը և վերլուծում է ապագա դրամական միջոցների հոսքերը և իրացվելիությունը օրական կտրվածքով: Սա ներառում է նաև սպասվելիք դրամական միջոցների հոսքերի գնահատումները և բարձր իրացվելի

ապահովվածության հասանելիությունը, որն անհրաժեշտության դեպքում կարող է օգտագործվել լրացուցիչ ֆինանսավորում ստանալու նպատակով:

Բանկը պահում է բարձր իրացվելի և ապակենտրոնացված ակտիվների պորտֆել, որը կարող է հեշտությամբ կանխիկացվել դրամական միջոցների հոսքերի չկանխատեսված ընդհատման դեպքում: Բանկն ունի նաև ապահով վարկային գծեր, որ նա կարող է օգտագործել իրացվելիության կարիքները բավարարելու համար: Բացի այդ Բանկը ՀՀ կենտրոնական բանկում պահում է իր որոշ դրամով պարտավորությունների 2%-ի և որոշ արտարժույթով պարտավորությունների 18%-ի չափով պահուստավորման գումար (տես ծանոթագրություն 14-ը): Իրացվելիության դիրքը գնահատվում և կառավարվում է տարբեր սցենարների դեպքում, հաշվի առնելով սթրես գործոնները կապված շուկայի հետ ընդհանրապես և Բանկի հետ մասնավորապես:

Բանկի իրացվելիության կառավարումը պահանջում է հաշվի առնել իրացվելի ակտիվների այն մակարդակը, որն անհրաժեշտ է պարտավորությունները մարելու համար ըստ ժամկետների, ապահովել ֆինանսավորման տարբեր աղբյուրների հնարավորությունը, ֆինանսավորման արտակարգ պլանի առկայությունը և վերահսկել հաշվեկշռային իրացվելիության նորմատիվները կանոնակարգային պահանջներին համապատասխան: Բանկը հաշվարկում է իրացվելիության ցուցանիշները ՀՀ կենտրոնական բանկի պահանջներին համապատասխան:

Ֆինանսական պարտավորությունների վերլուծությունը՝ ըստ մինչև մարումը մնացած ժամկետների

Ստորև ներկայացվում է դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի չզեղչված ֆինանսական պարտավորությունների բաշխումը՝ հաշվեկշռի ամսաթվից մինչև պայմանագրերում նշված մարմանը մնացած ժամկետների համաձայն: Ցպահանջ վճարումները դասակարգված են այն ենթադրությամբ, որ վճարումը կպահանջվի անմիջապես: Սակայն Բանկի ղեկավարությունը կարծում է, որ շատ հաճախորդներ անմիջապես վճարում չեն պահանջի, և աղյուսակը չի արտացոլում սպասվող դրամական միջոցների հոսքերը, ինչպես նշված է Բանկի կողմից ավանդների պահպանման պատմության մեջ:

Հազար ՀՀ դրամ

31 դեկտեմբերի 2021թ.

	Ցպահանջ կամ մեկ ամսից քիչ	5 տարուց ավելի				Ընդամենը
		1 - 12 ամիս	1-5 տարի	ավելի	Ընդամենը	
Աճանցյալ ֆինանսական պարտավորություններ	91,668	-	-	-	91,668	
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	161,327,215	39,329,316	17,011,522	18,132,307	235,800,360	
Պարտավորություններ ՀՀ կառավարության նկատմամբ	529,946	103,798	145,578	-	779,322	
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	228,407,500	224,120,897	99,558,678	26,829,775	578,916,850	
Թողարկված պարտքային արժեթղթեր	-	-	2,940,553	10,848,075	13,788,628	
Այլ ֆինանսական պարտավորություններ	1,536,032	-	-	398,948	1,934,980	
Ընդամենը չզեղչված ֆինանսական պարտավորություններ	391,892,361	263,554,011	119,656,331	56,209,105	831,311,808	

Հազար ՀՀ դրամ

31 դեկտեմբերի 2020թ.

	Ցպահանջ կամ մեկ ամսից քիչ	5 տարուց ավելի			Ընդամենը
		1 - 12 ամիս	1-5 տարի	ավելի	
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	171,409	-	-	-	171,409
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	125,931,436	34,826,056	22,126,534	19,729,248	202,613,274
Պարտավորություններ ՀՀ կառավարության նկատմամբ	452,230	984	157,401	37,404	648,019
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	278,781,062	221,295,862	110,300,744	14,972,218	625,349,886
Թողարկված պարտքային արժեթղթեր	-	-	3,352,400	-	3,352,400
Այլ ֆինանսական պարտավորություններ	1,034,887	59,374	682,811	-	1,777,072
Ընդամենը չզեղչված ֆինանսական պարտավորություններ	406,371,024	256,182,276	136,619,890	34,738,870	833,912,060

Բանկը ներգրավել է էական գումարներով միջոցներ բաժնետերերից և կապակցված կողմերից: Նշված գումարների ցանկացած էական վերադարձ կարող է բացասաբար անդրադառնալ Բանկի գործունեության վրա: Բանկի ղեկավարությունը վստահ է, որ ֆինանսավորման ներկայիս մակարդակը կպահպանվի տեսանելի ապագայում, և միջոցների վերադարձի դեպքում նա կտեղեկացվի նախապես, ինչը հնարավորություն կտա Բանկին ժամանակին իրացնելու իր իրացվելի միջոցները և վերադարձնելու պարտքը:

34.4 Գործառնական ռիսկ

Գործառնական ռիսկը ուղղակի կամ անուղղակի կորստի ռիսկն է, որն առաջանում է պատճառների լայն բազմազանությունից՝ կապված Բանկի ֆինանսական գործիքների մեջ ներգրավվածության, գործընթացների, անձնակազմի, տեխնոլոգիաների և ենթակառուցվածքների հետ, և արտաքին գործոններից՝ բացառությամբ վարկային, շուկայական և իրացվելիության ռիսկերի, ինչպիսիք են իրավական և կարգավորիչ պահանջները և կորպորատիվ վարքագծի ընդհանուր ընդունված չափանիշները:

Բանկի նպատակն է կառավարել գործառնական ռիսկը՝ ֆինանսական վնասներից և հեղինակության կորստից խուսափումը հավասարակշռելով ռիսկի կառավարման ծախսային արդյունավետության հետ:

Գործառնական ռիսկի կառավարմանն ուղղված վերահսկողության մշակման և իրականացման հիմնական պատասխանատվությունը կրում է Ռիսկերի կառավարման վարչությունը: Այս պատասխանատվությունը ուղեկցվում է գործառնական ռիսկի կառավարման համար համընդհանուր չափանիշների մշակմամբ հետևյալ ոլորտներում՝

- պարտականությունների համապատասխան տարանջատման պահանջներ, այդ թվում գործարքների անկախ հաստատում,
- գործարքների համաձայնեցման և մոնիթորինգի պահանջներ,
- կարգավորիչ և այլ իրավական պահանջների համապատասխանեցում, ներառյալ ՀՀ ԿԲ ներքին վերահսկողության համակարգի վերաբերյալ նվազագույն պահանջները,
- վերահսկողական մեխանիզմների և ընթացակարգերի փաստաթղթավորում,
- առաջացած գործառնական ռիսկերի պարբերաբար գնահատման պահանջներ, ինչպես նաև ռիսկերի կառավարմանն ուղղված ընթացակարգերի համապատասխանություն,

- գործառնական կորուստների զեկուցման պահանջներ և առաջարկվող մեղմացուցիչ գործողություններ,
- արտակարգ իրավիճակների ծրագրերի մշակում,
- վերապատրաստում և մասնագիտական զարգացում,
- էթիկայի և գործարար չափանիշներ,
- ռիսկերի մեղմացում:

Բանկի ստանդարտների համապատասխանությունը ուղեկցվում է ներքին աուդիտի կողմից իրականացվող պարբերական դիտարկումներով: Ներքին աուդիտի դիտարկումների արդյունքերը քննարկվում են Բանկի ղեկավարության այն ներկայացուցչի հետ, որին դրանք վերաբերում են: Դիտարկումների ամփոփագրերը ներկայացվում են Խորհրդին:

35. Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների հոսքերի համադրում

Բանկի պարտավորություններում ֆինանսավորման գործունեությունից առաջացող փոփոխությունները կարող են դասակարգվել հետևյալ կերպ.

Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2021թ.		
	Վարկեր և ավանդներ ֆինանսական կազմակերպություններից	Թողարկված պարտքային արժեթղթեր	Ընդամենը
2021թ. հունվարի 1-ի դրությամբ	40,887,190	2,916,675	43,803,865
<i>Դրամային հոսքերից</i>	<i>(1,960,449)</i>	<i>7,045,655</i>	<i>5,085,206</i>
Վճարումներ	(24,004,880)	(14,017,096)	(38,021,976)
Ստացված գումար	22,044,431	21,062,751	43,107,182
<i>Ոչ դրամային հոսքերից</i>	<i>911,374</i>	<i>910,330</i>	<i>1,821,704</i>
Փոխարժեքային տարբերությունից օգուտ/վնաս	911,374	910,330	1,821,704
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	39,838,115	10,872,660	50,710,775
Հազար ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2020թ.		
	Վարկեր և ավանդներ ֆինանսական կազմակերպություններից	Թողարկված պարտքային արժեթղթեր	Ընդամենը
2020թ. հունվարի 1-ի դրությամբ	37,300,406	10,773,511	48,073,917
<i>Դրամային հոսքերից</i>	<i>8,028,279</i>	<i>(8,790,807)</i>	<i>(762,598)</i>
Վճարումներ	(53,708,726)	(11,653,757)	(65,362,483)
Ստացված գումար	61,737,005	2,862,950	64,599,955
<i>Ոչ դրամային հոսքերից</i>	<i>(4,441,495)</i>	<i>933,971</i>	<i>(3,507,524)</i>
Փոխարժեքային տարբերությունից օգուտ/վնաս	(4,441,495)	933,971	(3,507,524)
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	40,887,190	2,916,675	43,803,865

36. Կապիտալի համարժեքություն

Բանկը պահպանում է ակտիվ կառավարվող կապիտալի կառուցվածք բանկային գործունեությանը բնորոշ ռիսկերը ծածկելու համար: Բանկի կապիտալի համարժեքությունն այլ միջոցների հետ մեկտեղ վերահսկվում է նաև օգտագործելով Բանկային Վերահսկողություն Բազելյան Հանձնաժողովի, ինչպես նաև ՀՀ կենտրոնական բանկի կողմից հաստատված կանոնները և նորմատիվները:

Բանկի կապիտալի կառավարման առաջնային նպատակներն են համոզվել, որ Բանկի կապիտալը համապատասխանում է հաստատված պահանջներին, և որ Բանկը պահպանում է ամուր վարկային վարկանիշ և առողջ կապիտալի ցուցանիշներ՝ իր գործունեությունը ամրապնդելու և բաժնետերերի շահույթը առավելագույնի հասցնելու համար:

Բանկը կառավարում է իր կապիտալի կառուցվածքը և իրականացնում համապատասխան ճշգրտումները տնտեսական պայմանների և իր գործունեության ռիսկերի փոփոխությանը համապատասխան: Կապիտալի կառուցվածքը պահպանելու կամ փոփոխելու համար Բանկը կարող է փոփոխել բաժնետերերին վճարվող շահաբաժինների գումարը, կապիտալը վերադարձնել բաժնետերերին կամ բաժնետոմսեր թողարկել: Նախորդ տարիների համեմատ նպատակներում, քաղաքականությունում և գործընթացներում փոփոխություններ չեն եղել:

ՀՀ կենտրոնական բանկի կողմից ընդհանուր կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների միջև նվազագույն հարաբերակցությունը սահմանվում է 12%:

Ընդհանուր կապիտալը կազմված է հիմնական կապիտալից, որը ներառում է բաժնետիրական կապիտալը, էմիսիոն եկամուտը, չբաշխված շահույթը, այդ թվում ընթացիկ տարվա շահույթը, գլխավոր պահուստը: Կապիտալի մեկ այլ բաղադրիչ է լրացուցիչ կապիտալը, որը ընդգրկում է վերագնահատման և այլ պահուստները:

Ռիսկով կշռված ակտիվները չափվում են ըստ ռիսկերի կշիռների՝ դասակարգված համաձայն վարկային, շուկայական և գործառնական ռիսկերի գնահատման:

Ժամանակաշրջանի ընթացքում Բանկը պահպանել է կապիտալի համարժեքության նկատմամբ բոլոր պահանջները:

Նպատակ ունենալով խթանել բանկային համակարգի գործունեության արդյունավետության բարձրացմանը, բանկային համակարգի կայունության ու տնտեսական տարբեր իրավիճակներում շոկերին դիմակայելու ունակության ամրապնդմանը, ինչպես նաև նպաստել բանկային համակարգի կողմից առավել արդյունավետ և մատչելի բանկային ծառայությունների մատուցմանը, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը 2017թ. որոշում է կայացրել 2018 թվականի հունվարի 1-ի դրությամբ և դրանից հետո բանկերի համար ընդհանուր նորմատիվային կապիտալի նվազագույն չափը սահմանել 30,000,000 հազար ՀՀ դրամ:

37. Սեզմենտային հաշվետվություններ

Բանկի գործառնությունները բավականին ինտեգրացված են և կազմում են մեկ գործարար սեզմենտ ըստ ՖՀՄՄ 8 «Գործառնական սեզմենտներ» ստանդարտի պահանջների:

Արտաքին հաճախորդներից ստացվող եկամտի մեծ մասը վերաբերում է Հայաստանի Հանրապետության ռեզիդենտներին: Բանկը չունի առանձին հաճախորդ, որից ստանում է իր հասույթի 10%-ը կամ ավելին:

38. Հաշվետու ամսաթվից հետո տեղի ունեցած դեպքեր

2022թ. հունվարի 21-ին տեղի է ունեցել Բանկի բաժնետերերի փոփոխություն՝ ԷՍ ԷՖ ԷՍ Գլոբալ Ինվեստ ՍՊԸ-ն բաժնետոմսերի 25%-ը փոխանցվել է ԲՆԱԿԱՐԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻՆ ՎՎԿ ՓԲԸ-ին:

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի ընդհանուր նորմատիվային կապիտալը կազմել է 22,620,172 ՀՀ հազար դրամ՝ չպահպանելով Հայաստանի Հանրապետության Կենտրոնական Բանկի կողմից սահմանված նվազագույն չափը: 2021թ մարտի 9-ին Բանկի կանոնադրական կապիտալը համալրվել է 128,002,328 ՀՀ հազար դրամով: Կանոնադրական կապիտալը բաժանված է 206,260 սովորական բաժնետոմսի՝ յուրաքանչյուրը 824,651 դրամ անվանական արժեքով:

« Հ Ա Յ Բ Ի Ձ Ն Ե Ս Բ Ա Ն Կ »
Փակ Բաժնետիրական Ընկերություն

**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ՀԱՅԿԱԿԱՆ ԴՐԱՄՈՎ
31 դեկտեմբեր 2022թ.**

ԵՐԵՎԱՆ 2023

Բովանդակություն

Անկախ աուդիտորի եզրակացություն	3
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն	6
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	7
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն	8
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	10
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	12

14.04.2023
N 012302

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

«Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ
Գլխավոր տնօրեն

Վ. Գևորգյան

Աուդիտորական ծառայությունների իրականացման
լիցենզիա թիվ 054՝ տրված ՀՀ ֆինանսների
և կրոնական հարաբերությունների կողմից



ԱՆԿԱՆ ԱՌԻԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ»

Փակ բաժնետիրական ընկերության Բաժնետերերին

Կարծիք

Մեր կողմից իրականացվել է «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» Փակ բաժնետիրական ընկերության (Բանկ) ֆինանսական հաշվետվությունների աուդիտ, որոնք ներառում են 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա համար շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը, սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը, ինչպես նաև հաշվապահական քաղաքականության ամփոփ նկարագիրը և այլ պարզաբանող ծանոթագրություններ:

Մեր կարծիքով կից ֆինանսական հաշվետվությունները տալիս են Բանկի՝ 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՄ):

Կարծիքի հիմքեր

Մենք աուդիտն իրականացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՄ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Բանկից՝ համաձայն Հաշվապահների միջազգային դաշնության պրոֆեսիոնալ հաշվապահների վարքագրի (ՀՄԴ-ի Վարքագիրք) և Հայաստանի Հանրապետությունում կիրառելի՝ ֆինանսական հաշվետվությունների աուդիտի նկատմամբ վարքագծի պահանջների, և մենք կատարել ենք վարքագծի նկատմամբ մեր մյուս պարտականությունները՝ այդ պահանջների համաձայն: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

ADVISORY • ASSURANCE • ACCOUNTING • TAX

Baker Tilly Armenia CJSC is a member of the global network of Baker Tilly International Ltd., the members of which are separate and independent legal entities.

Ղեկավարության և կառավարման օղակներում ներգրավված անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Բանկի ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՄ-երի համապատասխան ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման համար: Այդ նպատակով ղեկավարությունը սահմանում է անհրաժեշտ վերահսկողության համակարգ, որը թույլ է տալիս պատրաստել ֆինանսական հաշվետվություններ, որոնք գերծ են խարդախության կամ սխալի արդյունքում էական խեղաթյուրումից:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս, ղեկավարությունը պատասխանատու է Բանկի՝ անընդհատ գործելու հնարավորությունը գնահատելու, անընդհատ գործելուն առնչվող հարցերը բացահայտելու, ինչպես նաև գործունեության անընդհատության ենթադրության վրա հիմնված հաշվառում վարելու համար, քանի դեռ ղեկավարությունը չի նախատեսում լուծարել Բանկը կամ դադարեցնել դրա գործունեությունը կամ չունի իրատեսական այլընտրանք, բացի նշվածները:

Կառավարման օղակներում ներգրավված անձինք պատասխանատու են Բանկի ֆինանսական հաշվետվությունների կազմման գործընթացը վերահսկելու համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ երաշխիքներ՝ խարդախությունների կամ սխալների հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրումներից գերծ լինելու վերաբերյալ, ինչպես նաև ներկայացնել աուդիտորի եզրակացություն, որը կներառի մեր կարծիքը: Ողջամիտ հավաստիացումը բարձր աստիճանի հավաստիացում է, սակայն այն երաշխիք չի հանդիսանում, որ ԱՄՄ համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումներ, երբ այդպիսիք կան: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի հետևանքով և համարվում են էական, եթե ակնկալվում է, որ դրանք առանձին-առանձին՝ կամ միասին վերցրած կարող են ազդել այս ֆինանսական հաշվետվությունների օգտագործողների՝ դրանց հիման վրա կայացրած տնտեսական որոշումների վրա:

ԱՄՄ-ների համապատասխան իրականացվող աուդիտի շրջանակներում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն ամբողջ աուդիտի ընթացքում: Բացի այդ, մենք.

- Բացահայտում և գնահատում ենք ֆինանսական հաշվետվություններում խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք այդ ռիսկերին ուղղված աուդիտորական ընթացակարգեր և ձեռք ենք բերում բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար: Խարդախության արդյունք հանդիսացող էական խեղաթյուրման չբացահայտման ռիսկն ավելի մեծ է, քան սխալի հետևանքով առաջացած խեղաթյուրման չբացահայտման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, փաստաթղթերի կեղծում, միտումնավոր բացթողումներ, կեղծ հայտարարությունների տրամադրում կամ ներքին վերահսկողության համակարգի չարաշահում:
- Պատկերացում ենք կազմում աուդիտին առնչվող ներքին վերահսկողության վերաբերյալ, որպեսզի մշակենք համապատասխան աուդիտորական ընթացակարգեր, բայց ոչ Բանկի ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականության պատշաճությունը, ինչպես նաև ղեկավարության կատարած հաշվապահական գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:

ADVISORY • ASSURANCE • ACCOUNTING • TAX

Baker Tilly Armenia CJSC is a member of the global network of Baker Tilly International Ltd., the members of which are separate and independent legal entities.

- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից անընդհատության սկզբունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և ձեռք բերված աուդիտորական ապացույցների հիման վրա հետևություն ենք անում, թե արդյոք առկա է իրադարձությունների կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է էական կասկած առաջացնել Բանկի անընդհատ գործելու հնարավորության վերաբերյալ: Եթե մենք գալիս ենք եզրահանգման, որ գոյություն ունի էական անորոշություն, մենք պետք է մեր աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրենք ֆինանսական հաշվետվություններում համապատասխան բացահայտումներին, կամ եթե նման բացահայտումները պատշաճ կերպով ներկայացված չեն, մենք պետք է ձևավորենք կարծիք: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր աուդիտորական եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա իրադարձությունները կամ հանգամանքները կարող են հանգեցնել նրան, որ Բանկը կորցնի իր անընդհատ գործելու կարողությունը:
- Գնահատում ենք ընդհանուր առմամբ ֆինանսական հաշվետվությունների ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները և արդյոք ֆինանսական հաշվետվությունները ներկայացնում են դրանց հիմքում ընկած գործարքներն ու իրադարձությունները այն ձևով, որն ապահովում է ճշմարիտ ներկայացումը:
- Ձեռք ենք բերում բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ Բանկի ֆինանսական տեղեկատվության կամ գործունեության վերաբերյալ ֆինանսական հաշվետվությունների մասին կարծիք արտահայտելու նպատակով: Մենք պատասխանատվություն ենք կրում աուդիտորական աշխատանքների ուղղորդման, վերահսկման ու կատարման համար: Մենք լիովին պատասխանատու ենք մեր աուդիտորական կարծիքի համար:

Այլ հարցերի հետ մեկտեղ, մենք հաղորդակցվում ենք կառավարման օղակներում ներգրավված անձանց հետ աուդիտի պլանավորած շրջանակների և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված էական թերացումների վերաբերյալ, որոնք ներառում են աուդիտի ընթացքում մեր կողմից բացահայտված ներքին վերահսկողության կարևոր թերությունները:

Աուդիտոր
Շ. Թաշիյան



14.04.2023 թ.

**ՇԱՀՈՒՑԹԻ ԿԱՍ ՎՆԱՍԻ ԵՎ ԱՅԼ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՏԻՆԱՆՍԱԿԱՆ
ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար**

Հազար ՀՀ դրամ	Ծանոթ.	2022թ	2021թ
Տոկոսային և նմանատիպ եկամուտներ	6	134,564,488	59,502,623
Տոկոսային և նմանատիպ ծախսեր	6	(49,417,262)	(44,049,196)
Զուտ տոկոսային եկամուտներ		85,147,226	15,453,427
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ	7	3,511,381	5,720,106
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր	7	(1,138,161)	(2,205,155)
Զուտ կոմիսիոն և այլ եկամուտներ		2,373,220	3,514,951
Զուտ առևտրային եկամուտ	8	7,470,106	7,271,277
Արտարժույթի փոխարկումից զուտ օգուտ/(վնաս)		(21,293,289)	(4,303,796)
Այլ եկամուտներ	9	6,712,143	4,246,864
Արժեզրկման ծախս	10	(54,729,380)	(39,114,103)
Անձնակազմի գծով ծախսեր	11	(6,077,196)	(5,572,719)
Հիմնական միջոցների մաշվածություն	19	(1,083,249)	(1,384,750)
Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիա	20	(474,923)	(428,252)
Այլ ծախսեր	12	(3,995,799)	(3,544,691)
Գործառնական շահույթ		14,048,859	(23,861,792)
Շահութահարկի գծով փոխհատուցում/(ծախս)	13	(13,835,669)	3,853,689
Տարվա շահույթ		213,190	(20,008,103)
<i>Հոդվածներ, որոնք հետագայում վերադասակարգվելու են շահույթում կամ վնասում</i>			
Ներդրումային արժեթղթերի իրական արժեքի զուտ փոփոխություն՝ առանց շահութահարկի		(1,804,709)	(3,081,388)
<i>Հոդվածներ, որոնք հետագայում չեն վերադասակարգվելու շահույթում կամ վնասում</i>			
Շենքերի վերագնահատում		6,220,475	-
Շահութահարկի ազդեցություն		(1,112,403)	-
		5,108,072	-
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք		3,516,553	(23,089,491)

ՏՐՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
31 դեկտեմբերի 2022թ-ի դրությամբ

Հազար ՀՀ դրամ	Ծանոթ.	31 դեկտեմբերի 2022թ.	31 դեկտեմբերի 2021թ.
<i>Ակտիվներ</i>			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	14	94,980,431	54,385,807
Ածանցյալ ֆինանսական ակտիվներ	15	2,818	7,730
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	16	13,866,247	14,738,754
Հաճախորդներին տրված վարկեր	17	499,858,657	565,239,862
Ներդրումային արժեթղթեր			
- Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր	18	126,481,863	-
- Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր	18	23,707,204	30,213,792
- Հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր	18	19,555,043	125,325,567
Հիմնական միջոցներ	19	17,599,038	12,064,146
Ոչ կյութական ակտիվներ	20	1,718,739	1,931,006
Հետաձգված հարկային ակտիվ	13	-	7,015,388
Բոնազանձված ակտիվներ	21	7,593,247	7,866,678
Այլ ակտիվներ	22	5,673,073	4,344,842
Ընդամենը՝ ակտիվներ		811,036,360	823,133,572
<i>Պարտավորություններ և սեփական կապիտալ</i>			
Պարտավորություններ			
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	15	58,178	91,668
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	23	174,535,139	228,711,786
Պարտավորություններ ՀՀ կառավարության նկատմամբ	24	348,906	767,544
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	25	462,657,768	556,659,294
Թողարկված պարտքային արժեթղթեր	26	9,010,976	10,872,660
Ընթացիկ հարկի գծով պարտավորություն		-	334,244
Հետաձգված հարկային պարտավորություն		7,551,462	-
Այլ պարտավորություններ	27	2,734,878	3,076,204
Ընդամենը՝ պարտավորություններ		656,897,307	800,513,400
<i>Սեփական կապիտալ</i>			
Բաժնետիրական կապիտալ	28	170,092,515	42,090,187
Գլխավոր պահուստ		917,427	917,427
Այլ պահուստներ		2,837,523	(465,840)
Զբաղիված շահույթ		(19,708,412)	(19,921,602)
<i>Ընդամենը՝ սեփական կապիտալ</i>		154,139,053	22,620,172
Ընդամենը՝ պարտավորություններ և սեփական կապիտալ		811,036,360	823,133,572

Գևորգ Թառումյան
Վարչության նախագահ

14.04.2023թ.





ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

Հազար ՀՀ դրամ	Բաժնե- տիրական կապիտալ	Գլխավոր պահուստ	Իրական արժեքի պահուստ	Հիմնական միջոցների վերագնա- հատման պահուստ	Զբաղիված շահույթ	Ընդամենը
Հաշվեկշիռը						
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	42,090,187	917,427	(934,364)	468,524	(19,921,602)	22,620,172
Տարվա շահույթ	-	-	-	-	213,190	213,190
<i>Այլ համապարփակ ֆինանսական արդյունք</i>						
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային գործիքների իրական արժեքի գուտ փոփոխություն(ներառյալ ակնկալվող պարտքային կորուստների պահուստում գուտ փոփոխությունները)	-	-	(1,804,709)	-	-	(1,804,709)
Հիմնական միջոցների վերագնահատում	-	-	-	5,108,072	-	5,108,072
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	(2,739,073)	5,576,596	(19,708,412)	26,136,725
Հատկացում պահուստին	-	-	-	-	-	-
Ներդրումներ կանոնադրական կապիտալում	128,002,328	-	-	-	-	128,002,328
Ընդամենը սեփականատերերի հետ գործարքներ	128,002,328	-	-	-	-	128,002,328
Հաշվեկշիռը						
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	170,092,515	917,427	(2,739,073)	5,576,596	(19,708,412)	154,139,053

Հազար ՀՀ դրամ	Բաժնե- տիրական կապիտալ	Գլխավոր պահուստ	Իրական արժեքի պահուստ	Հիմնական միջոցների վերագնա- հատման պահուստ	Չբաշխված շահույթ	Ընդամենը
Հաշվեկշիռը						
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	42,090,187	913,027	2,147,024	468,524	90,901	45,709,663
Տարվա շահույթ	-	-	-	-	(20,008,103)	(20,008,103)
<i>Այլ համապարփակ ֆինանսական արդյունք</i>						
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային գործիքների իրական արժեքի գուտ փոփոխություն(ներառյալ ակնկալվող պարտքային կորուստների պահուստում գուտ փոփոխությունները)	-	-	(3,081,388)	-	-	(3,081,388)
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	(934,364)	468,524	(19,917,202)	22,620,172
Հատկացում պահուստին	-	4,400	-	-	(4,400)	-
Ընդամենը սեփականատերերի հետ գործարքներ	-	4,400	-	-	(4,400)	-
Հաշվեկշիռը						
2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	42,090,187	917,427	(934,364)	468,524	(19,921,602)	22,620,172

ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

Հազար ՀՀ դրամ	2022թ	2021թ
<i>Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր</i>		
Շահույթ մինչև հարկումը	14,048,859	(23,861,792)
<i>Ճշգրտումներ</i>		
Մաշվածության և ամորտիզացիոն մասհանումներ	1,558,172	1,813,002
Արժեզրկման ծախս	54,729,380	39,114,103
Առևտրային գործիքների իրական արժեքի փոփոխությունից զուտ (օգուտ)/վնաս	1,716,733	(2,299,107)
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվների վերագնահատումից զուտ (օգուտ)/վնաս	224,229	(429,311)
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվների ձեռքբերումից և/կամ վաճառքից (օգուտ)/վնաս	(60,882)	(74,215)
Ստացվելիք տոկոսներ	(68,131,278)	(54,354,821)
Վճարվելիք տոկոսներ	4,216,756	3,577,571
Արտարժույթի վերագնահատումից (օգուտ)/վնաս	21,293,289	4,303,796
<i>Դրամական միջոցների հոսքեր նախքան գործառնական ակտիվներում և պարտավորություններում փոփոխությունները (Ավելացում)/նվազում գործառնական ակտիվներում</i>	29,595,258	(32,210,774)
Ածանցյալ ֆինանսական ակտիվներ	4,912	62,587
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	(473,600)	13,944,141
Հաճախորդներին տրված վարկեր	19,499,356	52,288,997
Բոնազանձված ակտիվներ	273,431	(1,691,747)
Այլ ակտիվներ	(1,401,246)	(559,476)
<i>Ավելացում/(նվազում) գործառնական պարտավորություններում</i>		
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ	(33,490)	(79,741)
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	(54,176,647)	37,262,756
Պարտավորություններ ՀՀ կառավարության նկատմամբ	(418,238)	139,852
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	(65,863,723)	(14,911,890)
Այլ պարտավորություններ	667,606	(26,721)
Զուտ դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից ստացված մինչև շահութահարկը	(72,326,381)	54,217,984
Վճարված շահութահարկ	(1,107,114)	(792,375)
Գործառնական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ	(73,433,495)	53,425,609

Հազար ՀՀ դրամ	2022թ	2021թ
<i>Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր</i>		
Ներդրումային արժեթղթերի վաճառք	(14,324,167)	(88,280,897)
Հիմնական միջոցների առք	(562,894)	(489,633)
Ոչ նյութական ակտիվների առք	(262,655)	(208,220)
Հիմնական միջոցների վաճառք	11,459	25,180
Ներդրումային գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ	(15,138,257)	(88,953,570)
<i>Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր</i>		
Ֆինանսական կազմակերպ. վարկերի և ավանդների ստացում/(մարում)	4,944,326	(3,782,635)
Պարտքային արժեթղթերի թողարկում	62,270	8,867,841
Կանոնադրական կապիտալի համալրում	128,002,328	-
Ֆինանսական գործունեությունից ստացված/ (գործունեության համար օգտագործված) զուտ դրամական միջոցներ	133,008,924	5,085,206
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ	44,437,172	(30,442,755)
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարվա սկզբի դրությամբ	54,385,807	87,914,454
Դրամական միջոցների գծով ակնկալվող պարտքային կորուստների ազդեցությունը	(88,808)	(42,338)
Արտարժույթի փոխարկման ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	(3,753,740)	(3,043,554)
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարվա վերջի դրությամբ	94,980,431	54,385,807

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1. Գործունեության բնույթը և ընդհանուր տեղեկություններ

«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» Փակ բաժնետիրական ընկերությունը (նախկին «Հայինվեստբանկ ՓԲԸ») (այսուհետ՝ Բանկ) հիմնադրվել է 1991թ. և հանդիսանում է փակ բաժնետիրական ընկերություն՝ գործելով Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) օրենսդրության շրջանակներում: Բանկը գրանցվել է 1991 թվականի դեկտեմբերի 10-ին ՀՀ կենտրոնական բանկի (այսուհետ՝ ՀՀ ԿԲ) կողմից N40 արտոնագրային համարով:

Բանկը հանդիսանում է Հայաստանի Հանրապետությունում ֆիզիկական անձանց ավանդների հատուցում երաշխավորող պետական համակարգի, Հայաստանի բանկերի միության, ArCa, Master Card, Visa International քարտային վճարահաշվարկային համակարգերի անդամ:

Բանկի հիմնական գործունեությունը վարկավորումն է և ավանդների ընդունումը, ՀՀ-ում և արտերկրներ փոխանցումների և փոխարկման գործարքների իրականացումը, ինչպես նաև իրավաբանական և ֆիզիկական անձանց արտարժույթային և այլ բանկային ծառայությունների մատուցումը:

Բանկի գլխավոր գրասենյակը և թվով 24 մասնաճյուղերը գտնվում են Երևանում, 26 մասնաճյուղերը՝ ՀՀ տարբեր մարզերում, և 4 մասնաճյուղերը՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում: Բանկի իրավաբանական հասցեն է՝ ք. Երևան, Նալբանդյան 48:

2. Գործարար միջավայր

Հայաստանում շարունակական բնույթ են կրում իրականացվող քաղաքական ու տնտեսական բարեփոխումները և իրավական, հարկային ու օրենսդրական համակարգերի զարգացումը, որոնք կարող են ունենալ տարբեր մեկնաբանություններ և ենթակա են հաճախակի փոփոխությունների, ինչը, այլ իրավական և ֆինանսական խոչընդոտների հետ մեկտեղ, լրացուցիչ բարդություններ է ստեղծում Հայաստանում գործող կազմակերպությունների համար:

Ուկրաինայի շուրջ լարվածության վերջերս տեղի ունեցող աճն ավելի է մեծացրել Հայաստանում գործունեություն իրականացնելու պայմանների հետ կապված անորոշությունը:

Բանկի ղեկավարությունը կարծում է, որ ընթացիկ պայմաններում իրականացվում են համապատասխան միջոցառումներ Բանկի տնտեսական կայունությունն ապահովելու նպատակով:

3. Հաշվետվությունների պատրաստման հիմունքները

3.1 Համապատասխանությունը

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ), որոնք հաստատվել են Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտների Խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից և Մեկնաբանությունների՝ հաստատված Ֆինանսական Հաշվետվությունների Մեկնաբանությունների Միջազգային Կոմիտեի կողմից (ՖՀՄՍԿ):

Բանկը պատրաստում է իր հաշվետվությունները ՀՀ գործող օրենսդրության և հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների պահանջներին համապատասխան: Սույն ֆինանսական հաշվետվությունները հիմնված են Բանկի հաշվառման գրանցումների վրա, որոնք ձգգրտվել և վերադասակարգվել են ՖՀՄՍ-ին համապատասխանեցնելու նպատակով:

3.2 Չափման հիմունքները

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են իրական արժեքի սկզբունքի հիման վրա իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող և իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական գործիքների համար: Այլ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները հաշվառվում են ամորտիզացված արժեքով, իսկ ոչ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները՝ պատմական արժեքով, բացառությամբ շինությունների, որոնք ներկայացվել են վերագնահատված գումարով:

3.3 Գործառնական և ներկայացման արժույթ

Բանկի գործառնական արժույթն այն հիմնական տնտեսական միջավայրի արժույթն է, որտեղ գործում է Բանկը: Բանկի գործառնական և ներկայացման արժույթ է հանդիսանում Հայաստանի Հանրապետության դրամը (այսուհետ՝ ՀՀ դրամ), քանի որ այս արժույթն է լավագույն կերպով արտացոլում ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Բանկի գործարքների տնտեսական բովանդակությունը: Ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են ՀՀ դրամով՝ հազարների ճշտությամբ, եթե այլ բան նշված չէ: ՀՀ սահմաններից դուրս դրամը ազատ փոխարկելի չէ:

3.4 Հաշվապահական հաշվառման քաղաքականության և ներկայացման փոփոխություններ

Ընթացիկ տարում Բանկն առաջին անգամ կիրառել է որոշ ստանդարտներ և փոփոխություններ, որոնք կիրառելի են 2022թ. հունվարի 1-ից կամ դրանից հետո սկսվող ժամանակաշրջանների համար: Բանկը վաղաժամկետ չի ընդունել որևէ այլ ստանդարտ, մեկնաբանություն կամ փոփոխություն, որոնք ուժի մեջ են մտել, բայց դեռ կիրառելի չեն:

- Անբարենպաստ պայմանագրեր. Պայմանագրի կատարման ծախսումներ (ՀՀՄՍ 37 փոփոխություններ)
- Հիմնական միջոցներ. Մուտքեր նախքան նպատակային օգտագործումը (ՀՀՄՍ 16-ի փոփոխություններ)
- Ֆինանսական պարտավորությունների ապաճանաչման 10% փորձական վճար (ՖՀՄՍ 9-ի փոփոխություններ)

Վերոհիշյալ ստանդարտներն ու փոփոխությունները, որոնք առաջին անգամ կիրառվել են 2022թ-ին, որևէ էական ազդեցություն չեն ունեցել Բանկի տարեկան ֆինանսական հաշվետվությունների վրա:

3.5 Բանկի կողմից դեռևս չկիրառվող ստանդարտներ և մեկնաբանություններ

Մույն ֆինանսական հաշվետվությունների հաստատման օրվա դրությամբ լույս են տեսել մի շարք նոր ստանդարտներ, գործող ստանդարտների վերաբերյալ փոփոխություններ և մեկնաբանություններ, որոնք դեռևս ուժի մեջ չեն մտել:

Բանկը վաղաժամկետ չի ընդունել այդ ստանդարտներից և մեկնաբանություններից որևէ մեկը: Ղեկավարությունը կանխատեսում է, որ կիրառելի նոր ստանդարտներն ու մեկնաբանությունները կընդունվեն Բանկի կողմից՝ դրանց ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող առաջիկա ժամանակաշրջանում:

Ղեկավարության կանխատեսմամբ այս փոփոխությունները էական ազդեցություն չեն ունենա Բանկի ֆինանսական հաշվետվությունների վրա և ներկայացված են ստորև:

Պարբերաբար վերոտնօրյալ է ենթարկվում նաև Բանկի ընդհանուր վարկային պորտֆելը՝ ըստ տնտեսության ճյուղերի, հաճախորդների և վարկատեսակների, պորտֆելի դիվերսիֆիկացիան և որակը ապահովելու նպատակով: Բանկի խորհրդի կողմից հաստատված համապատասխան ներքին իրավական ակտով սահմանված են վարկային ռիսկը զսպող ներբանկային նորմատիվներ (տնտեսության մեկ ճյուղի գծով ռիսկի առավելագույն չափի, վարկային ընդհանուր ռիսկի առավելագույն չափի, վարկային պորտֆելի որակի ռիսկի առավելագույն չափի, վարկային պորտֆելի որակի ռիսկի առավելագույն չափի՝ ըստ առանձին վարկատեսակների, մեկ փոխառուի գծով ռիսկի առավելագույն չափի, խոշոր փոխառուների գծով ռիսկի առավելագույն չափի, Բանկի հետ կապված մեկ անձի գծով ռիսկի առավելագույն չափի, Բանկի հետ կապված բոլոր անձանց գծով ռիսկի առավելագույն չափի և այլն (վերջիններս ազելի խիստ են, քան ԳՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված համապատասխան նորմատիվները)):

Վարկային ռիսկի զգամանակ գործում Բանկում խիստ կարևորվում է նաև Վարկային կոմիտեի գործունեությունը: Վարկային կոմիտեն հանդիսանում է Բանկի վարկային քաղաքականություն իրականացնող մարմին, որի նպատակն է Բանկի վարկային գործունեության կառավարումը և որակյալ վարկային պորտֆելի ձևավորումը: Վարկային կոմիտեի հիմնական խնդիրն է կայացնել վարկային ռիսկ պարունակող գործարքների իրականացման և սպասարկման հետ կապված մասնագիտական կոլեգիալ արձանագրային կամ վերջնական որոշում:

2. Աշխարհագրական կենտրոնացումներ

31.12.22

Չորվածի անվանումը	ԳՀ	ՏԳԶԿ երկններ	Ոչ ՏԳԶԿ երկններ	Ընդամենը
Ակտիվներ				
Կանխիկ դրամական միջոցներ և մնացորդներ ԳՀ կԲ-ում	88,186,796.00			88,186,796.00
Պահանջներ բանկերի և այլ ֆին. կազմ.	11,474,889.00	1,622,682.00	7,545,402.00	20,642,973.00
Շահույթ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆին.ակտիվներ		-	-	-
Հաճախորդներին տրված ամրոտիզացված արժեքով հաշվառվող վարկեր և փոխառություններ	429,257,297.00	1,228,254.00	67,576,626.00	498,062,177.00

Իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ	43,242,279.00	19,968.00	-	43,262,247.00
Ամորտիզացված արժեքով հաշվառվող այլ ֆինանսական ակտիվներ	126,481,863.00	-	-	126,481,863.00
Այլ ակտիվներ	4,805,619.00	4,783.00	1,242,851.00	6,053,253.00
Ընդամենը ակտիվներ	703,448,743.00	2,875,687.00	76,364,879.00	782,689,309.00
Պարտավորություններ				-
Պարտավորություններ բանկերի և այլ ֆին.	177,524,448.00	6,978.00	8,655,406.00	186,186,832.00
Պարտավորություններ հաճախորդների	416,417,765.00	7,863,984.00	38,509,955.00	462,791,704.00
Շահույթ վնասով վերաչափվող իրական	-	-	-	-
Այլ պարտավորություններ	1,854,754.00	15,350.00	-	1,870,104.00
Ընդամենը պարտավորություններ	595,796,967.00	7,886,312.00	47,165,361.00	650,848,640.00
Զուտ դիրք	107,651,776.00	(5,010,625.00)	29,199,518.00	131,840,669.00

31.12.23

Հոդվածի նվազագույն	ՀՀ	ՏՀԶԿ երկրներ	Ոչ ՏՀԶԿ երկրներ	Ընդամենը
Ակտիվներ				
Կանխիկ դրամական միջոցներ և մնացորդներ ՀՀ ԿԲ-ում	54,617,870.00	-	-	54,617,870.00
Պահանջներ բանկերի և այլ ֆին. կազմ. նկատմամբ	32,103,044.00	2,066,654.00	3,474,744.00	37,644,442.00
Շահույթ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆին.ակտիվներ	-	-	-	-
Հաճախորդներին տրված ամորտիզացված արժեքով հաշվառվող վարկեր և փոխառություններ	405,383,217.00	1,460,152.00	90,982,606.00	497,825,975.00
Իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ	34,229,842.00	19,348.00	-	34,249,190.00
Ամորտիզացված արժեքով հաշվառվող այլ ֆինանսական ակտիվներ	157,382,977.00	11,098,160.00	-	168,481,137.00
Այլ ակտիվներ	3,796,923.00	29,360.00	24,235.00	3,850,518.00
Ընդամենը ակտիվներ	687,513,873.00	14,673,674.00	94,481,585.00	796,669,132.00
Պարտավորություններ				-
Պարտավորություններ բանկերի և այլ ֆին. կազմ. նկատմամբ	157,693,443.00	48,181.00	8,173,591.00	165,915,215.00
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	423,302,127.00	29,701,735.00	43,804,227.00	496,808,089.00
Շահույթ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆին.պարտավորություններ	-	-	-	-
Այլ պարտավորություններ	2,556,099.00	34,610.00	-	2,590,709.00
Ընդամենը պարտավորություններ	583,551,669.00	29,784,526.00	51,977,818.00	665,314,013.00
Զուտ դիրք	103,962,204.00	(15,110,852.00)	42,503,767.00	131,355,119.00

ՏՀԶԿ* Տնտեսական Համագործակցության և Զարգացման Կազմակերպություն
 Վարկային ռիսկ պարունակող ակտիվների վերլուծությունը ըստ տնտեսության սեզոնների և ռիսկայնության

31.12.22

Ակտիվներ	Աշխատող ակտիվներ	Չաշխատող ակտիվներ			
		Չսակվող/ Ռիսկային	Ռչ ստանդարտ/ Միջին ռիսկային	Կասկածելի/ Բարձր ռիսկային	Անհուսալի
Վարկեր և փոխառություններ այլ թվում	439,022,387.00	10,092,756.00	7,146,997.00	41,800,037.00	

	89,106.00	5,331.00	1,730.00	1,862.00	
1. Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն և ձկնորսություն գումար	7,778,458.00	147,481.00	29,431.00	-	
քանակ	176.00	9.00	4.00	-	
2. Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում գումար	22,723,939.00	1,794.00	-	1,265,529.00	
քանակ	33.00	1.00	-	2.00	
3. Մշակող արդյունաբերություն գումար	18,744,246.00	1,383,704.00	1,527,775.00	-	
քանակ	66.00	17.00	6.00	-	
4. Էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում գումար	11,712,219.00	1,309,566.00	-	-	
քանակ	21.00	5.00	-	-	
5. Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում գումար	2,984.00	-	-	-	
քանակ	2.00	-	-	-	
6. Շինարարություն գումար	73,711,962.00	429,138.00	-	8,042,704.00	
քանակ	128.00	10.00	-	28.00	
7. Առևտուր գումար	92,515,835.00	1,630,450.00	578,195.00	25,177,981.00	
քանակ	577.00	29.00	17.00	20.00	
8. Փոխադրումներ և պահեստային տնտեսություն գումար	6,711,871.00	6,301.00	-	66,395.00	
քանակ	36.00	2.00	-	2.00	
9. Կեցության և հանրային սննդի կազմակերպում գումար	16,420,467.00	2,544.00	2,149.00	4,590,171.00	
քանակ	62.00	1.00	1.00	22.00	
10. Տեղեկատվություն և կապ գումար	3,815,900.00	-	4,379.00	-	
քանակ	23.00	-	1.00	-	
11. Անշարժ գույքի հետ կապված գործունեություն գումար	764,196.00	-	-	-	
քանակ	3.00	-	-	-	
12. Մասնագիտական, գիտական և տեխնիկական գործունեություն գումար	21,400,458.00	-	-	-	
քանակ	24.00	-	-	-	
13. Կրթություն գումար	2,571,447.00	3,478.00	1,502.00	928.00	
քանակ	387.00	14.00	7.00	7.00	
14. Առողջապահություն գումար	509,005.00	-	1,997.00	-	
քանակ	22.00	-	1.00	-	
15. Մշակույթ, զվարճություն, հանգիստ գումար	5,280,760.00	-	-	-	
քանակ	17.00	-	-	-	
16. Տնտեսության այլ ճյուղեր գումար	23,519,590.00	3,597.00	3,171,323.00	1,009,551.00	
քանակ	94.00	2.00	2.00	3.00	
17. Հիպոթեկային վարկեր գումար	69,185,661.00	1,142,182.00	374,475.00	201,626.00	
քանակ	4,735.00	83.00	27.00	25.00	
18. Սպառողական և այլ վարկեր գումար	61,653,389.00	4,032,521.00	1,455,771.00	1,445,152.00	
քանակ	82,700.00	5,158.00	1,664.00	1,753.00	

31.12.23

Ակտիվներ	Աշխատող ակտիվներ	Չաշխատող ակտիվներ			
		Հսկվող/ Ռիսկային	Ոչ ստանդարտ/ Միջին ռիսկային	Կասկածելի/ Բարձր ռիսկային	Անհուսալի
Վարկեր և փոխառվածություններ այդ թվում	435,489,389.00	10,029,346.00	36,931,915.00	15,375,324.00	
	77,630.00	4,421.00	1,374.00	890.00	
1. Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն և ձկնորսություն գումար	6,276,665.00	28,822.00	656,257.00	151,707.00	
քանակ	78.00	6.00	8.00	2.00	

2. Հանքագործական արդյունաբերություն և քացահանքերի շահագործում	գումար	16,930,781.00	-	-	-
քանակ		17.00			
3. Սշակող արդյունաբերություն	գումար	14,177,397.00	1,411,477.00	3,443,320.00	3,628,520.00
քանակ		61.00	12.00	4.00	10.00
4. Էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում	գումար	13,134,320.00	-	-	-
քանակ		20.00			
5. Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում	գումար	1,282.00	-	-	-
քանակ		1.00			
6. Շինարարություն	գումար	67,989,568.00	748,656.00	87,861.00	6,942,317.00
քանակ		101.00	6.00	6.00	29.00
7. Առևտուր	գումար	95,036,065.00	497,093.00	27,425,968.00	267,872.00
քանակ		506.00	24.00	15.00	7.00
8. Փոխադրումներ և պահեստային տնտեսություն	գումար	4,872,334.00	608.00	-	-
քանակ		38.00	1.00		
9. Կեցության և հանրային սննդի կազմակերպում	գումար	14,175,199.00	950.00	3,599,503.00	3,778,843.00
քանակ		54.00	1.00	3.00	19.00
10. Տեղեկատվություն և կապ	գումար	3,595,964.00	-	-	-
քանակ		19.00			
11. Անշարժ գույքի հետ կապված գործունեություն	գումար	650.00	-	-	-
քանակ		2.00			
12. Մասնագիտական, գիտական և	գումար	21,532,176.00	-	-	1,465.00
քանակ		16.00			1.00
13. Կրթություն	գումար	2,030,766.00	85,812.00	353.00	-
քանակ		346.00	20.00	2.00	
14. Առողջապահություն	գումար	332,579.00	-	-	-
քանակ		18.00			
15. Մշակույթ, զվարճություն, հանգիստ	գումար	5,254,773.00	-	-	-
քանակ		16.00			
16. Տնտեսության այլ ճյուղեր	գումար	11,339,276.00	25,656.00	3,608.00	20,613.00
քանակ		214.00	4.00	2.00	1.00
17. Հիպոթեկային վարկեր	գումար	88,852,023.00	850,285.00	401,938.00	53,218.00
քանակ		5,831.00	73.00	24.00	8.00
18. Ապառտղական և այլ վարկեր	գումար	69,957,571.00	6,379,987.00	1,313,107.00	530,769.00
քանակ		70,292.00	4,274.00	1,310.00	813.00

Վարկային պորտֆելի վերլուծությունը ըստ տարածաշրջանների և ռիսկայնության

31.12.23

Վարկեր և փոխառություններ այդ թվում	Աջխատող ակտիվներ	Չաշխատող ակտիվներ			
		Ստանդարտ/ Ռջ ռիսկային	Հսկվող/ Ռիսկային	Ռջ ստանդարտ/ Միջին ռիսկային	Կասկածելի/ Բարձր ռիսկային
1. ՀՀ ռեզիդենտներին	373,039,163.00	7,139,215.00	9,829,515.00	15,375,324.00	
2. Ռջ ռեզիդենտներին	62,450,225.00	2,890,132.00	27,102,401.00	-	
Ընդամենը	435,489,388.00	10,029,347.00	36,931,916.00	15,375,324.00	

Ռջ Ռեզիդենտներին տրված վարկեր 31.12.23

Ակտիվներ	Աջխատող ակտիվներ	Չաջխատող ակտիվներ			
		Ստանդարտ/ Ոչ նիսկային	Հսկվող/ Ո՞նկային	Ոչ ստանդարտ/ Միջին ռիսկային	Կասկածելի/ Բարձր ռիսկային
Վարկեր և փոխառվածություններ այդ թվում՝	62,450,225	2,890,132	27,102,401	-	-
	46	5	4	-	-
1. Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն և ձկնորսություն գումար քանակ	-	-	-	-	-
2. Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում գումար քանակ	-	-	-	-	-
3. Մշակող արդյունաբերություն գումար քանակ	-	-	-	-	-
4. Էլեկտրականության, գազի, ջրորոշու և լավորակ օդի մատակարարում գումար քանակ	-	-	-	-	-
5. Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում գումար քանակ	-	-	-	-	-
6. Շինարարություն գումար քանակ	-	-	-	-	-
7. Առևտուր գումար քանակ	47,052,358.00	-	27,102,290.00	-	-
	8.00	-	3.00	-	-
8. Փոխադրումներ և պահեստային տնտեսություն գումար քանակ	3,302.00	-	-	-	-
	1.00	-	-	-	-
9. Կեցության և հանրային մենդի կազմակերպում գումար քանակ	-	-	-	-	-
	-	-	-	-	-
10. Տեղեկատվություն և կապ գումար քանակ	-	-	-	-	-
	-	-	-	-	-
11. Անշարժ գույքի հետ կապված գործունեություն, այդ թվում՝ գումար քանակ	-	-	-	-	-
	-	-	-	-	-
12. Մասնագիտական, զիտական և տեխնիկական գործունեություն գումար քանակ	-	-	-	-	-
	-	-	-	-	-
13. Կրթություն գումար քանակ	-	-	-	-	-
	-	-	-	-	-
14. Առողջապահություն գումար քանակ	-	-	-	-	-
	-	-	-	-	-
15. Մշակույթ, զվարճություն, հանգիստ քանակ	-	-	-	-	-
	-	-	-	-	-
16. Տնտեսության այլ ճյուղեր գումար քանակ	7,692,498.00	-	-	-	-
	3.00	-	-	-	-
17. Հիպոթեկային վարկեր գումար քանակ	33,520.00	-	-	-	-
	4.00	-	-	-	-
18. Ապառողական և այլ վարկեր գումար քանակ	7,668,547.00	2,890,132.00	111.00	-	-
	30.00	5.00	1.00	-	-

Ակտիվներ	Աշխատող ակտիվներ	Չաշխատող ակտիվներ			
Վարկեր, այդ թվում՝	Ստանդարտ/ Ոչ նիսկային	Հսկվող/ Ռիսկային	Ոչ ստանդարտ/ Միջին ռիսկային	Կասկածելի/ Բարձր ռիսկային	Անհուսալի
1. ԳՐ ռեզիդենտներին	395,095,007.00	10,083,312.00	7,146,997.00	16,931,981.00	
2. Ոչ ռեզիդենտներին	43,927,380.00	9,444.00	-	24,868,056.00	
Ընդամենը	439,022,387.00	10,092,756.00	7,146,997.00	41,800,037.00	

Ոչ Ռեզիդենտներին տրված վարկեր 31.12.22

Ակտիվներ	Աշխատող ակտիվներ	Չաշխատող ակտիվներ			
Վարկեր և փոխառվածություններ այդ թվում՝	Ստանդարտ/ Ոչ նիսկային	Հսկվող/ Ռիսկային	Ոչ ստանդարտ/ Միջին ռիսկային	Կասկածելի/ Բարձր ռիսկային	Անհուսալի
	43,927,380.00	9,444.00	-	24,868,056.00	
	44.00	1.00	-	5.00	
1. Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն և ձկնորսություն գումար քանակ	-	-	-	-	-
2. Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում գումար քանակ	-	-	-	-	-
3. Մշակող արդյունաբերություն գումար քանակ	-	-	-	-	-
4. Էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում գումար քանակ	-	-	-	-	-
5. Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում գումար քանակ	-	-	-	-	-
6. Շինարարություն գումար քանակ	-	-	-	-	-
7. Առևտուր գումար քանակ	43,886,373.00	-	-	24,731,602.00	
	7.00	-	-	3.00	
8. Փոխադրումներ և պահեստային տնտեսություն գումար քանակ	4,503.00	-	-	-	-
	1.00	-	-	-	-
9. Կեցության և հանրային մենդի կազմակերպում գումար քանակ	-	-	-	-	-
10. Տեղեկատվություն և կապ գումար քանակ	-	-	-	-	-
11. Անշարժ գույքի հետ կապված գործունեություն, այդ թվում՝ գումար քանակ	-	-	-	-	-
12. Մասնագիտական, գիտական և տեխնիկական գործունեություն գումար քանակ	-	-	-	-	-
13. Կրթություն գումար քանակ	-	-	-	-	-
14. Առողջապահություն գումար քանակ	-	-	-	-	-
15. Մշակույթ, զվարճություն, հանգիստ գումար քանակ	-	-	-	-	-
16. Տնտեսության այլ ճյուղեր գումար քանակ	-	-	-	-	-
17. Հիպոթեկային վարկեր գումար քանակ	16,249.00	-	-	-	-
	3.00	-	-	-	-

18. Սպառողական և այլ վարկեր գումար	20,255.00	9,444.00	-	136,454.00
բանակ	33.00	1.00	-	2.00

Շուկայական ռիսկ

Արտաբժույթային ռիսկ

Բանկում արտաբժույթային ռիսկը գնահատվում է սիջազգային պրակտիկայում ընդունված VaR (Value at Risk) մոդելով, որը որոշակի հավանականությամբ կանխատեսում է արտաբժույթի՝ ապագայում սպասվող առավելագույն տատանման մակարդակը՝ հաշվարկելով Բանկի հավանական կորստի առավելագույն մեծությունը:
 Արտաբժույթային ռիսկի զգալի մասնակցությունը Բանկում հրավանդվում է արտաբժույթային դիրքերի ամենօրյա մոնիթորինգ: Իսկ արտաբժույթային բաց դիրքերի առկայության դեպքում՝ հնարավոր կորուստներից խուսափելու նպատակով կիրառվում են հեջավորման գործիքներ:

Բանկի արտաբժույթի ռիսկի վերլուծությունն ըստ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների.

31.12.22

	ԳՂ դրամ	I խմբի արտաբժույթ*	II խմբի արտաբժույթ**	Ընդամենը
Ակտիվներ				
Կանխիկ դրամական միջոցներ և մնացորդներ ԳՂ ԿԲ-ում	39,900,582.00	47,991,000.00	295,214.00	88,186,796.00
Թանկարժեք մետաղների բանկային ստանդարտացված ձուլակտոր	-	12,577.00	-	12,577.00
Պահանջներ բանկերի և այլ ֆին. կազմ. նկատմամբ	7,507,536.00	7,648,598.00	5,486,839.00	20,642,973.00
Շահույթ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆին.ակտիվներ	-	-	-	-
Հաճախորդներին տրված ամորտիզացված արժեքով հաշվառվող վարկեր և փոխառություններ	325,050,364.00	171,059,376.00	1,952,437.00	498,062,177.00
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ	42,659,521.00	602,726.00	-	43,262,247.00
Ամորտիզացված արժեքով հաշվառվող այլ ֆինանսական ակտիվներ	124,435,260.00	2,046,603.00	-	126,481,863.00
Այլ	6,025,485.00	22,058.00	5,710.00	6,053,253.00
Ընդամենը ակտիվներ	545,578,748.00	229,382,938.00	7,740,200.00	782,701,886.00
Պարտավորություններ				
Պարտավորություններ բանկերի և այլ ֆին. կազմ. նկատմամբ	172,852,955.00	12,711,654.00	622,223.00	186,186,832.00
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	301,948,254.00	153,561,911.00	7,281,539.00	462,791,704.00
Բանկի կողմից թողարկված արժեթղթեր	255,046.00	8,755,930.00	-	9,010,976.00
Շահույթ/վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող պարտավորություն	-	-	-	-
Այլ պարտավորություններ	1,840,876.00	29,228.00	-	1,870,104.00
Ընդամենը պարտավորություններ	476,897,131.00	175,058,723.00	7,903,762.00	659,859,616.00
Զուտ դիրք	68,681,617.00	54,324,215.00	(163,562.00)	122,842,270.00

31.12.23

	ԳՂ դրամ	I խմբի արտաբժույթ*	II խմբի արտաբժույթ**	Ընդամենը
Ակտիվներ				
Կանխիկ դրամական միջոցներ և մնացորդներ ԳՂ ԿԲ-ում	27,188,112.00	27,181,408.00	248,350.00	54,617,870.00
Թանկարժեք մետաղների բանկային	-	6,925.00	-	6,925.00
Պահանջներ բանկերի և այլ ֆին. կազմ.	9,182,672.00	26,013,743.00	2,448,027.00	37,644,442.00
Շահույթ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆին.ակտիվներ	-	-	-	-
Հաճախորդներին տրված ամորտիզացված արժեքով հաշվառվող վարկեր և փոխառություններ	334,359,230.00	162,199,677.00	1,267,068.00	497,825,975.00

իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ	34,249,190.00	-	-	34,249,190.00
Ամրորիզացված արժեքով հաշվառվող այլ ֆինանսական ակտիվներ	140,524,229.00	27,956,908.00	-	168,481,137.00
Այլ	3,824,698.00	21,690.00	4,130.00	3,850,518.00
Ընդամենը ակտիվներ	549,328,131.00	243,380,351.00	3,967,575.00	796,676,057.00
Պարտավորություններ				
Պարտավորություններ բանկերի և այլ ֆին.	156,064,508.00	9,727,994.00	122,713.00	165,915,215.00
Պարտավորություններ հանճատողների	313,309,813.00	179,646,158.00	3,852,118.00	496,808,089.00
Բանկի կողմից թողարկված արժեթղթեր	108,689.00	7,003,308.00	-	7,111,997.00
Շահույթ/վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող պարտավորություն	-	-	-	-
Այլ պարտավորություններ	2,518,753.00	71,956.00	-	2,590,709.00
Ընդամենը պարտավորություններ	472,001,763.00	196,449,416.00	3,974,831.00	672,426,010.00
Զուտ դիրք	77,326,368.00	46,930,935.00	(7,256.00)	124,250,047.00

* «I խմբի արտարժույթի» կազմը՝ ԱՄՆ դոլար, Անգլիական ֆունտ ստերլինգ, եվրո, Ծվեցարական ֆրանկ, Կանադական դոլար, Չինական յուան, ճապոնական յեն, Ռուսով մետաղական հաշիվ:

** «II խմբի արտարժույթի» կազմը՝ Ռուսական ռուբլի, Վրացական լարի, Հոնգ Կոնգ դոլար, Լեհական զլոտի:

Բանկի արտարժույթի ռիսկի վերլուծությունն ըստ ածանցյալ ֆինանսական գործիքների տեսակների.

Ածանցյալ ֆինանսական գործիքների տեսակները	ՀՀ դրամ	I խմբի արտարժույթ*	II խմբի արտարժույթ**	Ընդամենը
Ֆյուչերային գործիքների գծով				
- պարտավորություններ				
- պահանջներ				
Ֆորվարդային գործիքների գծով				
- պարտավորություններ				
- պահանջներ				
Օպցիոնների գծով				
- պարտավորություններ				
- պահանջներ				
Սվոպերի գծով				
- պարտավորություններ				
- պահանջներ				
Այլ ածանցյալ գործիքների գծով				
- պարտավորություններ				
- պահանջներ				
Զուտ դիրք ըստ ածանցյալ ֆինանսական գործիքների	-	-	-	-
Զուտ բաց դիրք*	-	-	-	-

Տոկոսադրույքի ռիսկ

Ակտիվների և պարտավորությունների արդյունավետ կառավարումը ենթադրում է նաև ակտիվների և պարտավորությունների այնպիսի կառավարում, որի արդյունքում բանկը հնարավորինս կխուսափի տոկոսադրույքի ռիսկից: Բանկում տոկոսադրույքի ռիսկի կառավարման խնդիրն է՝ պահպանել ակտիվների ու պարտավորությունների տոկոսադրույքների սպրեդի և զուտ տոկոսային մարժայի նպատակային մակարդակները: Տոկոսադրույքի ռիսկի կառավարման նպատակով բանկում ամսական կտրվածքով հաշվարկվում է ինչպես զուտ տոկոսային մարժան, այնպես էլ ակտիվների ու պարտավորությունների տոկոսադրույքների սպրեդը՝ հաշվի առնելով ակտիվների եկամտաբերությունն ու պարտավորությունների ծախսատարությունը, ինչպես նաև վերջիններիս ժամկետայնությունը: Տոկոսադրույքի ռիսկի զգալի նպաստակով բանկում գործում են ակտիվների և պարտավորությունների գնազույգման (տոկոսադրույքների սահմանման) հատուկ մշակված մեխանիզմներ: Տոկոսադրույքի ռիսկի գնահատման հիմքում ընկած է տոկոսադրույքի նկատմամբ զգայուն ակտիվների և տոկոսադրույքի նկատմամբ զգայուն պարտավորությունների ժամկետայնության ճեղքվածքի (GAP) հաշվարկման մոդելը, որը թույլ է տալիս գնահատել տոկոսադրույքի փոփոխության ազդեցությունը բանկի սպասվող զուտ տոկոսային եկամտի վրա: Բանկում տոկոսադրույքի ռիսկը գնահատվում է նաև դրոշացիայի մոդելով, որը ցույց է տալիս տոկոսադրույքի փոփոխության արդյունքում կապիտալի տնտեսական արժեքի փոփոխությունը՝ հաշվի առնելով ներգրավված պարտավորությունների և տեղաբաշխված ակտիվների ժամկետայնության անհամապատասխանությունը:

Հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ տոկոսաբեր/տոկոսակիր ֆինանսական ակտիվների և պարտավորությունների համար գործող միջին տոկոսադրույքն

ԸՆԴԱՄԵՆԸ	15,360,622.00	42,353,992.00	99,168,955.00	75,123,327.00	38,711,502.00	51,852,010.00	187,901,151.00	187,766,047.00	2,047,464.00	700,285,070.00
1-ին խմբի արտադրույթ	3,388,841	3,029,387	50,980,584	64,784,499	6,523,159	27,405,038	71,216,804		508,008	227,836,320
2-րդ խմբի արտադրույթ	189,277	474,892	5,671,127	125,891	5,291	1,264,139	9,583			7,740,200
Փոփոխվող տոկոսադրույթով										-
Ֆինսված տոկոսադրույթով	15,343,083	42,330,317	3,166,385	60,875,756	32,871,149	51,817,787	187,901,151	187,766,047	508,008	582,579,683
Անտոկոս	17,539	23,675	96,002,570	14,247,571	5,840,353	34,223	-	-	1,539,456	117,705,387
Պատրավորություններ										
Պարտ.բանկերի և այլ ֆին.կազմ			7,181,101	88,170,636	6,603,758	3,922,137	10,348,950	69,960,250		186,186,832
Պարտ.հաճախորդների նկատմամբ ցպահանջ	-	-	148,057,038	54,672,799	50,793,974	99,695,577	108,047,799	1,524,517	-	462,791,704
ժամկետային			148,057,038							148,057,038
այլ				54,672,799	50,793,974	99,695,577	108,047,799	1,524,517		314,734,666
Պարտ.բանկերի կողմից թողարկված արժեթղթ.				102,436		2,217,850	6,690,690			9,010,976
Այլ պարտավորություններ				757,137	372,351		740,616			1,870,104
ԸՆԴԱՄԵՆԸ	-	-	155,238,139.00	143,703,008.00	57,770,083.00	105,835,564.00	125,828,055.00	71,484,767.00	-	659,859,616.00
1-ին խմբի արտադրույթ			55,874,310	17,788,968	17,684,751	29,971,180	53,739,514			175,058,723
2-րդ խմբի արտադրույթ			4,544,360	1,481,023	422,328	801,888	654,163			7,903,762
Խոշոր պարտավորություններ				85,565,986	156,704	659,437	57,554,617			143,936,744
Փոփոխվող տոկոսադրույթով										-
Ֆինսված տոկոսադրույթով			147,156,527	129,061,916	45,849,416	105,725,157	125,828,055	71,484,767		625,105,838
Անտոկոս			8,081,612	14,641,092	11,920,667	110,407				34,753,778
Ձուտ իրացվելիության ճեղքվածք	15,360,622	42,353,992	(56,069,184)	(68,579,681)	(19,058,581)	(53,983,554)	62,073,096	116,281,280	2,047,464	40,425,454
1-ին խմբի արտադրույթ	3,388,841	3,029,387	(4,893,726)	46,995,531	(11,161,592)	(2,566,142)	17,477,290	-	508,008	52,777,597
2-րդ խմբի արտադրույթ	189,277	474,892	1,126,767	(1,355,132)	(417,037)	462,251	(644,580)	-	-	(163,562)
Փոփոխվող տոկոսադրույթով	-	-	-	-	-	-	-	-	-	-
Ֆինսված տոկոսադրույթով	15,343,083	42,330,317	(143,990,142)	(68,186,160)	(12,978,267)	(53,907,370)	62,073,096	116,281,280	508,008	(42,526,155)
Կուտակային իրացվելիության ճեղքվածք	15,360,622	57,714,614	1,645,430	(66,934,251)	(85,992,832)	(139,976,386)	(77,903,290)	38,377,990	40,425,454	659,859,616

31.12.23

Գողվածի անվանումը	Չափաատո		Մարմանը մնացել					անժամկետ	Ընդամենը	
	ժ/անց	ժ/ին	ցպահանջ	մինչև 3ամիս	3-6ամիս	6-12ամիս	1-5տարի			5 տ. ավել
Ակտիվներ										
Կանխիկ դրամ.փոք և ԶԿԿԸ			51,342,870						3,275,000	54,617,870
Պահանջներ բանկերի հ այլ ֆին.կազմ			3,014,327	33,782,544	80,148				767,423	37,644,442
Հաճախորդներին տրված ամորտիզացված արժեթղթի հաշվառվող վարկեր և փոխառություններ	27,234,469	32,213,278		67,125,279	17,421,929	53,323,381	60,632,293	239,875,346		497,825,975
Ֆինանսական ակտիվներ			-	10,870,055	4,572,264	5,871,936	29,258,307	152,106,428	51,337	202,730,327
Շահույթ վնասով վերաչափվող իրական արժեթղթի հաշվառվող										-
Իրական արժեթղթի այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ				3,030,709	4,572,264		23,324,816	3,270,064	51,337	34,249,190
Ամորտիզացված արժեթղթի հաշվառվող այլ ֆինանսական ակտիվներ				7,839,346		5,871,936	5,933,491	148,836,364		168,481,137
ռեպո համ.վաճառված										
Այլ ակտիվներ	1,038	13,137	1,102,720	2,733,623						3,850,518
*Պայմանագրային պահանջներ										-
ԸՆԴԱՄԵՆԸ	27,235,507.00	32,226,415.00	55,459,917.00	114,511,501.00	22,074,341.00	59,195,317.00	89,890,600.00	391,981,774.00	4,093,760.00	796,669,132.00
1-ին խմբի արտադրույթ	3,217,194	12,277,843	29,911,335	72,565,473	4,269,189	35,062,424	76,802,730		274,163	234,380,351
2-րդ խմբի արտադրույթ	34,360	209,846	1,347,216	1,357,480	3,087	1,015,586				3,967,575
Փոփոխվող տոկոսադրույթով										-
Ֆինսված տոկոսադրույթով	27,234,469	32,213,278	780,493	106,202,264	20,452,378	53,835,674	60,661,117	391,981,774	3,819,597	697,181,044
Անտոկոս	1,038	13,137	54,679,424	8,309,237	1,621,963	5,359,643	29,229,483	-	274,163	99,488,088
Պատրավորություններ										
Պարտ.բանկերի և այլ ֆին.կազմ			2,831,583	89,673,965	10,196,261	2,749,523	6,075,506	54,388,377		165,915,215
Պարտ.հաճախորդների նկատմամբ ցպահանջ	-	-	166,090,338	67,127,453	52,646,299	102,422,011	107,000,311	1,521,677	-	496,808,089
ժամկետային			166,090,338							166,090,338
այլ				67,127,453	52,646,299	102,422,011	107,000,311	1,521,677		330,717,751

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«ԻՆՎԵՍՏՐԱՆԿ» ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԻ
հիմնադիրների ընդհանուր ժողովի 10.09.1991թ.
արձանագրային որոշմամբ (թիվ 1 արձանագրություն)

Փոփոխված է՝

«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ բաժնետերերի
ընդհանուր ժողովի 06.10.2023թ. արձանագրային
որոշմամբ (թիվ 2 արձանագրություն)

Խորհրդի նախագահ

Ալֆրեդ Մոէկի



ԳՐԱՆՑՎԱԾ Է

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿՈՒՄ

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ

Մարտին Գալստյան



ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

**«ԱՄԻՕ ԲԱՆԿ»
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
(ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ)**

1. Ընդհանուր դրույթներ

1.1. «ԱՄԻՕ ԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Բանկ) համարվում է շահույթ ստանալու նպատակով հիմնադրված առևտրային կազմակերպություն հանդիսացող իրավաբանական անձ:

1.2. Բանկը հիմնադրվել (ստեղծվել) է որպես առևտրային բանկ «ԻՆՎԵՍՏԲԱՆԿ» անվանումով՝ համաձայն 1991 թվականի սեպտեմբերի 10-ի կնքված հիմնադիր պայմանագրի և հիմնադիրների ընդհանուր ժողովի թիվ 1 արձանագրության:

1993 թվականին «ԻՆՎԵՍՏԲԱՆԿ» առևտրային բանկը վերանվանվել է «ԱՐՄԻՆՎԵՍՏԲԱՆԿ» փայտիրական առևտրային բանկի, որը 1994 թվականին վերակազմավորման միջոցով վերակազմակերպվել է «ՀԱՅԻՆՎԵՍՏԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերության:

2006 թվականին «ՀԱՅԻՆՎԵՍՏԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերությունը վերանվանվել է «ՀԱՅԲԻՉՆԵՍԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերության, իսկ արդեն 2023 թվականի հոկտեմբերի 6-ի «ՀԱՅԲԻՉՆԵՍԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ վերանվանվել «ԱՄԻՕ ԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերության:

1.3. Բանկի հիմնադիր փաստաթուղթը սույն կանոնադրությունն է, որի պահանջները պարտադիր են Բանկի բաժնետերերի և կառավարման մարմինների համար:

1.4. Բանկը համարվում է ստեղծված և ձեռք է բերում իրավաբանական անձի կարգավիճակ Կենտրոնական բանկում գրանցվելու պահից և իրավունք ունի իրականացնել բանկային գործունեություն և «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված ֆինանսական գործառնություններ Կենտրոնական բանկի կողմից բանկային գործունեության իրականացման լիցենզիա ստանալու պահից:

1.5. Բանկը պատասխանատվություն չի կրում պետական իրավասու մարմինների կողմից օրենսդրությամբ սահմանված կարգով հաճախորդի հաշիվների կամ գույքի արգելադրման, առգրավման, բռնագրավման կամ բռնագանձում տարածելու հետևանքով հաճախորդի կրած վնասների համար:

1.6. Բանկը պատասխանատվություն չի կրում իր բաժնետերերի պարտավորությունների համար: Բանկի բաժնետերերը Բանկի պարտավորությունների համար պատասխանատվություն չեն կրում և իրենց պատկանող բաժնետոմսերի արժեքի սահմաններում կրում են Բանկի գործունեության հետ կապված վնասների ռիսկը:

Բանկի բաժնետերերը, ղեկավարները և այլ անձինք օրենքով նախատեսված դեպքերում Բանկի առջև կարող են կրել պատասխանատվություն իրենց գործողությունների կամ անգործության համար:

1.7. Բանկն իրավունք ունի իր անունից ձեռք բերել և իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

1.8. Իր գործունեությունն իրականացնելիս Բանկը ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, Կենտրոնական բանկի խորհրդի նորմատիվ ակտերով, այլ գերատեսչական ակտերով, ինչպես նաև այլ իրավական ակտերով, սույն կանոնադրությամբ և Բանկի ներքին իրավական այլ ակտերով:

1.9. Արգելվում է որևէ կերպ ներգործել Բանկի ղեկավարների վրա՝ նրանց պաշտոնական պարտականությունների կատարման ընթացքում կամ միջամտել Բանկի գործունեությանը՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

Բանկի ղեկավարի վրա ապօրինաբար ներգործելու կամ Բանկի ընթացիկ գործունեությանն ապօրինաբար միջամտելու հետևանքով Բանկին պատճառված վնասը ենթակա է հատուցման՝ օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը և Բանկը պատասխանատու չեն միմյանց պարտավորությունների համար, եթե Բանկը կամ Հայաստանի Հանրապետության կառավարությունը այդպիսիք չեն ստանձնել: Կենտրոնական բանկը և Բանկը միմյանց պարտավորությունների համար պատասխանատվություն չեն կրում:

Բանկն ինքնուրույն է իրականացնում իր հիմնական միջոցների տիրապետումը, օգտագործումը և տնօրինումը, այդ թվում՝ գույքի վերագնահատումը:

1.10. Բանկի գտնվելու վայրն է՝ ՀՀ, ք. Երևան, Նալբանդյան 48:

Բանկի փոստային հասցեն է՝ ՀՀ, 0010, ք. Երևան, Նալբանդյան 48:

Բանկի փոստային հասցեով կամ գտնվելու վայրով փոստի և այլ թղթակցությունների առաքումը համարվում է պատշաճ առաքում (ծանուցում):

1.11. Բանկի լրիվ ֆիրմային անվանումն է.

- հայերեն՝ «ԱՄԻՕ ԲԱՆԿ» Փակ բաժնետիրական ընկերություն
- անգլերեն՝ AMIO BANK Closed Joint Stock Company
- ռուսերեն՝ Закрытое Акционерное Общество «АМИО БАНК»

1.12. Բանկի կրճատ ֆիրմային անվանումն է՝

- հայերեն՝ «ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ

- անգլերեն՝ AMIO BANK CJSC
- ռուսերեն՝ ЗАО «АМИО БАНК»

2. Բանկի բաժնետոմսերը

2.1. Բանկի բաժնետոմսերը բաժնետերերի միջև տեղաբաշխվում են փակ բաժանորդագրության ձևով: Թողարկված բաժնետոմսերի տեղաբաշխման գինը դրանց անվանական արժեքն է կամ Խորհրդի կողմից որոշվող շուկայական արժեքը: Շուկայական արժեքը որոշվում է օրենքով սահմանված կարգով:

Բանկի բաժնետոմսերը ոչ փաստաթղթային ձևի են:

2.2. Բաժնետոմսերի ձեռք բերման դիմաց, որպես վճարման միջոց, օգտագործվում է միայն Հայաստանի Հանրապետության դրամը:

2.3. Բանկի մեկ հասարակ (սովորական) բաժնետոմսը տվյալ բաժնետիրոջը (բաժնետոմսի սեփականատիրոջը) ընդհանուր ժողովում տալիս է մեկ ձայնի իրավունք:

2.4. Բանկը կարող է օրենքով սահմանված կարգով թողարկել և տեղաբաշխել արտոնյալ բաժնետոմսեր, որոնց ընդհանուր անվանական արժեքը կանոնադրական հիմնադրամում չի կարող գերազանցել 25 տոկոսը: Արտոնյալ բաժնետոմսեր թողարկելու դեպքում սույն կանոնադրությամբ պետք է սահմանվեն դրանց տեսակների և դասերի վերաբերյալ տեղեկություններ, ինչպես նաև դրանց սեփականատերերի իրավունքներն ու պարտականությունները սահմանող կանոններ:

2.5. Բանկի բաժնետերերի ռեեստրը վարում է Կենտրոնական դեպոզիտարիան:

3. Բանկի պարտատոմսերը և այլ արժեթղթերը

3.1. Բանկը կարող է օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով թողարկել պարտատոմսեր և այլ արժեթղթեր:

3.2. Բանկի պարտատոմսերի և այլ արժեթղթերի թողարկումը կատարվում է Խորհրդի որոշմամբ: Պարտատոմսերի թողարկման մասին որոշմամբ պետք է սահմանվեն դրանց մարման ձևը, ժամկետները և պայմանները: Պարտատոմսերը պետք է ունենան անվանական արժեք: Բանկի թողարկած բոլոր ապահովված պարտատոմսերի անվանական արժեքների գումարը չպետք է գերազանցի կանոնադրական կապիտալը, կամ այն ապահովման գումարը, որը տրամադրված է Բանկի պարտատոմսեր թողարկելու նպատակով:

«Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված դեպքերում պարտատոմսերի և այլ արժեթղթերի ձեռքբերումը կարող է հանդիսանալ անուղղակի նշանակալից մասնակցություն՝ իր համապատասխան իրավական հետևանքներով:

3.3. Պարտատոմսեր կարող է թողարկվել միայն Բանկի կանոնադրական հիմնադրամի լրիվ վճարումից հետո: Բանկը կարող է թողարկել փոխարկվող պարտատոմսեր և այլ արժեթղթեր, որոնք տալիս են Բանկի պարտատոմսերը և այլ արժեթղթերը բաժնետոմսերի փոխարկման կամ բաժնետոմսերի արտոնյալ ձեռքբերման իրավունք: Ընդ որում, Բանկն իրավունք չունի տեղաբաշխել փոխարկվող պարտատոմսեր և այլ արժեթղթեր, եթե ըստ տեսակների և դասերի հայտարարված բաժնետոմսերի քանակը պակաս է նշված տեսակների և դասերի բաժնետոմսերի այն քանակից, որոնք անհրաժեշտ են փոխարկվող պարտատոմսերը և այլ արժեթղթերը Բանկի բաժնետոմսերի փոխարկելու հնարավորությունն ապահովելու համար: Բանկի պարտատոմսերի և այլ արժեթղթերի փոխարկումն իրականացվում է հաշվի առնելով «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և սույն կանոնադրությամբ նախատեսված կանոնադրական հիմնադրամում մասնակցություն ձեռք բերելու սահմանափակումները:

3.4. Բանկը կարող է թողարկել միաժամանակյա, ինչպես նաև տարաժամկետ (Բանկի կողմից սահմանված ժամկետային հաջորդականությամբ) մարման ժամկետով պարտատոմսեր: Պարտատոմսերի և այլ արժեթղթերի թողարկման որոշմամբ սահմանվում են տվյալ պարտատոմսերի կամ այլ արժեթղթերի տեսակները և դասերը, դրանց սեփականատերերի իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև օրենքով պահանջվող այլ տեղեկություններ:

3.5. Բանկը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով իրավունք ունի թողարկել փողի շուկայի կամ արժեթղթերի շուկայի գործիք հանդիսացող այլ արժեթղթեր:

3.6. Բանկի անվանական պարտատոմսերի և այլ արժեթղթերի սեփականատերերի ռեեստրը Բանկը վարում է օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով:

4. Բանկի բաժնետերերը

4.1. Բանկի բաժնետեր կարող է լինել Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական և իրավաբանական անձինք օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով:

4.2. Բանկի յուրաքանչյուր հասարակ (սովորական) բաժնետոմս դրա՝ սեփականատեր հանդիսացող բոլոր բաժնետերերին տալիս է միևնույն իրավունքները:

4.3. Բանկը պատասխանատվություն չի կրում իր բաժնետերերի պարտավորությունների համար, եթե այդպիսիք չի ստանձնել որպես երրորդ անձ կամ երաշխավոր:

4.4. Բանկի տեղաբաշխված բաժնետոմսերի դիմաց վճարումը ոչ լրիվ կատարած բաժնետերը Բանկի պարտավորությունների համար կրում է համապարտ պարտավորություն նաև իր կողմից չվճարված ներդրման սահմաններում:

4.5. Բանկին պարտադիր ցուցում տալու իրավունք կամ Բանկի գործունեությունը օրենքով չարգելված այլ կերպ կանխորոշելու հնարավորություն ունեցող բաժնետերը(երը) Բանկի անվճարունակության դեպքում Բանկի պարտավորությունների դիմաց կրում է լրացուցիչ (սուբսիդիար) պատասխանատվություն, եթե նշված իրավունքը կամ հնարավորություն ունեցող բաժնետերը(երը) դրանք իրագործելիս նախօրոք իմացել է, որ դրա հետևանքով Բանկը կհայտնվի օրենքով սահմանված անվճարունակության վիճակում, այդ թվում կսպառի հիմնական կապիտալի զգալի մասը:

4.6. Ընդհանուր ժողովում ձայնի իրավունքից օգտվում են միայն հասարակ (սովորական) բաժնետոմսի գինը լրիվ վճարած բաժնետերերը:

4.7. Բանկի սովորական բաժնետոմսերի սեփականատեր բաժնետերը իրավունք ունի՝
ա) անձամբ կամ ներկայացուցչի միջոցով մասնակցել ընդհանուր ժողովին՝ վերջինիս իրավասությանը պատկանող բոլոր հարցերի նկատմամբ ձայնի իրավունքով, ըստ իր բաժնետոմսերի քանակի.

բ) անձամբ կամ ներկայացուցչի միջոցով մասնակցել Բանկի կառավարմանը.

գ) ստանալ շահութաբաժիններ Բանկի գործունեությունից առաջացած շահույթից.

դ) օրենքով և սույն կանոնադրությամբ նախատեսված դեպքերում և կարգով ստանալ Բանկի գործունեության վերաբերյալ տեղեկատվություն.

ե) իր գրավոր դիմումի համաձայն յուրաքանչյուր ամսվան հաջորդող 5-րդ օրվանից ծանոթանալ Բանկի ֆինանսական և այլ հաշվետվություններին և օրենքով սահմանված այլ տեղեկատվությանը.

զ) ընդհանուր ժողովում հանդես գալ առաջարկություններով, ընդհանուր ժողովի օրակարգի վերաբերյալ ներկայացնել առաջարկություններ օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով.

է) ընդհանուր ժողովում քվեարկել իրեն պատկանող բաժնետոմսերի ձայների չափով.

ը) դիմել դատարան՝ ընդհանուր ժողովի կողմից ընդունված և գործող օրենքներին և այլ իրավական ակտերին հակասող որոշումների բողոքարկման նպատակով.

ժ) Բանկի լուծարման դեպքում ստանալ Բանկի գույքի իր հասանելիք մասը.

ժա) առաջնահերթ կարգով ձեռք բերել Բանկի կողմից թողարկվող և տեղաբաշխվող բաժնետոմսերը և այլ արժեթղթերը, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ.

ժբ) ունենալ օրենքով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ իրավունքներ:

4.8. Բանկի բաժնետերը պարտավոր է՝

ա) բաժնետոմսերի թողարկման որոշմամբ սահմանված ժամկետներում լրիվ վճարել իր բաժնետոմսերի արժեքը.

բ) ձեռնպահ մնալ Բանկի հաճախորդների և Բանկի գործունեության վերաբերյալ գաղտնիք հանդիսացող տեղեկությունների հրապարակումից կամ այլ կերպ այլ անձանց դրանք հայտնի դարձնելուց.

գ) կատարել Բանկի կառավարման մարմինների որոշումները.

դ) ենթարկվել օրենքների, այլ իրավական ակտերի և սույն կանոնադրության պահանջներին:

Բանկի բաժնետերերը կարող են կրել նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ պարտավորություններ:

4.9. Բանկի կանոնադրական հիմնադրամում մեկ բաժնետիրոջը պատկանող հասարակ (սովորական) բաժնետոմսերի քանակը չի սահմանափակվում:

5. Բանկի կանոնադրական հիմնադրամը և այլ հիմնադրամները: Բանկի կանոնադրական հիմնադրամում մասնակցություն ձեռք բերելու կարգը, սահմանափակումները: Բանկի կանոնադրական հիմնադրամի նվազեցումը:

5.1. Բանկի կանոնադրական հիմնադրամը.

5.1.1. Բանկի կանոնադրական հիմնադրամը՝ պարտատերերի շահերը երաշխավորող Բանկի գույքի նվազագույն չափն է, որը համալրվում է Հայաստանի Հանրապետության դրամով:

5.1.2. Բանկի կանոնադրական հիմնադրամը կազմում է 170,092,515,260 (մեկ հարյուր յոթանասուն միլիարդ իննսուներկու միլիոն հինգ հարյուր տասնհինգ հազար երկու հարյուր վաթսուն) ՀՀ դրամ, որը բաժանված է 206,260 (երկու հարյուր վեց հազար երկու հարյուր վաթսուն) սովորական բաժնետոմսի՝ յուրաքանչյուրը 824,651 (ութե հարյուր քսանչորս հազար վեց հարյուր հիսունմեկ) ՀՀ դրամ անվանական արժեքով:

5.1.3. Բանկը կարող է լրացուցիչ տեղաբաշխել 207,780 (երկու հարյուր յոթ հազար յոթ հարյուր ութսուն) հատ սովորական բաժնետոմս (հայտարարված բաժնետոմսեր)՝ յուրաքանչյուրը 824,651 (ութե հարյուր քսանչորս հազար վեց հարյուր հիսունմեկ) ՀՀ դրամ անվանական արժեքով:

5.2. Բանկի կանոնադրական հիմնադրամի ավելացումը

5.2.1. Բանկը կարող է ավելացնել իր կանոնադրական հիմնադրամը Բանկի բաժնետոմսերի անվանական արժեքի մեծացման կամ լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման միջոցով:

Բանկն իրավունք չունի անցկացնել իր թողարկված բաժնետոմսերի բաց բաժանորդագրություն կամ անսահմանափակ թվով անձանց այլ կերպ առաջարկել ձեռք բերել դրանք:

Եթե նախկինում տեղաբաշխված բաժնետոմսերի արժեքի գումարը լրիվ վճարված չէ, ապա Բանկը կանոնադրական հիմնադրամը չի կարող մեծացնել ֆինանսական միջոցների ներգրավման հաշվին:

Լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման մասին որոշմամբ պետք է սահմանվի՝

ա) լրացուցիչ տեղաբաշխվող յուրաքանչյուր դասի (առկայության դեպքում) հասարակ (սովորական) և արտոնյալ բաժնետոմսերի քանակը՝ այդ բաժնետոմսերի սույն կանոնադրությամբ հայտարարված քանակի սահմաններում.

բ) լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման ժամկետները և պայմանները, այդ թվում՝ դրանց ձեռքբերման նախապատվություն ունեցող բաժնետերերի և այլ արժեթղթերի սեփականատերերի միջև տեղաբաշխվող բաժնետոմսերի արժեքը.գ) օրենքով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ տվյալներ:

5.2.2. Բանկն իր գործունեության ֆինանսական արդյունքներն ամփոփելուց հետո կարող է տեղաբաշխված բաժնետոմսերի անվանական արժեքի մեծացման միջոցով ավելացնել կանոնադրական հիմնադրամը՝

ա) շահույթի մի մասը փոխանցելով կանոնադրական հիմնադրամ.

բ) Բանկի զուտ ակտիվների (սեփական կապիտալի) արժեքից կանոնադրական հիմնադրամի, գլխավոր պահուստի և արտոնյալ բաժնետոմսերի (դրանց առկայության դեպքում) լուծարային ու անվանական արժեքների տարբերության ընդհանուր գումարը գերազանցող մասը լրիվ կամ մասնակի փոխանցելով կանոնադրական հիմնադրամ:

5.2.3. Բաժնետոմսերի անվանական արժեքը մեծացնելու միջոցով Բանկը չի կարող ավելացնել կանոնադրական հիմնադրամն ավելի, քան ընդհանուր ժողովի հաստատած վերջին հաշվեկշռում կամ վերջին աուդիտի արդյունքներով սահմանված զուտ ակտիվների արժեքն է:

5.2.4. Կանոնադրական հիմնադրամի ավելացման մասին որոշումն ընդունում է խորհուրդը:

5.2.5. Բանկը չի կարող բաժնետոմսեր թողարկել նաև իր տնտեսական գործունեությամբ առաջացած վնասները ծածկելու համար:

5.3. Բանկի կանոնադրական հիմնադրամի նվազեցումը.

5.3.1. Բանկի փաստացի համալրված կանոնադրական հիմնադրամի նվազեցումը գործունեության ընթացքում՝ դրա հաշվին շահութաբաժիններ բաշխելու կամ այլ ձևերով արգելվում է, բացառությամբ «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և սույն կանոնադրության 5.3.2. կետով նախատեսված դեպքերի:

5.3.2. Ձայնի իրավունք տվող բանկի բաժնետոմսերի սեփականատերերը իրավունք ունեն Բանկից պահանջելու մասնակցության հետգնման գնի որոշում և իրենց պատկանող բաժնետոմսերի կամ դրանց մի մասի հետգնում, եթե՝

ա) որոշում է ընդունվել Բանկի վերակազմակերպման, նախապատվության իրավունքի կասեցման կամ խոչոր գործարք կնքելու մասին և տվյալ բաժնետերերը քվեարկել են Բանկի վերակազմակերպման, նախապատվության իրավունքի կասեցման կամ խոչոր գործարք կնքելու դեմ կամ այդ հարցերով քվեարկությանը չեն մասնակցել:

բ) կանոնադրության մեջ լրացումներ կամ փոփոխություններ են կատարվել, կամ հաստատվել է կանոնադրությունը նոր խմբագրությամբ, որի հետևանքով սահմանափակվել են նշված բաժնետերերի իրավունքները, և նրանք դեմ են քվեարկել կամ քվեարկությանը չեն մասնակցել:

Բանկից իրենց մասնակցության հետգնման պահանջի իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմվում է Բանկի բաժնետերերի ռեեստրի տվյալների հիման վրա, այն ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող մասնակիցների ցուցակը կազմելու օրվա դրությամբ, որի օրակարգը պարունակում է հարցեր, որոնց ընդունումը հանգեցրել է բաժնետերերի իրավունքների՝ սույն կետի առաջին պարբերությամբ նշված սահմանափակմանը:

5.3.3. Բանկի կողմից մասնակցության հետգնումը կատարվում է դրա շուկայական արժեքով, որը որոշվում է առանց մասնակցության գնահատման և հետգնման պահանջի իրավունք տվող Բանկի գործողությունների հետևանքով առաջացող փոփոխությունները հաշվի առնելու:

5.3.4. Բանկը պարտավոր է տեղեկացնել բաժնետերերին՝ նրանց պատկանող բաժնետոմսերի հետգնման պահանջի իրավունքի և իրականացման կարգի մասին: Ընդհանուր ժողովի մասին ծանուցումը, որի օրակարգում ընդգրկված են հարցեր, որոնց վերաբերյալ քվեարկությունը կարող է օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով հանգեցնել բաժնետոմսերի հետգնման պահանջի իրավունքի առաջացմանը (5.3.2. կետ), պետք է պարունակի սույն կետում նշված տեղեկությունները: Ծանուցումը պետք է պարունակի նաև տեղեկություններ բաժնետոմսերի հետգնման գնի մասին, եթե վերջինս սահմանված կարգով մինչ այդ որոշված է:

Նշված ընդհանուր ժողովի որոշումների ընդունման պահից՝ 7-օրյա ժամկետում, Բանկը պարտավոր է ծանուցել բաժնետոմսերի հետգնման իրավունք ունեցող բաժնետերերին՝ նրանց մոտ Բանկից բաժնետոմսերի հետգնման պահանջի իրավունքի առաջացման և հետգնման կարգի մասին: Բաժնետիրոջ՝ իրեն պատկանող բաժնետոմսերը հետգնելու մասին գրավոր պահանջը, որը պարունակում է տեղեկություններ հետգնման ներկայացված բաժնետոմսերի քանակի և բաժնետիրոջ բնակության (գտնվելու) վայրի մասին, ներկայացվում է Բանկ՝ ընդհանուր ժողովի կողմից համապատասխան որոշումների ընդունման պահից ոչ ուշ, քան 45 օրվա ընթացքում:

Սույն կետում սահմանված ժամկետի ավարտից հետո Բանկը պարտավոր է 30 օրվա ընթացքում հետգնել բաժնետոմսերը՝ հետգնման գրավոր պահանջ ներկայացրած բաժնետերերից: Բաժնետոմսերի հետգնումն իրականացվում է սույն կետում նշված ծանուցման մեջ սահմանված գնով:

Բաժնետոմսերի հետգնմանն ուղղվող միջոցների գումարը չի կարող գերազանցել Բանկի զուտ ակտիվների արժեքի տասն տոկոսը: Զուտ ակտիվների արժեքը սահմանվում է սույն կանոնադրության 5.3.2 կետի առաջին պարբերության (ա) և (բ) ենթակետերում նշված որոշումների ընդունման պահի դրությամբ:

Եթե բաժնետերերի պահանջով հետգնման ենթակա բաժնետոմսերի գումարային արժեքը գերազանցում է այն գումարը, որը Բանկը կարող է տրամադրել բաժնետոմսերի հետգնման համար, ապա բաժնետոմսերը հետ են գնվում բաժնետերերի ներկայացված պահանջներին համամասնորեն:

Եթե բաժնետերը համաձայն չէ հետգնման գնի հետ, ապա նա իրավունք ունի բաժնետոմսերի վերագնահատման պահանջով դիմել դատարան՝ Բանկի կողմից բաժնետերերին վճարումը կատարելու սահմանված օրից 3 ամսվա ընթացքում:

Սույն կանոնադրության 5.3.2 կետով սահմանված հիմքերով հետգնված բաժնետոմսերն անցնում են Բանկի տնօրինմանը: Նշված բաժնետոմսերը չեն տալիս ձայնի իրավունք, հաշվի չեն առնվում ձայների հաշվարկման ժամանակ, և դրանցով շահութաբաժիններ չեն հաշվարկվում: Դրանք ենթակա են տեղաբաշխման մեկ տարվա ընթացքում: Հակառակ դեպքում ընդհանուր ժողովը պարտավոր է որոշում ընդունել նշված բաժնետոմսերի մարման միջոցով կանոնադրական կապիտալի չափի նվազեցման մասին:

5.3.5. Բանկի կանոնադրական հիմնադրամի նվազեցում թույլատրվում է նաև «Բանկերի և վարկային կազմակերպությունների սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դեպքում:

5.3.6. Մասնակցության հետգնման համար անհրաժեշտ է Կենտրոնական բանկի խորհրդի համաձայնությունը: Կենտրոնական բանկը կարող է մերժել այդ համաձայնություն տալը «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դեպքերում:

5.3.7. Բանկի կողմից իր բաժնետոմսերը հետ գնելու դեպքում կանոնադրական հիմնադրամի նվազեցման կամ տվյալ բաժնետոմսերի իրացման մասին որոշումն ընդունվում է ընդհանուր ժողովի կողմից՝ դրան մասնակցող քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 3/4-ով, սակայն ոչ պակաս բոլոր քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 2/3-ից:

5.4. Բանկի կանոնադրական հիմնադրամում մասնակցություն ձեռք բերելը և դրա սահմանափակումները

5.4.1. Բանկի բաժնետերերը օրենքով և սույն կետով սահմանված կարգով ցանկացած ժամանակ կարող են օտարել իրենց պատկանող բաժնետոմսերը:

Բաժնետիրոջ կողմից բաժնետոմսերի օտարումն իրականացվում է հաշվի առնելով «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված Բանկի կանոնադրական հիմնադրամում այլ մասնակցություն ձեռք բերելու սահմանափակումները:

Բանկի բաժնետերն ունի Բանկի այլ բաժնետերերի կողմից վաճառվող բաժնետոմսերը ձեռք բերելու նախապատվության իրավունք իրենց պատկանող բաժնեմասին համամասնորեն: Եթե սույն կետով սահմանված ժամկետում բաժնետերերից ոչ մեկը չի օգտվում բաժնետոմսերը գնելու նախապատվության իր իրավունքից, ապա բաժնետոմսերը կարող են օտարվել երրորդ անձանց: Բաժնետերը օտարելու իր մտադրության մասին գրավոր ձևով հայտնում է Բանկի վարչության նախագահին: Վարչության նախագահը պարտավոր է գրությունը Բանկ մուտքագրվելու պահից 5-օրյա ժամկետում տեղեկացնել Բանկի մյուս բաժնետերերին սույն կանոնադրությամբ ընդհանուր ժողովի գումարման համար սահմանված ծանուցման կարգով: Բաժնետերերի կողմից առաջարկվող բաժնետոմսերը գնելու նախապատվության իրավունքի ժամկետը սահմանվում է 40 օր:

Բանկի կողմից փակ բաժանորդագրության կարգով տեղաբաշխվող բաժնետոմսեր կարող են ձեռք բերել նաև բանկի մասնակից չհանդիսացող անձիք:

Բանկի բաժնետերերը (հասարակ բաժնետոմսերի սեփականատերերը) Բանկի կողմից տեղաբաշխվող բաժնետոմսերի և բաժնետոմսերի փոխարկվող արժեթղթերի ձեռքբերման նախապատվության իրավունք ունեն, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի: Նշված նախապատվության իրավունքը բաժնետերերն իրականացնում են համապատասխան տեղաբաշխման մասին իրենց ծանուցելու պահից 10 օրվա ընթացքում:

Բանկի քվեարկող բաժնետոմսերի սեփականատերեր հանդիսացող բաժնետերերը պետք է ընդհանուր ժողովի գումարման մասին սահմանված կարգով Բանկի դրամական վճարման ենթակա քվեարկող բաժնետոմսերի և քվեարկող բաժնետոմսերի փոխարկվող արժեթղթերի տեղաբաշխումն սկսվելու օրվանից առնվազն երեսուն օր առաջ ծանուցվեն նախապատվության իրավունքի՝ իրենց կողմից իրականացման հնարավորության մասին:

Ծանուցումը պետք է տեղեկություններ պարունակի՝

ա) տեղաբաշխվող քվեարկող բաժնետոմսերի և քվեարկող բաժնետոմսերի փոխարկվող արժեթղթերի քանակի մասին.

բ) տեղաբաշխվող քվեարկող բաժնետոմսերի և քվեարկող բաժնետոմսերի փոխարկվող արժեթղթերի տեղաբաշխման գնի (այդ թվում՝ տեղաբաշխվող քվեարկող բաժնետոմսերի և քվեարկող բաժնետոմսերի փոխարկվող արժեթղթերի ձեռքբերման նախապատվության իրավունք ունեցող Բանկի բաժնետերերի համար տեղաբաշխման գնի) մասին.

գ) Ընկերության բաժնետերերի կողմից նախապատվության իրավունքով ձեռք բերվող բաժնետոմսերի և քվեարկող բաժնետոմսերի փոխարկվող արժեթղթերի քանակի որոշման կարգի, ինչպես նաև այդ իրավունքի իրականացման կարգի և ժամկետների մասին:

Բաժնետերն իրավունք ունի իրականացնել իր նախապատվության իրավունքը լրիվ ծավալով կամ մասնակիորեն՝ քվեարկող բաժնետոմսերի կամ քվեարկող բաժնետոմսերի փոխարկվող արժեթղթերի ձեռքբերման մասին Բանկի գրավոր ծանուցում ուղարկելու միջոցով, որը պետք է բովանդակի՝

ա) բաժնետիրոջ լրիվ ֆիրմային անվանումը (ֆիզիկական անձի համար՝ անունը), պետական գրանցման տվյալները (անձնագրային տվյալները), գտնվելու (բնակության) վայրը.

բ) ձեռք բերվող բաժնետոմսերի և (կամ) արժեթղթերի քանակը.

գ) բաժնետոմսերի և (կամ) արժեթղթերի դիմաց վճարման մասին փաստաթուղթը:

Ծանուցումը պետք է ներկայացվի բանկի քվեարկող բաժնետոմսերի և քվեարկող բաժնետոմսերի փոխարկվող արժեթղթերի տեղաբաշխումն սկսելու օրվանից ոչ ուշ, քան մեկ օր առաջ:

5.4.2. Անձը կամ փոխկապակցված անձինք մեկ կամ մի քանի գործարքների հետևանքով Բանկի կանոնադրական հիմնադրամում կարող են նշանակալից մասնակցություն ձեռք բերել միայն Կենտրոնական բանկի նախնական համաձայնությամբ:

Բանկի կանոնադրական հիմնադրամում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու նախնական համաձայնությունն ստանալու համար Բանկի միջնորդությամբ անձը Կենտրոնական բանկ է ներկայացնում հայտարարություն այն մասին, որ իր մասնակցության միջոցով որևէ այլ անձ Բանկում անուղղակի նշանակալից մասնակցություն ունեցող անձի կարգավիճակ ձեռք չի բերում, հակառակ դեպքում այդ անձը պարտավոր է ներկայացնել նաև անուղղակի նշանակալից մասնակցություն ձեռք բերող անձանց վերաբերյալ Կենտրոնական բանկի սահմանած փաստաթղթերը: Անուղղակի նշանակալից մասնակցի կարգավիճակ ձեռք բերելու համար սույն կետով սահմանված կարգով պահանջվում է Կենտրոնական բանկի նախնական համաձայնությունը:

Բանկի կանոնադրական հիմնադրամում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու նախնական համաձայնությունը ստանալու համար Բանկի միջնորդությամբ անձը Կենտրոնական բանկ պետք է ներկայացնի նաև ներդրվող միջոցների ծագման օրինականության վերաբերյալ բավարար և ամբողջական հիմնավորումներ (փաստաթղթեր, տեղեկություններ և այլն), ինչպես նաև Կենտրոնական բանկի սահմանած ձևով այն իրավաբանական անձանց վերաբերյալ տվյալները (այդ թվում՝ անվանումը, գտնվելու վայրը, ֆինանսական հաշվետվությունները, տեղեկություններ ղեկավարների մասին, տեղեկություններ նշանակալից մասնակցություն ունեցող անձանց մասին), որոնցում Բանկի կանոնադրական հիմնադրամում նշանակալից մասնակցություն ձեռք բերող անձը հանդիսանում է նշանակալից մասնակցություն ունեցող անձ:

Բանկի կանոնադրական հիմնադրամում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու նախնական համաձայնությունն ստանալու համար Բանկի միջնորդությամբ անձի կամ փոխկապակցված անձանց կողմից Կենտրոնական բանկ ներկայացվող օրենքով սահմանված փաստաթղթերի և այլ փաստաթղթերի, տեղեկությունների ցանկը, ձևը, դրանց ներկայացման կարգը և պայմանները սահմանում է Կենտրոնական բանկը:

Կենտրոնական բանկը սույն կետով սահմանված կարգով պահանջվող բոլոր փաստաթղթերն ստանալուց հետո՝ մեկամսյա ժամկետում, քննում է դրանք: Կենտրոնական բանկի կողմից պահանջվող որոշակի փաստեր պարզաբանելու նպատակով մեկամսյա ժամկետը կարող է Կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ կասեցվել: Կենտրոնական բանկի կողմից մեկամսյա ժամկետում դիմումը չմերժելու կամ մեկամսյա ժամկետը կասեցնելու մասին անձին չտեղեկացնելու դեպքում համաձայնությունը համարվում է տրված:

5.4.3. Կենտրոնական բանկը մերժում է դիմումը «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դեպքերում:

5.4.4. Առանց Կենտրոնական բանկի նախնական համաձայնության, Բանկի կանոնադրական հիմնադրամում նշանակալից մասնակցության ձեռքբերման պայմանագիրն առոչինչ է:

5.4.5. Օֆշորային տարածքներում մշտական բնակության վայր ունեցող կամ գործունեություն ծավալող ֆիզիկական անձինք, ինչպես նաև այդ տարածքներում ստեղծված կամ գրանցված իրավաբանական, իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող անձինք կամ սույն կետով սահմանված անձանց հետ փոխկապակցված անձինք մեկ կամ մի քանի գործարքների հետևանքով Բանկի կանոնադրական հիմնադրամում մասնակցություն (անկախ մասնակցության չափից) կարող են ձեռք բերել բացառապես սույն կանոնադրության և օրենքով սահմանված կարգով՝ Կենտրոնական բանկի նախնական համաձայնությամբ: Օֆշորային տարածքների ցանկը սահմանում է Կենտրոնական բանկի խորհուրդը:

Սույն կետով սահմանված անձանց կամ նրանց հետ փոխկապակցված անձանց մասնակցությամբ ստեղծված իրավաբանական անձինք Բանկի կանոնադրական հիմնադրամում մասնակցություն (անկախ դրա չափից) կարող են ձեռք բերել բացառապես սույն կանոնադրության և օրենքով սահմանված կարգով՝ Կենտրոնական բանկի նախնական համաձայնությամբ:

5.4.6. Կենտրոնական բանկի նախնական համաձայնությունը պահանջվում է յուրաքանչյուր նոր գործարքի կամ գործարքների իրականացման դեպքում, որոնց արդյունքում անձի և (կամ) փոխկապակցված անձանց մասնակցությունը բանկի կանոնադրական կապիտալում կգերազանցի համապատասխանաբար 10, 20, 50 և 75 տոկոսը:

5.5. Բանկի պահուստային հիմնադրամը

5.5.1. Բանկում ստեղծվում է պահուստային հիմնադրամ (գլխավոր պահուստ)՝ փաստացի համալրված կանոնադրական հիմնադրամի 15 (տասնհինգ) տոկոսի չափով:

5.5.2. Պահուստային հիմնադրամը ձևավորվում է Բանկի շահույթից տարեկան հատկացումների միջոցով: Եթե պահուստային հիմնադրամը կազմում է կանոնադրական հիմնադրամի 15 (տասնհինգ) տոկոսից ավելի փոքր մեծություն, ապա հատկացումներն այդ հիմնադրամին կատարվում են շահույթից՝ առնվազն 5 (հինգ) տոկոսի չափով:

5.5.3. Պահուստային հիմնադրամն օգտագործվում է Բանկի կորուստները ծածկելու, ինչպես նաև Բանկի պարտատոմսերը մարելու և բաժնետոմսերը հետ գնելու համար, եթե Բանկի շահույթը և այլ միջոցները դրա համար չեն բավարարում:

5.5.4 Պահուստային հիմնադրամը չի կարող օգտագործվել այլ նպատակների համար:

6. Բանկի կողմից իրականացվող ֆինանսական գործառնությունները և այլ գործարքները

6.1. Բանկը բանկային գործունեություն իրականացնելու լիցենզիայի հիման վրա ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների հետ կարող է իրականացնել օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված ֆինանսական գործառնությունները:

6.2. Բանկը կարող է Կենտրոնական բանկի թույլտվությամբ իրականացնել «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով ուղղակիորեն չնախատեսված գործունեություն կամ գործառնություններ, եթե դրանք բխում են կամ սերտորեն կապված են բանկային գործունեության կամ ֆինանսական գործառնությունների հետ:

6.3. Բանկը «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքով, այլ օրենքներով և Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով նախատեսված դեպքերում և կարգով իրավունք ունի իրականացնել արժեթղթերի շուկայի մասնագիտացված գործունեություն (բրոքերային, դիլերային, հավատարմագրային կառավարման, պահառուական և այլն):

Բանկն իրականացնում է մասնագիտացված գործունեություն պետական արժեթղթերի շուկայում՝ մասնակցելով պետական պարտատոմսերի տեղաբաշխման գործընթացում (դիլերային, գործակալական, պահառուական գործունեություն):

6.4. Բանկը կարող է կնքել քաղաքացիաիրավական ցանկացած գործարք, որն անհրաժեշտ կամ նպատակահարմար է իրեն օրենքով թույլատրված գործունեությունն իրականացնելու համար, և որը չի հակասում «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքով սահմանված այլ պահանջների:

Բանկը չի կարող իրականացնել արտադրական, առևտրային և ապահովագրական գործունեություն, եթե օրենքով այլ բան սահմանված չէ:

6.5. Բանկը ֆինանսական գործառնությունները կատարում է ինչպես Հայաստանի Հանրապետության դրամով, այնպես էլ արտարժույթով, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

6.6. Բանկն ինքն է որոշում ներգրավվող ավանդների, տրամադրվող վարկերի, իր կողմից թողարկված արժեթղթերի տոկոսադրույքները և իր կողմից մատուցվող այլ ծառայությունների դիմաց գանձվող միջնորդավճարների չափը:

6.7. Բանկի և հաճախորդի միջև հարաբերությունները կրում են պայմանագրային բնույթ:

Բանկը իր գործունեության այնպիսի կանոններ է սահմանում, որպեսզի բացառվի շահերի բախումը, մասնավորապես՝

ա) մեկ հաճախորդի նկատմամբ Բանկի ստանձնած պարտավորությունները չհակասեն մեկ այլ հաճախորդի նկատմամբ նրա ստանձնած պարտավորություններին:

բ) Բանկի ղեկավարների և աշխատակիցների շահերը չհակասեն Բանկի հաճախորդի նկատմամբ Բանկի ստանձնած պարտավորություններին:

6.8. Առանց Կենտրոնական բանկի նախնական համաձայնության Բանկին արգելվում է այնպիսի գործարքներ կամ գործառնություններ իրականացնելը, որոնց արդյունքում Բանկի մասնակցությունը՝

ա) մեկ այլ անձի կանոնադրական կապիտալում 4,99 տոկոս և ավելի մասնակցություն է.

բ) մեկ անձի կանոնադրական կապիտալում գերազանցում է Բանկի ընդհանուր կապիտալի 15 տոկոսը.

գ) բոլոր անձանց կանոնադրական կապիտալներում գերազանցում է Բանկի ընդհանուր կապիտալի 35 տոկոսը.

Բանկը, օրենքով սահմանված կարգով, այլ անձանց կանոնադրական կապիտալներում մասնակցություն ձեռք բերելիս տվյալ անձանց հաշվեկշիռը միավորում է իր հաշվեկշռում՝ Կենտրոնական բանկի կողմից սահմանված կարգով:

Կենտրոնական բանկի նախնական համաձայնությունը պահանջվում է յուրաքանչյուր նոր գործարքի կամ գործարքների իրականացման դեպքում, որոնց արդյունքում Բանկի մասնակցությունը մեկ այլ կամ միևնույն անձի կանոնադրական կապիտալում գերազանցում է 9 տոկոսը, 15 տոկոսը, 25 տոկոսը, 35 տոկոսը, 50 տոկոսը, 70 տոկոսը կամ կազմում է 100 տոկոս:

6.9. Սույն կանոնադրության 6.8 կետով նախատեսված նախնական համաձայնությունը չի պահանջվում, եթե՝

ա) մեկ այլ անձի կանոնադրական կապիտալում մասնակցությունը Բանկին է անցել Բանկի նկատմամբ ստանձնած և չկատարած պարտավորությունների դիմաց: Նման կարգով ձեռք բերված մասնակցությունը Բանկը պետք է օտարի հնարավոր կարճ ժամանակամիջոցում, բայց վեց ամսից ոչ ուշ: Կենտրոնական բանկը, հաշվի առնելով արժեթղթերի շուկայում տիրող իրավիճակը, ինչպես նաև տվյալ բանկի ֆինանսական վիճակը, կարող է հիշյալ բաժնետոմսերից առավել բարենպաստ պայմաններով օտարելու նպատակով սույն ենթակետով սահմանված ժամկետը երկարացնել ևս վեց ամսով.

բ) Բանկը մի այլ անձի կանոնադրական կապիտալում մասնակցությունը ձեռք է բերել իր հաճախորդի անունից և հաշվին կամ կոմիսիոն հիմունքներով բաժանորդագրական գործունեություն իրականացնելու ընթացքում, եթե ըստ պայմանագրի Բանկը պարտավոր է թողարկողին հատուցել միայն իրացված (տեղաբաշխված) արժեթղթերի արժեքը:

6.10. Բանկը՝ Կենտրոնական բանկի նախնական համաձայնությամբ, օրենքով սահմանված ֆինանսական գործառնությունների, ինչպես նաև բանկային գործունեության բնականոն ընթացքն ապահովող այլ (օժանդակ)

գործառնությունների կատարումն ամբողջությամբ կամ մասամբ կարող է որոշակի ժամկետով կամ անժամկետ պատվիրակել այլ իրավաբանական անձանց (կոնտրագենտ):

Օրենքով սահմանված այն ֆինանսական գործառնությունները, որոնք կարող են իրականացվել բացառապես որոշակի լիցենզիայի կամ հատուկ այլ թույլտվության առկայության պարագայում, չեն կարող պատվիրակվել, բացառությամբ այն դեպքերի, երբ պատվիրակման արդյունքում էականորեն կբարձրանա Բանկի ռեսուրսների օգտագործման արդյունավետությունը, կնվազի տվյալ գործառնության գծով Բանկի ծախսատարությունը, ինչպես նաև կբարձրանա մատուցվող ծառայության որակը: Նշված գործառնությունները կարող են պատվիրակվել միայն համապատասխան լիցենզիա (թույլտվություն) ունեցող անձի:

7. Բանկի շահույթի բաշխումը

7.1. Տարեկան գործունեության արդյունքում Բանկի ստացված համախառն եկամտի և օրենքով թույլատրված նվազեցումների դրական տարբերությունը՝ հարկվող շահույթը, ենթակա է հարկման՝ Հայաստանի Հանրապետության հարկային օրենսդրության համաձայն:

7.2. Բանկի զուտ շահույթը որոշվում է որպես Բանկի ստացած համախառն եկամտի, կատարված բոլոր նվազեցումների և վճարված հարկերի դրական տարբերություն:

7.3. Բանկն իրավունք ունի որոշում ընդունելու (հայտարարելու) իր բաժնետերերին եռամսյակային, կիսամսյակային կամ տարեկան շահութաբաժինների վճարման մասին:

7.4. Միջանկյալ (եռամսյակային և կիսամսյակային) շահութաբաժինների վճարման, շահութաբաժնի չափի և դրա վճարման ձևի մասին որոշումն ընդունում է խորհուրդը: Տարեկան շահութաբաժինների վճարման, շահութաբաժնի չափի և դրա վճարման ձևի մասին որոշումն ընդունում է ընդհանուր ժողովը՝ խորհրդի առաջարկությամբ: Միջանկյալ շահութաբաժինների չափը չի կարող գերազանցել նախորդ ֆինանսական տարվա արդյունքներով բաշխված շահութաբաժնի 50 տոկոսը: Տարեկան շահութաբաժինների չափը չի կարող պակաս լինել արդեն վճարված միջանկյալ շահութաբաժինների չափից:

7.5. Եթե ընդհանուր ժողովի որոշմամբ տարեկան շահութաբաժինների չափը սահմանվում է արդեն վճարված միջանկյալ շահութաբաժինների չափին հավասար, ապա տարեկան շահութաբաժիններ չեն վճարվում:

Եթե ընդհանուր ժողովի որոշմամբ տարեկան շահութաբաժինների չափը սահմանվում է արդեն վճարված միջանկյալ շահութաբաժինների չափից ավելի, ապա տարեկան շահութաբաժինները վճարվում են սահմանված տարեկան շահութաբաժնի և տվյալ տարում արդեն վճարված միջանկյալ շահութաբաժինների գումարի տարբերությամբ:

7.6. Բանկի ընդհանուր ժողովն իրավունք ունի որոշում ընդունելու շահութաբաժիններ չվճարելու:

7.7. Տարեկան շահութաբաժինների վճարման ժամկետը սահմանվում է ընդհանուր ժողովի՝ շահութաբաժիններ վճարելու մասին որոշմամբ: Միջանկյալ շահութաբաժինների վճարման ժամկետը սահմանվում է խորհրդի՝ միջանկյալ շահութաբաժիններ վճարելու մասին որոշմամբ, բայց ոչ շուտ, քան տվյալ որոշման ընդունումից 30 օր հետո:

7.8. Շահութաբաժինների յուրաքանչյուր վճարման համար խորհուրդը կազմում է շահութաբաժիններ ստանալու իրավունք ունեցող մասնակիցների ցուցակ, որում պետք է ընդգրկվեն՝

ա) միջանկյալ շահութաբաժիններ վճարելու դեպքում՝ բանկի այն մասնակիցները, որոնք ընդգրկվել են բանկի մասնակիցների ռեեստրում՝ խորհրդի միջանկյալ շահութաբաժիններ վճարելու մասին որոշման կայացման օրվանից առնվազն 10 օր առաջ:

բ) տարեկան շահութաբաժիններ վճարելու դեպքում՝ բանկի այն մասնակիցները, որոնք ընդգրկվել են բանկի մասնակիցների ռեեստրում՝ բանկի մասնակիցների տարեկան ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող մասնակիցների ցուցակը կազմելու օրվա դրությամբ:

7.9. Բանկի մասնակիցներին շահութաբաժիններ բաշխելն արգելվում է, եթե այդ պահին Բանկի կրած կորուստները (վնասները) հավասար են կամ գերազանցում են Բանկում առկա չբաշխված զուտ շահույթի գումարը:

8. Բանկի մասնաճյուղերը, ներկայացուցչությունները և հիմնարկները

8.1. Բանկը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետությունում և արտասահմանում կարող է հիմնել իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող մասնաճյուղեր և ներկայացուցչություններ:

8.2. Բանկի մասնաճյուղ, ներկայացուցչություն, հիմնարկ ստեղծելու մասին որոշումն ընդունում է Բանկի խորհուրդը: Բանկի մասնաճյուղերը, ներկայացուցչությունները, հիմնարկները գործում են Բանկի խորհրդի կողմից հաստատված կանոնադրությունների հիման վրա:

9. Բանկի կառավարման մարմինները

9. Բանկի կառավարման մարմիններն են՝
- ա) Բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովը,
 - բ) Բանկի խորհուրդը,
 - գ) Բանկի վարչության նախագահը,
 - դ) Բանկի վարչությունը:

Բացի վերը նշված կառավարման մարմիններից Բանկն ունի նաև գլխավոր հաշվապահ, ներքին աուդիտի ստորաբաժանում, ռիսկերի կառավարման և համապատասխանության ապահովման գործառույթների պատասխանատուներ:

9.1. Բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովը

9.1.1. Ընդհանուր ժողովը Բանկի կառավարման բարձրագույն մարմինն է:

9.1.2. Բանկը պարտավոր է ամեն տարի գումարել բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողով: Տարեկան ընդհանուր ժողովը գումարվում է ֆինանսական տարվա ավարտից հետո՝ 4(չորս) ամսվա ընթացքում:

9.1.3. Ընդհանուր ժողովը գումարվում է բաժնետերերի համատեղ նիստի կամ հարցման կարգով (հեռակա քվեարկություն):

Ընդհանուր ժողովի անցկացման տարին, ամիսը, ամսաթիվը և կարգը, ինչպես նաև ընդհանուր ժողովի անցկացման մասին ծանուցման կարգը, բաժնետերերին տրամադրվող նյութերի ցանկը սահմանում է խորհուրդը՝ օրենքի և սույն կանոնադրության պահանջներին համապատասխան:

9.1.4. Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեն՝

ա) Բանկի հասարակ (սովորական) բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետերերը՝ իրենց պատկանող ձայների քանակով, ինչպես նաև անվանատերերը, եթե նրանք ներկայացնում են իրենց կողմից ներկայացվող Բանկի բաժնետերերի անվանումները և նրանց պատկանող բաժնետոմսերի քանակը հիմնավորող փաստաթղթեր:

բ) Բանկի կանոնադրությամբ սահմանված արտոնյալ բաժնետոմսեր տեղաբաշխված լինելու դեպքերում՝ Բանկի արտոնյալ բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետերերը՝ իրենց պատկանող արտոնյալ բաժնետոմսերի քանակին և անվանական արժեքին համապատասխան ձայների քանակով՝ օրենքով սահմանված դեպքերում, ինչպես նաև այդ բաժնետոմսերի անվանատերերը, եթե նրանք ներկայացնում են իրենց կողմից ներկայացվող բաժնետերերի անվանումները և նրանց պատկանող բաժնետոմսերի քանակը հիմնավորող փաստաթղթեր:

գ) Բանկի մասնակից չհանդիսացող խորհրդի և գործադիր մարմնի անդամները՝ խորհրդակցական ձայնի իրավունքով:

դ) Բանկի ներքին աուդիտի ստորաբաժանման անդամները՝ որպես դիտորդ:

ե) Բանկի արտաքին աուդիտի իրականացնող անձը՝ որպես դիտորդ (եթե նրա եզրակացությունն առկա է գումարվող ընդհանուր ժողովի օրակարգի հարցերում):

զ) Կենտրոնական բանկի ներկայացուցիչները՝ որպես դիտորդ:

է) տարածքային և կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարները՝ որպես դիտորդ,

ը) Բանկի այլ աշխատակիցները՝ իրենց կողմից ընդհանուր ժողովով օրակարգում ընդգրկված հարցերը զեկուցելու դեպքում,

թ) ընդհանուր ժողովի օրակարգում ընդգրկված որոշակի հարցերի վերաբերյալ մասնագիտական գիտելիքներին տիրապետող անձինք:

9.1.5. Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող Բանկի բաժնետերերի ցուցակը կազմվում է խորհրդի կողմից սահմանված տարվա, ամսվա, ամսաթվի դրությամբ՝ Բանկի բաժնետերերի ռեեստրի տվյալների հիման վրա:

Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող Բանկի բաժնետերերի ցուցակը կազմելու տարին, ամիսը, ամսաթիվը չի կարող սահմանվել ավելի վաղ, քան ընդհանուր ժողովը գումարելու մասին խորհրդի որոշման ընդունումը, և ավելի ուշ, քան ընդհանուր ժողովի գումարումից 45 օր առաջ:

Եթե ընդհանուր ժողովը գումարվում է հեռակա քվեարկությամբ, ապա դրան մասնակցելու իրավունք ունեցող Բանկի բաժնետերերի ցուցակը կազմելու տարին, ամիսը, ամսաթիվը սահմանվում է ընդհանուր ժողովի գումարման ամսաթվից առնվազն 35 օր շուտ:

9.1.6. Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող Բանկի բաժնետերերի ցուցակը կազմելու համար բաժնետոմսերի անվանատերը պարտավոր է ցուցակը կազմելու տարով, ամսով, ամսաթվով տվյալներ տրամադրել այն անձանց մասին, որոնց շահերը ներկայացնելու նպատակով նա տնօրինում է բաժնետոմսերը:

9.1.7. Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող Բանկի բաժնետերերի ցուցակը պետք է տվյալներ պարունակի Բանկի յուրաքանչյուր բաժնետիրոջ անվան (անվանման), գտնվելու (բնակության) վայրի և Բանկի կանոնադրական հիմնադրամում նրան պատկանող մասնակցության մասին:

9.1.8. Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող Բանկի բաժնետերերի ցուցակը պետք է տրամադրվի ծանոթացման նպատակով Բանկի այն բաժնետերերին, որոնք գրանցված են Բանկի բաժնետերերի ռեեստրում:

Նշված ցուցակը տրամադրվում է ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետիրոջը սույն կանոնադրության 9.1.11 կետում նշված ծանուցման հետ միաժամանակ:

Բանկի բաժնետիրոջ պահանջով Բանկը պարտավոր է նրան տրամադրել տեղեկանք՝ ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակում նրա ընդգրկման մասին:

Նշված տեղեկանքը տրամադրվում է ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետիրոջը վերջինիս գրավոր դիմումի հիման վրա՝ երկօրյա ժամկետում:

9.1.9. Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող Բանկի բաժնետերերի ցուցակում փոփոխություններ կարող են կատարվել միայն ցուցակը կազմելու ընթացքում թույլ տրված սխալներն ուղղելու կամ դրանում չընդգրկված Բանկի բաժնետերերի խախտված իրավունքները և օրինական շահերը վերականգնելու նպատակով:

9.1.10. Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետիրոջ ծանուցումն իրականացվում է պատվիրված նամակներ ուղարկելու, կամ առձեռն հանձնելու, կամ էլեկտրոնային փոստի հասցեով ծանուցելու միջոցով՝ հաշվի առնելով յուրաքանչյուր բաժնետիրոջ համար նախընտրելի ծանուցման ձևը:

Ընդ որում բաժնետերն իր համար նախընտրելի ձևը և կապի միջոցների տվյալները նախօրոք տրամադրում է Բանկին: Բաժնետերը նշված տվյալների և ծանուցման ձևի փոփոխման դեպքում նախապես հայտնում է Բանկին: Հակառակ դեպքում Բանկը բաժնետիրոջը ծանուցում է իր մոտ առկա տվյալներին համապատասխան:

Բանկը հավաստիանում է այն մասին, որ բաժնետերը սույն կետով սահմանված կարգով պատշաճ ծանուցվել է:

9.1.11. Ընդհանուր ժողովի մասին ծանուցումը պետք է պարունակի՝

- ա) Բանկի ֆիրմային անվանումն ու գտնվելու վայրը.
- բ) ընդհանուր ժողովի գումարման տարին, ամիսը, ամսաթիվը, ժամը և վայրը.
- գ) ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու տարին, ամիսը, ամսաթիվը.
- դ) ընդհանուր ժողովի օրակարգում ընդգրկված հարցերը.
- ե) բաժնետերերի ծանոթանալու կարգը ընդհանուր ժողովում քննարկվող հարցերին վերաբերող տեղեկություններին և նյութերին, որոնք պետք է ներկայացվեն բաժնետերերին ընդհանուր ժողովը նախապատրաստելու ընթացքում:

9.1.12. Եթե Բանկի բաժնետերերի ռեեստրում գրանցված անձը բաժնետոմսերի անվանատերն է, ապա ընդհանուր ժողովի գումարման մասին ծանուցումն ուղարկվում է նրան: Վերջինս պարտավոր է ծանուցումն ուղարկել այն անձանց, որոնց շահերը նա ներկայացնում է օրենքով, այլ իրավական ակտերով կամ նրա և այդ անձանց միջև կնքված պայմանագրով սահմանված ժամկետներում:

9.1.13. Բանկի բաժնետերը (բաժնետերերը), որը (որոնք) ձայնի իրավունք ունեցող բաժնետոմսերի առնվազն 2 տոկոսի սեփականատեր է (են) հանդիսանում, Բանկի ֆինանսական տարվա ավարտից հետո՝ 30-60 օրվա ընթացքում, իրավունք ունի (ունեն) երկուսից ոչ ավելի առաջարկություններ ներկայացնել տարեկան ընդհանուր ժողովի օրակարգի վերաբերյալ:

Տարեկան ընդհանուր ժողովի օրակարգի վերաբերյալ առաջարկությունները ներկայացվում են գրավոր՝ նշելով

- ա) հարցի առաջարկման հիմքերը.
- բ) հարցը առաջարկող բաժնետիրոջ (բաժնետերերի) անունը (անվանումը).
- գ) նրան (նրանց) պատկանող բաժնետոմսերի քանակը.
- դ) առաջարկության հեղինակի (հեղինակների) ստորագրությունը կամ դրա ֆաքսիմիլային վերարտադրությունը:

9.1.14. Խորհուրդը պարտավոր է քննարկել ներկայացված առաջարկները և որոշում ընդունել դրանք տարեկան ընդհանուր ժողովում ընդգրկելու սույն կանոնադրության 9.1.13 կետով սահմանված ժամկետը լրանալուց հետո՝ 15 օրվա ընթացքում: Խորհուրդը կարող է որոշում ընդունել ներկայացված առաջարկները տարեկան ժողովի օրակարգում ընդգրկելը մերժելու մասին միայն այն դեպքում, եթե՝

ա) առաջարկ ներկայացրած բաժնետիրոջ (բաժնետերերի) կողմից խախտվել է սույն կանոնադրության 9.1.13. կետով սահմանված ժամկետը.

բ) առաջարկ ներկայացրած բաժնետերը (բաժնետերերը) չի (չեն) տնօրինում Բանկի սույն կանոնադրության 9.1.13 կետով սահմանված քանակի քվեարկող բաժնետոմսերին.

գ) լրիվ չեն կամ բացակայում են սույն կանոնադրության 9.1.13 կետով սահմանված տվյալները.

դ) առաջարկը հակասում է օրենքի և այլ իրավական ակտերի պահանջներին:

9.1.15. Խորհրդի հիմնավորված որոշումը՝ ներկայացված առաջարկը տարեկան ընդհանուր ժողովում ընդգրկելը մերժելու մասին, ուղարկվում է առաջարկը ներկայացրած բաժնետիրոջը (բաժնետերերին)՝ որոշումն ընդունելու պահից 3 օրվա ընթացքում:

Խորհրդի որոշումը՝ ներկայացված առաջարկը տարեկան ընդհանուր ժողովում ընդգրկելը մերժելու մասին, կարող է բողոքարկվել դատական կարգով:

9.1.16. Ընդհանուր ժողովի նախապատրաստման ընթացքում խորհուրդը, որոշում է՝

ա) ընդհանուր ժողովի գումարման տարին, ամիսը, ամսաթիվը, ժամն ու վայրը.

բ) ընդհանուր ժողովի օրակարգը.

գ) ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու տարին, ամիսը, ամսաթիվը.

դ) ընդհանուր ժողովի գումարման մասին բաժնետերերին ծանուցելու կարգը.

ե) բաժնետերերին ընդհանուր ժողովի նախապատրաստման ընթացքում տրամադրվող տեղեկությունների և նյութերի ցուցակը.

զ) քվեաթերթիկների ձևը և բովանդակությունը, եթե քվեարկությունները կատարվելու են քվեաթերթիկներով:

9.1.17. Տարեկան ընդհանուր ժողովից բացի գումարվող ընդհանուր ժողովները համարվում են արտահերթ: Արտահերթ ընդհանուր ժողովները գումարվում են անհետաձգելի հարցերի քննարկման համար:

Բանկի արտահերթ ընդհանուր ժողովը գումարվում է Բանկի խորհրդի որոշմամբ: Արտահերթ ընդհանուր ժողովի գումարման վերաբերյալ խորհրդի որոշմամբ սահմանվում է օրակարգը, արտահերթ ընդհանուր ժողովի գումարման ձևը՝ բաժնետերերի համատեղ ներկայությամբ կամ հեռակա կարգով քվեարկության միջոցով:

9.1.18. Ընդհանուր ժողովի իրավասություններն են՝

ա) Բանկի կանոնադրության հաստատումը, դրանում փոփոխությունների և լրացումների կատարումը.

բ) Բանկի վերակազմակերպումը.

գ) Բանկի լուծարումը.

դ) ամփոփ, միջանկյալ և լուծարման հաշվեկշիռների հաստատումը, լուծարային հանձնաժողովի նշանակումը.

ե) խորհրդի քանակական կազմի հաստատումը, ինչպես նաև դրա անդամների ընտրությունը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը, բացառությամբ «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված դեպքերի, երբ ընդհանուր ժողովը չունի խորհրդի անդամների ընտրության և լիազորությունների դադարեցման իրավասություն: Խորհրդի քանակական կազմի հաստատման և դրա անդամների ընտրության հարցերը քննարկվում են բացառապես տարեկան ընդհանուր ժողովներում, բացառությամբ Կանոնադրությամբ նախատեսված դեպքերի, երբ խորհրդի քանակական կազմը կարող է հաստատվել արտահերթ ընդհանուր ժողովում: Խորհրդի անդամների ընտրության հարցն արտահերթ ընդհանուր ժողովում կարող է քննարկվել, եթե ժողովը որոշում է ընդունել խորհրդի կամ նրա առանձին անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին.

զ) խորհրդի անդամների վարձատրության (ներառյալ՝ պարգևատրումների) չափի սահմանումը,

է) հայտարարված բաժնետոմսերի ծավալի առավելագույն չափի սահմանումը.

ը) խորհրդի ներկայացմամբ Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձի հաստատումը.

թ) Բանկի տարեկան ֆինանսական հաշվետվությունների, շահույթների և վնասների բաշխման հաստատումը:

Տարեկան շահութաբաժինների վճարման մասին որոշման ընդունումը և տարեկան շահութաբաժինների չափի հաստատումը.

ժ) ընդհանուր ժողովի վարման կարգի հաստատումը.

ժա) հաշվիչ հանձնաժողովի ձևավորումը.

ժբ) բաժնետոմսերի համախմբումն ու բաժանումը.

ժգ) հաստատված օրակարգի շրջանակում օրենքով նախատեսված այլ հարցեր:

Սույն կետում նշած հարցերով որոշումների ընդունումը վերապահվում է Բանկի ընդհանուր ժողովի բացառիկ իրավասությանը և չի կարող փոխանցվել Բանկի խորհրդին, Բանկի գործադիր մարմնի անդամներին կամ այլ անձի:

9.1.19. Ընդհանուր ժողովն իրավասու է (քվորում ունի), եթե ընդհանուր ժողովի մասնակիցների գրանցման ավարտի պահին գրանցվել են Բանկի բաժնետերերը (նրանց ներկայացուցիչները), որոնք համատեղ տիրապետում են Բանկի տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերով տրամադրվող ձայների 50-ից ավելի տոկոսին:

Քվորումի բացակայության դեպքում հայտարարվում է նոր ընդհանուր ժողովի գումարման տարին, ամիսը, ամսաթիվը: Նոր ընդհանուր ժողովի գումարման դեպքում օրակարգի փոփոխություն չի թույլատրվում:

Չկայացած ընդհանուր ժողովի փոխարեն գումարվող նոր ընդհանուր ժողովն իրավասու է, եթե մասնակիցների գրանցման ավարտի պահին գրանցվել են Բանկի բաժնետերերը (նրանց ներկայացուցիչները),

որոնք համատեղ տիրապետում են Բանկի տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերով տրամադրվող ձայների 30-ից ավելի տոկոսին:

9.1.20. Ընդհանուր ժողովն անցկացվում է հետևյալ կարգով.

ա) Ընդհանուր ժողովի քարտուղարը մինչև նիստի բացումը ընդհանուր ժողովի նախագահին զեկուցում է բաժնետերերի նիստին ներկա լինելու վերաբերյալ:

բ) Ընդհանուր ժողովի նախագահը ողջունում է ներկաներին և նիստը հայտարարում է բացված:

գ) Ընդհանուր ժողովի նախագահը ներկայացնում է ընդհանուր ժողովի օրակարգը, որից հետո օրակարգի հարցերը ըստ հերթականության դնում է քննարկման,

դ) Ընդհանուր ժողովի նախագահը առաջարկում է ցանկացողներին իրենց կարծիքը ներկայացնել առաջադրվող հարցի վերաբերյալ:

ե) առաջադրված հարցի վերաբերյալ կարծիքների արտահայտման փուլն ավարտվելուց հետո քննարկվող հարցը դրվում են քվեարկության:

զ) Քվեարկությունը ընդհանուր ժողովում իրականացվում է «Բանկի մեկ քվեարկող բաժնետոմս՝ մեկ ձայն» սկզբունքով:

9.1.21. Ընդհանուր ժողովի որոշումներն ընդունվում են ընդհանուր ժողովին մասնակցող՝ քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների պարզ մեծամասնությամբ:

Սույն կանոնադրության 9.1.18 կետի «բ» ենթակետում նշված հարցերով որոշումներն ընդունում է ընդհանուր ժողովը՝ միայն խորհրդի ներկայացմամբ:

Սույն կանոնադրության 9.1.18 կետի «ա», «բ», «դ» և «զ» ենթակետերում նշված հարցերով որոշումներն ընդունում է ընդհանուր ժողովը՝ դրան մասնակցող՝ քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 3/4-ով:

Սույն կանոնադրության 9.1.18 կետի «զ» ենթակետում նշված հարցով, ինչպես նաև Բանկի կողմից իր բաժնետոմսերը հետ գնելու դեպքում կանոնադրական հիմնադրամի նվազեցման կամ տվյալ բաժնետոմսերի իրացման մասին որոշումներն ընդունում է ընդհանուր ժողովը՝ դրան մասնակցող՝ քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 3/4-ով, սակայն ոչ պակաս քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 2/3-ից:

Ընդհանուր ժողովը «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված ընդհանուր ժողովի իրավասությանը վերաբերող այլ հարցերով որոշումներ ընդունելու դեպքերում առաջնորդվում է նույն օրենքով տվյալ որոշումների ընդունման համար սահմանված կարգով՝ հաշվի առնելով «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքով սահմանված դրույթները:

Ընդհանուր ժողովն իրավունք չունի փոփոխել օրակարգը, ինչպես նաև որոշումներ ընդունել օրակարգում չընդգրկված հարցերի վերաբերյալ:

Ընդհանուր ժողովի ընդունած որոշումների մասին տեղեկությունները, ինչպես նաև քվեարկության արդյունքները Բանկի բաժնետերերին ներկայացվում են պատվիրված նամակներ ուղարկելու, կամ առձեռն հանձնելու, կամ էլեկտրոնային կապի միջոցներով, ներառյալ՝ էլեկտրոնային փոստով, ծրագրային և հավելվածային հարթակներով (ներառյալ՝ բջջային հեռախոսների հավելվածներով)՝ այդ որոշումներն ընդունելու պահից՝ 45 օրվա ընթացքում:

9.1.22. Ընդհանուր ժողովի որոշումները կարող են նաև ընդունվել հեռակա քվեարկության (հարցման) միջոցով, բացառությամբ սույն կանոնադրության 9.1.18 կետի «բ», «զ» և «թ» ենթակետերում նշված հարցերի: Տարեկան ընդհանուր ժողովը չի կարող անցկացվել հեռակա կարգով քվեարկության (հարցման) միջոցով:

Հեռակա կարգով անցկացվող ընդհանուր ժողովի նիստերի ծանուցումն իրականացվում է սույն կանոնադրությամբ սահմանված ընդհանուր ժողովին բաժնետերերի ծանուցման կարգով:

Ընդհանուր ժողովը հեռակա քվեարկությամբ գումարելիս ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բոլոր բաժնետերերին քվեաթերթիկների և ընդհանուր ժողովի օրակարգի հետ մեկտեղ ուղարկվում են օրենքով սահմանված տեղեկությունները և նյութերը:

Հեռակա կարգով քվեարկությամբ ընդունված ընդհանուր ժողովի որոշումն օրինական ուժ ունի, եթե քվեարկությանը մասնակցել է Բանկի քվեարկող բաժնետոմսերով տրամադրվող ձայների քանակի կեսից ավելին տիրապետող բաժնետերերը: Հեռակա կարգով քվեարկությունը կատարվում է «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխանող քվեաթերթիկների օգտագործմամբ:

Հեռակա կարգով քվեարկության ժամանակ քվեաթերթիկները պետք է տրամադրվեն բաժնետերերին՝ լրացրած քվեաթերթիկները Բանկի կողմից ընդունումն ավարտելու պահից առնվազն 30 օր առաջ:

9.1.23. Ընդհանուր ժողովի որոշումները կարող են ընդունվել այնպիսի նիստով, որի ժամանակ ընդհանուր ժողովի մասնակիցները կարող են հաղորդակցվել միմյանց հետ հեռախոսային, հեռուստակապի կամ այլ կապի, ներառյալ՝ էլեկտրոնային փոստի, ծրագրային և հավելվածային հարթակների (այդ թվում՝ բջջային հավելվածների), միջոցով՝ իրական ժամանակի ռեժիմում: Նման նիստը հեռակա (հարցման) կարգով

անցկացված նիստ չի համարվում, իսկ այդպիսի նիստում ընդունված որոշումները չեն համարվում հեռակա քվեարկության (հարցման) միջոցով ընդունված:

Հեռախոսային, հեռուստակապի կամ այլ կապի միջոցով անցկացվող ընդհանուր ժողովի նիստերի ծանուցումն իրականացվում է սույն կանոնադրությամբ սահմանված ընդհանուր ժողովի գումարման ծանուցման կարգով:

9.1.24. Ընդհանուր ժողովի արձանագրությունը կազմվում է ընդհանուր ժողովի ավարտից 5 օրվա ընթացքում՝ 2 օրինակով, որոնք ստորագրում են ընդհանուր ժողովի նախագահը և քարտուղարը:

Ընդհանուր ժողովի նախագահը պատասխանատվություն է կրում ընդհանուր ժողովի արձանագրությունում առկա տեղեկությունների հավաստիության համար:

Արձանագրության մեջ նշվում են՝

ա) ընդհանուր ժողովի գումարման տարին, ամիսը, ամսաթիվը և վայրը.

բ) Բանկի՝ տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի ձայների գումարային քանակը.

գ) ընդհանուր ժողովին մասնակցած բաժնետերերին պատկանող ձայների գումարային քանակը.

դ) ընդհանուր ժողովի նախագահը (նախագահությունը) և քարտուղարը (քարտուղարությունը), ընդհանուր ժողովի օրակարգը:

Արձանագրությունը պետք է պարունակի ընդհանուր ժողովում կայացած ելույթների հիմնական դրույթները, քվեարկության դրված հարցերը, այդ հարցերի վերաբերյալ քվեարկության արդյունքները, ընդհանուր ժողովի ընդունած որոշումները:

Բանկի բաժնետերերն իրավունք ունեն ծանոթանալ ընդհանուր ժողովի արձանագրություններին:

9.2. Բանկի խորհուրդը

9.2.1. Բանկի խորհուրդն իրականացնում է Բանկի գործունեության ընդհանուր ղեկավարումը՝ օրենքով և սույն կանոնադրությամբ խորհրդի իրավասությանը վերապահված հարցերի սահմաններում:

9.2.2. Խորհրդի անդամ կարող է լինել Հայաստանի Հանրապետության քաղաքացի կամ օտարերկրյա քաղաքացի հանդիսացող այն գործունակ անձը, որը բավարարում է Հայաստանի Հանրապետության գործող օրենքներով և Կենտրոնական բանկի իրավական ակտերով սահմանված պահանջներին:

9.2.3. Բանկի խորհուրդը պետք է կազմված լինի առնվազն 5 և առավելագույնը 15 անդամից:

9.2.4. Խորհրդի անդամներն ընտրվում են Բանկի տարեկան ընդհանուր ժողովում Բանկի ներկա մասնակիցների կողմից, իսկ Բանկի խորհրդի անդամի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման դեպքում՝ արտահերթ ընդհանուր ժողովում Բանկի ներկա մասնակիցների կողմից՝ օրենքով և կանոնադրությամբ սահմանված կարգով:

Ընդհանուր ժողովին Բանկի խորհրդի անդամների թեկնածուների վերաբերյալ առաջարկություններ կարող են ներկայացնել Բանկի մասնակիցները, ինչպես նաև խորհուրդը (բացառությամբ առաջին անգամ խորհրդի ձևավորման դեպքի):

Սույն կետի դրույթները չեն տարածվում սույն կանոնադրության 9.2.8, 9.2.9 և 9.2.10 կետերով նախատեսված դեպքերի վրա:

9.2.5. Բանկի բաժնետերերը իրենց կողմից խորհրդի անդամության թեկնածուներ առաջադրելու դեպքում այդ մասին գրավոր հայտնում են Բանկի խորհրդի նախագահին՝ տարեկան ընդհանուր ժողովի, ինչպես նաև արտահերթ ընդհանուր ժողովի (եթե արտահերթ ընդհանուր ժողովի օրակարգում ընդգրկված է խորհրդի անդամ (ներ)ի լիազորությունները վաղաժամկետ դադարեցման հարց) մասին ծանուցումն ստանալուց հետո 10 օրվա ընթացքում:

9.2.6. Խորհրդի անդամության թեկնածուների վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելիս, այդ թվում՝ ինքնաառաջադրման դեպքում, գրավոր առաջարկում նշվում է թեկնածուի անունը, նրա Բանկի բաժնետեր լինելու կամ չլինելու փաստը, նրան պատկանող Բանկի բաժնետոմսերի քանակը, նրան առաջադրող Բանկի բաժնետիրոջ (բաժնետերերի) անունը (անվանումը), վերջինիս պատկանող Բանկի բաժնետոմսերի քանակը:

Խորհուրդը պարտավոր է քննարկել ներկայացված առաջարկները և որոշում ընդունել դրանք թեկնածուների ցանկում ընդգրկելու կամ ընդգրկելը մերժելու մասին՝ սույն կանոնադրության 9.2.5 կետով սահմանված ժամկետը լրանալուց հետո՝ 5 օրվա ընթացքում: Խորհուրդը կարող է որոշում ընդունել թեկնածուների ցանկում ընդգրկելը մերժելու մասին միայն այն դեպքում, եթե՝

ա) առաջարկ ներկայացրած բաժնետիրոջ (բաժնետերերի) կողմից խախտվել է սույն կանոնադրության 9.2.5 կետով սահմանված ժամկետը.

բ) լրիվ չեն կամ բացակայում են սույն կետով սահմանված տվյալները.

գ) առաջարկը հակասում է օրենքի և այլ իրավական ակտերի պահանջներին:

9.2.7. Խորհուրդը իր կողմից սույն կանոնադրության 9.2.4 կետով նախատեսված խորհրդի անդամության թեկնածու առաջադրում է Բանկի ընդհանուր ժողովի օրակարգում ընդգրկելու միջոցով:

9.2.8. Բանկի այն մասնակիցները, որոնք ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող մասնակիցների ցուցակը կազմելու օրվա դրությամբ տիրապետում են Բանկի տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի 10 և ավելի տոկոսին, իրավունք ունեն առանց ընտրության ընդգրկվելու խորհրդի կազմում կամ դրանում նշանակելու իրենց ներկայացուցչին:

9.2.9. Բանկի այն մասնակիցները, որոնք ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող մասնակիցների ցուցակը կազմելու օրվա դրությամբ տիրապետում են Բանկի տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի մինչև 10 տոկոսին, կարող են միավորվել և Բանկի տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի 10 և ավելի տոկոսը համալրելու դեպքում՝ առանց ընդհանուր ժողովի կողմից ընտրության ընդգրկել իրենց ներկայացուցչին խորհրդի կազմում:

Սույն կետի առաջին պարբերությամբ նշված ձևով ներկայացուցչի ընդգրկումը խորհրդում հնարավոր է միայն Բանկի մասնակիցների խմբի ստեղծման մասին համապատասխան պայմանագրի առկայության և այդ պայմանագրի վերաբերյալ ընդհանուր ժողովին տեղեկացնելու դեպքում:

Սույն կետի երկրորդ պարբերությամբ նշված պայմանագիրը պետք է պարունակի հետևյալ պայմաններն ու տեղեկությունները.

ա) Բանկի միավորվող մասնակիցների վերաբերյալ տվյալներ, ներառյալ՝ նրանց պատկանող Բանկի տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի քանակը.

բ) միավորվող մասնակիցների կողմից առաջարկվող խորհրդի անդամի թեկնածուի վերաբերյալ «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 43 հոդվածի 5-րդ մասով սահմանված տեղեկությունները.

գ) պայման այն մասին, որ պայմանագիրը կնքվում է առնվազն մեկ տարի ժամկետով և մինչև այդ ժամկետի ավարտը փոփոխման կամ լուծման ենթակա չէ.

դ) միավորվող մասնակիցների հայեցողությամբ՝ այլ պայմաններ:

Պայմանագրի պատճենները տրամադրվում են ընդհանուր ժողովի բոլոր մասնակիցներին՝ ընդհանուր ժողովի կայացման, իսկ հեռակա կարգով քվեարկության դեպքում՝ լրացրած քվեաթերթիկները բանկի կողմից ընդունելու համար սահմանված ժամկետի վերջին օրվանից առնվազն 30 օր առաջ:

9.2.10. Բանկի կանոնադրական հիմնադրամում փոքր մասնակցություն ունեցող մասնակիցներն իրավունք ունեն իրենց շահերը ներկայացնող ներկայացուցչին ընդգրկելու Բանկի խորհրդի կազմում:

Բանկի կանոնադրական հիմնադրամում փոքր մասնակցություն ունեցող մասնակից է համարվում տվյալ Բանկի տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի 10 տոկոսից պակասին տիրապետող այն մասնակիցը, որը չի կնքել սույն կանոնադրության 9.2.9 կետում նշված պայմանագիրը: Բանկի կանոնադրական հիմնադրամում փոքր մասնակցություն ունեցող մասնակիցների միասնական ներկայացուցիչը պետք է առաջադրվի նրանց կողմից և ընդգրկվի խորհրդի կազմում՝ առանց ընդհանուր ժողովի կողմից ընտրության:

Բանկի կանոնադրական հիմնադրամում փոքր մասնակցություն ունեցող մասնակիցների ներկայացուցչի ընտրությանը մասնակցում են փոքր մասնակցություն ունեցող մասնակիցները կամ նրանց ներկայացուցիչները, թեկուզև դրանց թիվը կազմի մեկ: Բանկի կանոնադրական հիմնադրամում փոքր մասնակցություն ունեցող մասնակիցների ներկայացուցչի ընտրությանը չեն մասնակցում սույն կանոնադրության 9.2.9 կետում նշված պայմանագիրը կնքած Բանկի մասնակիցները:

Բանկի փոքր մասնակիցները ծանուցվում են Բանկի խորհրդի կողմից իրենց փոքր մասնակցի կարգավիճակ ձեռք բերելու մասին ընդհանուր ժողովի համար ծանուցման կարգով՝ սույն կանոնադրության 9.2.9 կետում նշված պայմանագիրը(երը) ստանալուց հետո 5 օրյա ժամկետում: Ծանուցվելուց հետո փոքր մասնակիցները կարող են բանակցել միմյանց հետ խորհրդի անդամի թեկնածու առաջադրելու վերաբերյալ: Համաձայնության չգալու դեպքում ընդհանուր ժողովի անցկացման օրը փոքր մասնակիցները փակ գաղտնի քվեարկությամբ ընտրում են խորհրդի անդամի թեկնածու՝ իրենց կողմից առաջադրված թեկնածուների թվից: Քվեարկությունը կազմակերպվում և անցկացնվում է Բանկի խորհրդի նախագահի կամ նրա նշած խորհրդի անդամի կողմից:

Բանկի կանոնադրական հիմնադրամում փոքր մասնակցություն ունեցող մասնակիցների առաջադրած ներկայացուցչի մասին՝ օրենքով պահանջվող տեղեկատվությունը խորհրդի կողմից ներկայացվում է ընդհանուր ժողովի բոլոր մասնակիցներին՝ ընդհանուր ժողովի կայացման, իսկ հեռակա կարգով քվեարկության դեպքում՝ լրացրած քվեաթերթիկները Բանկի կողմից ընդունելու համար սահմանված ժամկետի վերջին օրվանից առնվազն 30 օր առաջ:

9.2.11. Խորհրդի անդամները չպետք է միմյանց հետ փոխկապակցված լինեն: Խորհրդի անդամները և տվյալ Բանկի գործադիր մարմնի անդամները չեն կարող լինել միմյանց հետ փոխկապակցված անձինք:

Բանկի խորհրդի անդամը կարող է միաժամանակ լինել այլ բանկի խորհրդի անդամ, եթե նա ունի բանկային կամ ապահովագրության կամ արժեթղթերի շուկայի ոլորտում առնվազն վեց տարվա մասնագիտական ստաժ, որից երեք տարին՝ ընկերության գործադիր տնօրենի, գործադիր տնօրենի տեղակալի, խորհրդի անդամի կամ

կոլեգիալ գործադիր մարմնի անդամի պաշտոնում, կամ հանդիսանում է միջազգային ֆինանսական կազմակերպության ներկայացուցիչ կամ ունի տնտեսագիտության բնագավառում ակադեմիական կամ հետազոտական աշխատանքի առնվազն չորս տարվա մասնագիտական ստաժ, և որի կողմից այլ բանկի խորհրդի անդամ հանդիսանալը չի ունենա բացասական ազդեցություն կազմակերպությունների և Հայաստանի Հանրապետության ֆինանսական համակարգի բնականոն գործունեության վրա, և որի նկատմամբ կիրառելի կլինեն բանկի ղեկավար լինելը բացառող՝ «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված հիմքերը:

Սույն մասով նախատեսված անձը կարող է խորհրդի անդամ լինել ոչ ավելի, քան Հայաստանի Հանրապետությունում գործող բանկերի կետում:

9.2.12. Խորհրդի անդամները վարձատրվում են: Խորհրդի անդամների պաշտոնավարման ժամկետը սահմանվում է ընդհանուր ժողովի կողմից և չի կարող մեկ տարուց պակաս լինել:

9.2.13. Բանկի խորհրդի նախագահն ընտրվում է խորհրդի կողմից խորհրդի անդամների կազմից՝ իրենց ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

Բանկի խորհրդի նախագահը՝

- ա) կազմակերպում է խորհրդի աշխատանքները.
- բ) գումարում և նախագահում է խորհրդի նիստերը.
- գ) կազմակերպում է խորհրդի նիստերի արձանագրությունների վարումը.
- դ) նախագահում է Բանկի ընդհանուր ժողովում.
- ե) կազմակերպում է խորհրդին կից հանձնաժողովների աշխատանքը.

զ) Բանկի անունից ստորագրում է պայմանագիրը վարչության նախագահի և անդամների հետ:

Բանկի խորհրդի նախագահը կամ խորհրդի անդամը չի կարող միաժամանակ լինել տվյալ բանկի գործադիր մարմնի անդամ կամ այլ աշխատակից, ինչպես նաև այլ բանկի կամ վարկային կազմակերպության խորհրդի անդամ, գործադիր մարմնի անդամ կամ այլ աշխատակից, բացառությամբ եթե տվյալ բանկը և այլ բանկը կամ վարկային կազմակերպությունը հանդիսանում են միմյանց հետ փոխկապակցված անձինք, ինչպես նաև սույն Կանոնադրության 9.2.11. կետի երկրորդ պարբերությամբ նախատեսված դեպքի:

Խորհրդի նախագահը խորհրդի անդամների միջև բաշխում է Բանկի գործունեության ո,րոշակի ոլորտների նկատմամբ վերահսկողության իրականացման իրավասությունները:

Խորհրդի նախագահը խորհրդին կից հանձնաժողովներին տալիս է հանձնարարականներ, որոնք ենթակա են կատարման 5-օրյա ժամկետում կամ խորհրդի նախագահի կողմից սահմանված այլ ժամկետում:

Խորհրդի նախագահի բացակայության դեպքում նրա լիազորությունները կատարում է խորհրդի տարիքով ավագ անդամը:

9.2.14. Խորհրդի իրավասություններն են՝

ա) Բանկի գործունեության հիմնական ուղղությունների որոշումը, ներառյալ՝ Բանկի հեռանկարային զարգացման ծրագրի և այլ ռազմավարական հարցերի հաստատումը.

բ) ընդհանուր ժողովի տարեկան և արտահերթ նիստերի գումարումը, օրակարգի հաստատումը, ինչպես նաև դրանց գումարման և անցկացման կազմակերպման հետ կապված՝ նախապատրաստական աշխատանքների իրականացման ապահովումը.

գ) Բանկի գործադիր մարմնի անդամների նշանակումը, նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը և վարձատրության պայմանների հաստատումը.

դ) Բանկում ներքին հսկողության ստանդարտների սահմանումը, Բանկի ներքին աուդիտի ստորաբաժանման ձևավորումը, նրա տարեկան աշխատանքային ծրագրի հաստատումը, ներքին աուդիտի աշխատակիցների լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը և վարձատրության պայմանների հաստատումը.

ե) Բանկի տարեկան ծախսերի նախահաշվի ու կատարողականի հաստատումը.

զ) Բանկի ներքին վարչակազմակերպական կառուցվածքի հաստատումը.

է) Բանկի կանոնադրական հիմնադրամի ավելացումը.

ը) շահութաբաժինների վճարման վերաբերյալ ընդհանուր ժողովին առաջարկությունների ներկայացումը, այդ թվում՝ շահութաբաժինների յուրաքանչյուր վճարման համար շահութաբաժիններ ստանալու իրավունք ունեցող Բանկի բաժնետերերի ցուցակի կազմումը, որում պետք է ընդգրկվեն Բանկի այն բաժնետերերը, որոնք ընդգրկվել են Բանկի բաժնետերերի ռեեստրում՝ Բանկի տարեկան ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու օրվա դրությամբ.

թ) Բանկի տարեկան ֆինանսական հաշվետվությունների նախնական հաստատումը և ընդհանուր ժողովին ներկայացումը.

ժ) ընդհանուր ժողովի հաստատմանը Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձի ներկայացումը.

ժա) Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձին վճարման չափի սահմանումը.

ժբ) Բանկում իրականացված աուդիտորական կամ այլ ստուգումների արդյունքում անհրաժեշտության դեպքում բացահայտված թերությունների վերացմանն ուղղված միջոցառումների նախաձեռնումն ու դրանց իրականացման վերահսկումը:

ժգ) Բանկի կողմից սույն կանոնադրությամբ սահմանված ֆինանսական գործառնությունների իրականացման կարգը սահմանող ներքին իրավական ակտերի ընդունումը:

ժդ) Բանկի տարածքային և ինքնուրույն կառուցվածքային ստորաբաժանումների կանոնադրությունների հաստատումը, Բանկի ինքնուրույն կառուցվածքային ստորաբաժանումների միջև գործառնությամբ պարտականությունների բաշխումը:

ժե) սույն կանոնադրության 9.1.18 կետի «բ» ենթակետով նախատեսված հարցի ներկայացումն ընդհանուր ժողովի քննարկմանը:

ժզ) Բանկի պարտատոմսերի և այլ արժեթղթերի տեղաբաշխման մասին որոշման ընդունումը:

ժէ) Բանկի պահուստային և այլ հիմնադրամների օգտագործումը:

ժը) Բանկի մասնաճյուղերի, ներկայացուցչությունների և հիմնարկների ստեղծումը:

ժթ) Բանկի հաշվապահական հաշվառման քաղաքականության՝ հաշվապահական հաշվառում վարելու և ֆինանսական հաշվետվություններ կազմելու նպատակով կիրառվող սկզբունքների, հիմունքների, եղանակների, կանոնների, ձևերի և կարգերի սահմանումը:

ի) դուստր կամ կախյալ ընկերությունների ստեղծումը:

իա) դուստր և կախյալ ընկերություններին մասնակցությունը:

իբ) առևտրային կազմակերպությունների միությունների հիմնադրումը:

իգ) առևտրային կազմակերպությունների միություններում մասնակցությունը:

իդ) օրենքով, սույն կանոնադրությամբ, Բանկի Խորհրդի գործունեության կանոնակարգով և Բանկի ներքին իրավական ակտերով նախատեսված այլ որոշումների ընդունումը:

9.2.15. Առնվազն տարին մեկ անգամ Բանկի խորհուրդն իր նիստում

ա) քննարկում է արտաքին աուդիտի իրականացնող անձի հաշվետվությունը (նամակ ղեկավարությանը):

բ) քննարկում է և անհրաժեշտության դեպքում վերանայում է Բանկի գործունեության հիմնական ուղղությունները, ռազմավարությունը:

Սույն կետում նշված հարցերի վերաբերյալ խորհրդի նիստին ներկա են գտնվում Բանկի համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարները, որոնք իրենց առաջարկություններն են ներկայացնում Բանկի ռազմավարության, հաճախորդների սպասարկման բարելավման, ինչպես նաև Բանկի կառավարման ոլորտում հայտնաբերված բացերի վերացման վերաբերյալ:

Բանկի աուդիտի իրականացնող անձի հաշվետվությունը ներկայացվում է աուդիտորական ընկերության ներկայացուցիչը, որի թեկնածությունը նախապես ընդգրկվում է խորհրդի նիստին մասնակցելու իրավունք ունեցող անձանց կազմում:

9.2.16. Առնվազն տարին մեկ անգամ Բանկի խորհուրդն իր նիստում քննարկում է և անհրաժեշտության դեպքում վերանայում է Բանկի կարգերն ու ներքին իրավական այլ ակտերը:

Նշված հարցի վերաբերյալ խորհրդի նիստում ներկայացնում է Բանկի խորհրդի այն անդամը, որի վրա դրված է նշված ոլորտի կանոնակարգումը:

9.2.17. Յուրաքանչյուր եռամսյակը մեկ Բանկի խորհուրդը քննարկում է Բանկի ներքին աուդիտի ստորաբաժանման, վարչության նախագահի (վարչության) և գլխավոր հաշվապահի հաշվետվությունները:

9.2.18. Խորհրդի նիստերը պետք է գումարվեն առնվազն երկու ամիսը մեկ անգամ:

Խորհրդի նիստերը գումարում է Բանկի խորհրդի նախագահը՝ իր, խորհրդի անդամի, Բանկի վարչության նախագահի (վարչության), ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարի, Բանկի արտաքին աուդիտի իրականացնող անձի, Կենտրոնական բանկի խորհրդի, ինչպես նաև Բանկի քվեարկող բաժնետոմսերի 5 կամ ավելի տոկոս ունեցող բաժնետերերի) գրավոր պահանջով:

9.2.19. Խորհրդի անդամների ծանուցումը նիստի գումարման մասին իրականացվում է պատվիրված նամակներ ուղարկելու, անձամբ դրանք հանձնելու, էլեկտրոնային փոստային հասցեով կամ հեռախոսակապով ծանուցելու միջոցով:

Խորհրդի նիստի գումարման մասին խորհրդի անդամները ծանուցվում են նիստի գումարման օրվանից առնվազն 5 օր առաջ, բացառությամբ նիստը ավելի սեղմ ժամկետներում գումարելու անհրաժեշտությամբ պայմանավորված դեպքերի:

Նիստի մասին ծանուցումը պետք է պարունակի՝

ա) Բանկի անվանումն ու գտնվելու վայրը:

բ) նիստի գումարման տարին, ամիսը, ամսաթիվը, ժամը և վայրը:

գ) նիստի օրակարգում ընդգրկված հարցերը:

դ) խորհրդի անդամների ծանոթանալու կարգը նիստում քննարկվող հարցերին վերաբերող տեղեկություններին և նյութերին:

9.2.20. Խորհրդի նիստերը կարող են գումարվել հեռակա կարգով՝ սույն կանոնադրությամբ սահմանված հեռակա կարգով ընդհանուր ժողովի նիստերի գումարման և անցկացման կարգի համաձայն:

Խորհուրդը կարող է որոշումներ ընդունել այնպիսի նիստում, որի ժամանակ խորհրդի նիստի բոլոր մասնակիցները կարող են հաղորդակցվել միմյանց հետ հեռախոսային կապի, հեռուստակապի կամ կապի այլ, ներառյալ՝ էլեկտրոնային փոստի, ծրագրային և հավելվածային հարթակների (այդ թվում՝ բջջային հավելվածների) միջոցներով՝ իրական ժամանակի ռեժիմում: Նման նիստը հեռակա (հարցման) կարգով անցկացված նիստ չի համարվում: Սույն կանոնադրության 9.2.14 կետի «գ», «դ», «ե» և «զ» ենթակետերում նշված, ինչպես նաև Բանկի հեռանկարային զարգացման ծրագրի հաստատումը, Բանկի խորհրդի նախագահի ընտրության հարցերը չեն կարող լուծվել Բանկի խորհրդի հեռակա նիստերի ժամանակ:

9.2.21. Խորհրդի նիստերն իրավասու են (քվորում ունի), եթե նիստին մասնակցում են խորհրդի անդամների կեսից ավելին, իսկ սույն կանոնադրության 9.2.14-րդ կետի «ա», «ե»՝ Բանկի տարեկան ծախսերի նախահաշվի (բյուջեի) հաստատման մասով, ենթակետերում նշված հարցերով, սույն կանոնադրության 10-րդ բաժնում նշված խորհրդի իրավասության վերապահված խոշոր գործարք կնքելու մասին և սույն Կանոնադրությամբ սահմանված Բանկի ղեկավարների վարձատրության (ներառյալ՝ պարգևատրման) պայմանների հաստատման մասին հարցերով՝ եթե նիստին մասնակցում է Բանկի բաժնետեր «Բնակարան Երիտասարդներին» ՎՎԿ ՓԲԸ ներկայացուցիչ հանդիսացող Խորհրդի անդամներից առնվազն մեկը:

Խորհրդի որոշումները ընդունվում են նիստին ներկա խորհրդի անդամների ձայների մեծամասնությամբ, բացառությամբ օրենքով, սույն Կանոնադրությամբ և սույն կետի երկրորդ պարբերությունում նշված դեպքերի: Քվեարկության ժամանակ խորհրդի յուրաքանչյուր անդամ ունի միայն մեկ ձայն: Ձայնի և քվեարկության իրավունքի փոխանցումն այլ անձի (այդ թվում՝ խորհրդի այլ անդամի) չի թույլատրվում: Ձայների հավասարության դեպքում խորհրդի նախագահի ձայնը որոշիչ է, բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ, սույն կանոնադրությամբ և խորհրդի կանոնակարգով սահմանված դեպքերի:

Սույն կանոնադրության 9.2.14-րդ կետի «ա», «ե»՝ Բանկի տարեկան ծախսերի նախահաշվի (բյուջեի) հաստատման մասով, ենթակետերում նշված հարցերով, սույն կանոնադրության 10-րդ բաժնում նշված խորհրդի իրավասության վերապահված խոշոր գործարք կնքելու մասին, ինչպես նաև սույն Կանոնադրությամբ սահմանված Բանկի ղեկավարների վարձատրության (ներառյալ՝ պարգևատրման) պայմանների հաստատման մասին հարցերով որոշումներն ընդունվում են Բանկի բաժնետեր «Բնակարան Երիտասարդներին» ՎՎԿ ՓԲԸ ներկայացուցիչ հանդիսացող Խորհրդի անդամներից առնվազն մեկի դրական դիրքորոշման առկայության դեպքում, եթե օրենքով կամ սույն Կանոնադրությամբ ձայների առավել մեծ քանակ նախատեսված չէ:

9.2.22. Խորհրդի նիստերի բոլոր հարցերի քննարկումը կարող է տեղի ունենալ միայն Բանկի վարչության նախագահի պարտադիր մասնակցությամբ, բացառությամբ Բանկի վարչության նախագահի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման, ինչպես նաև նրա վարձատրության պայմանների հաստատման հարցերի: Բանկի վարչության նախագահը մասնակցում է խորհրդի նիստերին խորհրդակցական ձայնի իրավունքով:

9.2.23. Խորհրդի նիստերն արձանագրվում են: Նիստի արձանագրությունը կազմվում է նիստի ավարտից հետո՝ 10-օրյա ժամկետում: Արձանագրությունում նշվում են՝

- ա) նիստի գումարման տարին, ամիսը, ամսաթիվը, ժամը և վայրը.
- բ) նիստին մասնակցած անձինք.
- գ) նիստի օրակարգը.

դ) քվեարկության դրված հարցերը, ինչպես նաև քվեարկության արդյունքները՝ ըստ նիստին մասնակցած յուրաքանչյուր խորհրդի անդամի.

ե) քվեարկության դրված հարցերի վերաբերյալ խորհրդի անդամների և խորհրդի նիստին մասնակցող այլ անձանց կարծիքները.

զ) նիստում ընդունված որոշումները:

Խորհրդի նիստի արձանագրությունն ստորագրում են նիստին մասնակցող բոլոր անդամները, որոնք և պատասխանատվություն են կրում արձանագրությունում առկա տեղեկությունների ճշտության և հավաստիության համար:

Խորհրդի նիստերը վարում է խորհրդի նախագահը, որն ստորագրում է նիստի որոշումները: Խորհրդի նախագահը պատասխանատվություն է կրում որոշման մեջ առկա տեղեկությունների հավաստիության համար:

9.2.24. Խորհուրդն իր աշխատանքն արդյունավետ կազմակերպելու նպատակով կարող է ստեղծել հանձնաժողովներ: Խորհրդին կից հանձնաժողովներում կարող են ընդգրկվել Բանկի խորհրդի անդամները և Բանկի այլ ղեկավարներ կամ աշխատակիցներ: Բանկի խորհրդին կից հանձնաժողովների որոշումներն ունեն խորհրդակցական բնույթ:

Բանկի խորհուրդն ընդունում է Բանկի վարչության նախագահի, գլխավոր հաշվապահի և ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարի կողմից խորհրդին ներկայացվող հաշվետվությունների ներկայացման կարգ, որը սահմանվում է սույն կանոնադրության դրույթներին համապատասխան: Նշված կարգում նշվում են հաշվետվությունների տեսակները, դրանք Խորհրդի անդամներին նախապես ներկայացման կարգը, մինչև խորհրդի նիստը անհրաժեշտության դեպքում Խորհրդի անդամների մոտ քննարկման կարգը և Խորհրդի նիստի ժամանակ դրանք ներկայացնելու կարգը:

9.2.25. Ընդհանուր ժողովի կողմից խորհրդի անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարեցվում են եթե՝

- ա) նա դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ.
- բ) նրա պաշտոնավարման ընթացքում ի հայտ են եկել այնպիսի հանգամանքներ, որոնց ուժով նրան արգելվում է լինել բանկի խորհրդի անդամ (բանկի ղեկավար).
- գ) մեկ տարվա ընթացքում բացակայել է խորհրդի նիստերի առնվազն 1/4-ից անհարգելի պատճառներով կամ ընդհանուր առմամբ (ներառյալ՝ հարգելի և անհարգելի բացակայությունները) նիստերի առնվազն կեսից (իրական ժամանակի ռեժիմով և սույն կանոնադրությամբ սահմանված հեռակա մասնակցությունը համարվում է լիարժեք մասնակցություն).
- դ) օրենքով սահմանված կարգով որակագրկվել է կամ զրկվել է որոշակի պաշտոն վարելու իրավունքից: Խորհրդի անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարում են՝
 - ա) իր դիմումի համաձայն.
 - բ) մահանալու դեպքում.

Խորհրդի անդամի լիազորությունները վաղաժամկետ կարող են դադարեցվել նաև լիազորությունների մնացած ժամանակահատվածի, իսկ եթե այդ ժամանակահատվածը մեկ տարուց ավելի է, ապա մեկ տարվա համար սահմանված աշխատավարձը Բանկի կողմից նրան փոխհատուցելու պայմանով:

Բանկն իրավունք ունի խորհրդի անդամի պաշտոնից ազատված անձից դատական կարգով հետ պահանջելու սույն մասի առաջին պարբերությամբ նրան փոխհատուցված աշխատավարձը՝ դատարանում ապացուցելով խորհրդի անդամի կողմից պաշտոնեական պարտականությունների թերացման փաստը:

9.3. Բանկի վարչության նախագահը, բանկի վարչությունը

9.3.1. Բանկի ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է վարչության նախագահը և վարչությունը: Վարչության նախագահը կարող է ունենալ տեղակալներ: Վարչության նախագահը (վարչության անդամները) նշանակվում է (են) խորհրդի կողմից, իսկ վարչության նախագահի տեղակալները՝ խորհրդի կողմից՝ վարչության նախագահի ներկայացմամբ:

9.3.2. Վարչությունը գործում է սույն կանոնադրության, ինչպես նաև խորհրդի կողմից հաստատված Բանկի վարչության կանոնակարգի և այլ ակտերի հիման վրա, որոնք սահմանում են վարչության նիստերի իրավիրման ու անցկացման ժամկետներն ու կարգը, ինչպես նաև նրա կողմից որոշումների ընդունման կարգը:

9.3.3. Վարչության կառուցվածքում պարտադիր ընդգրկվում են Բանկի վարչության նախագահը, նրա տեղակալը (տեղակալները), գլխավոր հաշվապահը:

9.3.4. Վարչության նիստերն իրավասու են, եթե նիստին մասնակցում են վարչության անդամների կեսից ավելին:

Վարչության որոշումներն ընդունվում են նիստին ներկա վարչության անդամների ձայների մեծամասնությամբ: Քվեարկության ժամանակ վարչության յուրաքանչյուր անդամ ունի միայն մեկ ձայն: Ձայնի և քվեարկության իրավունքի փոխանցումն այլ անձի (այդ թվում՝ վարչության այլ անդամի) չի թույլատրվում: Ձայների հավասարության դեպքում վարչության նախագահի ձայնը որոշիչ է:

9.3.5. Վարչության նիստերն արձանագրվում են: Նիստերի արձանագրությունները ներկայացվում են խորհրդին, ներքին աուդիտին, Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձին՝ նրանց պահանջով: Նիստի արձանագրությունը կազմվում է նիստի ավարտից հետո՝ 10-օրյա ժամկետում: Արձանագրությունում նշվում են՝

- ա) նիստի գումարման տարին, ամիսը, ամսաթիվը, ժամը և վայրը.
- բ) նիստին մասնակցած անձինք.
- գ) նիստի օրակարգը.

դ) քվեարկության դրված հարցերը, ինչպես նաև քվեարկության արդյունքները՝ ըստ նիստին մասնակցած վարչության յուրաքանչյուր անդամի.

ե) քվեարկության դրված հարցերի վերաբերյալ վարչության անդամների և տնօրինության նիստին մասնակցող այլ անձանց կարծիքները.

- զ) նիստում ընդունված որոշումները:

Վարչության նիստի արձանագրությունն ստորագրում են նիստին մասնակցող բոլոր անդամները, որոնք և պատասխանատվություն են կրում արձանագրությունում առկա տեղեկությունների հավաստիության համար:

Վարչության նիստերը կազմակերպում և վարում է վարչության նախագահը, որն ստորագրում է նիստի որոշումները: Վարչության նախագահը պատասխանատվություն է կրում որոշման մեջ առկա տեղեկությունների հավաստիության համար:

9.3.6. Վարչության նախագահը՝

ա) տնօրինում է Բանկի գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս է կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը:

բ) ներկայացնում է Բանկը Հայաստանի Հանրապետությունում և արտասահմանում:

գ) գործում է Բանկի անունից առանց լիազորագրի:

դ) տալիս է լիազորագրեր:

ե) Բանկի անունից կնքում է գործարքներ:

զ) Բանկի անունից աշխատակիցների հետ աշխատանքային հարաբերություններում հանդես է գալիս որպես գործատուի ներկայացուցիչ, աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում է Բանկի աշխատողներին:

է) Բանկի աշխատակիցների նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ:

ը) խորհրդի հաստատմանն է ներկայացնում Բանկի խորհրդի կողմից հաստատվող ներքին իրավական ակտերը, առանձնացված ստորաբաժանումների կանոնակարգերը, Բանկի վարչակազմակերպական կառուցվածքը:

թ) ապահովում է Բանկի ընդհանուր ժողովի և խորհրդի որոշումների կատարումը:

ժ) իրականացնում է օրենքով, սույն կանոնադրությամբ, ինչպես նաև խորհրդի կողմից սահմանված իրավական ակտերի շրջանակներում նախատեսված՝ Բանկի ընթացիկ գործունեության ղեկավարման հետ կապված այլ իրավասություններ:

9.3.7. Վարչությունը՝

ա) կազմակերպում և իրականացնում է Բանկի օպերատիվ գործունեության ղեկավարումը: Բ) սահմանում է Բանկի կողմից մատուցվող ծառայությունների միջնորդավճարների չափերը, ներգրավվող ավանդների և տրամադրվող վարկերի տոկոսադրույքները:

գ) քննարկում է վերստուգումների, ստուգումների նյութերը, տարածքային և կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների հաշվետվությունները:

դ) լուծում է Բանկի վարչության նախագահի իրավասությանը չպատկանող այլ հարցեր, որոնք սահմանվում են Բանկի ժողովի և խորհրդի կողմից հաստատված ներքին իրավական ակտերով:

ե) հաստատում է հաստիքացուցակը (աշխատատեղերը) Բանկի խորհրդի կողմից հաստատված Բանկի տարեկան ծախսերի նախահաշվի (բյուջեի) շրջանակներում:

9.3.8. Այն հարցերը, որոնք օրենքով, սույն կանոնադրությամբ, Բանկի ժողովի կամ խորհրդի կողմից չեն սահմանվել որպես ընդհանուր ժողովի, խորհրդի կամ ներքին աուդիտի ստորաբաժանման իրավասությանը պատկանող, պատկանում են վարչության նախագահի (վարչության) իրավասությանը:

9.3.9. Վարչության նախագահը (վարչությունը) եռամսյակը մեկ խորհրդին խորհրդի սահմանած ձևով ներկայացնում են իրենց գործունեության վերաբերյալ հաշվետվություններ սույն կանոնադրությամբ և վարչության կանոնակարգով սահմանված կարգով:

9.3.10. Վարչության նախագահի (վարչության) իրավասությանը ենթակա հարցերով որոշումների ընդունումը չի կարող փոխանցվել Բանկի կառավարման այլ մարմինների, Բանկի ներքին աուդիտին, Բանկի գլխավոր հաշվապահին կամ այլ անձի, բացառությամբ եթե Բանկի վարչության նախագահի լիազորությունների իրականացումը պատշաճ կերպով ժամանակավորապես փոխանցվել է նրան փոխարինող անձին: Վարչության նախագահի լիազորությունները պատշաճ կերպով ժամանակավորապես կարող են փոխանցվել նրան փոխարինող անձին, եթե վերջինս համապատասխանում է Կենտրոնական բանկի սահմանած որակավորման և մասնագիտական համապատասխանության չափանիշներին:

9.3.11. Խորհրդի կողմից վարչության նախագահի լիազորությունները վաղաժամկետ դադարեցվում են իր դիմումի համաձայն, կամ եթե՝

ա) նա դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ:

բ) նրա պաշտոնավարման ընթացքում ի հայտ են եկել այնպիսի հանգամանքներ, որոնց ուժով նրան արգելվում է լինել բանկի գործադիր տնօրեն (բանկի ղեկավար):

գ) օրենքով սահմանված կարգով որակազրկվել է կամ զրկվել է որոշակի պաշտոն վարելու իրավունքից:

Վարչության նախագահի լիազորությունները վաղաժամկետ կարող են դադարեցվել նաև լիազորությունների մնացած ժամանակահատվածի, իսկ եթե այդ ժամանակահատվածը մեկ տարուց ավելի է, ապա մեկ տարվա համար սահմանված աշխատավարձը Բանկի կողմից նրան փոխհատուցելու պայմանով:

Բանկն իրավունք ունի վարչության նախագահի պաշտոնից ազատված անձից հետ պահանջելու սույն կետում նշված նրան փոխհատուցված աշխատավարձը՝ դատարանում ապացուցելով վարչության նախագահի կողմից պաշտոնեական պարտականությունների թերացման փաստը:

9.4. Բանկի գլխավոր հաշվապահը

9.4.1. Գլխավոր հաշվապահը իրականացնում է «Հաշվապահական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով գլխավոր հաշվապահի համար սահմանված իրավունքները և պարտականությունները:

9.4.2. Գլխավոր հաշվապահը նշանակվում է խորհրդի կողմից՝ վարչության նախագահի ներկայացմամբ:

9.4.3. Գլխավոր հաշվապահի իրավունքները և պարտականությունները չեն կարող փոխանցվել ընդհանուր ժողովին, խորհրդին, գործադիր մարմնի անդամներին, ներքին աուդիտի ստորաբաժանմանը կամ այլ անձի:

9.4.4. Գլխավոր հաշվապահն յուրաքանչյուր եռամսյակը մեկ խորհրդին և վարչությանն է ներկայացնում ֆինանսական հաշվետվություն՝ խորհրդի հաստատած ձևով և բովանդակությամբ:

9.4.5. Գլխավոր հաշվապահը պատասխանատվություն է կրում Բանկի հաշվապահական հաշվառման վարման, դրա վիճակի և հավաստիության, տարեկան հաշվետվության, ֆինանսական և վիճակագրական հաշվետվություններն օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված պետական կառավարման մարմիններին ժամանակին ներկայացնելու, ինչպես նաև Բանկի մասնակիցներին, պարտատերերին և մամուլի ու զանգվածային լրատվության մյուս միջոցներին Բանկի մասին տրամադրվող ֆինանսական տեղեկությունների հավաստիության համար՝ օրենքին, այլ իրավական ակտերին և սույն կանոնադրությանը համապատասխան: Նշված հաշվետվությունների և տեղեկատվության մեջ անարժանահավատ տվյալների հայտնաբերման դեպքերում՝ գլխավոր հաշվապահը ներկայացնում է դրանց առաջացման նախադրյալները, վկայակոչում է Բանկի աշխատակիցներին, որոնք անմիջականորեն աշխատել են տվյալ հաշվետվությունների կամ տեղեկատվության կազմման աշխատանքներին և առաջարկում է միջոցներ դրանք ապագայում չկրկնելու կամ առկա թերությունները վերացնելու ուղղությամբ: Եթե նման դեպքերը կրում են պարբերակար բնույթ, ապա խորհուրդը հարց է բարձրացնում գլխավոր հաշվապահի մասնագիտական համապատասխանության հարցը քննարկելու մասին:

Գլխավոր հաշվապահը «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքով, այլ օրենքներով և իր կողմից կնքված «Լրիվ նյութական պատասխանատվության» պայմանագրին համապատասխան պատասխանատվություն է կրում իր դիտավորյալ գործողությունների (անգործության) հետևանքով Բանկին պատճառված վնասների համար:

9.5. Բանկի ներքին աուդիտի ստորաբաժանումը

9.5.1. Ներքին աուդիտի ղեկավարը և անդամները նշանակվում են խորհրդի կողմից: Ներքին աուդիտի անդամ չեն կարող լինել Բանկի կառավարման մարմինների անդամները, այլ ղեկավարները ու աշխատակիցները, ինչպես նաև գործադիր մարմնի անդամների հետ փոխկապակցված անձինք:

Ներքին աուդիտի ղեկավարը և անդամները պարտավոր են պահպանել Բանկի աշխատակիցների համար սահմանված աշխատանքային կարգապահությունը:

9.5.2. Ներքին աուդիտը Բանկի խորհրդի հաստատած կանոնակարգի համաձայն՝

ա) անկախ գնահատական է տալիս Բանկի ներքին հսկողության, այդ թվում՝ ռիսկերի կառավարման համակարգերի, Բանկի կառավարման համակարգի և գործընթացների որակի, համարժեքության և արդյունավետության վերաբերյալ:

բ) եզրակացություններ և առաջարկություններ է տալիս Բանկի խորհրդի ներկայացրած, ինչպես նաև սեփական նախաձեռնությամբ առաջարկված հարցերի վերաբերյալ:

Ներքին աուդիտի իրավասություններին վերաբերող հարցերը չեն կարող փոխանցվել Բանկի կառավարման մարմինների կամ այլ անձանց լուծմանը:

9.5.3. Ներքին աուդիտի ղեկավարը սույն կանոնադրությամբ սահմանված կարգով խորհրդին և վարչությանն է ներկայացնում հետևյալ հաշվետվությունները՝

ա) հերթական՝ տարեկան ծրագրով սահմանված ստուգումների արդյունքների մասին:

բ) արտահերթ, եթե բացահայտվել են ներքին աուդիտի հիմնավորված կարծիքով էական խախտումներ, ընդ որում, եթե խախտումները հետևանք են վարչության նախագահի (վարչության) կամ խորհրդի գործողությունների կամ անգործության, ապա հաշվետվությունը ներկայացվում է անմիջապես խորհրդի նախագահին:

Սույն կետով նախատեսված դեպքերում հաշվետվությունները ներկայացվում են խախտումը հայտնաբերելուց երկու աշխատանքային օրվա ընթացքում:

Ներքին աուդիտն օրենքների, այլ իրավական ակտերի խախտումներ բացահայտելու դեպքում պարտավոր է դրանք հայտնաբերելուց երկու աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել Բանկի խորհրդին՝ միաժամանակ առաջարկելով այդ խախտումների վերացման և ապագայում չկրկնման ուղղությամբ ձեռնարկվելիք համապատասխան միջոցառումներ:

9.6. Բանկի ռիսկերի կառավարման գործառույթի իրականացման համար պատասխանատու անձը

9.6.1. Բանկի ռիսկերի կառավարման գործառույթի իրականացման համար պատասխանատու անձը՝

ա) բացահայտում, գնահատում է Բանկի գործունեությանը բնորոշ ռիսկերը, տալիս է Բանկի ռիսկի ընդհանուր նկարագիրը:

բ) հսկողություն և մոնիտորինգ է իրականացնում բացահայտված ռիսկերի նկատմամբ, ապահովում է դրանց արդյունավետ կառավարումը:

գ) խորհրդի հաստատմանն է ներկայացնում Բանկի ռիսկերի կառավարման ռազմավարությունը, ռիսկի ընդունելի սահմանաչափը, ինչպես նաև առանձին ռիսկերի կառավարման քաղաքականությունները, խորհրդի սահմանած պարբերականությամբ խորհուրդ և վարչություն հաշվետվություն է ներկայացնում Բանկի ռիսկերի նկարագրի և ռիսկերի կառավարման գործընթացների վերաբերյալ:

դ) իրականացնում է Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված ռիսկերի կառավարմանն առնչվող այլ գործառույթներ:

9.7. Բանկի համապատասխանության ապահովման գործառույթի իրականացման համար պատասխանատու անձը

9.7.1. Բանկի համապատասխանության ապահովման գործառույթի իրականացման համար պատասխանատու անձը՝

ա) ապահովում է Բանկի և Բանկի աշխատակիցների գործունեության համապատասխանությունը օրենքների, այլ իրավական ակտերի, այդ թվում՝ Բանկի ներքին իրավական ակտերի պահանջներին:

բ) ապահովում է Բանկում պատասխանատու վարվելակերպի ձևավորումն ու պահպանումը:

գ) գնահատում է Բանկի գործունեության վրա օրենքների և այլ իրավական ակտերի հնարավոր փոփոխությունների ազդեցությունը և դրանց հետ կապված հնարավոր ռիսկերը:

դ) իրականացնում է Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված համապատասխանության ապահովմանն առնչվող այլ գործառույթներ:

10. Բանկի գույքի ձեռք բերման և օտարման հետ կապված խոշոր գործարքները: Բանկի գործարքներում շահագրգռվածությունը

10.1. Խոշոր են համարվում՝

ա) մեկ կամ մի քանի փոխկապված գործարքները, որոնք, բացառությամբ Բանկի բնականոն տնտեսական գործունեության շրջանակներում կատարվող գործարքների, ուղղակի կամ անուղղակի կապված են Բանկի կողմից գույքի ձեռքբերման, օտարման կամ գույք ձեռքբերման հնարավորության կամ գույքի օտարման հնարավորության հետ, և որոնց արժեքը գործարքը կնքելու մասին որոշում ընդունելու պահի դրությամբ կազմում է Բանկի ակտիվների հաշվեկշռային արժեքի 25 և ավելի տոկոսը:

բ) մեկ կամ մի քանի փոխկապված գործարքները, որոնց առարկա է հանդիսանում Բանկի հասարակ (սովորական) կամ հասարակ (սովորական) բաժնետոմսերի փոխարկվող արտոնյալ բաժնետոմսերի տեղաբաշխումը, որը կազմում է Բանկի կողմից արդեն տեղաբաշխված հասարակ (սովորական) բաժնետոմսերի 25 և ավելի տոկոսը:

Խոշոր գործարքի առարկա հանդիսացող գույքի արժեքը որոշվում է սույն կանոնադրության սահմանված կարգով:

10.2. Խոշոր գործարք կնքելու մասին որոշումը, որի առարկա է հանդիսանում գույքը, և որի արժեքը գործարքը կնքելու մասին որոշումն ընդունելու պահի դրությամբ կազմում է Բանկի ակտիվների հաշվեկշռային արժեքի 25-ից 50 տոկոսը, պետք է ընդունվի խորհրդի կողմից միաձայն:

Եթե գործարք կնքելու մասին որոշումը խորհրդի կողմից չի ընդունվել, ապա խորհուրդն իրավունք ունի որոշում ընդունելու՝ հարցն ընդհանուր ժողովում քննարկելու մասին:

Սույն կետով սահմանված դեպքում, ինչպես նաև եթե գործարքի առարկա հանդիսացող գույքի արժեքը գործարքը կնքելու մասին որոշումն ընդունելու պահի դրությամբ կազմում է Բանկի ակտիվների հաշվեկշռային արժեքի 50 տոկոսից ավելին, ապա գործարքը կնքելու մասին որոշումն ընդունվում է ընդհանուր ժողովի կողմից՝ դրան մասնակցող քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 3/4-ով:

Սույն կետով պահանջները չպահպանելը հանգեցնում է գործարքի անվավերության:

Սույն կետով պահանջները չպահպանելը խոշոր գործարք կնքելիս չի հանգեցնում գործարքի անվավերության, եթե Բանկի հետ գործարք կնքած անձը գործել է բարեխիղճ՝ չգիտեր կամ չէր կարող իմանալ նշված պահանջները Բանկի կողմից չպահպանելու մասին:

10.3. Բանկի գործարքներում շահագրգիռ անձինք են համարվում խորհրդի անդամը, Բանկի կառավարման մարմիններում այլ պաշտոն զբաղեցնող անձը կամ Բանկի բաժնետերը, որն իր հետ փոխկապակցված անձանց հետ միասին տիրապետում է Բանկի քվեարկող բաժնետոմսերի 10 և ավելի տոկոսին, եթե այդ անձինք կամ նրանց հետ փոխկապակցված անձինք՝

ա) հանդիսանում են գործարքի կողմ կամ մասնակցում են գործարքին որպես միջնորդ կամ ներկայացուցիչ.

բ) տիրապետում են գործարքի կողմ, միջնորդ կամ ներկայացուցիչ հանդիսացող իրավաբանական անձի քվեարկող բաժնետոմսերի 20 և ավելի տոկոսին.

գ) պաշտոններ են զբաղեցնում գործարքի կողմ, միջնորդ կամ ներկայացուցիչ հանդիսացող իրավաբանական անձի կառավարման մարմիններում:

10.4. Սույն կանոնադրության 10.3 կետում նշված անձինք պարտավոր են տեղեկություններ տրամադրել խորհրդին, ներքին աուդիտին և արտաքին աուդիտն իրականացնող անձին՝

ա) այն իրավաբանական անձանց մասին, որոնցում նրանք ինքնուրույն կամ նրանց հետ փոխկապակցված անձի (անձանց) հետ համատեղ տիրապետում են քվեարկող բաժնետոմսերի 20 և ավելի տոկոսին.

բ) այն իրավաբանական անձանց մասին, որոնց կառավարման մարմիններում նրանք պաշտոններ են զբաղեցնում.

գ) կնքված կամ կնքման նախատեսված իրենց հայտնի գործարքների մասին, որոնցում իրենք կարող են համարվել շահագրգիռ անձ:

10.5. Բանկի որոշումը գործարքը կնքելու մասին, որում առկա է շահագրգռվածությունը, ընդունում է խորհուրդը՝ գործարքը կնքելու մեջ շահագրգռվածություն չունեցող խորհրդի անդամների ձայների մեծամասնությամբ:

10.6. Խորհուրդը շահագրգռվածության առկայությամբ գործարքը կնքելու մասին որոշումն ընդունելու համար պետք է գա այն եզրակացության, որ՝

- գործարքը կնքելու հետևանքով Բանկի կողմից ստացված վճարը պակաս չէ գործարքի արդյունքում Բանկի կողմից գործարքի մյուս կողմին փոխանցվող գույքի, տրամադրված ծառայության կամ կատարված աշխատանքի՝ սույն կանոնադրության 10.12 կետով սահմանված կարգով հաշվարկված շուկայական արժեքից, կամ՝

- գործարքը կնքելու հետևանքով Բանկի ձեռք բերած գույքի, ստացված ծառայության կամ Բանկի համար կատարված աշխատանքի դիմաց վճարը չի գերազանցում նշված գույքի, ծառայության կամ աշխատանքի՝ սույն կանոնադրության 10.12 կետով սահմանված կարգով հաշվարկված շուկայական արժեքը:

10.7. Որոշումը գործարքը կնքելու մասին, որում առկա է շահագրգռվածությունը, ընդունվում է ընդհանուր ժողովի կողմից քվեարկող բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող և գործարքի կատարման մեջ շահագրգռվածություն չունեցող մասնակիցների ձայների մեծամասնությամբ, եթե գործարքը և (կամ) փոխկապակցված գործարքները կնքվում են Բանկի քվեարկող բաժնետոմսերի կամ քվեարկող բաժնետոմսերի փոխարկվող Բանկի այլ արժեթղթերի տեղաբաշխման նպատակով, որոնց քանակն ավելի է Բանկի՝ արդեն տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի քանակի 2 տոկոսից:

10.8. Գործարքի կնքումը, որում առկա է շահագրգռվածությունը, և որը բավարարում է սույն կանոնադրության 10.7 կետով սահմանված պահանջները, կարող է կնքվել առանց ընդհանուր ժողովի որոշման, եթե՝

ա) գործարքը բանկին շահագրգիռ անձի կողմից տրամադրվող փոխառություն է.

բ) գործարքը Բանկի և մյուս կողմի միջև արդյունք է բնականոն տնտեսական գործունեության, որը կնքվել է մինչև սույն կանոնադրության 10.3 կետի դրույթներին համապատասխան շահագրգռվածության ճանաչումը (որոշում չի պահանջվում մինչև հաջորդ ընդհանուր ժողովի գումարման օրը):

Եթե ընդհանուր ժողովի անցկացման օրվա դրությամբ անհնար է կանխատեսել Բանկի և գործարքի մյուս կողմի բնականոն տնտեսական գործունեության ընթացքում շահագրգռվածության հնարավորությունը, ապա սույն կանոնադրության 10.7 կետի պահանջները համարվում են կատարված, եթե ընդհանուր ժողովը որոշում կընդունի Բանկի և մյուս կողմի միջև պայմանագրային հարաբերությունների հաստատման մասին, որով կսահմանվի կնքվող գործարքների բնույթը և գործարքների առավելագույն արժեքը:

10.9. Եթե խորհրդի բոլոր անդամները շահագրգռ անձինք են ճանաչվել, ապա գործարքը կնքելու մասին որոշումն ընդունում է ընդհանուր ժողովը՝ գործարքում շահագրգռվածություն չունեցող մասնակիցների ձայների մեծամասնությամբ:

10.10. Եթե գործարքը, որում առկա է շահագրգռվածությունը, միևնույն ժամանակ Բանկի գույքի օտարման կամ ձեռքբերման խոշոր գործարք է հանդիսանում, ապա դրա կնքումն իրականացվում է՝ հաշվի առնելով նաև սույն կանոնադրության օրենքի 10.1 և 10.2 կետերի դրույթները:

10.11. Գործարքը, որում առկա է շահագրգռվածությունը և կնքվել է սույն կանոնադրությամբ սահմանված պահանջների խախտմամբ, չի հանգեցնում գործարքի անվավերության, եթե Բանկի հետ գործարք կնքած անձը գործել է բարեխիղճ՝ չգիտեր և չէր կարող իմանալ նշված պահանջները Բանկի կողմից չպահպանելու մասին:

Շահագրգռ ճանաչված անձը Բանկի առջև պատասխանատվություն է կրում Բանկին պատճառված վնասների չափով: Եթե պատասխանատվության ենթակա է մի քանի անձ, ապա նրանք Բանկի առջև կրում են համապարտ պատասխանատվություն:

Անձն ազատվում է սույն մասով սահմանված պատասխանատվությունից, եթե գործել է բարեխիղճ՝ չգիտեր կամ չէր կարող իմանալ, որ գործարքի կնքմամբ Բանկը կկրի վնասներ:

Շահագրգռվածության առկայության դեպքում Բանկի գործարքների կնքման վերաբերյալ սույն կանոնադրության օրենքի պահանջները չեն կիրառվում, եթե՝

ա) բոլոր բաժնետերերի կողմից իրականացվում է բաժնետոմսերի ձեռքբերման նախապատվության իրավունքը.

բ) իրականացվում է բաժնետոմսերի փոխարկվող այլ արժեթղթերի փոխարկումը.

գ) կանոնադրական հիմնադրամում մասնակցությունը Բանկի կողմից ձեռք բերելու դեպքում, եթե տվյալ տեսակի (դասի) բաժնետոմսերի բոլոր սեփականատերերն ունեն հավասար իրավունք՝ համամասնորեն վաճառելու իրենց պատկանող տվյալ տեսակի (դասի) բաժնետոմսերը:

Սույն կետի պահանջները չպահպանելը հանգեցնում է գործարքի անվավերության:

10.12. Գույքի շուկայական արժեք է համարվում (ներառյալ՝ Բանկի բաժնետոմսերի և այլ արժեթղթերի արժեքը) այն գինը, որով գույքի արժեքի մասին անհրաժեշտ տեղեկություններ ունեցող և այն վաճառելու պարտավորություն չունեցող վաճառողը կհամաձայնեք վաճառել այդ գույքը, իսկ գույքի արժեքի մասին բոլոր անհրաժեշտ տեղեկություններ ունեցող և այն ձեռք բերելու պարտավորություն չունեցող գնորդը կհամաձայնեք այդ գույքը ձեռք բերել:

Գույքի շուկայական արժեքը որոշվում է խորհրդի որոշմամբ, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի, երբ շուկայական արժեքը որոշվում է դատարանի, այլ մարմնի կամ անձի կողմից:

Եթե մեկ կամ մի քանի գործարքներում, որոնց համար պահանջվում է սահմանել գույքի շուկայական արժեք, շահագրգռ անձ է հանդիսանում խորհրդի անդամը, ապա գույքի շուկայական արժեքը սահմանվում է խորհրդի այն անդամների որոշմամբ, որոնք չունեն շահագրգռվածություն նշված գործարքում:

Գույքի շուկայական արժեքի որոշման համար՝ անկախ գնահատողի ծառայություններից Բանկը կարող է օգտվել խորհրդի որոշմամբ:

Անկախ գնահատողի կողմից գույքի շուկայական արժեքի որոշումը պարտադիր է օրենքով սահմանված՝ Բանկի մասնակիցների՝ Բանկի կանոնադրական հիմնադրամում ունեցած մասնակցության հետգնման դեպքերում:

Բանկի բաժնետոմսերի կամ այլ արժեթղթերի շուկայական արժեքի որոշման անհրաժեշտության դեպքում հաշվի են առնվում այդ բաժնետոմսերի ձեռքբերման, ինչպես նաև առաջարկի և պահանջարկի գներին վերաբերող և համապատասխան զանգվածային լրատվության միջոցներում պարբերաբար հրապարակվող տեղեկությունները:

Բանկի հասարակ (սովորական) բաժնետոմսերի շուկայական արժեքի որոշման դեպքում անհրաժեշտ է հաշվի առնել Բանկի զուտ ակտիվների (հիմնական կապիտալի) արժեքը, ինչպես նաև այն գինը, որը բանկի բոլոր տեղաբաշխված հասարակ (սովորական) արժեթղթերի համար համաձայն է վճարել Բանկի գույքի մասին լրիվ տեղեկություններ ունեցող գնորդը, ինչպես նաև այլ գործոններ, որոնք Բանկի գույքի շուկայական արժեքը սահմանող մարմինը (անձը) կհամարի կարևոր:

Սույն կետով որոշվող հասարակ (սովորական) բաժնետոմսերի շուկայական արժեքը չի կարող պակաս լինել այն գնից, որը հաշվարկվել է՝ Բանկի զուտ ակտիվների (հիմնական կապիտալի) արժեքը հիմք ընդունելով:

10.13. Էմիսիոն եկամուտն օգտագործվում է՝

- միայն «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի համաձայն կանոնադրական կապիտալը նվազեցնելու դեպքում կամ
- բանկի անվճարունակության դեպքում կորուստները ծածկելու նպատակով կամ
- բանկի բաժնետոմսերի (բաժնեմասերի) անվանական արժեքի ավելացման համար

11. Բանկի արտաքին աուդիտը

11.1. Յուրաքանչյուր տարի Բանկի ֆինանսատնտեսական գործունեության ստուգման նպատակով Բանկը պետք է ներգրավի օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով աուդիտորական ծառայությունների իրականացման իրավունք ունեցող անկախ աուդիտ իրականացնող անձի (այսուհետ՝ նաև արտաքին աուդիտ)՝ կնքելով նրա հետ համապատասխան պայմանագիր: Բանկի արտաքին աուդիտին ընտրում է ընդհանուր ժողովը՝ Կենտրոնական բանկի կողմից սահմանված կարգով: Արտաքին աուդիտի ծառայությունների համար վճարվող գումարի չափը որոշում է Բանկի խորհուրդը:

Բանկի ֆինանսատնտեսական գործունեության ստուգումն արտաքին աուդիտի կողմից կարող է իրականացվել նաև Բանկի՝ քվեարկող բաժնետոմսերի առնվազն 5 տոկոսի սեփականատեր բաժնետերերի պահանջով: Այդ դեպքում արտաքին աուդիտ իրականացնող անձին ընտրում, նրա հետ պայմանագիր են կնքում, նրա ծառայությունների դիմաց վճարում են ստուգում պահանջող բաժնետերերը, ընդ որում, նրանք կարող են Բանկից պահանջել իրենց կատարած ծախսերի հատուցում, եթե այդ ստուգումն ընդհանուր ժողովի որոշմամբ արդարացված է եղել Բանկի համար:

Բանկի արտաքին աուդիտ ցանկացած ժամանակ կարող է հրավիրվել նաև Բանկի խորհրդի կողմից՝ Բանկի միջոցների հաշվին:

11.2. Բանկն արտաքին աուդիտ իրականացնող անձի հետ կնքվող պայմանագրում, բացի աուդիտորական եզրակացության կազմումից, պետք է նախատեսի նաև աուդիտորական հաշվետվության (նամակ Բանկի ղեկավարությանը) կազմում: Բանկն արտաքին աուդիտ իրականացնող անձի հետ կնքվող պայմանագրում պետք է նախատեսի նաև իր կողմից Կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունների արժանահավատության ստուգում:

12. Բանկի ղեկավարների պատասխանատվությունը

12.1. Բանկի ղեկավարները գործում են ելնելով Բանկի շահերից, իրականացնում են իրենց իրավունքները և կատարում են Բանկի նկատմամբ իրենց պարտականությունները բարեխիղճ ու ողջամիտ կերպով (ֆիդուցիար պարտականություն):

Բանկի ղեկավարները Բանկի առջև պատասխանատվություն են կրում իրենց դիտավորյալ գործողությունների (անգործության) հետևանքով Բանկին պատճառված իրական վնասի համար՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն: Եթե Բանկին վնաս պատճառած արարքն իրականացրել են Բանկի մեկից ավելի ղեկավարներ, ապա նրանք Բանկի առջև կրում են համապարտ պատասխանատվություն: Բանկին հասցված վնասի համար պատասխանատվությունից ազատվում են Բանկի այն ղեկավարները, որոնք Բանկին վնաս պատճառած որոշման ընդունմանը դեմ են քվեարկել կամ նիստին ներկա չեն գտնվել:

12.2. Եթե Բանկի խորհրդին ներկայացվող հաշվետվությունները բացահայտում են օրենքների, այլ նորմատիվ իրավական և Բանկի ներքին իրավական ակտերի խախտումներ, ապա խորհուրդը պարտավոր է ձեռնարկել միջոցներ այդ խախտումների վերացման և հետագայում չկրկնման ուղղությամբ:

12.3. Բանկի ղեկավարների պատասխանատվությունը ներառում է, սակայն չի սահմանափակում հետևյալ հնարավոր դեպքերը՝

ա) մեկ փոխառուի, խոշոր փոխառուների, Բանկի հետ կապված անձանց գծով սահմանված նորմատիվների խախտումով տրամադրված վարկերի, փոխառությունների կամ կնքված այլ գործարքների հետևանքով Բանկին պատճառված իրական վնասների հատուցման համար պատասխանատվություն է կրում Բանկի վարչության նախագահը, իսկ եթե տվյալ գործարքի կնքման համար օրենքով պահանջվում է խորհրդի որոշում, ապա խորհրդի անդամները և վարչության նախագահը:

բ) գործադիր մարմնի անդամները պարտավոր են հատուցել նաև Բանկի խորհրդի կողմից ընդունված ներքին իրավական ակտերի խախտումներով կնքված գործարքների հետևանքով Բանկին պատճառված իրական վնասները:

գ) եթե Բանկի խորհրդին ներկայացվող հաշվետվությունները բացահայտել են օրենքների, այլ նորմատիվ իրավական և Բանկի ներքին իրավական ակտերի խախտումներ, և հետագայում Բանկը կրել է նույն խախտումներով պայմանավորված վնաս, ապա խորհրդի անդամները համապարտ պատասխանատվություն են կրում այդ իրական վնասների հատուցման համար, բացառությամբ, եթե խորհրդի անդամն իր

իրավասությունների սահմաններում ձեռնարկել է այդ խախտումները կանխելու ուղղությամբ բավարար և խելամիտ գործողություններ:

դ) եթե ներքին աուդիտի կողմից ստուգման արդյունքներով բացահայտված օրենքների, այլ իրավական ակտերի խախտումների վերաբերյալ տեղեկությունները Բանկի խորհրդին չեն ներկայացվել, և հետագայում բանկը, այդ խախտումներով պայմանավորված, վնասներ է կրել, ապա ներքին աուդիտի ղեկավարը պարտավոր է հատուցել այդ իրական վնասները:

ե) եթե Բանկի հետ կապված անձի հետ գործարքը կնքվել է Բանկի ներքին ընթացակարգերի խախտումով խորհրդին ներկայացված դրական եզրակացության հիման վրա, ապա այդ գործարքի հետևանքով Բանկին պատճառված իրական վնասների հատուցման համար պատասխանատվություն է կրում Բանկի վարչության նախագահը:

13. Բանկի լուծարումը

13.1. Բանկը լուծարվում է՝

ա) լիցենզիան անվավեր ճանաչելու դեպքում:

բ) լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու դեպքում:

գ) «Բանկերի, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների, վարկային կազմակերպությունների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դեպքերում:

դ) Բանկի ընդհանուր ժողովի որոշմամբ:

Սույն կետի «գ» ենթակետով սահմանված դեպքերում Բանկը լուծարվում է «Բանկերի, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների, վարկային կազմակերպությունների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:

13.2. Ընդհանուր ժողովն իրավունք ունի որոշում կայացնելու Բանկի լուծարման մասին, եթե Բանկն ավանդատուների, բանկային հաշիվների տերերի, ինչպես նաև դրամական (փողային) փոխանցումների գործարքներում պարտատեր հանդիսացող անձանց նկատմամբ չունի պարտավորություններ:

13.3. Ընդհանուր ժողովի որոշմամբ բանկի լուծարման նպատակով ընդհանուր ժողովի կողմից լուծարման նախնական համաձայնություն ստանալու համար Կենտրոնական բանկին դիմելու մասին որոշման հիման վրա Բանկը Կենտրոնական բանկ է ներկայացնում Բանկի լուծարման նախնական համաձայնություն ստանալու հայտ՝ դրան կցելով Կենտրոնական բանկի խորհրդի սահմանած լուծարումը հիմնավորող փաստաթղթերը:

Կենտրոնական բանկի խորհուրդը քննարկում է հայտը եռամսյա ժամկետում և իրավունք ունի մերժելու այն, եթե Կենտրոնական բանկի խորհրդի հիմնավոր կարծիքով լուծարումը կարող է հանգեցնել Հայաստանի Հանրապետության բանկային համակարգի ապակայունացմանը: Այս դեպքում Կենտրոնական բանկի խորհուրդը կարող է երկարաձգել Բանկի գործունեությունը մինչև երկու տարի ժամկետով:

13.4. Կենտրոնական բանկի կողմից Բանկին լուծարման նախնական համաձայնություն տալու դեպքում Բանկը կարող է միջոցներ ձեռնարկել ավանդատուների, բանկային հաշիվների տերերի, ինչպես նաև դրամական (փողային) փոխանցումների գործարքներում պարտատեր հանդիսացող անձանց նկատմամբ Բանկի պարտավորությունների դադարեցման, ներառյալ՝ այլ անձանց փոխանցման ուղղությամբ:

13.5. Սույն կանոնադրության 16.4 կետում նշված պարտավորությունները դադարեցնելուց հետո միայն ընդհանուր ժողովը կարող է լուծարման մասին որոշում ընդունել: Այդ որոշման ընդունումից հետո Բանկն անմիջապես Կենտրոնական բանկ է ներկայացնում լուծարման թույլտվություն ստանալու հայտ՝ դրան կցելով Կենտրոնական բանկի խորհրդի սահմանած լուծարումը հիմնավորող փաստաթղթերը:

Կենտրոնական բանկի խորհուրդն իրավունք ունի մերժելու լուծարման թույլտվություն ստանալու հայտը, եթե առկա են ավանդատուների, բանկային հաշիվների տերերի, ինչպես նաև դրամական (փողային) փոխանցումների գործարքներում պարտատեր հանդիսացող անձանց նկատմամբ Բանկի պարտավորություններ կամ Բանկն ի վիճակի չէ բավարարելու իր պարտատերերի պահանջները:

13.6. Սույն կանոնադրության 16.3 և 16.5 կետերին համապատասխան՝ Բանկի կողմից ներկայացված դիմումների մերժման հիմքերի բացակայությունն ստուգելու նպատակով Կենտրոնական բանկը կարող է լուծարման մասին որոշում կայացրած բանկում «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով իրականացնել ստուգում:

13.7. Կենտրոնական բանկը լուծարման թույլտվություն տալու դեպքում ընդունում է նաև Բանկի լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու մասին որոշում:

13.8. Ընդհանուր ժողովի որոշմամբ լուծարվող բանկերի թղթակցային հաշիվների վարման և փակման կարգը սահմանում է Կենտրոնական բանկի խորհուրդը:

13.9. Բանկի լուծարային հանձնաժողովն ստեղծվում է «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 72-րդ հոդվածով սահմանված՝ դատարանի կամ Կենտրոնական բանկի խորհրդի համապատասխան որոշումը կայացնելու պահից՝ առնվազն հնգօրյա ժամկետում, սույն կանոնադրությամբ սահմանված կարգով՝ Բանկը լուծարելու, նրա գույքը (միջոցները) վաճառելու և պարտատերերի օրինական պահանջները բավարարելու նպատակով: Այն կազմվում է առնվազն երեք անդամից: Լուծարային հանձնաժողովի նախագահ և անդամ կարող են լինել միայն Կենտրոնական բանկի կողմից համապատասխան որակավորում ստացած անձինք: Մինչև լուծարային հանձնաժողովի ձևավորումը լուծարային հանձնաժողովի լիազորություններն իրականացնում է Բանկի վարչության նախագահը:

13.10. Լուծարային հանձնաժողովի ստեղծման պահից նրան են անցնում լուծարվող Բանկի կառավարման լիազորությունները, բացառությամբ այն դեպքերի, երբ Բանկը «Ապահովված հիփոթեքային պարտատոմսերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված հիփոթեքային պարտատոմս թողարկող է և նրա նկատմամբ նշանակվել է հիփոթեքային կառավարիչ:

Ապահովված հիփոթեքային պարտատոմսերից բխող պարտավորությունները և դրանց ապահովման միջոց հանդիսացող ակտիվները չեն ընդգրկվում լուծարային կառավարչի կազմած և հաստատած լուծարային հաշվեկշռում:

Հիփոթեքային կառավարիչը հիփոթեքային պարտատոմսերից բխող պարտավորությունների և դրանց ապահովման միջոց հանդիսացող ակտիվների համար կազմում, հաստատում և հրապարակում է առանձին հաշվեկշիռ:

13.11. Լուծարային հանձնաժողով ստեղծելուց հետո՝ երեք օրվա ընթացքում, լուծարային հանձնաժողովը հայտարարություն է տալիս մամուլում և ծանուցում է Կենտրոնական բանկին՝ Բանկի լուծարման և պարտատերերի կողմից պահանջների ներկայացման կարգի ու ժամկետի մասին, որը չի կարող պակաս լինել երկու ամսից:

13.12. Լուծարային հանձնաժողով չստեղծվելու դեպքում Բանկի լուծարային հանձնաժողովն ստեղծվում է Կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ:

13.13. Բանկի կառավարման մարմինները պարտավոր են լուծարային հանձնաժողովի ձևավորելու մասին որոշման կայացումից հետո՝ եռօրյա ժամկետում, լուծարային հանձնաժողովին հանձնել Բանկի կնիքը, դրոշմակնիքները, փաստաթղթերը, նյութական և այլ արժեքներ:

Լուծարային հանձնաժողով նշանակելուց հետո՝ եռօրյա ժամկետում, լուծարային հանձնաժողովի նախագահը դիմում է Կենտրոնական բանկ՝ Բանկի ֆիրմային անվանման մեջ ներառելու «լուծարվող բանկ» բառերը:

Լուծարային հանձնաժողովը պարտավոր է սահմանված կարգով լուծարային ֆիրմային անվանման մեջ փոփոխություն կատարելուց հետո ողջամիտ ժամկետում փոխել Բանկի կնիքը, դրոշմակնիքը, կապարակնիքը, ձևաթղթերը՝ ներառելով «լուծարվող բանկ» բառերը:

13.14. Լուծարային հանձնաժողովը սույն կանոնադրությամբ սահմանված՝ պարտատերերի պահանջների ներկայացման ժամկետի ընթացքում՝

ա) ձեռնարկում է անհրաժեշտ միջոցառումներ Բանկին ի պահ հանձնված գույքը դրա սեփականատերերին վերադարձնելու և այդ կապակցությամբ վերջնական հաշվարկներ կատարելու ուղղությամբ: Լուծարային հանձնաժողովը ծանուցումներ է ուղարկում գույքի սեփականատերերին: Լուծարային հանձնաժողովի ծանուցումն ստանալուց հետո՝ մեկամսյա ժամկետում, գույքի սեփականատերերը պարտավոր են վերցնել Բանկին ի պահ հանձնված գույքը: Եթե սահմանված մեկամսյա ժամկետում գույքի սեփականատերերը չեն դիմում Բանկ, ապա լուծարային հանձնաժողովը գույքը հանձնում է ի պահ՝ օրենքով սահմանված կարգով կնքելով պայմանագիր:

բ) հաշվեգրում և գնահատում է Բանկի ակտիվներն ու պասսիվները:

գ) ձեռնարկում է անհրաժեշտ միջոցառումներ՝ Բանկի պարտատերերին հայտնաբերելու և Բանկի դեբիտորական պարտքերն ստանալու, Բանկի կողմից տրված վարկերը ժամկետից շուտ վերադարձնելու ուղղությամբ:

դ) միջոցներ է ձեռնարկում Բանկի ակտիվներն առավել շահավետ իրացնելու համար:

ե) միջոցներ է ձեռնարկում Բանկի նկատմամբ առկա պարտավորությունների կատարման ապահովման ուղղությամբ:

զ) որոշում է Բանկի պարտավորությունների կատարումից հետո մնացած միջոցները բաժնետերերի միջև բաշխելու կարգը:

13.15. Լուծարային հանձնաժողովը պարտատերերի պահանջների ներկայացման ժամկետի ավարտից հետո՝ մեկշաբաթյա ժամկետում, կազմում, հաստատում և առնվազն 2000 տպաքանակ ունեցող մամուլում հրապարակում է միջանկյալ լուծարային հաշվեկշիռը, որը պարունակում է տեղեկություններ՝

ա) Բանկի գույքի կազմի մասին:

բ) պարտատերերի ներկայացրած պահանջների ցանկի մասին, այդ թվում՝ Բանկի հաշվեկշռում արտացոլված կամ Բանկին ներկայացված պահանջների ընդհանուր գումարը, յուրաքանչյուր ավանդատուին,

վարկատուին կամ այլ պարտատիրոջը հասանելիք գումարի չափը օրենքի սահմանված՝ պահանջների բավարարման հերթականությունը, ինչպես նաև իր կողմից մերժված պահանջների առանձին ցանկը.

զ) այդ պահանջների քննարկման արդյունքների մասին.

դ) Կենտրոնական բանկի կողմից սահմանված այլ տեղեկություններ:

Կենտրոնական բանկի կողմից Բանկի նկատմամբ «Ապահովված հիփոթեքային պարտատոմսերի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով հիփոթեքային կառավարիչ նշանակելու պահից հիփոթեքային կառավարչին է անցնում Բանկի ապահովված հիփոթեքային պարտատոմսերի գծով պարտավորությունների և դրանց ապահովման միջոցների կառավարումը:

«Ապահովված հիփոթեքային պարտատոմսերի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով ապահովված հիփոթեքային պարտատոմսերի գծով պարտավորությունները և դրանց ապահովման միջոցներն այլ թողարկողի չփոխանցելու դեպքում հիփոթեքային կառավարիչն իրականացնում է «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքով լուծարային կառավարչին վերապահված բոլոր լիազորությունները՝ Բանկի՝ ապահովված հիփոթեքային պարտատոմսերի գծով պարտավորությունների և դրանց ապահովման միջոցների մասով:

13.16. Լուծարային հանձնաժողովը պարտավոր է սույն կանոնադրության 16.15 կետով սահմանված կարգով միջանկյալ լուծարային հաշվեկշիռը հրապարակած թերթի մեկ օրինակը հրապարակման օրը ներկայացնել Կենտրոնական բանկ:

13.17. Լուծարային հանձնաժողովը պարտատերերի պահանջները բավարարում է «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքով սահմանված հերթականությամբ, միջանկյալ լուծարային հաշվեկշիռն համապատասխան՝ սկսած դրա հրապարակման օրվանից:

13.18. Բանկի լուծարման գործընթացի նկատմամբ վերահսկողություն իրականացնելու նպատակով Բանկում Կենտրոնական բանկը կարող է իրականացնել ստուգում: Լուծարային հանձնաժողովը պարտավոր է Կենտրոնական բանկի սահմանած կարգով, ձևով, հաճախականությամբ և ժամկետներում հաշվետվություններ ներկայացնել Կենտրոնական բանկ:

13.19. Լուծարային հանձնաժողովը պարտավոր է Կենտրոնական բանկի սահմանած կարգով, ցանկով և ձևով իր գործունեության վերաբերյալ պարբերաբար, բայց ոչ պակաս, քան ամիսը մեկ անգամ, տեղեկություններ հրապարակել մամուլում:

13.20. Պարտատերերի հետ հաշվարկներն ավարտելուց հետո լուծարային հանձնաժողովը կազմում է լուծարման հաշվեկշիռը, որը Բանկի ընդհանուր ժողովի կողմից հաստատվելուց հետո՝ եռօրյա ժամկետում, լուծարային հանձնաժողովը ներկայացնում է Կենտրոնական բանկ:

13.21. Կենտրոնական բանկի կողմից լուծարման հաշվեկշիռը հաստատելու մասին որոշումը կայացնելուց հետո՝ եռօրյա ժամկետում, Կենտրոնական բանկը Բանկը գրանցումից հանելու մասին գրառում է կատարում բանկերի գրանցումների մատյանում, որից հետո Բանկը համարվում է լուծարված, իսկ նրա գործունեությունը՝ դադարած: Կենտրոնական բանկն այդ մասին ծանուցում է իրավաբանական անձանց պետական գրանցում իրականացնող մարմնին:

13.22. Կենտրոնական բանկի կողմից լուծարման հաշվեկշիռը հաստատելու մասին որոշումը կայացնելուց հետո՝ եռօրյա ժամկետում, լուծարային հանձնաժողովը Բանկի լուծարման վերաբերյալ Կենտրոնական բանկի կողմից սահմանված ձևով տեղեկանք է հրապարակում, որից հետո լուծարային հանձնաժողովն ազատվում է Բանկի լուծարման հետ կապված պարտավորություններից:

13.23. Լուծարային հանձնաժողովի անդամները վարձատրություն են ստանում Բանկի միջոցների հաշվին:

13.24. Լուծարային հանձնաժողովի անդամներն իրենց գործունեության ընթացքում թույլ տված խախտումների և իրենց գործողություններով պատճառված վնասի համար պատասխանատվություն են կրում օրենքների և այլ իրավական ակտերի համաձայն:

Կենտրոնական բանկի խորհուրդը Բանկի լուծարային հանձնաժողովի նախագահի և (կամ) անդամների որակավորման վկայականներն ուժը կորցրած ճանաչելու դեպքում Բանկի ընդհանուր ժողովը մեկշաբաթյա ժամկետում նշանակում է լուծարային հանձնաժողովի նոր նախագահ կամ անդամ (անդամներ), հակառակ դեպքում լուծարային հանձնաժողովի նոր նախագահին կամ անդամին (անդամներին) նշանակում է Կենտրոնական բանկի խորհուրդը:

13.25. Լուծարային հանձնաժողովի գործողությունները կարող են բողոքարկվել դատարան՝ Բանկի պարտատերերի, պարտապանների, Կենտրոնական բանկի կողմից:

13.26. Պարտատերերի պահանջները բավարարվում են լուծարային միջոցների սեփականության իրավունքով Բանկին պատկանող գույքի (միջոցների) հաշվին:



«ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, Նալբանդյան 48

ՔԱՂՎԱԾՔ

«ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ Խորհրդի 15.02.2024թ. հերթական նիստի թիվ 3 արձանագրությունից

16 փետրվարի, 2024թ.

Քաղվածքը կատարված է հայերեն և անգլերեն երկլեզու փաստաթղթից

Եսակը՝ Խորհրդի հերթական նիստ
Ժամը՝ 09:00 – 10:20 CET, 12:00 – 13:20 Երևանի ժամանակով
Վայրը՝ ՀՀ, ք. Երևան,
անձնական մասնակցության և Zoom հավելվածի միջոցով իրական ժամանակի ռեժիմում

Նիստին մասնակցում էին՝
Խորհրդի նախագահ՝ Ալֆրեդ Մոէկլի
Խորհրդի անդամներ՝ Պատրիկ Սվինթ
Տիգրան Միրզոյան

Նիստից հարգելի պատճառներով բացակայում էին՝
Քրիստոֆ Մաուխլեն
Ջերարդ Հոֆմաննը

Նիստի քվորումը (Խորհրդի անդամների թվի կեսից ավելիի ներկայությունը) ապահովված է:

Նախագահող՝ Խորհրդի նախագահ Ալֆրեդ Մոէկլի.
Քարտուղարներ՝ Կոնստանտին Սամոյլով, Իրինա Աստվածատրյան.
Նիստին հրավիրված էին՝ Վարչության նախագահ Գևորգ Թառումյան,
Կորպորատիվ կենտրոնի տնօրեն Ազամատ Խակոյ

Օրակարգ

10.1. Կորպորատիվ պարտատոմսերի թողարկման պայմանները հաստատելու վերաբերյալ:

10.1. Կորպորատիվ պարտատոմսերի թողարկման պայմանները հաստատելու վերաբերյալ



Հիմք ընդունելով «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 21⁶ հոդվածի 1-ին մասի ժգ) ենթակետը,

Խորհուրդը որոշեց.

1. Հաստատել «ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ պարտատոմսերի թողարկման հետևյալ պայմանները.
 - 1.1 Դրամային անվանական, չփոխարկվող, արժեկտրոնային պարտատոմսեր՝
 - 1.1.1 տեղաբաշխման ժամկետ՝ թողարկման պահից 3 ամիս յուրաքանչյուր տրանջի համար,
 - 1.1.2 անվանական արժեք՝ 100,000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ,
 - 1.1.3 քանակ՝ 350,000 հատ,
 - 1.1.4 թողարկման ընդհանուր ծավալ՝ 35,000,000,000 (երեսունհինգ միլիարդ) ՀՀ դրամ,
 - 1.1.5 արժեկտրոնային եկամտաբերություն՝ առավելագույնը 10.0 տոկոս,
 - 1.1.6 արժեկտրոնի վճարման պարբերականություն՝ եռամսյակային,
 - 1.1.7 շրջանառության ժամկետ՝ թողարկման պահից առավելագույնը 36 ամիս:
 - 1.2 Արտարժույթային անվանական, չփոխարկվող, արժեկտրոնային պարտատոմսեր՝
 - 1.2.1 տեղաբաշխման ժամկետ՝ թողարկման պահից 3 ամիս յուրաքանչյուր տրանջի համար,
 - 1.2.2 անվանական արժեք՝ 100 (մեկ հարյուր) ԱՄՆ դոլար,
 - 1.2.3 քանակ՝ 150,000 հատ,
 - 1.2.4 թողարկման ընդհանուր ծավալ՝ 15,000,000 (տասնհինգ միլիոն) ԱՄՆ դոլար,
 - 1.2.5 արժեկտրոնային եկամտաբերություն՝ առավելագույնը տարեկան 5.0 տոկոս,
 - 1.2.6 արժեկտրոնի վճարման պարբերականություն՝ եռամսյակային,
 - 1.2.7 շրջանառության ժամկետ՝ թողարկման պահից առավելագույնը 36 ամիս:
2. Սահմանել, որ պարտատոմսերը ենթակա են ցուցակման Հայաստանի Ֆոնդային Բորսայում, իսկ կրկնակի ցուցակման համար Բանկը կարող է դիմել նաև արտասահմանում գործող ֆոնդային բորսա:
3. Սույն որոշմամբ հաստատված պայմանների շրջանակներում պարտատոմսերի յուրաքանչյուր թողարկման ծավալը, ժամկետները, տոկոսադրույքները և այլ պայմանները որոշելու իրավասությունը վերապահել Վարչությանը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2024թ. փետրվարի 16-ին:

.....

Արձանագրությունը ստորագրված է Խորհրդի նախագահի, նիստին ներկա Խորհրդի անդամների և նիստի քարտուղարի կողմից:

Քաղվածքը կազմեց՝
Խորհրդի քարտուղար՝



Ի. Աստվածատրյան

Համապատասխանում է բնօրինակին
Վարչության նախագահ՝



Վևորգ Թառումյան



ՎՃԱՐՄԱՆ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԳԻՐ N 000063 [722106971]
PAYMENT ORDER

«ԱՄԻՈ ԲԱՆԿ» ՓԲԸ ՊԿ\ID 663
 AMIO BANK CJSC Ամսաթիվ\Date 12/03/24 15:27

Ներքալ\Debit 1150038340137200 [392100]	Կրեդիտ\Credit 900005016119	Ամսաթիվ\Date AMD	Գումար\Amount 50,000.00
--	-------------------------------	---------------------	----------------------------

Վճարող\Remitter
 «ԱՄԻՈ ԲԱՆԿ» ՓԲԸ

Վճարողի բանկ\Remitter's Bank
 «ԱՄԻՈ ԲԱՆԿ» ՓԲԸ
 AMIO BANK CJSC

Վճարողի ՅԳԳԳ\Remitter's Tax Code 2301500362

Ըստացող\Beneficiary
 Արժեթղթերի ազդագրերի գրանցման համար

Ըստացողի բանկ\Beneficiary's Bank
 Գանձապետական բաժանմունք
 Treasury division

Գումարը բառերով\Amount in Words
 392100 հազար դրամ

Նպատակ\Details
 ԱՄԻՈ ԲԱՆԿ ՓԲԸ-ի կողմից թող-ած վարատումների ծրագր. ազդագիրը ԿԲ-ում գրանցելու վճար

Վճարողի ստորագ. Կատարող Արդյա Սաֆարյան
 Remitter's Sign. Maker

Ձևակերպումների ՕՐԳԵՐ\ACCOUNTING ENTRY N 000063 [722106971]

Ներքալ\Debit	Կրեդիտ\Credit	Արժ	Գումար\Amount
3921000 38340137200	3930000 39300011000	AMD	50,000.00

ՎՃԱՐՄԱՆ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԳԻՐ ՄՏԳՈՐԱԳԻՐ N 000063 [722106971]
PAYMENT ORDER RECEIPT

«ԱՄԻՈ ԲԱՆԿ» ՓԲԸ ՊԿ\ID 663
 AMIO BANK CJSC Ամսաթիվ\Date 12/03/24 15:27

Ներքալ\Debit 1150038340137200	Կրեդիտ\Credit 900005016119	Ամսաթիվ\Date AMD	Գումար\Amount 50,000.00
----------------------------------	-------------------------------	---------------------	----------------------------

Վճարող\Remitter
 «ԱՄԻՈ ԲԱՆԿ» ՓԲԸ

Վճարողի բանկ\Remitter's Bank
 «ԱՄԻՈ ԲԱՆԿ» ՓԲԸ
 AMIO BANK CJSC

Վճարողի ՅԳԳԳ\Remitter's Tax Code 2301500362

Ըստացող\Beneficiary
 Արժեթղթերի ազդագրերի գրանցման համար

Ըստացողի բանկ\Beneficiary's Bank
 Գանձապետական բաժանմունք
 Treasury division

Գումարը բառերով\Amount in Words
 392100 հազար դրամ

Նպատակ\Details
 ԱՄԻՈ ԲԱՆԿ ՓԲԸ-ի կողմից թող-ած վարատումների ծրագր. ազդագիրը ԿԲ-ում գրանցելու վճար

Կատարող\Maker Արդյա Սաֆարյան Կ.Ց.
ST.